Հայկական սպորտը և մարմնակրթությունը Օսմանյան կայսրությունում

Բոլոր այն ռահվիրաների հիշատակին՝

ովքեր ինքնանվիրումով ձեռնարկեցին ազգային սպորտի և մարմնակրթության զարգացման

նվիրական գործը

Հայկական սպորտը
և
մարմնակրթությունը Օսմանյան կայսրությունում

Հայկ Դեմոյան

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ
Երևան 2015

ՀՏԴ 94 : 796
ԳՄԴ 63.3 + 75
Դ357

Շապիկի կազմին Պոլսի «Արաքս»
ֆուտբոլային ակումբի լուսանկարն է

Հ. Դեմոյան
Դ357 Հայկական սպորտը և մարմնակրթությունը Օսմանյան կայսրությունում, ՀՑԹԻ, Երևան, 2015, 274 էջ:

ISBN 978-9939-822-72-3

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում

Էջադրումը և համակարգչային դիզայնը՝
Հարություն Սամուելյանի
Կազմի ձևավորումը՝
Լուսինե Մաթևոսյանի

© Դեմոյան Հայկ, 2015
© Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2015

Այս հրատարակությունը 2009 թ. լույս ընծայված համանուն հատորի լրամշակված ու փոփոխված տարբերակն է: Գրքում առաջին անգամ համադրվում և ներկայացվում են Օսմանյան կայսրությունում հայկական սպորտի և մարմնակրթության ձևավորման նախապատմությունը, արևմտահայության շրջանում մարմնամարզության ու սպորտի զարգացման ընթացքն ու առաջին հայ մարմնամարզական ակումբների գործունեությունը: Լուսանկարչական նյութով հարուստ այս հրատարակությամբ ընթերցողին են ներկայացվում հայկական սպորտի պատմության մինչ օրս անհայտ, սակայն չափազանց հետաքրքիր դրվագներ:

Նախատեսվում է ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 94 : 796
ԳՄԴ 63.3 + 75

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՏՔԻ ԽՈՍՔ 6

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 8

ԳԼՈՒԽ Ա Սպորտի և մարմնակրթության զարգացումը Օսմանյան կայսրությունում 10

ԳԼՈՒԽ Բ Հայկական սպորտի և մարմնակրթության զարգացումը Օսմանյան կայսրությունում 22

ԳԼՈՒԽ Գ Մարզական և մարմնակրթական շարժումը Զմյուռնիայում 66

ԳԼՈՒԽ Դ Սպորտի և մարմնակրթության զարգացումը Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում 80

ԳԼՈՒԽ Ե Հայ կինը և մարմնակրթությունը 116

ԳԼՈՒԽ Զ Հայկական օլիմպիական խաղեր (1911-1914թթ.) 126

ԳԼՈՒԽ Է Հայ մարզիկների մասնակցությունը 1912թ. միջազգային օլիմպիական խաղերին 142

ԳԼՈՒԽ Ը Սպորտը և ազգայնական մրցակցությունը 158

ԳԼՈՒԽ Թ Հայկական սպորտի կորուստը Մեծ եղեռնի տարիներին 180

ԳԼՈՒԽ Ժ Հայկական սպորտը հետպատերազմյան տարիներին (1918-1922թթ.): ՀՄԸՄ-ի կազմավորումը 186

ԳԼՈՒԽ ԺԱ Մարմնակրթությունը և սպորտը հայկական որբանոցներում 222

ԳԼՈՒԽ ԺԲ Հայկական սկաուտական շարժման ծնունդն ու զարգացումը 238

ՎԵՐՋԱԲԱՆ 270

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 272

Մուտքի խոսք

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս աշխատությունը նվիրված է քիչ ուսումնասիրված, սակայն չափազանց կարևոր ու հետաքրքիր մի ոլորտի՝ Օսմանյան կայսրության հայ բնակչության շրջանում մարմնակրթական շարժման ձևավորման ու սպորտի զարգացման պատմությանը:

Օսմանյան կայսրությունում հայկական սպորտային ու մարմնակրթական ակումբների ու միությունների զարգացման պատմությունը սկսվում է XX դարի սկզբներից, երբ ձևավորվեցին առաջին մարմնամարզական խմբակները, և ի հայտ եկան առաջին հայ մարզիկները: Ավելի վաղ հայկական վարժարաններ էին ներմուծվել մարմնամարզության դասընթացներ՝ առողջ ու աշխույժ սերունդ դաստիարակելու հրամայականով: Կայսրությունում մարմնակրթական շարժման զարգացումը, չնայած քրիստոնյա հպատակների նկատմամբ կիրառվող խտրականությանը և բռնություններին, հետևանք էր առաջին հերթին հայ և հույն ազգաբնակչության շրջանում տեղի ունեցող արդիականացման գործընթացների և պայմանավորված էր ներհամայնքային որոշակի հիմնախնդիրներով:

XX դարի սկզբներին Պոլսում և Զմյուռնիայում ձևավորվեցին առաջին հայկական սպորտային ակումբները: Այս ընթացքում ասպարեզ իջան նաև մասնագիտական կրթություն ստացած մարզիկներ Գրիգոր Հակոբյանը, Շավարշ Քրիսյանը, Վահան Չերազը, Մկրտիչ Մկրյանը և այլք, ովքեր կարևոր դերակատարություն ունեցան օսմանահպատակ հայերի շրջանում սպորտի զարգացման ու դրա նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու գործում:

Օսմանյան կայսրության անդրանիկ սպորտային պարբերականի՝ «Մարմնամարզի» հրատարակումը (1911-1914թթ.) նշանավոր մարզիկ Շավարշ Քրիսյանի ջանքերով լրացուցիչ ազդակ էր Պոլսի, Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և այլ վայրերում բնակվող հայ երիտասարդության շրջանում սպորտի և մարմնակրթության հանդեպ հետաքրքրությունն ուժեղացնելու համար:

Կայսրության մարզական տարեգրության մեջ յուրահատուկ դրվագ էր 1912թ. Ստոկհոլմի հինգերորդ միջազգային օլիմպիական խաղերին երկու հայ մարզիկների՝ Վահրամ Փափազյանի և Մկրտիչ Մկրյանի մասնակցությունը: Այն, խորհրդանշական լինելուց զատ, նոր մեկնակետ դարձավ մարզական կյանքի հանդեպ լուրջ հետաքրքրություն ձևավորելու և մասնակցություն ապահովելու տեսանկյունից: Դրա դրսևորումներից մեկը Պոլսի և գավառի հայկական ակումբների ներկայացուցիչների մասնակցությամբ և նույնիսկ Պոլսի Հայոց պատրիարքի հովանավորությամբ կազմակերպված Հայկական օլիմպիական խաղերն էին, որի ավանդույթները մեր օրերում շարունակվում են ի դեմս Համահայկական խաղերի:

Օսմանյան կայսրությունում հայկական սպորտի հարուստ պատմությունն ու ժառանգությունը ևս մեկ անգամ վկայում են կայսրության մեջ հայերի ունեցած առաջատար դերակատարության մասին: Հատկանշական է,

որ այդպիսի ազգային առաջադիմությունն ու արդիական արժեքներ որդեգրելու հակումները որոշակիորեն ուժեղացրին անհանդուրժողականության դրսևորումները երիտթուրքական իշխանությունների շրջանում: Վերջիններս ամեն կերպ փորձեցին խոչընդոտել քրիստոնյաների ազգային վերելքն ու կրթամշակութային զարթոնքը, որը, ի վերջո, իր դրսևորումը ստացավ Առաջին աշխարհամարտի քողի տակ իրականացված հայ բնակչության ցեղասպանությամբ:

Ներկա հրատարակությունը պատրաստելիս օգտագործվել են նորահայտ ու հազվագյուտ աղբյուրներ և լուսանկարչական հավաքածուներ: Դրանք հիմնականում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հարուստ հավաքածուի, Բեյրութի Հայ մարմնակրթական ընդհանուր միության կենտրոնական վարչության արխիվի, Հայաստանի ազգային արխիվի, «Մարմնամարզ» պարբերականի, Միքայել Իշլեմեճյանի, Միհրան Մինասյանի, Դիլդիլյան ընտանիքի, PROJECTSAVE նախագծի հավաքածուի նյութերն են:

Հատորն ամբողջացնելու գործում օգտագործվել են հայ նշանավոր մարզիկ, սկաուտապետ և լուսանկարիչ Գրիգոր Ճոլոլյանի լուսանկարչական և տպագիր ժառանգությունը ներառող հավաքածուի նյութերը, ինչպես նաև սփյուռքահայ մամուլում հայկական սպորտի պատմությանն ու զարգացմանն անդրադարձող հեղինակի հոդվածաշարը: Հատորը պատրաստելիս մեծապես օգտվել ենք նաև հայկական սպորտի պատմության լավագույն գիտակ Բյուզանդ Թորիկյանի՝ հայ մարմնակրթական և սկաուտական շարժման պատմությանը նվիրված քառահատորյակից:

Ցանկանում եմ իմ խորին երախտագիտությունը հայտնել բոլոր նրանց, ովքեր աջակցեցին այս աշխատության պատրաստման գործին, մասնավորապես Տեր և Տիկին Պատրիս և Սեդա Ճոլոլյաններին, ովքեր սիրահոժար համաձայնվեցին Գրիգոր Ճոլոլյանի արժեքավոր հավաքածուն հանձնել Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին: Ցանկանում եմ երախտագիտության խոսք ուղղել նաև Պեպո Իշլեմեճյանին՝ իր հոր՝ Միքայել Իշլեմեճյանի լուսանկարչական հավաքածուն ՀՑԹԻ-ին հանձնելու համար:

Հատուկ շնորհակալություն եմ հայտնում ամերիկաբնակ իմ բարեկամին՝ Շավարշ Քրիսյանին, հատորի պատրաստման ընթացքում ցուցաբերած անշահախնդիր աջակցության համար:

Նյութերի տրամադրման համար իմ երախտագիտությունն եմ հայտնում Ցաշար Տոլգա Ջոռային, Միհրան Մինասյանին, Արմեն Մարսուբյանին և Հարություն Սամուելյանին:

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր

Ներածություն

Սպորտը, ազգային և հասարակական մյուս ինստիտուտների հետ մեկտեղ, բազմազգ պետություններում ազգային և էթնիկ ինքնության ուրույն հատկանիշներ ձևավորող և ներկայացնող հասարակական գործունեության ոլորտներից է, որը կարևոր խթան է ազգայնականության ձևավորման, ազգամիջյան մրցակցության և այդ նույն ինքնության առանձնահատկության դրսևորման ու շեշտադրման գործընթացներում: Տարբեր երկրներում սպորտը և մարմնակրթությունը ազգային ինքնատիպությունը ձևավորող, հայրենասիրական դաստիարակության և նույնիսկ երիտասարդ սերնդին ռազմամոլ տրամադրություններով վարակելու և այս կերպ տարբեր ուժերի և առաջին հերթին իշխող քաղաքական վերնախավի կողմից օգտագործվող գործիքներ են: Ավելին, որոշ սպորտաձևեր նույնիսկ դարձել են այս կամ այն երկրի ազգային ինքնության բաղկացուցիչն ու բնորոշիչը, ինչպես օրինակ՝ բրազիլական ֆուտբոլ, կանադական հոկեյ և այլն:

Մեր օրերում սպորտը, մարզական մրցաշարերն ու օլիմպիական խաղերը, դառնալով ազդեցիկ խորհրդանշական գործոններ, որոշիչ ու կարևոր դերակատարություն ունեն տեղական և համաշխարհային գործընթացներում՝ որոշակիորեն ներազդելով քաղաքական, տնտեսական, մշակութային հարաբերությունների վրա: Սպորտը դարձել է համաշխարհային քաղաքական գործընթացների բաղկացուցիչը, իսկ սպորտային մրցակցությունը, հատկապես ֆուտբոլում, վերածվել է լուրջ գործոնի ազգային ու պետական ինքնությանն առանձնահատուկ շեշտադրում և հեղինակություն ապահովելու գործում:

Այսպիսով, կարող ենք ասել, որ սպորտը՝ որպես հասարակական գործունեության ոլորտ, վերածվել է ազգային ինքնության և հավաքականության ձևավորման և այն արտաքին աշխարհին ներկայացնելու կարևոր մի այցեքարտի: Ավելին, այն դիտվում է նաև որպես կարևոր գործոն պետությունների տրոհման կամ վերամիավորման գործընթացներում:[1]

Անժխտելի է, որ մեր օրերում սպորտային մրցակցությունը դարձել է նաև միջպետական և ազգամիջյան հարաբերություններում լրացուցիչ առավելություններ ձեռք բերելու կարևոր միջոց:

Միաժամանակ սպորտի պատմության որոշ դրվագների «մոռացության տալը», հատկապես այլազգիների ունեցած կարևոր դերակատարության կամ պարտությունների դառնությունը չհիշատակելու համար, կարևորվում է նաև սեփական պատմության անցանկալի դրվագները սրբագրելու և «յուրայինների» առավելությունն ընդգծելու առումով: Այս հանգամանքն առավել ակնառու է Թուրքիայի և թուրքական սպորտի պատմության մատուցման պարագայում:

Հայկական սպորտի պատմության մեջ առանձնահատուկ տեղ ունի Օսմանյան կայսրության հայ բնակչության շրջանում XIX դարի վերջին և XX դարի սկզբներին սպորտի և մարմնակրթության նկատմամբ հետաքրքրության արթնացման և հայկական սպորտային ակումբների կազմավորման գործընթացը: Հարկ է նշել նաև, որ նույն ժամանակաշրջանում համանման գործընթացներ սկիզբ առան նաև Ռուսական կայսրության տարածքում բնակվող հայերի շրջանում:

[1] Տես **Barrie Houlihan**. Sport, National identity and Public Policy, "Nations and Nationalism", Vol. 3, No. 1, 1997. P. 113.

Բացի այդ, մարմնակրթությամբ և սպորտով զբաղվելը համարվեց ժամանակի թելադրանք և ընդունված կենսաձև, որը պետք է ի ցույց դներ տվյալ անհատի կամ խմբի առաջադեմ և եվրոպական քաղաքակրթությանը բնորոշ ինքնության որդեգրումը:

Օսմանյան կայսրության պարագայում այս գործընթացը, բացի մարմնակրթական, առողջապահական, առողջ ապրելակերպի դրդապատճառներից ու դրանց շուրջ ծայր առած քննարկումներից, ուներ նաև ազգայնական մրցակցության և սպորտը՝ որպես ազգային ինքնահաստատման ձև, դիտարկելու դրսևորումներ:

1908թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո ազգային փոքրամասնությունների նկատմամբ կարճատև հանդուրժողական դիրքորոշումն արտահայտվեց նաև այլ ազգերի շրջանում մարզական կյանքում արձանագրված աշխուժացմամբ: Հունական և հայկական սպորտային ակումբների կազմավորումը և մարմնամարզական կյանքի ակտիվությունն էապես խթանեցին նաև թուրքական համանման ակումբների ու սպորտային կազմակերպությունների ձևավորումը: Այս պայմաններում սկիզբ առավ ու ձևավորվեց թուրքական սպորտը, որը, հայտնվելով երիտթուրք կառավարիչների ուշադրության կենտրոնում, դիտվեց որպես լրացուցիչ կռվան կայսրության ներսում քրիստոնյաների հանդեպ թուրքերի գերակայությունը հաստատելու համար:

Այս հատորի առաջին հրատարակությունը, ինչպես նաև 2009թ. սեպտեմբերին Հայոց ցեղասպանության թանգարանում համանուն ժամանակավոր ցուցադրության բացումը լուրջ խթան էին թուրքական սպորտի պատմության «մոռացված» էջերին անդրադառնալու համար: Թուրքական մամուլի հրապարակումները, նոր ուսումնասիրությունների ի հայտ գալը վկայում են թուրք հանրության շրջանում Օսմանյան կայսրությունում հայ մարզիկների ու հայկական ակումբների գործունեության նկատմամբ աճող հետաքրքրության մասին:

Թուրքական պատմագրությունը որևէ անդրադարձ չի կատարում թուրքական սպորտի ձևավորման և զարգացման պատմության մեջ հայերի և հույների ունեցած դերին կամ եթե անգամ կատարում է, ապա դրանք կրում են թռուցիկ ու հատվածային բնույթ՝ գիտակցաբար չհիշատակելով մարզիկների ազգությունը:[2] Նման լռության պատճառը, թերևս, հասկանալի է և լիովին տեղավորվում է թուրքական ազգայնականության, ազգայնական պատմագրության և սեփական անցյալը «վերահսկելու» պետական քաղաքականությանը խիստ բնորոշ «մոռացության» շրջանակներում: Թուրքական պատմագրությունը խնամքով և հետևողականորեն անտեսել է Օսմանյան կայսրության հասարակական գործունեության տարբեր ոլորտներում հայերի ունեցած կարևորագույն դերակատարությունը: «Հայկական հետքը» թուրքական թատրոնի, սպորտի, մամուլի, գրահրատարակության, ճարտարապետության ու մյուս բնագավառներում հանրապետության շրջանում ձևավորված թուրքական պատմագրության կողմից դիտվել է անցանկալի ու վտանգավոր, հետևաբար՝ հիշատակության համար ոչ արժանի:

Անառարկելի է, որ Օսմանյան կայսրությունում մարզական հուժկու շարժման ծավալումն ու մարմնակրթության զարգացումը հայկական սպորտի փառավոր ու հարուստ պատմության արժեքավոր էջերից են:

[2] Տես **Feroz Ahmad**. Making of Modern Turkey, New York, Rautledge, 1993. P. 31.

Սահմանադրության հռչակման կապակցությամբ հատված հայալեզու հոբելյանական մեդալ

1908թ. հուլիսի 24-ի Սահմանադրության հռչակման կապակցությամբ թողարկված փոստային բացիկ, Օռլանդո Կալումելայի հավաքածու

Գլուխ առաջին

ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

XIX դարի վերջին և XX դարի սկզբին կապիտալիզմի զարգացման և արդիականացման գործընթացները նոր հեռանկարներ բացեցին Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունների համայնքային առաջընթացի ու սոցիալական համախմբման համար: Այդ գործընթացներում կարևոր դերակատարություն ստանձնեցին Պոլսում և կայսրության մյուս քաղաքներում գործող օտարերկրյա ուսումնական հաստատությունները, որտեղ, որպես կանոն, սովորողների ճնշող մեծամասնությունը քրիստոնյա երիտասարդներ էին: Բացի այդ, Ստամբուլում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների, հատկապես անգլիացի և ֆրանսիացի դիվանագետները պարբերաբար կազմակերպում էին ֆուտբոլի, ռեգբիի, հոկեյի և այլ մարզաձևերի մրցումներ:

Թուրքական և մահմեդական իրականության մեջ ավանդաբար մեծ տարածում ուներ ըմբշամարտը, իսկ որոշ թուրք ըմբիշներ համաշխարհային համբավ ունեին և մասնակցում էին արտասահմանյան գոտեմարտերին: Դասական առումով նրանք ոչ թե մարզիկներ էին, այլ ազգային մարզախաղերի կրողներ:

Ամերիկյան և եվրոպական կրթական հաստատություններում սպորտային խաղերն ու մարմնակրթությունը դրված էին ամուր հիմքերի վրա: Այստեղ մարմնամարզը ոչ միայն պարտադիր ներառված էր ուսումնական գործընթաց, այլև ավանդական բնույթ էին կրում ամենամյա մրցույթներն ու դաշտահանդեսները,

Երիտթուրքերի հեղաշրջման և Սահմանադրության հռչակման առիթով կազմակերպված հանրահավաք Մարզվանում, 1908թ.

Պոլսի «Ռոբերտ» քոլեջի մասնաշենքերից մեկը, XIX դ. փորագրանկար

«Ռոբերտ» քոլեջի տարեկան մրցումներում մրցանակային տեղ զբաղեցրած ուսանողներին տրված մեդալ, XX դարի սկիզբ, ՀՑԹԻ, Ջևան Չելոյանցի հավաքածու

«Ռոբերտ» քոլեջի տարեկան մրցումների հաղթողին տրված արծաթե գավաթ՝ թռիչք բարձրություն մարզաձևից, ՀՑԹԻ, Ջևան Չելոյանցի հավաքածու

որտեղ յուրաքանչյուր կրթական հաստատություն ուներ իր գրանցած ռեկորդները, իսկ հաղթողներն ու առաջատարներն արժանանում էին մեդալների ու գավաթների: Այդ կրթահամալիրների շարքում առավել հայտնի էին Պոլսի «Ռոբերտ» քոլեջը, Պարտիզակի ամերիկյան բարձրագույն դպրոցը, Տարսոնի, Խարբերդի, Այնթապի, Բեյրութի ամերիկյան քոլեջները: Դրանցում թեթև աթլետիկայից և դասական սպորտաձևերից զատ մեծ տարածում էին ստացել բասկետբոլը, բեյսբոլը, ֆուտբոլը և այլն:

Հատկանշական է, որ Պոլսի հայ մարզիկների մեծ մասն իրենց սպորտային կենսագրությունն սկսել են հենց «Ռոբերտ» քոլեջից, որտեղ մարզական թիմերը ձևավորվում էին տարբեր ազգերի մարզիկներից և ոչ էթնիկ միատարրության սկզբունքով:

Պոլսի «Ռոբերտ» քոլեջի ֆուտբոլի թիմը, Կոստանդնուպոլիս, 1900թ.

Աբդուլ Համիդ 2-ի բռնապետության տարիներին թուրք և այլազգի երիտասարդների համար արգելված էր սպորտային կազմակերպություններ ստեղծել կամ հրապարակայնորեն զբաղվել մարմնամարզությամբ: Այսպիսի պայմաններում սպորտային կյանք առավել ներգրավված էին հայ, հույն և հրեա երիտասարդները, ովքեր սովորում էին վերը նշված ուսումնական հաստատություններում: Այս հանգամանքը կարևոր դեր կատարեց, որպեսզի ազգային փոքրամասնությունները թուրքերի համեմատությամբ ունենան ավելի ակտիվ գործող ու զարգացած սպորտային կազմակերպություններ: Թուրքական իրականության մեջ մարմնամարզական վարժություններն այդ ընթացքում զինվորական կրթության պարտադիր մաս էին միայն ռազմական ուսումնարաններում: Այդպիսի եզակի ակումբներից էր «Բեշիկթաշի մարմնամարզական ակումբը», որը ստեղծվել էր 1903թ. սուլթան Աբդուլ Համիդ 2-ի հատուկ հրովարտակով:[1]

1908թ. երիտթուրքերի իրագործած հեղաշրջումից հետո ուշադրության կենտրոնում հայտնվեց թուրք երիտասարդության շրջանում սպորտի և մարմնամարզության զարգացման հրատապության հարցը: Այն կարևորվում էր «նոր թուրք» երիտասարդի ձևավորման, առողջ սերնդի դաստիարակության և երիտասարդներին զինվորական ծառայությանը նախապատրաստելու անհրաժեշտությամբ:

Հայտնի է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության առաջնորդները, ամրապնդելով իրենց միակուսակցական կառավարության դիրքերը, միաժամանակ խթանում էին նաև օսմանյան հասարակու-



ROBERT COLLEGE RECORD 53

The Robert College Football Team.

ATHLETICS

Football

The football season opened this year as usual with the interclass championship matches. Very few of them were played without rain and still fewer without mud. Consequently they were not enjoyable either to the players or to the spectators. After several matches had been played, it became evident that the two teams to compete for the championship were the team of the Engineers and that of the Sophomore class. It was therefore decided, because of the bad weather, to omit the remaining interclass matches and have this game at the first opportunity. So, the game was played on Wednesday, December 29th. The Sophomores carried the victory, the score being two to zero. In this way the latter class wins the championship banner this year.

At the beginning of the year Mr. G. S. Sackett was elected football captain. As Mr. Sackett was a new teacher and did not know the players of the College, it was d

«Ռոբերտ» քոլեջի ֆուտբոլային թիմի լուսանկարը՝ տպագրված հաստատության տարեկան արձանագրությունների ժողովածուի մեջ, 1921թ., ՀՑԹԻ հավաքածու

[1] **Ergun Yurdadon**. A Brief Evaluation of development of Turkish Sport from 1839 to 1923, http://thesportjournal.org/article/sport-in-turkey-the-post-islamic-republican-period/

«Ռոբերտ» քոլեջի մարզարանը, XX դարի սկզբի փոստային բացիկ, ՀՑԹԻ հավաքածու

Օսմանյան բանակի պահեստային հայ սպաներ, Կ.Պոլիս, 1914թ.: Նստածներից աջից երկրորդը Հակոբ Սիրունին է, ՀՅԹԻ, Գրիգոր Ճոլոյանի հավաքածու

թյան ներսում թուրքական ազգայնականության և նոր թուրքական ինքնության ձևակերպման գործընթացը, որտեղ մեծ տեղ տրվեց նաև սպորտին և մարմնակրթությանը: Այդպիսի տրամադրությունների ազդակը 1912թ. Բալկանյան առաջին պատերազմում կրած պարտությունն էր, ինչը երիտթուրք կառավարիչներին բերեց այն համոզման, որ օսմանականության գաղափարը չի կարող փրկել կայսրության մնացորդները, և որ դրա համար պետք է ստեղծել միատարր պետություն՝ հիմնված թուրք ազգի վրա:

Օսմանյան կայսրությունում սպորտային ու մարմնակրթական և մարմնամարզական շարժման պատմությունը սերտորեն կապվում է թուրքական բանակի սպա և «հայտնի իթթիհատական» Սելիմ Սըրրը Թարջանի (1874-1957թթ.) անվան հետ: 1882թ. ուսում ստանալով Գալաթասարայի ավագ դպրոցում՝ Թարջանն իր ուսուցչի քաջալերանքով սկսում է զբաղվել սպորտով: 1909թ., հաստատվելով Շվեդիայում, նա մասնակցեց Ստոկհոլմի ֆիզիկական կրթության ուսուցիչների դպրոցի մարմնամարզական դասընթացներին: Դեռ համիդյան կառավարման տարիներին Սելիմ Սըրրը Թարջանը հաճախ էր մարզական համազգեստով հայտնվում հրապարակներում ու դպրոցներում՝ փորձելով շարժել թուրք երիտասարդների հետաքրքրությունը սպորտի հանդեպ: Նրան հաջողվեց մարմնամարզությունը ներառել նաև թուրքական դպրոցական ծրագրեր և նույնիսկ մեդրեսեների դասացուցակ՝ այդ ընթացքում սկսելով նաև իր մանկավարժական գործունեությունը: Անդամագրվելով «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը՝ Ս. Թարջանը

«Թերբիյե վե օյուն» թերթի՝ Ստոկհոլմի օլիմպիական խաղերին նվիրված համարը, 1912թ. ամառ

Սելիմ Սըրրը Թարջանի լուսանկարը՝ Շավարշ Քրիսյանին ուղղված ընծայագրով, «Մարմնամարզ», 1911թ. մարտ

Օսմանյան ռազմածովային ուսումնարանի սաները մարզանքի պահին, փոստային բացիկ, XX դարի սկիզբ, ՀՑԹԻ հավաքածու

Թուրք ըմբշամարտիկ Ռիզա բեյի պատկերով փոստային բացիկ, XX դարի սկիզբ, ՀՑԹԻ հավաքածու

Թուրք ըմբիշ Ձելալի լուսանկարը «Մարմնամարզից», 1911թ. հուլիս

մասնակցում է կուսակցության գաղտնի ժողովներին:[2]

Ի դեպ, սկզբնական շրջանում Սելիմ Սըրրը Թարջանը համագործակցում էր հայ մարզիկ և խմբագիր Շավարշ Քրիսյանի հետ, «Մարմնամարզ» հայկական հանդեսի էջերից մեկում Թարջանին անվանում է «մեր աշխատակից»: Հետագայում, հետևելով Շավարշ Քրիսյանի օրինակին, Սելիմ Սըրրը Թարջանը 1911թ. օսմաներենով հրատարակեց «Թերբիյե վե օյուն» մարզական հանդեսը, որը, սակայն, կարճ կյանք ունեցավ, քանի որ Թարջանի նախաձեռնությունները հիմնականում աջակցություն չստացան թուրք երիտասարդության կողմից, և մարզական հետաքրքրությունները սահմանափակվեցին նեղ շրջաններում:[3]

Ապարդյուն են անցնում նաև նրա ջանքերը իգական դպրոցներում մարմնակրթության դասեր մտցնելու ուղղությամբ:

1907թ. Սելիմ Սըրրը Թարջանը Պոլսի Թոքաթլյան հյուրանոցում հանդիպում է ժամանակակից օլիմպիական շարժման հիմնադիր Պիեր դե Կուբերտենի հետ, ով առաջարկում է նրան Օսմանյան կայսրությունում ստեղծել օլիմպիական կոմիտե, դառնալ Միջազգային օլիմպիական կոմիտեի անդամ և թուրք մասնակիցներ ուղարկել 1912թ. Ստոկհոլմում կայանալիք միջազգային օլիմպիական խաղերին:[4] Այդ հանդիպումից մեկ տարի անց միայն, երբ տապալվեց սուլթան Աբդուլ Համիդի բռնատիրությունը, և իշխանության գլուխ եկան երիտթուրքերը, Սելիմ Սըրրը Թարջանին հաջողվեց օլիմպիական կոմիտե ստեղծել:

1908թ. ստեղծված և ՄՕԿ-ի կողմից 1913թ. ճանաչում ստացած Օսմանյան ազգային օլիմպիական կոմիտեում ներկայացված անդամների թվում բացի թուրքերից ընդգրկված չէր որևէ այլ ազգության ներկայացուցիչ:

1913թ. մայիսին լույս տեսավ թուրքական մեկ այլ՝

Թուրքական ռազմական ուսումնարանի առաջին շրջանավարտ հայ սպաներ, 1913թ.

[2] **Çapan M. Şevki**. Türk Sporunda Selim SiiriTarcan. Ünyay Muğla, 1999, էջ 13-14:

[3] Նույնանուն հանդես Սելիմ Սըրրը Թարջանը սկսեց հրատարակել 1922 թ.:

[4] **Çapan M. Şevki**. Նշվ. աշխ., էջ 108:

«Իդման» (բառացի՝ մարմնամարզ) անունով պարբերականը, որի սեփականատերն էր Զեմի բեյը: Մարմնակրթության ու սպորտի հանդեպ հետաքրքրությունը բնորոշ էր միայն Պոլսի և Զմյուռնիայի թուրք երիտասարդությանը: Կայսրության ծայրագավառներում մարզական ակումբներ ու սկաուտական խմբեր ստեղծվեցին միայն Առաջին աշխարհամարտի նախօրեին, այն էլ հիմնականում իթթիհատականների գործուն միջամտության շնորհիվ՝ հատուկ նպատակ ունենալով թուրք երիտասարդության զինվորագրման նախապատրաստումը:

Ու թեև նոր սերնդի սպորտային ու մարմնակրթության ուսուցման ու դաստիարակության հայկական և թուրքական հայեցակարգերը որոշ դրվագներում ընդհանրություններ ունեին, այնուհանդերձ հիմնարար ձևակերպումներում և նպատակային ձեռնարկումներում առկա էին էական տարբերություններ, որոնք որոշ գործնական քայլերում ուղղակի հակասում էին միմյանց: Հայկական անդրանիկ սպորտային պարբերականի՝ «Մարմնամարզի» հրապարակումներին ու հայկական մարմնակրթական ու սպորտային կյանքի զարգացման տարբեր դրվագներին ծանոթանալիս առավել ակնառու է դառնում վերոհիշյալ իրողությունը:

Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո կայսրության փլուզման հետևանքով առաջացած ընդհանուր ճգնաժամային երևույթները չշրջանցեցին նաև սպորտի ոլորտը: Սակայն շուտով սպորտն ու սպորտային մրցակցությունը դառնալու էին թուրքական ազգայնականության ուժգնացման կարևոր բաղադրիչներից մեկը, քանզի հանրապետական Թուրքիայի հռչակումից հետո նոր ազգայնական ուժերը, մեծ նշանակություն տալով սպորտին և մարմնամարզությանը, այն դիտում էին որպես նոր ազգայնական գաղափարախոսությունն ամրագրելու և թուրք ազգային գերակայությունը հաստատելու կարևոր միջոց:

Պոլսի նշանավոր Թոքաթլյան հյուրանոցը, փոստային բացիկ, XX դարի սկիզբ, ՀՑԹԻ հավաքածու

Թուրք ըմբիշների պատկերներով փոստային բացիկներ, XX դարի սկիզբ, ՀՑԹԻ, Զևան Չելոյանցի հավաքածու

Փոստային բացիկ՝ Պոլսի թաղամասերից մեկի պատկերով, XX դարի սկիզբ

ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ԾՆՈՒՆԴԸ

Օսմանյան կայսրությունում ֆուտբոլն ի հայտ եկավ դեռևս XX դարի վերջերին: Մասնավորապես հայտնի է, որ Սալոնիկում բնակվող անգլիացիների մասնակցությամբ 1875թ. կայսրության տարածքում տեղի ունեցավ առաջին ֆուտբոլային խաղը: 1877թ. անգլիական ծագումով այս խաղի առաջին մրցումները տեղի էին ունեցել նաև Բորնովայի և Զմյուռնիայի մարզագետիններում: Այդուհանդերձ այս խաղերը սիրողական էին և պատահական բնույթ էին կրում: Միայն XX դարի սկզբներին կայսրությունում երևան եկան առաջին պրոֆեսիոնալ ֆուտբոլիստներն ու ֆուտբոլային խմբերը: Ֆուտբոլային ակումբների քանակի մեծացմանը զուգընթաց առանձին ֆուտբոլային լիգաներ ստեղծելու անհրաժեշտություն առաջացավ: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին միայն Պոլսում կազմավորվեցին

Թուրքական «Ֆեներբահչե» ֆուտբոլային թիմը, 1912թ.

մի քանի այդպիսի լիգաներ: 1901թ. անգլիացի Ջեյմս Լաֆոնտենի և Հորացիուս Արմիթաջի նախաձեռնությամբ ստեղծվեց «Կոստանդնուպոլսի ֆուտբոլային լիգան»: Հետագա տարիներին կայսրության մայրաքաղաքում ստեղծվեցին «Գատըգյուղի», «Ռումելի», «Կիրակնօրյա» և այլ ֆուտբոլային լիգաները:

Առաջին ֆուտբոլային ակումբը ձևավորվեց Զմյուռնիայում և կոչվում էր «Զմյուռնիայի ֆուտբոլային ակումբ»: Զմյուռնիայի մարզիկների ու ֆուտբոլիստների շարքում հայտնի էր հայ ֆուտբոլիստ Զարեհ Կույումջյանը: Վերջինս ֆրանսիացի և անգլիացի ֆուտբոլիստներից ձևավորված թիմի կազմում հանդես եկավ 1906թ. Աթենքում կայացած այսպես կոչված «Միջանկյալ» օլիմպիական խաղերում՝ արժանանալով արծաթե մեդալի:[5]

Շուտով Զմյուռնիայից Պոլիս տեղափոխված անգլիացիների կողմից ֆուտբոլային խաղեր կազմակերպվեցին նաև Պոլսում: Այստեղ խաղերը տեղի էին ունենում Գատըգյուղում և Մոդայում: Քանի որ ֆուտբոլային և նմանատիպ սպորտային խաղերին մահմեդականների մասնակցությունն արգելված էր, ֆուտբոլով սկզբնական շրջանում զբաղվում էին անգլիացիները, հայերը, հույները և հրեաները: Առաջին ֆուտբոլային թիմերի կազմ ներառված էին տարբեր ազգերի ներկայացուցիչներ, այդ թվում նաև հայեր: Հետագայում, այս մարզաձևի զարգացմանը զուգընթաց, ստեղծվեցին էթնիկական առումով միատարր ֆուտբոլային ակումբներ ու թիմեր:

XX դարի սկզբին երևան եկան առաջին թուրքական մարզական ակումբները՝ «Բեշիկթաշը» (1903թ.), «Գալաթասարայը» (1905թ.) և «Ֆեներբահչեն» (1907թ.): Սակայն սուլթանական բռնատիրության օրոք դրանք բնականոն գործել չէին կարող և լիարժեք կազմակերպություններ դարձան երիտթուրքական հեղաշրջումից հետո միայն՝ ավելի ուշ հայտնի դառնալով որպես

[5] Տես Football at the 1906 Intercalated Games, wikipedia.org

Թուրքական «Գալաթասարայ» ֆուտբոլային թիմը, 1908թ.

Զմյուռնիայի միջազգային վարժարանի ֆուտբոլային թիմը, 1900-ական թթ.

Կադըքյոյի ֆուտբոլային ակումբի թիմը, որը հաղթող է ճանաչվել 1906թ. առաջնությունում, փոստային բացիկ

Օսմաներենով լույս տեսած «Իդման» թերթի 1912թ. համարը՝ ֆուտբոլիստի պատկերով

ֆուտբոլային ակումբներ:[6] Թուրքական այս ակումբների հիմնական ախոյանները եղել են Պոլսի հայկական ֆուտբոլային թիմերը:

Երիտթուրք կառավարիչները ստեղծեցին նաև մի քանի ակումբներ ու մարզադաշտեր, որտեղ անցկացվում էին նաև ֆուտբոլային մրցախաղեր: Դրանցից առավել հայտնին «Union Club-İttihat Spor»-ն էր, որի մարզադաշտում 1911-1914թթ. տեղի ունեցան Հայկական օլիմպիական խաղերը:

Առաջին ենթախմբի խաղերն Օսմանյան կայսրությունում տեղի ունեցան 1904թ. «Կադըքյոյ», «Մոդա», «Էլիպս», «Իմոժեն» թիմերի մասնակցությամբ: Ավելի ուշ այս մրցաշարերին միացան նաև թուրք խաղացողներից ձևավորված «Գալաթասարայ», «Ֆեներբահչե», «Տելեֆոնչուլար» և մյուս թիմերը:

Այդ շրջանում հաճախ արտասահմանից Պոլիս էին գալիս հրավիրված ֆուտբոլային ակումբներ, և կազմակերպվում էին առանձին մրցախաղեր ու առաջնություններ: Անցկացվում էին նաև հրավիրված թիմերի հետ խառը կազմով մրցախաղեր: Օրինակ՝ 1912թ. թուրքական «Գալաթասարայ» և «Ֆեներբահչե» թիմերի խաղացողներից կազմված թիմը Պոլսում հանդես եկավ Զմյուռնիա քաղաքի այդ տարվա չեմպիոն «Հայ որսորդաց ակումբի» ֆուտբոլային թիմի հետ:

Հարկ է նշել, որ հայկական սպորտային «Մարմնամարզ» հանդեսը պարբերաբար անդրադառնում էր Օսմանյան կայսրության տարածքում և նրա սահմաններից դուրս կայացած ֆուտբոլային մրցախաղերին, տվյալներ հաղորդում դրանց արդյունքների և մրցաշարային աղյուսակի մասին: Այդ հրապարակումները եզակի աղբյուր են օսմանյան շրջանում ֆուտբոլի առաջնությունների և դրանց արդյունքների մասին: Հայկական մարզական հանդեսները հետպատերազմյան շրջանում ևս շարունակեցին մանրամասն տվյալներ ներկայացնել ֆուտբոլային մրցախաղերի ու առաջնությունների մասին:

Պոլսի ֆուտբոլային առաջնություններում խաղարկված առաջին արծաթե գավաթը, 1906թ.

[6] **Ergun Yurdadon**, նշվ. աշխ.:

Կոստանդնուպոլսի ֆուտբոլային թիմը: Լուսանկարը 1889թ.

Պոլսի «Մոդա» թիմի ֆուտբոլիստների խմբակային լուսանկար: Այս թիմը հիմնականում համալրված էր օտարերկրացիներով

Պոլսի համայնապատկերը, XX դարի սկզբի փոստային բացիկ, ՀՑԹԻ հավաքածու

Գլուխ երկրորդ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արևմտահայության ազգային, մշակութային, քաղաքական, ինչպես նաև մարզական կենտրոնը Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսն էր: Այստեղ էր հաստատված Ազգային պատրիարքարանը, որի շուրջը կենտրոնացած էին ազգային ինքնավարության մարմինները, բազմաթիվ նախակրթարաններ ու վարժարաններ, արևմտահայության հոգևոր, ուսումնական ու մտավոր հիմնական ներուժը:

Եվ բնական է, որ մարմնակրթության և սպորտի նկատմամբ հետաքրքրությունն Օսմանյան կայսրության հայ բնակչության շրջանում պետք է ի հայտ գար հենց պոլսահայության մոտ: Այստեղ դեռ 1840թ. հիմնվեց Արամյան կրթական ընկերությունը, որի առաջին հրատարակության՝ «Նկարագիր ուսմանց»-ի (հեղինակ՝ Հ. Մ. Գարտաշեանց, Վիեննա, 1845թ.) առաջաբանում նշվում էր. *«Բազում դպրոցք հրահանգ գրանին եւ իցէ թէ ես քան զիս յաւելեցուն, միայն թէ ի դիւրաւորութիւն անդր դպրոցաց հասանիցի որ այն ինքն է ի ձեռն յօրինման անդամով յաճումն ողջոյն մարմնոյ ազգի նպաստ լինել»*:[1] Ավելի ուշ՝ 1853թ., Պոլսի հայկական ուսումնական խորհուրդը կարևորում է հայկական վարժարաններում ֆիզիկական դաստիարակության ներմուծման խնդիրը: 1886-1887թթ. իր տեղեկագրում ուսումնական խորհուրդը, նշելով վարժարաններում մարմնամարզության դասերի ներմուծման կարևորությունը, գրում է. *«Ցաւ է խորհրդոյս որ բոլոր ի ճգանց հակառակ՝ անկարող եղաւ աշակերտաց մարմնամարզական պիտոյք հո-*

Պոլսի Գալաթա թաղամասի հայաբնակ հատվածներից մեկը, XX դարի սկզբի փոստային բացիկ, ՀՑԹԻ հավաքածու

[1] Տես **Բիւզանդ Թորիկեան**. Պատմութիւն Հայ մարմնակրթական ընդհանուր միութեան, հատոր Ա, Սկիզբէն մինչև 1939 թ., Պէյրութ, հ. 1, 1995, էջ 11.

[2] **Տես Բիւզանդ. Թորիկեան**, նշվ. աշխ., էջ 11:

[3] Նույն տեղում:



ՀԱՄԱՌՕՏ
ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ

Ի ՊԼՍՍ

Վարժարանաց և առանց դպրոցական առանձին ուսանողաց

ԹԱՐԳՄԱՆԵՑ
Կ. Բ. Փ.

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ
ՆՇԱՆ Կ. ՊԻՐԳԻՐԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ
1879

«Համառօտ մարմնամարզութիւն» գրքի շապիկը, 1879թ.

գալ առի չգոյէ մարմնամարզի դասատուի մը: Ուստի բաւական համարեց հանգստեան ժամերուն մեջ զանազան խաղերով զբաղեցնել զանոնք»:[2]

Հայկական դպրոցներում ու վարժարաններում մարմնամարզության դասերի խնդրին անդրադարձներ կան նաև ժամանակի արևմտահայ մամուլի այլ հրապարակումներում: 1886թ. իր համարներից մեկում «Արևելյան մամուլը» գրում է. *«Մարզն ու շարժելու միջավայրն անհրաժեշտ են կրթարանի մ՚որ մայրաղ սերունդը կիրահանգի, որ ֆիզիքական առողջապահութիւնը հիմնական մի պայման է իմացական զարգացման»*:[3] Հավելենք, որ արդեն XIX դարի վերջին Հայոց միացյալ ընկերությունն իր կրթական ծրագրերի մեջ մտցրեց մարմնամարզական ուսուցումը:

Այս քննարկումներին համընթաց լույս ընծայվեց մարմնակրթության թեմայով թարգմանական գրականություն, որը, անշուշտ, յուրօրինակ երևույթ էր արևմտահայ հասարակական կյանքում. հայոց լեզվով տպագրվեցին մի քանի պատկերազարդ գրքեր, որոնք մարմնամարզությամբ զբաղվելու ուղեցույց էին:

Առաջինն այս շարքում հիշատակության է արժանի դոկտոր Շրեբերի *«Մարմնամարզութիւն առանց գործիքի»* գրքույկը, որը լույս տեսավ 1878թ. Վ. Մարգարյանի թարգմանությամբ:

Երկրորդ կարևոր հրատարակությունը Վերնելի «Համառօտ մարմնամարզութիւն դպրոցաց» 228-էջանոց աշխատությունն էր, որը լույս տեսավ Պոլսում 1879թ. Կարապետ Փանոսյանի թարգմանությամբ:

Օսմանյան կայսրության տարածքում հայկական առաջին մարզական կազմակերպությունների ստեղծ-

Նկարազարդումներ «Համառօտ մարմնամարզութիւն» գրքից

«Ռոբերտ» քոլեջի սաները, XX դարի սկիզբի փոստային բացիկ, ՀՑԹԻ հավաքածու

ման ստույգ ժամկետների մասին սկզբնաղբյուրներում առկա են իրարամերժ տվյալներ: Դրանցից մեկի համաձայն՝ առաջին հայկական ֆուտբոլային ակումբները ստեղծվեցին Զմյուռնիայում 1900թ., երբ ձևավորվեցին «Արմենիա» և «Վասպուրական» թիմերը: Նույն Զմյուռնիայում 1901 թ. հունիսին Ա. Էլմասյանի ջանքերով տեղի է ունենում մարզահանդես, որին իրենց մասնակցությունն են բերում հարյուրից ավելի մարզիկներ: Հետագա տարիներին ևս նման մարզահանդեսները շարունակվում են:

Մարմնակրթության և սպորտի նկատմամբ ծնունդ առած այդ հետաքրքրության հետևանքով XX դարի սկզբին ասպարեզ եկան առաջին հայ մարմնամարզիկները, ովքեր հիմնականում օտար կրթական հաստատություններում ուսումնառություն ստացող ուսանողներ էին: Մասնավորապես հայ մարմնամարզիկներ կային Պոլսի ամերիկյան «Ռոբերտ» քոլեջի և Գալա-

Մարտիրոս Գոյումճյանը մարզանքի պահին, 1910-1912 թթ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

«Ռոբերտ» քոլեջի «Դաջ» աթլետիկ ակումբի խմբանկարը. կենտրոնում նստածը հայ մարմնամարզիկ Մարտիրոս Գույումճյանն է, լուսանկարը «Մարմնամարզից», 1912թ.

Պոլսահայ նշանավոր մարմնամարզիկ Մարտիրոս Գույումճյանը, ՀՅԹԻ, Գ. Ճոլոյյանի հավաքածու



Վարժանքների ուղեցույց «Մարմնամարզ» հանդեսից, 1912թ.

թասարայի ֆրանսիական բարձրագույն դպրոցի աշակերտության շարքերում: Ուսանողները հատկապես հետաքրքրված էին օլիմպիական մարզաձևերով, ինչպես օրինակ՝ վազք, լող, գնդի հրում, սկավառակի և նիզակի նետում և այլն:

Հայկական մարզական կյանքի զարգացման և հատկապես թիմային մարզաձևերի ու ֆուտբոլի ներմուծման համար լուրջ խթան հանդիսացան մի շարք հայ մարզիկների ուսումնառությունն արտասահմանի մարմնակրթական ուսումնական հաստատություններում և նրանց վերադարձը Պոլիս: Հայ մարզիկների առաջին փաղանգից հիշատակության արժանի են Շավարշ Քրիսյանը, Գրիգոր Հակոբյանը և Վահան Չերազը: Շավարշ Քրիսյանն ու Գրիգոր Հակոբյանն իրենց մարմնակրթական ուսումնառությունը ստացել էին 1903-1907թթ.՝ մասնակցելով ֆրանսիացի հայտնի մարմնամարզիկ ու մարզիչ Էդմոնդ Դեսբոնեի մարմնամարզական դպրոցի դասընթացներին: Շ. Քրիսյանն իր մարմնամարզական ուսումնառությունը շարունակելու նպատակով տեղափոխվում է Լոնդոն, որտեղ աշակերտում է հայտնի մարզիչ Էժեն Սանդոյին: Վերջինիս մարմնամարզական դասավանդման մեթոդներին ավելի վաղ ծանոթացել էր Լ. Հակոբյանը, ում խորհրդով էլ Շ. Քրիսյանը կապ է հաստատում Է. Սանդոյի հետ: Գ. Ճոլոլյանը գրում է. *«Կատարեալ մարմնակրթութիւն ստանալով ու առաւելագոյն չափով իրենց մարմինը զօրացնելով չգոհացան, այլ յետագային լաւագոյն կազմակերպիչներն եղան հայ մարմնակրթութեան: Իրենք են որ նոր սերունդին փոխանցեցին մարմնակրթանքի բարիքները զոր ստացած էին Desbonnet-ի դպրոցեն»*:[4]

[4] **Գրիգոր Ճոլոլյան**, Հուշեր և նիշեր, «Ազդակ», 04. 12. 1938:

Փաստորեն այս երեք ռահվիրաների ու նրանց համախոհների շնորհիվ սկզբնավորվեց ու զարգացում ապրեց արևմտահայ, մասնավորապես պոլսահայ մարմնակրթական շարժումը:

Թերևս, առաջինը հավասարների մեջ կարելի է նշել Շ. Քրիսյանի անունը, ով 1909թ., վերադառնալով Պոլիս, մեծ ոգևորությամբ ձեռնամուխ եղավ հայկական մարմ-



ՄԱՐՄՆԱՄԱՐԶ 337

Հեծանիւի մրցում
(4200 մէթր)

Առաջին՝ Վարպետ Վարժապետեան, 6 վայրկ. 1/5 երկվ.

Ութսունորեակ ցատկ

Առաջին՝ Մկրտիչ Մկրտեան, 5.19 1/2 մէթր.

Բարձրութիւն ցատկ

Առաջին՝ Բանտալի Քիւրիւրեան (յոյն), 1.47 մէթր.

Հեռաւոր բարձր ցատկ

Առաջին՝ Հայկ Պասմանեան, 2.47 1/2 մէթր.

Կոկած հեռու ցատկ

Առաջին՝ Մկրտիչ Մկրտեան, 2.85 մէթր.

Մկաւառակ նետ

Առաջին՝ Մկրտիչ Մկրտեան, 35.05 մէթր.

Նիզակ նետ

Առաջին՝ Մկրտիչ Մկրտեան, 47.12 1/2 մէթր.

Ծանր նետ

Առաջին՝ Մկրտիչ Մկրտեան, 11.58 մէթր.

Հարիւր եարդա վազք

Առաջին՝ Մկրտիչ Մկրտեան, 11 երկվ.

ՀԵԾԱՆԻՒԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ՝
ՓՈՓԻԼԻՐՈՒ ԱՍՏՈՒԾ

1260 մէթր

Առաջին՝ Եմիլ պէյ։

2100 մէթր

Առաջին՝ Սամի Պէյ։

Այս մրցումներէն վերջ՝ Թուրքերէն հանրագրաստով մրցում մը տեղի ունեցաւ. ամէնէնք Պոլսէն և Պայազիտ յաջողութիւնքն ֆոտոտած խուռներ մը միջեւ. ամէնէնք Պոլսէն։ Մէկ վարպետ պրոֆեսորներ։

Մեզպէս տարբեր տարբերութիւնքներէն կը տեսնուի, Հայերը գիտակցեցան առաջին հանդիսաւորած են։ Իրաւ է թէ իրենց բէքարները բաղդատմամբ Հայ Ազգերական Միութիւնս բէքարներուն, ոչինչ բան չեն, բայց չատ գոհացուն նկարագիր ունի ֆոտոտան թէ Թուրքերը տարբա՞ Նա Ամ Հայրական խարբերուն մէջ։ Անոնց պիտք ունին ուշխատիլ գոնէ իրենց տարբան հանդիսաներուն մէջ լաւ դիրք մը գրաւելու համար։

Երբ հոն գտնուող հանդիսաւոր Հայերը իրենց տարբերիքները սկսած են բառուն ծանրերով ոգեւորել, Թուրքերը վերադարձած եւ բերելով մը ասանելով, տարբերած են թէ ինչո՞ւ ասդ խարբերիներ, չէ՞ մի որ ամենքն ալ Օսմանցիներ են, Հայեր։ Շատ բանաւոր առարկութիւն մը, որ մեզի մեզի խարդել կուտայ թէ ինչո՞ւ տարբան Հայուն առաջնութիւնները գրաւուին։ Համար անոր Օսմանցիական յատկութիւնները, խրատունքները նեղսան կ'ասուին, իսկ ինչպէսու, կարդացուածներս տարեն իրր Հայ՝ և ոչ թէ իրր Օսմանցի կը նեղասուին։ Մենք ալ այդ խնդրոն կ'ուզենք իրենց։

ՅՅՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԻՄԱՑԵՐ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Գրաստան 26, Կիրակի օր, Թարգիսի մէջ տեղի ունեցաւ։ «Թիւ Ազիզեան մարմնամարզական ակումբին տարբերան մրցումներուն վերջերդրդը։ Հանդիսաւոր արդիւնքներով։

100 մէթր վազք

Ա.— Փ. Տոքատլեան 50 1/5 երկվ.
Բ.— Ն. Մաքրան 50 1/5 երկվ.
Գ.— Ա. Զանիքեան 1 վայր. 2 երկվ.

336 ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

ՍՒՕՐԻ ԿԵԱՆՔ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

ՀԱՅԵՐՈՒՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆԸ

Անպատմելիր Չին, Կիրակի օր, Գալատիոյ Լուսիոն Գիւղի ընդարձակ խաղավայրին վրայ տեղի ունեցաւ «Ձէէնէյ-Պահ-ջէ» ակումբին կողմէ կազմակերպուած միջազգային խաղերը։

Մեծ բազմութիւն մը ներկայ էր, որուն մէջ մեծապոյծ տեղը կը գրաւէին Թուրքեր ու մանաւանդ պիտակներով՝ որոնք անչուչա ազատելու իրենց Պայրամի տաներէն, փաթաթած էին գալ և քաջալերել հանդիսէն մը՝ որուն մէջ ուշագրաւ կը կարծուէր որ Թուրք մարզիկները առաջին պիտի երեւին, ի յայտ բերելու իրենց չորս տարուան աշխատութեան պտուղը։

Թուրք մարզիկներուն վրայ գրուած ակնկալութիւնները ի դերեւ եկան, որովհետեւ գրեթէ բոլոր մրցումներուն մէջ ալ Հայերը առաջնութիւնը խլեցին ներկաներուն՝ բայց մանաւանդ ներկայ Հայերուն բուռն ծափահարութեանց մէջ։ տարբեր կուստոնք մրցումներուն արդիւնքը։

Հեծանիւի մրցում
(10 500 մէթր)

Առաջին՝ Վարպետ Վարժապետեան, 21 վայրկ. 28 1/5 երկվ.

Եղեկարած հեծանիւի (motocyclette) մրցում
(10500 մէթր)

Առաջին՝ Ազատ Փարպետեան, 15 վայրկ. 27 1/5 երկվ.

«Մարմնամարզի» հաղորդումը Պոլսում կայացած միջազգային մրցումներում հայ մարզիկների առաջնության մասին, 1912թ.

Պոլսի «Կեդրոնական» վարժարանի 1913թ. շրջանավարտները, ՀՑԹԻ, Գրիգոր Ճոլոյանի հավաքածու

նակրթական ու սպորտային կյանքն ամուր հիմքերի վրա դնելու և հայ երիտասարդներին դեպի մարմնամարզությունը մղելու շնորհակալ գործին: Նրա նախաձեռնությամբ և պոլսահայ հայտնի մտավորական Հակոբ Սիրունու խորհրդով 1911թ. փետրվարին լույս տեսավ հայկական անդրանիկ սպորտային պարբերականը:

Շավարշ Քրիսյանի համախոհների մեջ աչքի էին ընկնում Գրիգոր և Լևոն Հակոբյանները և Գրիգոր Մերջանովը, ովքեր մեծ դեր ունեցան պոլսահայ երիտասարդների ֆիզիկական դաստիարակության գործում: Գրիգոր Հակոբյանը հիմնականում գործունեություն էր ծավալել Սկյուտար թաղամասում, Բոյաճը գյուղում և Օրթագյուղում, իսկ Գրիգոր Մերջանովը՝ Սամաթիայում և Մաքրիգյուղում՝ կազմակերպելով «Վահագն» և «Տիտան» մարմնամարզական ակումբները: Գ. Մերջանովը դեռևս 1904թ. բուլղարական մարմնամարզական ակումբի կազմում մասնակցեց Պրահայում տեղի ունեցած միջազգային մարմնամարզական հանդեսին:

Եզնիկ Քաջունին, դառնալով այս առաքելության տեսական գաղափարախոսը և տարածողը, հանդես էր գալիս ֆիզիկական կրթության օգտակարության թեմայով դասախոսություններով: Ազգային վարժարաններում մարմնամարզության դասեր ներառելու անհրաժեշտության շուրջ դասախոսություններով հանդես էր գալիս նաև Արամյան վարժարանի տնօրեն Արամ Նիկողոսյանը: Վերջինիս և Հովհաննես Հինդլյանի համառ ջանքերով մարմնամարզի դասերն ուսումնական խորհրդի կողմից պարտադիր ներառվեցին հայկական ուսումնական հաստատությունների դասացուցակ:

Պոլսի հայկական մարմնամարզական շարժման երախտավորներից էր Պոլսի Կեդրոնական վարժարանի սան Վահան Չերազը, ով, Անգլիա կատարած այցելության ընթացքում հրապուրվելով ֆուտբոլով, Պոլիս վերադառնալով, ձեռնամուխ է լինում հայկական թիմերի պատրաստման գործին: Իր համախոհների միասնական ջանքերով կազմում է «Սանթրալ» (առնչվում է Կեդրոնական վարժարանի անվանը) ֆուտբոլային թիմը, որը թվով երկրորդ հայկական ֆուտբոլային թիմն էր: Այն բացառապես կազմված էր Կեդրոնական վարժարանի սաներից, որոնց թվում առանձնանում էին Եղիշե Քաջունին, Հայկ Սեմերճյանը, Կարապետ Գազանճյանը, Կոպեռնիկ և Արտաշես Սեֆերյանները:

Հովհաննես Հինդլյան (1866-1950)

Այդքանով չբավարարվելով, Վ. Չերազը Պրոթի կղզում ստեղծում է համանուն մարզական խումբը, իսկ կարճ ժամանակ անց, միավորելով այս սպորտային-

Պոլսի Սամաթիա թաղամասի «Վահագն» մարմնակրթական ակումբի սաներն ու մարզիչները, 1911թ.

Նշանավոր մարզիկ Էդմոն Դեսբոնեի հեղինակած «Ֆիզիկական ուժը» գրքի կազմը, Փարիզ, 1910:

Էդմոն Դեսբոնե (1867-1953)

Էժեն Սանդո (1867-1925)





Հայ նշանավոր մարմնամարզիկ Գրիգոր Հակոբյանի լուսանկարները «Մարմնամարզից»՝ մարմնի կառուցվածքի ցուցադրմամբ, 1906-07թթ.



A Monsieur Desbonnet
professeur de Culture Physique
en ligue de haute estime
Raoul M. Hagopian
Constantinople le 28 Nov 1907

մարմնամարզական կազմակերպությունները, Եզնիկ Քաջունու հետ համատեղ ստեղծում է «Տորք» ակումբը, որը յուրօրինակ երևույթ էր ժամանակի հայ իրականության մեջ, քանզի դրանով նախկին թաղային կազմակերպությունները *«շրջաններու լաւագոյն ուժերու իւրացումով եւ հաւաքական ճիգի համադրութիւնով»* միավորվեցին մեկ ընդհանուր ազգային ակումբի մեջ:

1906թ. «Ռոբերտ» քոլեջի, Պարտիզակի Ամերիկյան վարժարանի և Պերպերյան վարժարանի աշակերտության համատեղ ջանքերով հիմնվում է ֆուտ-

Le Petit Journal

5 Centimes SUPPLÉMENT ILLUSTRÉ 5 Centimes

ABONNEMENTS

Le Petit Journal illustré, matinée, soirée..... 10 cent.

Le Petit Journal agricole, 5 cent. Le Petit Journal, 10 cent.

Le Petit Journal illustré de la Jeunesse..... 10 cent.

DIMANCHE 7 MAI 1905

A BORDEAUX. — LA FÊTE FÉDÉRALE DE GYMNASTIQUE

Mouvements d'ensemble exécutés devant le Président de la République

Փարիզում լույս տեսնող «Le Petit Journal» թերթը ներկայացնում է մի տեսարան Բորդոյում կայացած մարմնամարզական փառատոնից, 1905թ.



Լևոն Հակոբյան
լուսանկարը «Մարմնամարզից», 1911թ.

Գրիգոր Ճոլոլյան
լուսանկարը 1910-ական թթ.

Շավարշ Քրիսյանի
լուսանկարը,
Փարիզ, 1907թ.:
Տպագրվել է «La
Culture physique»
հանդեսի 1937թ.
համարում

Եզնիկ Քաջունու
լուսանկարը,
1920-ական թթ.

Լ.-ժ. ՔԻՒՄԼԻԷՆ

ԱՄԵՆՈՒՆ
ՄԱՐՄՆԱՄԱՐՋԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ՖՐԱՆՍԵՐԷՆԷ
ԵԶՆԻԿ Յ. ՔԱՋՈՒՆԻ
(Ամէն իրաւունք վերապահուած)

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԱՆՈՒԿ Յ. ԳՕՁՈՒՆԵԱՆ
Մեծ-Նոր Խան, թիւ 45
1912



Լ.- Ժ. ՔԻՒՄԼԻԷՆ

ԱՄԵՆՈՒՆ
ՄԱՐՄՆԱՄԱՐՋԸ

Երկար եւ բաջառոյզ ապրելու համար ընել ամենօրեայ մի բանի վայրկեանի մարզանք. առանց զործիքի, շուէտական մեթոտով:

ԹԱՐԳՄԱՆԵՑ ՖՐԱՆՍԵՐԷՆԷ
ԵԶՆԻԿ Յ. ՔԱՋՈՒՆԻ

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԱՆՈՒԿ Յ. ԳՕՁՈՒՆԵԱՆ
Մեծ-Նոր Խան, Թիւ 45
1912

Լ. Քյումլիենի «Ամէնուն մարմնամարզը» գրքի հայերեն թարգմանության շապիկը

Պոլսի «Վահազն» ակումբի սաները, 1912 թ., ProjectSAVE-ի հավաքածու



ՀԱՅ ԱԿՈՒՄԲԻ ՄԸ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Պայրամին երրորդ օրը մարզական մրցումներ և ֆութպոլի մրցում տեղի ունեցան Իզմիթի կառավարչին նախագահութեամբ, որուն մէջ Պարտիզակի «Արծիւ Միութիւնը ոչինչի դէմ 3 կոլով յաղթական եկաւ։ 20 քիլոմէթր հեծանիւի մրցումին մէջ ալ առաջին եկաւ Վաղարշակ անուն երիտասարդ մը։ Մեր հեծանիւորդ մրցութիւնները յայտնելով լաւագոյն յաջողութիւններ կը մաղթենք։



բոլի «Սկյուտար» խումբը: Մեկ տարի անց՝ 1907թ., Մկրտիչ Մկրյանի ջանքերով Սկյուտարում ստեղծվում է «Ռաֆֆի» մարմնամարզական ակումբը, որը գաղտնի էր գործում: Ավելի ուշ Սկյուտարում հիմնվում է «Հայորդիներ» անվամբ մեկ այլ կազմակերպություն, որի նպատակն էր իր անդամներին օժտել ֆիզիկական դաստիարակության շնորհներով, ինչպես նաև քաղաքացիական հատկություններով և արժանիքներով:

Արդեն XX դարի սկզբներին Պոլսի օտար վարժարաններում ուսանող հայ երիտասարդության շրջանում մարմնամարզության և սպորտի հանդեպ առկա մեծ սերն ու հետաքրքրությունը պոլսահայ երիտասարդության շրջանում մարմնամարզական տպավորիչ շարժման տարածման համար խթան հանդիսացան՝ դրանով իսկ հայկական ակումբներին վերապահելով Օսմանյան կայսրության տարածքում սպորտի տարածման ու զարգացման առաջատարների դերը: Ինչպես վերը նշվեց, մարմնամարզական այդ շարժման ռահվիրաներն էին Շավարշ Քրիսյանը, Մկրտիչ Մկրյանը, Վահրամ Փափազյանը, Գրիգոր Հակոբյանը, Վահան Չերազը, Գրիգոր Մերջանովը, Քաջունի եղբայրները, Հայկ և Գրիգոր Ճոլոյանները և այլք:

Հայկական ակումբներն ու մարզական միությունները, որպես կանոն, ունեին իրենց տարբերանշանները, դրոշները, շատ դեպքերում նաև համազգեստը, որոնք կարևոր միջոցներ էին խորհրդանշական պատկանելության զգացում ստեղծելու համար: Ակումբների միջև բացահայտ մրցակցություն և դրանից բխող անհանդուրժողականության դրսևորումներ չեն գրանցվել, սակայն նկատելի է, որ սկզբնական շրջանում

Հայկական օլիմպիական և Պոլսի միջազգային մրցումների հաղթող հեծանվորդ Վաղարշակ Վարժապետյանը: Լուսանկարները «Մարմնամարզից», 1912-13թթ.



ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԵՍԻՓԵԱՆ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Բացման խօսք, ընթերցում նամակներու և ասուցում պատասխանների։

Բ. Զեկուցում Հայ Մարմնամարզական Միութեան նպատակին մասին և քննարկութիւն բանաձեւի։

Գ. Զեկուցում հայ ողիմպիական խաղերու մասին և քննարկութիւն բանաձեւի։

Դ. Զեկուցում հայ մարմնակրթական շարժման մասին և քննարկութիւն բանաձեւի։

Ե. Զեկուցում հայ վարժարաններու մէջ մարմնակրթութեան մասին և քննարկութիւն բանաձեւի։

Զ. Զեկուցում հայ Մարմնամարզական Միութեան պիւտճէի եւ քննարկութիւն բանաձեւի։

Է. Զեկուցում մարմնակրթական շարժման համար հայ շրջաններու մէջ կատարուելիք փրոփականտի մասին եւ քննարկութիւն բանաձեւի։

Ը. Ընտրութիւն կեդրոնական գործադիր մարմնի եւ փակման խօսք։

դրանք գործել են մեկ կամ մի քանի անվանի մարզիկների ազդեցության շուրջ, իսկ վերջիններս առավելապես ձգտում էին ինքնադրսևորվելով բարելավել առաջին հերթին իրենց անհատական ցուցանիշները:

Հայկական ակումբներից առանձնացված ու մեկուսի դիրք էր բռնել Սկյուտարի մարմնամարզարանը, որը խուսափում էր հայկական ակումբների միջև պարբերաբար կազմակերպվող մրցումներին մասնակցելուց, այդ թվում նաև Հայկական օլիմպիական խաղերին՝ այդպիսի դիրքորոշման համար արժանանալով քննադատության: Իրավիճակը փոխվեց երրորդ օլիմպիական խաղերի ընթացքում, երբ այս ակումբը ևս որոշեց միանալ համահայկական մարզական ձեռնարկին՝ արժանանալով դրական գնահատականի: Ակումբները մարզական գույքը, որպես կանոն, պատվիրում էին արտասահմանից, մասնավորապես Անգլիայից:

Հայկական մարզական ակումբների գործունեությանն աջակցելու համար կազմակերպվում էին տարաբնույթ վիճակահանություններ, դաշտահանդեսներ, թատերական ներկայացումներ և ֆիլմերի ցուցադրություն:

Տարբեր սպորտաձևերի և մարզական կյանքի ներթափանցումն արևմտահայ իրականություն որպես այդպիսին չէր կրում որոշակի ընտրախավին հատուկ բնույթ, և մարզիկների ու ակումբների անդամների սոցիալական կազմը դիտարկելիս անմիջապես աչքի է զարնում հիմնականում ուսանող երիտասարդության ներկայացուցչական կազմը: Սա բնավ տարօրինակ չէր բռնապետությունից դեպի չափավոր ազատականացում գնացող, նոր ձևավորվող և տարածում ստացող հասարակական երևույթի համար:

Սկյուտարի հայ մարմնամարզարան կրծքանշան, Ամերիկայի հայկական թանգարանի հավաքածու



262 ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

ԿՈՉ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ

1913թ. լույս են տեսնում մի քանի հետաքրքիր հրատարակություններ, որոնք Օսմանյան կայսրության հայ երիտասարդության շրջանում էլ ավելի զգալի են դարձնում սպորտի և մարմնամարզության հանդեպ աճող հետաքրքրությունը: Դրանցից մեկը Եզնիկ Քաջունու թարգմանությամբ լույս տեսած Լ. Քումլիենի *«Ամենուն մարմնամարզ»*-ն էր, իսկ մյուսը՝ Շ. Քրիսյանի և Հ. Հինդլյանի համահեղինակությամբ լույս տեսած *«Պոյ Սկաուտը եւ կեանքին նպատակը»* գրքույկը: Ավելի ուշ լույս տեսան Վարագ Փոխարյանի *«Ֆութպոլի խաղը»*, Արթօ Գալփաքճյանի *«Մարմնակրթութիւն»*-ը և այլն:

Հայ սկսնակ մարզիկների համար սպորտային և մարմնամարզական խաղերի հիմնական վայրը Պրոթի կղզին էր, որտեղ կազմակերպվում էին ֆուտբոլի, թենիսի, լողի և այլ սպորտաձևերի մրցումներ:

Շատ կարևոր հանգամանք էր հայկական սպորտային և սկաուտական շարժման գործում հոգևոր դասի ներկայացուցիչների, մասնավորապես Պատրիարքի աջակցությունը: Վերջինս իր հովանավորության տակ վերցրեց նաև Հայկական օլիմպիական խաղերը, որտեղ ներկա էր նաև հայ նշանավոր երգահան Կոմիտաս վարդապետը: Մարմնակրթական շարժմանը գավառում գործուն աջակցություն ցուցաբերեցին Գարեգին վարդապետը Արաբկիրում և Արտավազդ վարդապետը Ուրֆայում:

Հայկական սպորտի զարգացման ու հաջողությունների ակնառու վկայությունները դարձան Պոլսում թուրքական ակումբների և երիտթուրք զինվորականների կողմից կազմակերպված մրցահանդեսների ժամանակ հայ մարմնամարզիկների արդյունքներն ու ակնառու հաջողությունները: 1911թ. ապրիլի 1-4-ը

«Մարմնամարզի» կոչը հայ երիտասարդությանը՝ մարմնակրթական շարժմանն աջակցելու համար

Պոլսահայերի հավաքույթ Սկյուտարի հայ մարմնամարզարանում, 1910-ական թթ., ՀՅԹԻ հավաքածու

Պոլսի Կեդրոնական վարժարանի աշակերտներն ու մարզիկները Բեյքոզում, մայիսի 14, 1914թ.

Հանդիսավոր ճաշկերույթ Սկյուտարի հայ մարմնամարզարանի սաների մասնակցությամբ, 1913թ. ապրիլ, ՀՅԹԻ հավաքածու

թուրքական «Գալաթասարայ» ակումբի կողմից հունգարական մարմնամարզական խմբի՝ Պոլիս գալու առիթով կազմակերպված միջազգային մրցումների ժամանակ հայկական կողմից աչքի ընկան՝ մեկ մղոն վազքի մրցաձևում՝ Վահրամ Փափազյանը, սկավառակ նետելու մարզաձևում՝ «Ռոբերտ» քոլեջի սան Մկրտիչ Մկրյանը:

Արգելավազքի և ձողով ցատկելու մրցաձևում առաջինը հաղթող դարձավ «Ռոբերտ» քոլեջը ներկայացնող Մարտիրոս Գույումճյանը: Վերջինիս ջանքերով «Ռոբերտ» քոլեջում ստեղծվեց աթլեթիկայի «Դաջ» անունով խումբը:

Դրվատելով հանդերձ Պոլսում նման միջազգային

մրցումներ կազմակերպելու թուրքական կողմի նախաձեռնությունը՝ Շավարշ Քրիսյանը «Մարմնամարզում» քննադատում է նաև կազմակերպական աշխատանքներում նկատված բացթողումները՝ այդ առիթով գրելով. *«Ճշմարտութիւնը ըսելու համար, այդ հանդէսը իբր նորութիւն կը ծափահարենք, բայց չենք կրնար մեր թուրք հայրենակիցներուն նկատել չտալ թէ մէկ ծայրէն միւսը արևելեան հանդէսի մը տպաւորութիւնը թողուց, այնքան պակաս էր կարգ ու կանոն՝ կարգադիր մասնախումբին, չըսելու համար անհոգութեան, զէթ անփորձութեան հետևանքով»*(«Մարմնամարզ», Ա տարի, թիւ 4, մայիս, 1911):

1912թ. «Տորք» ակումբը կազմակերպեց լողի մրցումներ: Հիշատակության արժանի են Վահան Չերազի և Արարատ Քրիսյանի մասնակցությամբ Պրոթի կղզում («Հայ կղզի») կազմակերպված լողի մրցումները: Պոլսում կազմակերպված հեծանվավազքի միջազգային և հայկական մրցումներում իրենց հավասարը չունեին Վաղարշակ Վարժապետյանն ու Աշոտ Փափազյանը, իսկ թենիսի մրցախաղերում աչքի էր ընկնում Պոլսի Հայորդիների միության սան Վահրամ Շիրինյանը, ով բազմիցս հաղթող հռչակվեց: Հայ մարմնամարզիկների ակնառու հաջողությունների մասին են վկայում «Մարմնամարզի» արժեքավոր հաղորդագրությունները Պոլսում կազմակերպված միջազգային մրցումներում նրանց ունեցած հաջողությունների վերաբերյալ:

Տարբեր տարիների Պոլսում գործել են «Կիլիկիա», «Կայծակ», «Շանթ», «Շարժում», «Սասուն», «Վարազդատ», «Արծիվ, «Արագած», «Արարատ», «Տիգրան», «Փայլակ» և այլ մարզական խմբեր ու միություններ: Դրանց կողքին աչքի էր ընկնում 1909թ. ստեղծված «Վահագն» մարզական միությունը: Տիրապետելով բոլոր մարզաձևերին՝ «Վահագնի» սաները իրենց մասնակցությունն են բերել Հայկական բոլոր օլիմպիական խաղերին:[5]



Հայկական մարմնակրթական ու սպորտային կյանքի աշխուժացումը վկայություն էր որակապես նոր հասարակական գործունեության ոլորտի ձևավորման և ազգային ինքնակազմակերպման նոր դրսևորման, որն իր որոշիչ դերակատարությունը պիտի ունենար նաև ազգային համախմբման ու ինքնության ձևավորմանը նոր որակներ հաղորդելու գործում: Հայկական սպորտային և մարմնամարզական շարժման ծնունդն ու բուռն զարգացումը Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսում լուրջ խթան հանդիսացան Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայի հայկական բնակավայրերում համանման միությունների ու ակումբների ձևավորման համար, որը հետագայում պետք է դառնար համահայկական ընդհանուր մարզական կազմակերպության ստեղծման հիմքը:

[5] **Ներսէս Բախտիկեան**. Յուշամատեան ՀՄԸՄ-ի, 1918-1958, Պէյրութ, 1958, էջ 40-41:

«Տորք» ակումբի մրցումների արդյունքները, «Մարմնամարզ», 1912թ.

Պոլսի հայկական ֆուտբոլային թիմերից մեկը: Լուսանկարը 1910-ական թթ., ՀՑԹԻ հավաքածու

ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ԾՆՈՒՆԴԸ

Տարբեր տվյալներ կան Օսմանյան կայսրությունում առաջին հայկական ֆուտբոլային ակումբների ու թիմերի առաջացման նախապատմության մասին: Հայտնի է, որ Շավարշ Քրիսյանը դեռ 1905-1906թթ. հիմնեց հայկական առաջին՝ «Բալթալիման» ֆուտբոլային թիմը: Նույն շրջանում Վահան Չերազն Անգլիայում ուսանելուց հետո, վերադառնալով Պոլիս, իր հետ բերեց ֆուտբոլի գնդակ և Կեդրոնական վարժարանի իր դասընկերներին ու ապագա թիմակիցներին ծանոթացնելով խաղի կանոններին՝ ստեղծեց ֆուտբոլի «Սանթրալ» թիմը: Պոլսահայ նշանավոր մտավորական Հակոբ Սիրունին իր հուշերում նշում է, որ առաջին փորձնական խաղերը տեղի էին ունենում Պոլսի Շիշլի թաղամասում և Վելի Էֆենդի կոչված վայրում:

Պրոթի կղզում Վահան Չերազի նախաձեռնությամբ ստեղծվեց մեկ այլ ֆուտբոլային թիմ, որի կազմում հանդես էին գալիս Գաբրիել Մաճառյանը, Տիգրան Խոյանը և ուրիշներ: Ավելի ուշ ստեղծվեցին նաև «Սկյուտար», «Գում Գափու» և «Տորք» ակումբները:

Եվ չնայած սուլթանական ռեժիմը, ֆուտբոլը համարելով վտանգավոր խաղ, արգելում էր հրապարակային մրցախաղերի անցկացումը, այնուհանդերձ այս մարզաձևն ընդունված էր ամերիկյան և ֆրանսիական կրթական հաստատություններում, որտեղ ուսանող հայ, հույն և մյուս ազգերի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի էին ունենում ֆուտբոլի խաղեր ու առաջնություններ:

1908թ. կազմավորված «Տորք» ակումբի անդամները, ովքեր հավաքվել էին Պոլսի զանազան թաղամասերից, հիմնականում Գում Գափուից, ֆուտբոլից զատ զբաղվում էին լողով, դաշտային խաղերով, կազմակերպում արշավներ: Վահան Չերազը մեծ դերակատարություն ունեցավ «Գում Գափու» և «Սանթրալ» ակումբների միավորմամբ ստեղծված այս ակումբի կազմակերպման գործում, իսկ նրա հորեղբայրը՝ նշանավոր արևմտահայ գործիչ ու մտավորական Մինաս Չերազը, դարձավ ակումբի «կնքահայրը»՝ առաջարկելով նաև խաղացողներին կրել սև և կարմիր մարզահագուստ:

Ակումբի ամենաակտիվ անդամներից էին Հայկ Ճոլոլյանը, Տիգրան Խաչատուրյանը, Պողոս Շապոյանը, Հայկ և Հարություն Սեմերճյանները, Սիմոն Պապիկյանը, Լևոն Հակոբյանը, Տատ և Միջի Տատյանները, Կարդոս Հարությունյանը, Գրիգոր Ճոլոլյանը, Կարապետ Պոյաճյանը, Զարմայր Դերձակյանը, Զարմայր և Ավետիս Աշճյանները, Արամ Փափազյանը, Հարություն Գոգորյանը և ուրիշներ:



Արևմտահայ հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ Մինաս Չերազը (1852-1928)

Վահան Չերազ (1886-1927)

«Տորք»-ի անդամներից Հայկ Սեմերճյանը, Վարագ Փողարյանը և Հայկ Ճոլոյանը հաջողությամբ հանդես էին գալիս նաև մյուս մարզաձևերում՝ մասնավորապես թեթև աթլետիկայի ասպարեզում: Ավելի ուշ Վ. Փողարյանը 1921թ. հեղինակեց «Փութպոլին խաղը» գիրքը:

Հիշատակության են արժանի նաև մյուս հայկական ֆուտբոլային թիմերը, որոնք որոշիչ դերակատարություն ունեցան հայ երիտասարդության շրջանում այս խաղի տարածման գործում: Մասնավորապես պոլսահայ ֆուտբոլային թիմերից ավագագույնը՝ «Բալթալիմանը», կազմավորվել էր 1905-1906թթ. «Ռոբերտ» քոլեջի սաների, Ռումելի Հիսարի ու Բոյաճը գյուղի հայ երիտասարդների նախաձեռնությամբ: Այս թիմում էին հանդես գալիս Գրիգոր և Լևոն Հակոբյանները, Շավարշ Քրիսյանը, Վարագ Փողարյանը, Վարդգես Աղաբեկյանը, Միհրան Նաքաշյանը, Գ. Գասապյանը, Ս. Պողոսյանը,

«Տորք» և «Արաքս» թիմերը ընկերական հավաքույթի ժամանակ, Պրոթի կղզի, 1908-09թթ.

«Տորք» ակումբի կանոնագիրքը և կնիքը, 1912թ.

Հ. Խուպեսերյանը և այլք: Թիմում հանդես են եկել նաև այլազգի մարզիկներ: Մասնակցելով 1905-06թթ. Պոլսում կայացած միջազգային մրցումներին՝ «Բալթալիմանը», պարտություն կրելով միայն ժամանակի ուժեղագույն «Կադըքյոյ» թիմից, հաղթանակ տոնեց «Մոտա» ակումբի և «Imogen» թիմերի նկատմամբ և խոշոր հաշվով առավելության հասնելով թուրքական «Գալաթասարայի» նկատմամբ՝ գրավեց մրցանակային երկրորդ տեղը: Այդ մրցախաղին ներկա էին շուրջ 3000 հայ, եվրոպացի, հույն և թուրք հանդիսականներ: Ներկա էին նաև թուրք բարձրաստիճան զինվորականներ, որոնք, ինչպես այդ խաղի մասնակից հայ ֆուտբոլիստ Ստեփան Խանջյանը, հետագայում վերհիշում են. *«հրաւիրուած [էին] Կ. Մէրայի կողմէ իրենց յաղթանակը ծափահարելու...»*: Այս խաղն ավարտվեց հայկական թիմի փայլուն հաղթանա-

Պոլսի «Տորք» ֆուտբոլային ակումբի թիմը: Կենտրոնում նստածը Վահան Չերազն է, 1910-ական թթ.: Լուսանկարը «Մարմնամարզից»

«Պերպերյան» վարժարանի ֆուտբոլային թիմը: Լուսանկարը «Մարմնամարզից», 1912թ.

կով, որը հինգ անպատասխան գնդակ ուղարկեց հակառակորդի դարպասը:[6]

Սա, փաստորեն, առայժմ մեզ հայտնի առաջին վկայությունն է հայկական ու թուրքական ֆուտբոլային թիմերի մասնակցությամբ տեղի ունեցած մրցախաղի մասին:

Պերպերյան վարժարանի աշակերտների կողմից կազմված «Հայորդիների ընկերակցություն» ակումբը ևս ուներ ֆուտբոլային թիմ: Այս ակումբը 1915թ. հատուկ հրամանագրով փակվեց:

«Արաքսը» սահմանադրության հռչակումից հետո 1908թ. կազմված հայկական ֆուտբոլային լավագույն թիմերից էր: Թիմի պարապմունքներն անցկացվում էին վարձակալված դաշտում, որը գտնվում էր Պոլսի Շիշլի թաղամասի բուլղարական հիվանդանոցի հանդիպակաց տափարակում, որը հետագայում կոչվեց «Ազատության բլուր»:

Իր կազմավորումից քիչ անց «Արաքսը» ֆուտբոլային ուժեղ թիմի համբավ ձեռք բերեց և «Տորքի» հետ միասին հաջողությամբ հանդես էր գալիս Պոլսի ֆուտբոլի երկրորդ լիգայի կազմում ընդգրկված այլազգի ֆուտբոլիստներից ձևավորված մյուս թիմերի հետ մրցապայքարում: Ակումբը մասնակցել է Հայկական օլիմպիական խաղերին: «Արաքսի» հիմնական կազմի մարզիկներից էին Օննիկ Ֆրենկյանը, Գարեգին Դարբինյանը, Լևոն Նարլյանը, Հայկ Ճոլոյանը, Համազասպ Փանոսյանը, Պողոս Նասիպյանը, Տատ և Միշի Տատյանները, Պետրոս Սավյանը, Մուրատ Մուրատյանը, իսկ երկրորդ խմբի կազմում՝ Սարգիս և Հովհաննես Խուպեսերյանները, Գրիգոր Ճոլոյանը, Զարմայր Դերձակյանը, Անդրանիկ Արծիվյանը, Էդուարդ Ճեզիրյանը, Վաղինակ և Արմենակ Խաչիկյանները, Արամ Մրտիկյանը և ուրիշներ:

1911թ. «Արաքսը» հաղթող ճանաչվեց Մաքրիգյուղում անցկացված միջազգային «Ռումելի» լիգայում: Մինչև Առաջին աշխարհամարտը հայկական ֆուտբոլային թիմեր ստեղծվեցին Պոլսի համարյա բոլոր, ինչպես նաև գավառների բազմաթիվ մարզական ակումբներում: Շատ հաճախ պատասխանատու խաղերից առաջ հայ ֆուտբոլիստները հրավիրվում էին հանդես գալու հունական թիմերի կազմում:

1908թ. հուլիսին Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո արդեն գոյություն ունեցող հայկական ֆուտբոլային թիմերն ավելի ազատ են սկսում գործել՝ համալրվելով նաև նոր անդամներով: Կարճ ժամանակում ստեղծվում են տասնյակ նոր թիմեր: Հայկական ֆուտբոլային թիմերը մասնակցում էին

«Հայ կղզու» ֆուտբոլային թիմը, 1906թ.: Հազվագյուտ այս լուսանկարում տեսնում ենք հայկական ֆուտբոլի առաջնեկ թիմերից մեկի սաներին: Կենտրոնում կանգնած է Վահան Չերազը

[6] «Մարմնամարզ», Ա տարի, թիւ 9, հոկտեմբեր, 1911, էջ 266-267:

1911-1912 տարուոյ Ռումէլի լիկին մրցումներուն ցանկը

	Արաքս Ա.	Արաքս Բ.	Արտաւազդ	Արծիւ Բ.	Սանակն.	Կալաթա Սերայ	Մարդի-գիւղ
Արաքս Ա.		10 Դեկ. * 11 Փետր.	24 Դեկ. 25 Փետր	5 Նոյ. 3 Մարտ	19 Նոյ. * 21 Յուն.*	26 Նոյ 14 Ապրիլ	22 Հոկ. 7
Արաքս Բ.	10 Դեկ. * 11 Փետր.		7 Յուն. * 17 Մարտ	24 Դեկ. * 24 Մարտ*	3 Դեկտ. 25 Փետր.*	31 Դեկ. 4 Փետր.	2
Արտաւազդ	24 Դեկ 25 Փետր.	7 Յունվ 17 Մարտ		19 Նոյ. 14 Յուն.*	17 Դեկ.* 4 Փետր.*	10 Դեկտ. 18 Փետր.	2
Արծիւ Բ.	5 Նոյմ. 3 Մարտ	24 Դեկ.* 24 Մարտ*	19 Նոյ. 14 Յուն.*		31 Դեկ.* 18 Փետր.*	28 Յուն. 10 Մարտ	1
Սանակն.	19 Նոյ.* 2 Յուն.	3 Դեկտ. 25 Փետր.*	17 Դեկ.* 4 Փետր.*	3 Դեկ.* 18 Փետր.*		14 Յուն. 24 Մարտ	1
Կալաթա-Սերայ	26 Նոյմ. 14 Ապրիլ	31 Դեկ. 4 Փետր.	10 Դեկտ. 18 Փետր	28 Յուն. 10 Մարտ	14 Յուն. 24 Մարտ.		1
Մարդի-գիւղ	22 Հոկ. 7 Յունվ.	21 Յուն.* 3 Մարտ*	26 Նոյ.* 28 Յուն.*	3 Դեկտ.* 11 Փետ.*	12 Նոյ. 10 Մարտ*	17 Դեկտ. 7 Ապրիլ	

Ծան. — Առանց նշանի մրցումները կ'սկսին կէսօրէ վերջ. ժ
(ը.է.), իսկ աստղանշանով նշանակուածները կէսօրէ վերջ, ժամը 2,

Պոլսի «Ռումելի» լիգայի ֆուտբոլային մրցախաղերի խաղացանկը, «Մարմնամարզ», 1912թ.



ՖՈՒԹՊՈԼԻ ԽԱՂԱՎԱՅՐԸ

ԱԲ և ԳԴ՝ Կողի գիծեր
ԱԳ և ԲԴ՝ Ասանելի գիծեր
ԱԲԳԴԱ՝ Հատատցումի ասանելիք
Ե Զ Է Ը՝ Կողմի տարածութիւնը
Հ՝ Հատատցումի կէտը
ԱԲԳԴ՝ ասելիք նշանները

Ֆուտբոլի դաշտի կառուցվածքի ներկայացումը «Մարմնամարզի» համարներից մեկում

կայսրության մայրաքաղաքում ստեղծված մի քանի լիգաների թիմային ու միջազգային մրցաշարերին: Դատելով պահպանված լուսանկարներից՝ հայկական ֆուտբոլային թիմերն ունեցել են իրենց առանձին մարզահագուստը և տարբերանշանները, իսկ լուսանկարվելու պահին սովորաբար գնդակի վրա արձանագրվել են տվյալ թիմի անունը և լուսանկարվելու տարեթիվը:

«Մարմնամարզի» էջերում Շ. Քրիսյանը հանդես եկավ առանձին հայկական ֆուտբոլային լիգա ստեղծելու առաջարկով, որը սկզբնական շրջանում աջակցություն չգտավ, և միայն 1914թ. հաջողվեց կազմավորել «Արշալույս», «Կոնտոր», «Որբանոց», «Սասուն», «Վարագ» և «Տորք» ֆուտբոլային թիմերի մասնակցությամբ: Առանձին հայկական ֆուտբոլային լիգա ստեղծելու նպատակ հռչակվեց *«Պոլսոյ Հայ մարմնամարզական ակումբներուն միջև լաւ յարաբերութեան հաստատման նպաստել եւ ապահովել ֆութպոլի խաղին կանոնաւորութիւնը»*:[7]

Հայկական մարմնակրթական շարժման զարգացումը Պոլսի հայ երիտասարդության շրջանում աննախադեպ երևույթ էր արևմտահայ իրականության մեջ: Այս ընթացքում ֆուտբոլի տարածմանը զուգընթաց ներմուծվում էին այլ մարզաձևեր:

Հատկանշական է, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին միայն Պոլսում գործում էին քառասունից ավելի հայկական մարմնամարզական ակումբներ, որոնց մեծ մասը ֆուտբոլային թիմեր ունեին:

[7] Պոլսոյ մէջ ֆութպոլի հայկական լիկ, «Մարմնամարզ», Դ տարի, թիւ 1, 1914, էջ 30:

Վ. Մաթևոսյան, «Տորք» ակումբի դարպասապահը: Համարվել է Պոլսի ակումբների լավագույն դարպասապահներից մեկը



ՄԱՐՄՆԱՄԱՐՋ 283

ՄԱՐՄՆԱՄԱՐՋ

ՖՈՒԹՊՈԼԻ ԼԻԿ ՄԸ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Մինչեւ դարաց Պարոյ մէջ ֆութպոլի մէկ լիկ մնայն գոյութիւն ունէր, այն է Գուսարգիւղի լիկը։ «Մարմնամարզ» մարմնամարզութիւնը գեղեցիկ զուարճարը ունենալուս հայկական լիկի մը կազմութիւնն նախանձաւորակ բլլալ ու այդ նպատակաւ ոչ Պարոյ մէջ գոյութիւն ունեցող զանազան ֆութպոլի հայ խաղերուն հրաւէր ուղղեց իրենց դաշտէն դուրս մը կարգելու և որոշուած օր մը խաղարկելու միջնորդներ կատարելու համար։ Ամենայն գուարի է բանը որ ֆութպոլի խաղերէն շատ քիչերը մնայն պատասխանեցին յաղթութիւնը յանձնուելու ու այդպէսով խնդիրը ձգձգուեցաւ։

Բայց այսուհանդերձ մենք մեր նրիտասարդ բարեկամներուն յայտնելու թէ Մարմնամարզի մէջ ոչ ֆութպոլի լիկ մը կազմուեցաւ, «Բուռմէլի Լիկ» անուանեալ որ թէև մեր փափաքներուն հանձնայն գուցէ հայկական չէ, բայց բաղկացած ցիչ խաղերուն մեծագոյն մասը հայ է։ Ու այժմ «Բուռմէլի Լիկին» արձանագրուած են Գրատասպ, Ալբարա, Կայսրիա-Սեբաս, Մարմարիզ, Սահակեան, Դանիէլ, Արծիւ, Բ. ֆութպոլի խումբերը։

Մենք մեծ հաճոյքով կ'ուսումնասիրենք «Բուռմէլի Լիկին» կազմութեան բոլոր յատ. կէտերն, ասանց բացառութեան բոլոր ֆութպոլի ակումբները հանձնարարել այդ լիկին շարքը։

Երբ «Մարմնամարզի» անդամներուն ուզեց հայկական լիկ մը կազմակերպել, ի հարկէ նպատակ չունէր այդ բանին կազմակերպիչն բլլալու անմասնակցութեամբը չմնալ, ու այսպէս ոգեւորեալ գործ մը կատարուած բլլալու համար իր շնորհաւորութիւնները ուղղելի իր շնորհակալութիւնները կը յայտնէ այդ լիկին կազմակերպիչներուն, որոնք այսպէսով մեզ յաղթութիւնէ մը զրկեցին ու ոնդամ մեր ազգայնոյցը ասելու թէ ազգասիրի բաժանելու անհրաժեշտ է այն ամէն ձեռնարկներուն մէջ որոնց յաջողութիւնը կուգենք երաշխաւորել։

ՖՈՒԹՊՈԼԸ ԵՒ ԻՐ ՕՐ

Այս առթիւ թերեւս տեղը չլլայ թուել հոս յարդ մեր քով արձանագրուած Պարոյ այն Հայ Ակումբներուն՝ որոնք ֆութպոլով կը զբաղին։

Անարոնեան	(Պէշիքթաշ)
Արաքս	(Բերա)
Արարատ	(Նշան-Թաշ)
Արծիւ	(Գուսարգիւղ)
Արտաւազդ	(Գուրուչէշմէ)
Բրօթիլ	(Գեալր)
Էրեանեան	(Բերա)
Ժողովրդային	(Մարմնամարզ)
Կիլիկիա	(Գուսարգիւղ)
Մասիս	(Շիշլի)
Մարմնամարզական	(Բերա)
Մխիթարեան	(Գալաթիա)
Նոր դպրոց	(Բանկալթի)
Սանդիրաղ	(Ղալաթիա)
Սասուն	(Պալաթ)
Տորք	(Գուսարգիւղ)
Բանֆիլ	(Ակիւտար)

Ֆուտբոլային թեմայով հրապարակումներ «Մարմնամարզից»

Հայ մարմնամարզիկ և ֆուտբոլիստ Հայկ Ճոլոյանը՝ «Արաքս» ակումբից



ՖՈՒԹՊՈԼԸ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

ՊՈԼՍՈՅ ՖՈՒԹԲՈԼԻ ՄՐՑՈՒՄ
ՍԿՍԱԾ
ԼԻԿԸ ԿԱՋՄՈՒԱԾ

Առաջին Լիկին մէջ կը գտնուին հետ ակումբները։—

Կալաթայ-Սերայ, Ֆենեռ Պահճէ գիւղ, Սբրակիոս, Եղլիզրիմ, Քոնիակ երկրորդ լիկին մէջ կը գտնուին Տոոմֆ, Էյրիա, Աստեր, Մագրի գիւղ, կիոս-Բ. եւ Ֆենեռ Պահճէ Ա.

ՊԱԼԹԱ-ԼԻՄԱՆ ԵՒ ԹՈՒՐՔԻՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԻՆԸ

Հատասով ապրիլ կիսամանը թէ Հայկական Ազգմբիսականէն վերջ տեղի ունենալիք եղերութիւններէն մէն պիտի ըլլայ նաեւ նոսխորդ «Պալթա Լիմանի» այնքան փայլուն խաղերն վերակազմութիւնը։

Յաջողութիւն կը մաղթենք, և մեր խաղերուն ալ... զգուշութիւն՝ շատ կոլ չտանելու։

Պոլսի «Նոր դպրոցի» ֆուտբոլային թիմը, «Մարմնամարզ», 1913թ.

ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Սգոստոս 5ի Կիրակին, Մաքրգիւղ, Ագ-Սուլի դաշտավայրին մէջ ֆութպոլի մրցում մը տեղի ունեցաւ Անարոնեան Ա. և Տորք Բ. ակումբներուն միջև։

Անարոնեան Ա.ի կողմէ կը հաղորդուի թէ մեկ կողով յաղթական եկած է։

Տորք Բ.ի կողմէ խմբագ- կը հաղորդուի թէ ինքը 1ի ով յաղթական եկած է։

ուրեանց կողմէ ներկայացու- ն, բնականաբար Մարմնամարզ ը կը վերապահէ, մաղթելով ամանակ վերոյիշեալ ակումբնե- մաձայնին իրարու հետ, ճշմար- ր արդար տեղը տալու։

* * *

ա 5ին, Ակիւտարի Թէփէի դաշ- մէջ Ֆութպոլի մրցում մը տեղի «Անդրանիկ» և «Արտաւազդ» միջև։ Արտաւազդ 1ի դէմ 3 ունեցաւ։

ի «Անդրանիկ» մարմնամար- ումբը մեզ կ'իմացնէ թէ Ցուլիս ոարի մէջ յունական խումբին և տեղի ունեցած Ֆութպոլի խաղը կամական վարժութիւն մ'էր ցում մը, ինչպէս յայտարարած ուշա մեզի տրուած տեղեկու- աձայն և որուն մէջ Հայերը 6 էին։

ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ ՖՈՒԹՊՈԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԻԿ

Երբ, ձեռնարկեցինք ներկայ ամսա- թերթին հրատարակութեան, մեր չրջապա- տը դեռ այնքան փոքր էր որ չէինք հա- մարձակիր անմիջապէս սկսիլ մեր բոլոր ծրագիրներու գործադրութեան։

Սակայն, մեր չուրջը սկսուած շարժու- մին հետ մենք ևս ոգևորուած, առաջին օրէն իսկ չվարանեցանք այդ շարժումը արձագանգելու և զայն կենդանացնելու մի- ջոցներուն վրայ խորհիլ։

Մեր ջանքերէն առաջի երիտասարդու- թեան այդ կենսաւէտ շարժումներուն կը պարտինք Հայկական Առաջին Ոլիմպիական- ին յաղթանակը, մարմնամարզական ա- կումբներու յաջողական աճումը, մարմ- նակրթութեան համար գաւառի մէջ արձագ- անող ոգևորութիւնը և վարժարաններու մէջ այդ մասին ծնունդ առնող ծարաւը։

Սակայն չէինք կրնար կանգ առնել հոս։

Եւ ահա այսօր ալ, խմբագրութիւնս, մինչև գոտեռնդուած երիտասարդութեան

«Նոր դպրոցի» ֆուտբոլային թիմը, ձախ կողմում Հայկ Ճոլոյանն է, 1912-13 թթ., ՀՅԹԻ, Գրիգոր Ճոլոյանի հավաքածու

Պոլսի «Նոր դպրոցի» ֆուտբոլային թիմը, «Մարմնամարզ», 1913թ.

Պոլսի «Արաքս» ֆուտբոլային խմբի, ձախ կողմում Հայկ Ճոլոյանն է, իսկ կենտրոնում՝ Շավարշ Գրիգորյանը, 1908թ., Հնչակ։ Գրիգոր Ճոլոյանի հավաքածու


ՄԱՐՄՆ ԱՄԱՐՁ

Ա. ՏԱՐԻ — ԹԻՒ 1 1911 ՓԵՏՐՎԱՐ

ԱՌԱՋԻՆ ԽՕՍՔ

«Մարմնամարզի» անդրանիկ համարի խմբագրականը, 1911թ., փետրվար

«ՄԱՐՄՆԱՄԱՐԶԻ» ԾՆՈՒՆԴԸ

«Մեզի համար «Մարմնամարզ» թերթին հրատարակութիւնը նպատակ չէ եղած ու չպիտի ըլլայ. անիկա միջոց մ՚է միայն հայ ցեղը վերակենդանացնելու...»

Շավարշ Քրիսյան

Օսմանյան կայսրության հայ բնակչության շրջանում մարմնամարզության ու սպորտի հանդեպ հետաքրքրության ծավալման և պրոֆեսիոնալ մարզիկների ասպարեզ գալուն զուգընթաց սպորտն ավելի տարածելու, այս շարժումն ավելի լայն շրջանակներ ընդգրկելու համար նոր պահանջներ առաջացան: Ահա այդ հրամայականով ծնվեց հայկական առաջին մարզական հանդեսը՝ «Մարմնամարզը»: Կարելի է ամենայն որոշակիությամբ փաստել, որ եթե մարմնամարզական շարժումն արևմտահայ իրականություն մտավ Օսմանյան կայսրության տարածքում գործող օտարերկրյա և հատկապես ամերիկյան քոլեջների միջոցով, ապա դրա «հայկականացումը» տեղի ունեցավ Շավարշ Քրիսյանի կողմից Պոլսում լույս ընծայված «Մարմնամարզ» հանդեսի (1911-1914թթ.) շնորհիվ:

Այս նախաձեռնությանը մեծ աջակցություն ցուցաբերեցին Հովհաննես Հինդլյանը, դոկտոր Գարանֆիլյանը, Արամ Նիկողոսյանը և Լևոն Հակոբյանը: Հանդեսի վարչական տնօրեն-պատասխանատու նշանակվեց Կարո Ունճյանը: Սկզբնական շրջանում պարբերականը լույս էր տեսնում Հակոբ Սիրունու անմիջական մասնակցությամբ ու աջակցությամբ: Վերջինս, իր հուշերում անդրադառնալով հայկական մարզական հանդես տպագրելու գաղափարին և դրա

առաջմղման մանրամասնություններին, նկարագրում է 1910թ. աշնանը «Ազատամարտ» թերթի ակումբում Վահրամ Արծրունու և Շավարշ Քրիսյանի հետ տեղի ունեցած բախտորոշ հանդիպումը, որտեղ և առաջարկում է մարզական թերթ հրատարակել՝ խոստանալով օգնել այդ գործում:

Առաջին ամիսներին «Մարմնամարզի» խմբագրատունը տեղաբաշխվել էր Պոլսի Ղալաթիա թաղամասի Վոլթո խանի մեջ, որտեղ գտնվում էր դեղերի ու բժշկական սրվակների մի պահեստարան: Ինչպես հետագայում ինքը՝ Հ. Սիրունին, պատկերավոր ներկայացնում է. *«...այդ փիղի շիշերուն ու անոնց հոտին մէջ էր որ ծնունդ առաւ հայ մարզական շարժումը: Հոն տրուեցաւ հայ ողիմպիականներուն հիմը ու հոն ստեղծուեցաւ ապագայ մարզական միութեան մը գաղափարը»*.[8]

Կողմնորոշիչ ունենալով ֆրանսիական «La Culture Physique» պարբերականի սկզբունքներն ու մոտեցումները՝ Շավարշ Քրիսյանն իր գաղափարակիցների աջակցությամբ 1911թ. փետրվարին լույս ընծայեց «Մարմնամարզի» առաջին համարը: Դրանով ազդարարվեց սպորտային և մարմնակրթական հայկական առաջին պարբերականի ծնունդը:

«Մարմնամարզը», ինչպես իրավացիորեն նշում է պոլսահայ հայտնի մարզիկ և հայկական սպորտի պատմության տարեգիր Գրիգոր Ճոլոյյանը. *«...անհատական նախաձեռնութեան ու անձնական ճիգերու զոհողութիւններու վրայ հիմնուած հրատարակութիւն էր...»* («Ազդակ», Բեյրութ, դեկտեմբերի 17, 1938): Իրավամբ «Մարմնամարզը» դարձավ կայսրության մար-

Շավարշ Քրիսյան (1888-1915)

Պոլսահայ նշանավոր մտավորական և հասարակական գործիչ Հակոբ Սիրունին (1888-1956)

Հ. Սիրունու ձեռագիր հուշագրությունը, «Մարմնամարզ» հանդեսի տպագրության մասին, Հ. Սիրունու ձեռագիր հավաքածու, Փարիզ

[8] Հ. Սիրունու ձեռագիր հուշագրություն, Գ. Ճոլոյյանի հավաքածու, Փարիզ

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

Մեր նպատակներէն մէկն է միջոց մը և աջակից մը ըլլալ՝ որպէսզի Հայ երիտասարդութիւնը այլևս թոթափուի իր կենդանի մեռելութենէն, եւ միանալով, ամէն թաղերու, գիւղերու, քաղաքներու մէջ մարմնամարզական ակումբներ բանայ, մրցումներ կազմակերպէ, մարմնակրթութեան մղում տայ, նախ պատրաստելու համար խստամբեր կեանքի մը՝ զինուորագրութեան, որ անխուսափելիօրէն իր կեանքին լաւագոյն տարիներէն մէկ քանին պիտի գրաւէ, ու յետոյ, ցոյց տալու համար թէ Հայ ծնած գնդերն ու արիւնը տոկուն եւ ազնիւ տեսակէ են, իսկ իր մինչև հիմայ միջազգային ու տեղական մրցումներու չմասնակցելուն պատճառն ալ՝ ոչ թէ իր մկաններուն ու իր արիւնին այլասերած ըլլալն էր, այլ այդ տեսակ մրցումներու դպրութեան անպիտանութեան ու անմեց պատրաստուած չըլլալը։

Պէտք է ակռի, քանի ու չ։

ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ամբողջութիւնս՝ միշտ թեկուզեւ Հայ երիտասարդութեան օգտակար ըլլալու դադափարէն՝ ահա կոչ կ՚ընէ Հայ երիտասարդութեան որպէսզի իր իսկ օգտին համար կազմակերպուի մարմնամարզական ակումբներ։ Ահա թէ ինչպէս։

Ա. Արեւ է տեսի երիտասարդութիւնէն մեր մի կամ նոյն իսկ անհատ մը՝ որ հաւատացած է մարմնակրթանքի օգուտներուն և անհրաժեշտութեան՝ պարտաւոր է արեւ ձեւով մը հրատէր կարդալ իր տեղի երիտասարդութեան և նոյն իսկ տարէցներու, հոմանիներ գտնելու, պարզել հաւատքիին նպատակը, ու դադափարներու փոխանակութիւնէ մը ետք անդամ դրուագները որոշել, իրենց կարգութեան հոմանման և տեղական պէտքերու գործածուելու պայմանով մէջ մէկ ամսավճար որոշել, ծրագիր մը մշակել, յանձնարարուած գործերը հայթայթել, — և ահա ակումբը կազմուած։

զական առաջին պարբերականը՝ յուրօրինակ երևույթ արևմտահայ պարբերական մամուլի պատմության մեջ: Այն ժամանակի բարքերի և տրամադրությունների յուրօրինակ արտահայտիչը դարձավ՝ միաժամանակ որոշակիորեն ստանձնելով սերունդների ազգային դաստիարակության, նրա գաղափարախոսական հայեցակարգի ձևավորման ու տարածման կարևոր առաքելությունը: «Մարմնամարզի» էջերը լի էին առողջապահական, բարոյախոսական, սպորտի պատմության, սեռական դաստիարակության, հիգիենայի և այլ հարակից թեմաներին առնչվող հրապարակումներով: Դրանք եկան լրացնելու այս թեմաների շուրջ նույն ժամանակահատվածում Պոլսում լույս տեսած հեղինակային ու թարգմանական մեծածավալ գրականությունը:

«Մարմնամարզի» առաջին համարում զետեղված էր հայ երիտասարդությանն ուղղված կոչ, որում ասվում էր. *«Մեր նպատակներէն մէկն է միջոց մը եւ աջակից մը ըլլալ՝ որպէսզի Հայ երիտասարդութիւնը այլևս թոթափուի իր կենդանի մեռելութենէն, եւ միանալով, ամէն թաղերու, գիւղերու, քաղաքներու մէջ մարմնամարզական ակումբներ բանայ, մրցումներ կազմակերպէ, մարմնակրթութեան մղում տայ, նախ պատրաստելու համար խստամբեր կեանքի մը՝ զինուորագրութեան, որ անխուսափելիօրէն իր կեանքին լաւագոյն տարիներէն մէկ քանին պիտի գրաւէ, ու յետոյ, ցոյց տալու համար թէ Հայ ծնած գնդերն ու արիւնը տոկուն եւ ազնիւ տեսակէ են, իսկ իր մինչև հիմայ միջազգային ու տեղական մրցումներու չմասնակցելուն պատճառն ալ՝ ոչ թէ իր մկաններուն ու իր արիւնին այլասերած ըլլալն էր, այլ այդ տեսակ մրցումնե-*



րու գոյութեան անգիտանալ ու անոնց պատրաստուած չըլլալը: Պէտք է սկսիլ, քանի ոչ չէ» («Մարմնամարզ», Ա տարի, թիւ 1, փետրվար, 1911, էջ 30):

Ի սկզբանե «Մարմնամարզի» առջև ծառացել էին մի քանի կարևորագույն խնդիրներ. նախ՝ արևմտահայության ավելի լայն շրջանակներ ներգրավել սպորտային կյանք, նպաստել մարմնակրթության ու սպորտի նկատմամբ հետաքրքրության արթնացմանը հատկապես գավառի հայաբնակ քաղաքներում ու գյուղերում, տեղեկություններ հաղորդել կայսրության տարածքում և աշխարհում տեղի ունեցող մարզական իրադարձությունների մասին և կատարել հայկական մարզական ակումբների գործունեության ու առաջնությունների կազմակերպման համակարգողի դեր:

Հենց միայն այն փաստը, որ «Մարմնամարզի» միջոցով հաջողվեց նախաձեռնել ու կազմակերպել Հայկական օլիմպիական խաղեր, վկայում է այդ ոլորտում պարբերականի մեծ ու շնորհակալ դերի մասին:

Շատ արագ «Մարմնամարզը» վերածվեց հարմար մի հարթակի, որտեղ Պոլսի, գավառի և հեռավոր երկրների հայ մարզիկներն ու մարզական կյանքով հետաքրքրվող անհատներն իրենց տեսակետներն էին ներկայացնում ընթերցողներին, հանդես գալիս առաջարկություններով ու քննադատական հոդվածներով:

«Մարմնամարզին» ակտիվորեն թղթակցում էին Զմյուռնիայից, Քյոթահյայից, Արաբկիր, Պարտիզակ, Կեսարիա քաղաքներից. անմասն չէին մնում նաև Եգիպտոսի, Բուլղարիայի, ԱՄՆ-ի հայկական գաղութի մարզասերներն ու մարզիկները: Կարևորվում էր նաև հանդեսի համարները գավառի դպրոցներ

ՄԱՐՄՆԱԿԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ՄՐՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Մարմնամարզ»ի վեցերորդ թիւով մարմնական գեղեցկութեան մրցումի մը ձեռնարկած էինք, մենք զանազան առիթներով արտայայտուած ենք թէ ինչ են մերկութեան ու մերկութեան հետ կապ ունեցող բարոյականի մասին մեր ըմբռնումները, ուստի այլեւ այդպիսի մրցումներու ձեռնարկելու նպատակը աւելորդ կը համարենք կրկնել, մանաւանդ որ ամէն խորհող անհատ կրնայ այդ բանը շատ դիւրութեամբ տեսնել նկատի ունենալով «Մարմնամարզ»ին նպատակը և ուղղութիւնը։

«Մարմնամարզ»ի այս թիւով մրցման և մրցանակներու մասին մանրամասնութիւններ է որ պիտի տանք։

1. Ամէն այր անհատ առանց տարիքի խորութեան կրնայ մրցման մասնակցիլ։

2. Մրցման մասնակցելու համար պէտք է պատշաճ մերկութեամբ ու ամբողջ մարմնով լուսանկարուիլ, տարիքը, հասակը, ծանրութիւնը, արհեստը, ինչպէս նաև կուրծքին, մէջքին, բազուկին, վզին, որոնց չափերը առանձին թուղթի մը վրայ նշանակելով խմբագրութեան հասցնել։

Գնահատիչ մարմինը պիտի բաղկացուցուի անօրէնէն, բժիշկէ մը, որդէաէ մը և երկու ուրիշ անձնաւորներէ որոնց անունները պիտի յայտնուին։

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ ՆՈՒԻՐՈՂՆԵՐ

Պարոյ «Տարք» մարմնամարզական ամսագրի մէկ տարեկան «Մարմնամարզ» կը ստանայ Շապէն-Գարահիսարէ Զրասխ գաղութի Ագզ. վարժարանէն։

* * * Պարոն Յակոբեան Տէր Յակոբեան կը նուիրէ մէկ տարեկան «Մարմնամարզ» կը նուիրէ Բլուր գիւղի Ագզ. վարժարանին։

ՆԱՄԱԿԻ ՓՈԽԱՐԷՆ

Ճար (Մանան).— Ձեր փոխարէն համաձայն կարգադրուեցաւ։ Ապրիլի մասին մեզ դրէք։

Լուսիր Կարգեան (Թոքատ) Դրկուեցաւ։

Թուրքեն Առաքեան (Թոքատ).— Դրկեցինք։

Գառագար Ճերիսեան (Մարզուան).— Պիտի պատասխանուի։

Պետրոս Պաստրեան (Կէրմէ-Գեմրաք).— Դրկեցինք։

Խորով Զէրեան (Սերասիա).— Դրկեցինք նոր հասցէներուն։

Պ. Խաչիկեան (Զանկրատաք).— Դրկեցինք բոլոր հասցէներուն։

Կարապետ Խաչեան (Փոքր).— Դրկեցինք։

Աճեան Շահրիկեան (Թուանուգ).— Բարձրացուցինք ուղարկած քանակութեան։

Յարութիւն Սարգսեան (Էսքիշէհիր).— Ստացանք և դրկեցինք նոր հասցէներուն։

Արմենակ Մելենեան (Տիվրիկ).— Դրկեցինք ցոյց տրուած հասցէներուն։

Գեղամ Գաբրիելեան (Բզմ).— Դրկեցինք ցոյց տրուած հասցէներուն։

Լեւոն Նահարեան (Հայէպ).— Դրկեցինք ցոյց տրուածին պէս։

Մարմնամարզական Հայկ ակումբ (Եդեսիա).— Ստացանք և դրկեցինք։ Նամակով պիտի պատասխանուի։

Ռուբինական Խրճուրդ (Թոքատ).— Նամակով պատասխանուեցաւ։

Փան Պալիեր (Բիւյուքտարա, Թուսիա).— Դրկեցինք։

Կարապետ Ռէսպլեան (Էչմիածին).— Նամակով պատասխանուեցաւ։

Ադեմանդր Խաչատրեան (Թաչա).— Դրկեցինք նոր հասցէներուն։

Աբրահամ Էօֆեանեան (Մեսքիրիզ).— Դրկեցինք ցոյց տրուած հասցէներուն։

Սեդրակ Մանեան (Մարաթիա).— Դրկուեցաւ նոր հասցէին։

Փալուն Արիքարեան (Ակն).— Ստացանք և դրկեցինք։

Բոսֆ. Սողիկեան (Խարբերդ).— Ստացանք և կը շարունակենք դրկել։

ու վարժարաններ հասցնելու հանգամանքը՝ գավառահայության շրջանում պարբերականի տարածումն իրականացնելով նվիրատվության կարգով:

Դատելով հանդեսում լույս տեսած հոդվածների բովանդակությունից՝ ժամանակի հայկական իրականության մեջ մարմնամարզությամբ և սպորտով զբաղվելը չէր դիտվում լոկ ինքնանպատակ գործունեություն, այլ պայմանավորվում էր նախ և առաջ առողջ սերունդ դաստիարակելու մտահոգությամբ, հատկապես հայկական վարժարաններում:

Ոգևորիչ և խրախուսելի արարողություն դարձավ «Մարմնամարզ» հանդեսին բաժանորդագրվելը կամ դրա համարների ու տարեկան թողարկումների նվիրաբերումը տարբեր հասցեատերերի, հիմնականում գավառի կրթական հաստատություններին: «Մարմնամարզ» նվիրաբերողներ խորագրի ներքո կարդում ենք. *«Պոլսոյ «Տորք» մարմնամարզական ակումբը մէկ տարեկան «Մարմնամարզ» կը նուիրէ Շապին-Գարահիսարի Զրտախ գաւառակի Ազգ. վարժարանին» կամ «Պարոն Յարութիւն Տէր Յակոբեան մէկ տարեկան «Մարմնամարզ» կը նուիրէ Բաբերդի Բլոր գիւղի Ազգ. վարժարանին»:*[9]

Հայտնի հայ մարմնամարզիկ, Ստոկհոլմի միջազգային օլիմպիական խաղերում Օսմանյան կայսրությունը ներկայացրած Վահրամ Փափազյանն իր «Երիտասարդության ձայնը» հոդվածում, դրվատելով հունական մարզական կազմակերպությունների գործելակերպն ու մարմնամարզության հանդեպ ունեցած ուշադրությունը, քննադատելով հայ երիտասարդների պարապությունը, ծուլությունը և մյուս հոռի բարքերը, գրում է. *«...Վստահ եղէք որ, եթէ Պոլսոյ մէջ մարմնամարզական հայ ակումբ մը կազմուի, քիչ ատենէն Թուրքիոյ բոլոր նոյն տեսակ ակումբներուն մէջ առաջինը կը հանդիսանանք:*

Այսօր մեր մէջ արդէն կան Յոյներուն փառքը կազմող Տօրիզասի մը հետ մրցելու կարող ու անոր դափնիները խլելու կարող մարմնամարզիկներ: Ու եթէ Եւրոպան հայուն արիւնովը մեզի չճանչցաւ, թող զմեզ մեր ուժովը ճանչնայ» («Մարմնամարզ», Ա տարի, թիւ 2, մարտ, 1911):

«Մարմնամարզը» քարոզչական գործունեություն էր ծավալում նաև մարմնակրթական և սպորտային ակումբներ ստեղծելու ուղղությամբ՝ ուղեցույցի ու խորհրդատուի դեր ստանձնելով նման ակումբների կազմակերպման համար: Ընդ որում, սպորտը դիտելով որպես քաղաքացիական գիտակցության ցուցիչ՝ մարզական ակումբների ստեղծումը և հատկապես թիմային մարզաձևերի զարգացումը դիտարկվում էին ազգային պառակտվածության երևույթները հաղթահարելու և նոր որակի ազգային գծեր ու կենսագործունեության նոր փիլիսոփայություն ձևավորելու կարևոր գրավական: Դրա վառ վկայությունն են Շ. Քրիսյանի հետևյալ տողերը. *«...Առաւելապէս մեզ, Հայերուս համար ակումբներու գոյութիւնն ու զարգացումը ահագին կարևորութիւն ունի այն տեսակէտով որ, այդ միջոցով կը վարժուինք հաւաքական կեանքի. իրաւամբ Հայոց ամէնէն քննադատելի կողմերէն մէկն ալ նկատուած է անոնց դէպի անհատապաշտութիւն ունեցած բնազդը: Հաւաքական կեանքի պայմաններուն ենթարկուիլ հայու մը համար միշտ ծանր ու դժուարին կուգայ: Ակումբ-*

[9] «Մարմնամարզ», Ա տարի, թիւ 7, օգոստոս, 1911, էջ 224:



2 ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

Մենք դրամատէր չենք, եւ սակայն հարուստ ենք մեր գաղափարներով, կամքով եւ խելագրով. մեր խելագրութիւնը այնքան բարձր ու մեր գաղափարին դրոշը այնքան նուիրական կը նկատենք որ, ամէն խակ կը նկատենք մենք մեզի նիւթական դժուարութիւններու առջեւ ընկճուիլ. ու գաղափարը նիւթին հետ յաջողուելու խակ դնել: Պէտք ուզեր ես նայիլ ու անկէ բնդարձուիլ:

Ու երբ երկրին նիւթական վիճակներու ենթարկուինք, նորէն պիտի շարունակենք մեր ճամբան, եւ Հայ ազգին պիտի ըսենք. «Հայ Ժողովուրդ, հաճոյքը ունինք յայտարարելու թէ քու Ֆիզիկական ուժերուդ, ապագային քարոզութիւնը հաստատ այս տարի ելնի. . . ոմանք նուիրեցինք եւ պատրաստ են նոյնը ընելու որքան ատեն որ քու ապագային շահը մնայ աղ նուիրատուութիւնը պահուելէ:»

Հանդարտ սրտով, մեր դերին գիտակից զոհունակութեամբ մը կը շարունակենք մեր ճամբան ու խօսքերնիս ոգիներով բարձր ամենց, որպէս մեզի պէս կը խորհին, մեզի պէս կարդան, մեզի պէս կաշխատին. կրնանք. ԵՎ Ի ՑԱՅԱՀՈՂ ՈՒ ՄԵՇՏ ԴԱՂԱՓԱՐԻ ԴՐՕՇԱԿԻՆ ՀԵՏ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

Հայոց միակ թերթը որ կ'զբաղի ֆիզիքական դաստիարակութեամբ, առողջապահութեամբ և մարզուն հիւանդանոցէն առաջ անհրաժեշտ եղող ծանօթութիւններու ընդհանրացմամբ:

Բաժանորդագրութիւնն է. տարեկան 25 ղրուշ: վեցամսեայ՝ 15-ղրուշ: տարեան՝ 8 ֆրանք: Զեռքի 40 փարայ. Դրկելու նամակներ կու գրեցէք՝

Հասցէ՝

يكى وولتو خان، نومرو ١٩ باغچه قپو، درسعادت

„ՄԱՐՄՆԱՄԱՐԶ"
Եէնի Վոլթո խան, թիւ 19. Պահչէ Գարու, Կ. Պոլիս

Rédaction de la Revue „MARMNAMARZ"
Yéni Volto Han, № 19, Baghtché Kapou,
CONSTANTINOPLE

ներու միջոցաւ է որ այդ ոգին պիտի մեղմացուի, եւ պիտի տրուի հայ պատանիներուն սէր դէպի հաւաքական կեանքը...

Մէկ խօսքով մարմնամարզական ակումբները հնոց մէն են ոչ միայն ֆիզիքական ուժի, այլ եւ կազմակերպուած ու կարգապահ հաւաքականութեան եւ քաղաքացիական դաստիարակութեան» («Մարմնամարզ», Բ տարի, թիւ 18, սեպտեմբեր 15, 1912):

Լայն թափ ստացած մարմնամարզական և սպորտային շարժումն առաջ բերեց նաև հայկական մարզական կառույցների համախմբման գաղափարը, որի ջատագովն ու աջակիցը թերթի խմբագիր Շավարշ Քրիսյանն էր: Մասնավորապես Պոլսի և Զմյուռնիայի հայկական բազմաթիվ ֆուտբոլային թիմերի գոյությունն անհրաժեշտություն դարձրեց ստեղծել առանձին, զուտ հայկական ֆուտբոլային լիգա: «Մարմնամարզի» առանձին հայկական ֆուտբոլային լիգա ստեղծելու նախաձեռնությունը միանշանակ չընդունվեց հայկական ակումբների կողմից: Այս նպատակով հրավերներ ուղարկվեցին Պոլսի հայկական ֆուտբոլային ակումբներին, սակայն արձագանքը սպասված արդյունքը չտվեց: Թերևս պայմանավորված առանձին ակումբների ինքնությունն ու ինքնավարությունը կորցնելու, նման միատարր կառույց ստեղծելով՝ թուրքական իշխանությունների անհարկի ուշադրությանն արժանանալու, կամ էլ կուսակցական կառույցներից կախման մեջ ընկնելու մտավախություններով:

Գրեթե արձագանք չգտավ նաև մարմնի գեղեցկությունն ու կազմվածքը ներկայացնող լուսանկարներ ուղարկելու կոչը: Այս կապակցությամբ թերթի խմբա-

գիրը գրում է. *«...Գալով մեր խնդիրին՝ մարմնամարզի մէջ մերկութիւնը պէտք է իբր արուեստ, իբր արձաններու հետ բաղդատելու միջոց նկատուի ու մարդ պէտք է գեղեցիկ մարմիններու վրայ հիանայ: Ասկէ զատ եթէ նոյն իսկ մերկութիւնը գայթակղեցուցիչ ըլլայ, պէտք չէ բնաւ մոռանալ թէ մերկ կենդանի մարմին մը եւ պատշաճ մերկ պատկեր մը նոյն բաները չեն, մէկը կարելին է, միւսը՝ անկարելին. իսկ եթէ դարձեալ գտնուին բանաւոր էակներ, որոնք այդ անկարելի պատկերը տեսնելով գայթակղին, պէտք է անկեղծօրէն ցաւիլ իրենց ու իրենց բարոյականի չափին վրայ: Այդտեղ ոչ թէ պատկերն է յանցաւորը, այլ նոյն իսկ իրենց խաթարեալ բարոյականը ու անբարոյական երևակայութիւնը»:*[10]

Չնայած հանդեսի խմբագիրը դժգոհում է հայ մարզիկների կողմից մարմնի կազմվածքի պատկերով լուսանկարներ տրամադրելու դժկամությունից, այդուհանդերձ «Մարմնամարզի» էջերում զետեղվեցին շուրջ երկու տասնյակ հայ մարզիկների լուսանկարներ՝ մարմնի կառուցվածքի պատկերով:

Ուշագրավ էր նաև այն փաստը, որ եթե առաջին համարներում «Մարմնամարզը» լույս էր ընծայվում որպես պատկերազարդ ամսաթերթ, ապա հաջորդող համարներում այն արդեն հանդես է գալիս որպես *«Օրկան Ազգային Ֆիզիքական Վերածնութեան»*, իսկ այնուհետև՝ *«Օրկան ազգային ֆիզիքական կրթութեան»*՝ դրանով իսկ շեշտելով իր իրական կոչումը և վերածվելով Օսմանյան կայսրության հայ բնակչության շրջանում մարզական կյանքը խթանող կարևորագույն գործիքի ու միջոցի: 1913 թ. հունվարին Շավարշ Քրիսյանի ստորագրությամբ «Մարմնամարզի» բաժանորդագրության համար տարբեր հասցեներով ուղարկված պաշտոնական նամակի ձևաթուղթն ուներ հետևյալ խորագիրը. *«Օրկան ազգային ֆիզիքական կրթութեան եւ առողջ կյանքի սիրահարներու»*: Այս նամակում Շ. Քրիսյանը հետաքրքիր ձևով է ներկայացնում «Մարմնամարզի» առաքելությունը. «... *մենք իբր Մամով, մեր իրաւունքներուն եւ մանաւանդ պարտականութիւններուն գիտակից, ուզեցինք նախ կեանքը ստեղծել, ապահովել անոր ապրելու իրաւունք մը, յետոյ ներկայանալու համար հանրութեան, մեր հաշուետուութիւնը ընելու եւ այդ կեանքին անհրաժեշտ եղող ապրելու միջոցները խնդրելու»*:

Պ. ՄԱՆՈՒԿ ՁԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Խմբագրությունը թողարկեց նաև առանձին հավելված-պաստառ՝ *«Շուեդական մարմնամարզի 20 լավագոյն փորձերը. առողջութիւն. ուժ. երկարակեցութիւն»* խորագրով: Այս պաստառը կոչված էր լուսանկարների միջոցով օգնելու սկսնակներին՝ վարժություններն ու մարզանքը ճիշտ կազմակերպելու համար:

«Մարմնամարզի» առաջին համարի լույսընծայման առաջին տարում՝ 1911թ., հրատարակվում էր որպես ամսաթերթ՝ լույս տեսնելով 10 համարներով: Երկրորդ տարում, ընդառաջելով ընթերցողնե-

[10] «Մարմնամարզ», Ա տարի, թիւ 1, փետրվար, 1911, էջ 29:

[11] **Բ. Թորիկյան**. նշվ. աշխ., էջ 19:



''ՄԱՐՄՆԱՄԱՐԶ'' ՆՈՒԻՐՈՂՆԵՐ

Տիար Ժոզէֆ Սգնատոր՝
Մուրաս - Ռամֆաիլեան Միութեան
Տիար Անտոն Թարաց՝
Ազգ. Կեդր. Վարժարանին
Տիար Օսկան Թոռոսեան՝
Սվազի Ազգ. Վարժարանին
Տիար Եռվհանէս Գլլեան՝
Զէյթունի Ընկ. Միութեան
Տիար Օգոստոս Սկիւրեան՝
Զէյթունի Կեդր. Վարժ.-ին
Տիար Արտենակ Տուխանեան՝
Զէյթունի Շրջան. Միութեան
Բզմիրլի Հանակիր Մը՝
Շուտեմի Ազատ Դրաստարանին
Տիար Համբարձում Ֆուլիմեան՝
Մուշի Ազգ. Վարժ.-ի Տեսուչ Պ.
Զատարեանի տրամադրութեան տակ.

Պ. ՀԱՅԿ ԽՐԻՄԵԱՆ (Սամսոն)

[12] **Տիգրան քինյ Խոյեան** Նահատակ ցեղի անմահներ, Պէյրութ, 1983, էջ 16:

րի խնդրանքին, այն վերածվեց կիսամյա հանդեսի, և 1912թ. լույս տեսավ 24 համար: Տպարանների ու խմբագրատների հասցեների պարբերաբար փոփոխությունները հուշում են, որ թերթը նյութական դժվարություններ է կրել:[11]

«Մարմնամարզի» հրատարակությունը բացառիկ երևույթ էր հայ իրականության մեջ: Նշանավոր հայ մարմնամարզիկ Տիգրան Խոյանն այս առիթով իր հուշերում գրում է. *«Մարմնամարզ» մեծ բաց մը գոցեց, եւ ճիշդ ապենին հասաւ օգնութեան՝ ֆիզիքական դաստիարակութեան կարեւորութիւնը ծանօթացնելու համար, մինչ այդ եւ այդ ուղղութեամբ թափուած ջանքերուն այնքան յամառօրէն ընդդիմութիւն ցոյց տուողներուն: Եղաւ խորհրդապուն եւ առաջնորդը պատանի և երիտասարդ մեր տղոցը: Դարձաւ տաքուկ կեդրոն մը, ուր՝ մեր սերունդի ազնուացման նախանձախնդիր ու զարգացած հայորդիներ, ի շարս այլոց՝ Վահան Չերազ, Քաջունի եղբայրներ, Յ. Ճ. Սիրունի և Գրիգոր Յակոբեան թեւ ու թիկունք եղան աքանչելի Շավարշին, որուն ցանած սերմերը հայ հովերը տարին մերձաւոր ու հեռաւոր քաղաքները թրքահայ գաւառներուն, ուր նոյնպէս ծլիլ սկսան մեր սերունդի կայտառութեան ու տոկունութեան նուիրուած միութիւններ»:*[12]

Շավարշ Քրիսյանի երկարատև հիվանդության պատճառով 1914թ. լույս տեսավ թերթի ընդամենը երկու համար: «Մարմնամարզը» դադարեց լույս տեսնել 1914թ. կեսերին Առաջին աշխարհամարտի բռնկումից անմիջապես հետո: Պարբերականի հիմնադիր Շավարշ Քրիսյանը դարձավ Մեծ եղեռնի զոհ:

Շվեդական մարզանքի ուղեցույց-պաստառ, 1911թ., ՀՅԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

SMYRNA.

Ruinen d. alt. Smyrna
Grab des Tantalus
n. Kassaba
Menimen Scala
Burnabad Scala
Sas Burun
Kurdaleon
(Peräa)
K. Daragatsch
Smyrna
Mersinköi
n. Burnabad
Meles
SMYRNA
Schlachths
Quarantäne
Chulkia-bunar
(Burnabad)
Pagos
Keos Tepe
Kalifatia
n. Aidin
MEERBUSEN VON SMYRNA
Kap Daragatsch
Kaserne
Boul.
Deutsch. Generalkonsulat
Griech. Joh. K.
Belle Vista Str.
Franz. Hospit.
Engl. Schule
Handels-
Stadt
Quartier

Rotes-
Leuchtfeuer
Grünes-
Telegraph
Ottom. Bank
Theat. v. Smyrna
Griech. Katharinen K.
Kathol. Kathedr.
Schule d. Propaganda
Diakonissenhaus
u. Deutsche Kirche
Engl. Hospit.
Holländ. Hospit.
Kathol. Hospit.
S. Rocco-Hospit.
Griech. Hospital
Handelskammer
Dimitri K.
Mechitar. Schule
Kathedr. Hagia Photini
Ottoman. Post
Armenisches Hospit.
Armen. Theater
Hospiz
Luger häuser
Griech. St. Georgs K.
Armenisches
Armenische Kathedr. u. Friedh.
Quartier
Khan
Khan
Kassaba-Bahnhof
Synagogen
Bad
Jüdisches
Jüd. Hospiz
Quartier
Mohamm. Friedh.
Jüd. Hospit.
Mohamm. Friedh.
Bad
Bad
Türk. Bad
Griech. Joh. K.
Türk. Bad
Antikes Theater
Pagos d. Hügel
Felsenschlo
(Ruine)

Զմյուռնիայի հայկական թաղամասի պատկերով փոստային բացիկ, XX դարի սկիզբ

Գլուխ երրորդ

ՄԱՐԶԱԿԱՆ ԵՎ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԶՄՅՈՒՌՆԻԱՅՈՒՄ

Զմյուռնիան Օսմանյան կայսրության խոշոր նավահանգիստներից մեկն էր և աշխարհագրորեն մոտ լինելով եվրոպական քաղաքակրթությանը և հիմնականում հունաբնակ լինելով՝ ավելի էր ներազդված ժամանակի նորամուծություններից: Առևտրական և մշակութային կապերին զուգահեռ Զմյուռնիայում ձևավորվեցին առաջին մարզական ակումբները, որոնց անդամները հիմնականում օտարերկրացիներ էին:

Զմյուռնիայում տիրապետող դիրքեր ուներ անգլիական կրթական ներազդեցությունը, ինչի շնորհիվ այստեղ հայկական մարմնակրթական շարժումն ավելի կազմակերպված ու միասնական էր, ի տարբերություն Պոլսի, որտեղ հայ երիտասարդությունը հաճախում էր անգլիական, ֆրանսիական և գերմանական կրթական հաստատություններ:[1]

Զմյուռնահայոց շրջանում սպորտի և մարմնամարզության զարգացումը սկսվում է դեռ համիդյան



Մարզական թեմայով փոստային բացիկներ Զմյուռնիայից, XX դարի սկիզբ, ՀՑԹԻ, Զևան Չելոյանցի հավաքածու

[1] «Մարմնամարզ», Բ տարի, թիւ 6, մարտի 15, 1912, էջ 81-82:

Զմյուռնիայի ֆուտբոլային թիմը, որի կազմում հանդես է եկել հայ ֆուտբոլիստ Զարեհ Գույումճյանը, XX դարի սկիզբ

Զմյուռնիայի ամերիկյան վարժարանի աշակերտուհիները մարզանքի պահին, 1912թ.

շրջանից: Բռնապետության պայմաններում ցանկալի չհամարելով հանդես գալ էթնիկ միատարրության հիման վրա ստեղծված ակումբի կամ թիմի կազմում՝ հայ մարմնամարզիկները, որպես կանոն, հանդես էին գալիս քաղաքի այլ էթնիկ հանրությունների ներկայացուցիչներից կազմված մարզական ակումբների և թիմերի կազմում: Հայ մարզիկների մի մասը մեկնում էր Եվրոպա՝ մարմնակրթության ուսումնասիրման ու կատարելագործման նպատակով:

Որպես կանոն, նրանցից քչերն էին վերադառնում հայրենի քաղաք՝ այդտեղ մարմնամարզական կյանքին զարկ տալու համար: Այդ քչերից մեկն էր զմյուռնահայ Արթուր Էլմասյանը, ով, Ֆրանսիայում լրջորեն ուսումնասիրելով մարմնակրթությունը, վերադարձավ Զմյուռնիա և Ազգային վարժարանում սկսեց աշխատել որպես մարմնամարզի ուսուցիչ: 1900թ. Ա. Էլմասյանին հաջողվեց ազգային վարժարանների համար ձեռք բերել մարզական գույք և մարմնամարզության համար անհրաժեշտ պարագաներ ու Մեսրոպյան վարժարանի բակում ստեղծել մարզական արդիական գույքով հագեցած մարզարան: Հաջորդ տարի՝ 1901թ. հունիսին, Ա. Էլմասյանը կազմակերպեց տարեկան մարզահանդես, որին իրենց մասնակցությունը բերեցին ավելի քան հարյուր մարզիկներ: Այս մարզահանդեսները դարձան պարբերական, սակայն գործելով կիսագաղտնի պայմաններում՝ Արթուր Էլմասյանը 1905թ. մատնության պատճառով ստիպված էր հեռանալ Զմյուռնիայից: Նրա հեռանալուց հետո աշակերտները, շարունակելով իրենց ուսուցչի գործը, կազմեցին և Մեսրոպյան միությունը:

Գարաթաշի «Վարդանյան» մարմնամարզական ակումբի մարզիկները, 1912թ.

Զմյուռնիայի սպորտային ակումբի շենքը, փոստային բացիկ, XX դարի սկիզբ

Մեսրոպյան վարժարանի սաները: Լուսանկարը՝ 1908-09թթ.

Թագվոր Պաքրճեան (1882-1954)

Գևորգ Պուպլ (1850-1915)

1900-ական թվականների սկզբին Զմյուռնիայում կային առանձին հայ ֆուտբոլիստներ, որոնց մեծ մասը խաղում էր օտար խմբերում: Նրանցից հիշատակելի է Զավեն Կույումճյանը: Վերջինս, ինչպես վերը նշվեց, տարբեր ազգերի ներկայացուցիչներով համալրված Զմյուռնիա քաղաքի ֆուտբոլային թիմի կազմում 1906թ. մասնակցեց Աթենքում կայացած ֆուտբոլային մրցաշարին և արժանացավ արծաթե մեդալի: Ֆուտբոլի հանդեպ ունեցած հետաքրքրության հետևանքով Զմյուռնիայում ստեղծվում է հայկական առաջին ֆուտբոլային թիմը՝ «Ֆուտբոլի միություն» անվամբ:

Ժամանակի ընթացքում հայ մարզիկներից կազմվեցին «Քնար», «Վասպուրական», «Վարդանյան» և «Սահակյան» թիմերը: Այս չորս առանձին խմբերը 1908թ. միավորվելով կազմեցին «Հայ որսորդաց ակումբը», որն իր առանձին կանոնակարգի առկայությամբ վերոհիշյալ չորս կազմակերպություններին ինքնուրույն ու ազատ գործելու հնարավորություն էր ընձեռում: Ակումբն

ուներ երկու ֆուտբոլային թիմ, սակայն բացի ֆուտբոլից ակումբի անդամները զբաղվում էին այլ մարզաձևերով ևս: Մարզարանների գույքը պատվիրվում էր Անգլիայից:

Հայ մարզիկ Մկրտիչ Յանըգյանի եռանդուն ջանքերի շնորհիվ կարճ ժամանակամիջոցում նորակազմ այս ակումբի անդամների թիվը հասավ 600-ի, իսկ 1912թ. վերջին «Հայ որսորդաց ակումբն» ուներ մոտ հազար գործող անդամներ: Ակումբն ուներ իր կանոնադրությունը, զինանշանը և դրոշը, որի վրա «Օսմանյան Հայ որսորդաց ակումբ» գրությունն էր: Մ. Յանըգյանը ակումբի ֆուտբոլային թիմի ավագն էր, իսկ մի տևական ժամանակաշրջան ակումբի նախագահն էր Գևորգ Պուպլը:

1910թ. քաղաքի գավաթի միջազգային առաջնությանը մասնակցելու նպատակով լավագույն հայկական ֆուտբոլային թիմ ընտրելու համար հայկական չորս ֆուտբոլային թիմերի միջև անցկացվեցին մրցումներ՝ «Արծաթ բաժակի» համար:

1911-12թթ. «Հայ որսորդաց միության» ֆուտբոլային թիմը հասավ լուրջ հաջողության: Հաջորդաբար մրցելով քաղաքի ուժեղագույն հունական «Պելոպս», «Ապոլլոն», «Պանիոնիոն» և անգլիական «Բուռնաբադ» թիմերի հետ՝ հայկական թիմը փայլուն հաղթանակ տոնեց և 1912թ. մարտի 26-ին շահեց Զմյուռնիա քաղաքի արծաթե գավաթը՝ եզրափակիչ խաղում 4:1 հաշվով վճռորոշ հաղթանակ տանելով հունական «Պելոպս» թիմի նկատմամբ: 1912թ. ապրիլի 8-ին քաղաքի Հռիփսիմյանց վարժարանում տեղի ունեցավ գավաթի պաշտոնական հանձնման արարողությունը:

Այս հաղթանակը ոչ միայն սպորտային լուրջ նվաճում էր հայկական մարզական ակումբի համար, այլև

Մեսրոպյան վարժարանի ֆուտբոլային թիմը: Լուսանկարը՝ 1914թ.

Գարաթաշի «Վարդանյան» ակումբի ֆուտբոլային թիմը: Լուսանկարը՝ 1912թ.

Զմյուռնիայի «Հայ որսորդաց ակումբի» ֆուտբոլային թիմը 1911-1912թթ. առաջնության ընթացքում շահած արծաթե գավաթով: Լուսանկարը «Մարմնամարզից», 1912թ.



ՍԲՕՐԻ ԿԵԱՆՔ

ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԻԶՄԻՐԻ ՄԵՋ

ՀԱՏԵՐԸ ՅԱՂԹԱԿԱՆ

ՍԲՕՐԻ ԿԵԱՆՔ

ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԻԶՄԻՐԻ ՄԵՋ

ԱՐԾԱԹԵԱՅ ԳԱՒԱԹԻՆ
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՆՁՆՈՒՄԸ

ԴԵՊԻ ԱՐՈՒՇՈՒԼՍ

Զմյուռնիայի «Հայ որսորդաց ակումբի» ֆուտբոլային թիմը, 1912թ.: Լուսանկարը՝ «Մարմնամարզից»

աննախադեպ ոգևորությամբ ընդունվեց զմյուռնահայության և կայսրության հայ բնակչության կողմից: Ավելի ուշ արևմտահայ մարզական կյանքի տարեգիր Գրիգոր Ճոլոլյանը, անդրադառնալով այս հաղթանակի թողած դրական ազդեցությանը, գրում է. *«Այս պատրուաբեր յաղթանակը, նիւթականէն աւելի բարոյական մեծ յաջողութիւնն մը կազմեց միութեան համար, ինչ որ ազդակ մը եղաւ հայ գաղութին մէջ բարերար*

շարժում մը ստեղծելու: Բայց թերահաւատները, բոլոր անտարբերները, որոնք կազմակերպութունէն հեռու մնացած էին, զգացին իրենց մէջ խօսող ցեղին ոգին» («Ազդակ», Բեյրութ, 03.01.1939):

Հայկական ակումբի այս նշանավոր հաղթանակը մեծ խթան հանդիսացավ Զմյուռնիայում սպորտային կյանքի զարգացման ու նոր ակումբների ստեղծման համար: Արդեն 1912թ. Զմյուռնիայի հոգևոր առաջնորդ

Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանի մարմնամարզական խումբը: Մարզիչ՝ Պետրոս Մելիքյան: Լուսանկարը՝ 1908թ.

Զմյուռնիայի «Հայ որսորդաց ակումբի» մարզիկ Գևորգ Հաբեթյանը, ՀՑԹԻ, Գ. Ճոլոլյանի հավաքածու

Զմյուռնիայի «Վասպուրական» ֆուտբոլային թիմը: Կենտրոնում՝ Գևորգ Հաբեթյանն է: Լուսանկարը՝ 1914թ.



Հետեւաբար, պէտք է վերջ մը տալ այն հին սովորութեանց, որոնց համեմատ մարզանքը իրր լիւքսի դաս մը նկատուած է, զոր կարելի է շատ դիւրութեամբ զանց առնել։ Վարժարաններու մէջ պէտք է անոր գոյութիւնը ապահովել և գոյութիւն ունեցած պարագային ալ քաջալերել։

Ամէն Հայ, որ ազգային ինքնագիտակցութեան զգացումէն զրկուած չէ, պէտք է անդրադառնայ այս այնքան կարեւոր խնդրոյն և կարելին ընէ օժանդակելու համար այս նպատակաւ կազմակերպուած խումբերու, ակումբներու, ձեռնարկներու։ Այս առթիւ չեմ կրնար չի յիշել տեղւոյս Հայ Որսորդաց Ակումբին ֆութպոլի խումբը, որ անցեալ տարի գերմարդկային ճիգերով Ցունաց ձեռքէն խլեց արծաթեայ գաւաթը. այս առթիւ վստահ եմ թէ բոլոր Հայերուն սրտերը ուրախութենէ թրթռացին, բայց թերեւս շատ քիչեր խորհեցան թէ այդ խումբ մը երիտասարդներուն ըրածը ազգային արժանապատուութիւնը օտարներու և մանաւանդ Ցոյներու նման եսամոլ և ազգայնամոլ ազգի մը առջեւ բարձր բռնելու համար եղած ձեռնարկներուն լաւագոյնն էր։ Այդ խումբը իր պարտականութիւնը կատարեց, կը մնայ տեսնել թէ հանրութիւնը, որ ընդհանրապէս կ'ոգեւորուի, ո՛ր աստիճան գործնական հետեւանք պիտի տայ այդ ոգեւորութեան ու քաջալերէ այդ և նման ձեռնարկները։

Ես յոռետես չեմ։

ՇԱՒԱՐՇ ՔՐԻՍԵԱՆ

(Իզմիրի «Աշխատանք»էն)

Մատթէոս Ինճէյան ծ. վարդապետի նախագահությամբ ստեղծվեց «Century's club» անունով մարմնամարզական խումբը, որը «Հայ որսորդաց ակումբի» մի ճյուղն էր:[2] Մեկ այլ՝ «Gentlemen's Team» անունով ֆուտբոլային թիմ ստեղծվեց Թագվոր Պաքրճյանի նախագահությամբ:[3]

Զմյուռնիայի մյուս հայկական ակումբները՝ «Վասպուրականը» և «Քնարը», 1913 թ. հոկտեմբերի 22-ին կազմակերպեցին սպորտային մարզաձևերի մրցումներ, որոնց ընթացքում տարբեր մարզաձևերի մեջ աչքի ընկավ Գևորգ Հաբեթյանը: «Վասպուրական» ակումբի կողմից առաջին, երկրորդ և երրորդ մրցանակային տեղերի համար սահմանված մեդալները մրցանակակիր մարզիկներին անձամբ հանձնեց Գևորգ Պուպլը:[4]

Քաղաքի հայաբնակ արվարձաններում և մերձակա բնակավայրերում ևս ստեղծվեցին հայկական մարմնամարզական ակումբներ: Դրանց թվում էին Գարաթաշի «Վարդանյան» ակումբը՝ մարզիչ Գառնիկ Շաքարյանի գլխավորությամբ և Մանիսայի «Արարատ» ակումբը:

Զմյուռնիայի հայկական մարզական ակումբների մարզիկներն իրենց մասնակցությունը բերեցին Հայկական երրորդ և չորրորդ օլիմպիական խաղերին:

Առաջին աշխարհամարտի և Մեծ եղեռնի տարիներին Զմյուռնիայի հայ համայնքի շրջանում մեծ վերելք ապրող մարզական և մարմնակրթական շարժումը հասկանալի պատճառներով անկում ապրեց և որոշ դադարից հետո նոր թափ ստացավ Առաջին աշխարհամարտից հետո:

[2] «Մարմնամարզ», Բ տարի, թիւ 6, մարտի 15, 1912, էջ 81:

[3] Նույն տեղում, էջ 98:

[4] «Մարմնամարզ», Գ տարի, թիւ 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 218:

Տեսարան Զմյուռնիա քաղաքից, XX դարի սկզբի փոստային բացիկ

Օսմանյան կայսրության տարածքում հայկական մարմնակրթական ու մարզական ակումբների աշխարհագրությունը ներկայացնող քարտեզ

Գլուխ չորրորդ

ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

Օսմանյան կայսրության սահմաններից ներս հայկական մարմնակրթական ու մարզական կյանքի հիմնական կենտրոնները Պոլիսը և Զմյուռնիան էին: Սակայն կարճ ժամանակահատվածում Շավարշ Քրիսյանի և Արամ Նիկողոսյանի ջանքերով Պոլսի Ուսումնական խորհուրդը ոչ միայն պաշտոնապես ներմուծեց մարմնամարզն իր կրթական ծրագրեր, այլև ձեռնամուխ եղավ գավառի համար մարզիկներ պատրաստելու գործին: Հայկական մարզական շարժման մեջ ներգրավված առաջնորդների համար առաջնահերթ խնդիր դարձավ տեղի հայ երիտասարդությանը տարածում ստացող շարժման մեջ ներգրավելը:

Արևմտյան Հայաստանում մարմնակրթական շարժման հիմնական կենտրոնը Կարինն էր և այստեղ գործող Սանասարյան վարժարանը: Բարձր Հայքի այս կարևոր կենտրոնը, ինչպես վկայում է Գրիգոր Ճոլոլյանը. *«...շնորհիւ Սանասարեանի նման հոյակապ կրթական հաստատութիւններու ազդեցութեան, դարձած էր արուեստի ու դպրութեանց լուսաւոր օջախ մը, իսաւարակուռ Անատոլուի խորերը»*: Վարժարանում ամուր հիմքերի վրա էին դրված լողի և չմշկավազքի մարզաձևերը, ստեղծվել էին մարմնամարզական ծրագրեր: Վարժարանն ուներ նաև ժամանակակից մարզական գույքով հագեցած մարզարան: Պահպանված լուսանկարները, որոնցում ներկայացված են Սանասարյան վարժարանի սաների ցուցադրական ելույթները, վկայում են մարմնակրթության բարձր մակարդակի մասին:

Այդ մասին է վկայում նաև քաղաքի վարժարանների ավարտական վկայականներում մարմնամարզության առանձին դասընթացի հիշատակումը, այդ թվում աղջիկների համար: Մեծ եղեռնից առաջ Կարինում ստեղծվեց նաև Երիտասարդների մարմնամարզական ակումբ:

Այս տեսանկյունից հետաքրքրական է Շավարշ Միսաքյանի կարծիքը, ով Կարինի «Յառաջ» թերթում գրում է. *«Մարմնամարզական վարժութիւնները օրինութիւն մը պիտի ըլլան մեզի համար, Պոլսէն մինչև Հայաստան: Եվ պէտք չէ անոնց համար բան մը խնայենք: Ընդհակառակը մեզի համար օրուան սնունդին չափ մարմնոգութիւն պէտք է պատճառէ երիտասարդ-*

Մկրտիչ Սանասարյանի պատկերով արծաթե մեդալ, XIX դարի վերջ, մասնավոր հավաքածու

Կարինի Սանասարյան վարժարանի շենքը: XX դարի սկզբի լուսանկար

ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Վկայագիր

COLLÈGE SANASSARIAN

DIPLÔME

Կարինի Սանասարյան վարժարանի ավարտական վկայական՝ տրված Մկրտիչ Պարսամյանին (1905թ.): Դասավանդված առարկաների թվում նշված է նաև մարմնամարզը

ներու մարմնամարզական ակումբները, անընդհատ դասընթացք մը պետք է կազմէ մարմնակրթանքը, նույն իսկ ցեղին բարելաւման, կամ ինչպէս կ՚ըսեն «ազգային» տեսակետով: Հարկ է ֆիզիքապես շտկել մէջքերը, որպէսզի դիւրանայ, լրանայ մտքի և ւ սրտի ծոռթիւններուն ալ սրբագրութիւնը» (տե՛ս «Ազդակ», դեկտեմբերի 29, 1938):

Սպորտային և մարմնակրթական ակումբների կազմակերպման ոլորտում առանձնահատուկ ակտիվություն էր դրսևորում ՀՅԴ-ն, որի ակումբները երիտթուրքական հեղափոխությունից հետո գործում էին ինչպես Պոլսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Դրանց թվում կարելի է հիշատակել Ադաբազարի ՀՅԴ մարմնամարզական ակումբը և «Արամազդ» մարզական միությունը, Նիկոմեդիայի «Ատլաս», և Սամսունի «Կայծակ» ակումբները: Համանման սպորտային ակումբներ ձևավորվեցին նաև Զեյթունում, Վանում և Հաճընում: Այս ակումբներում լայն տարածում ստացան ֆուտբոլը, նշանառությունը, սուսերամարտը, բռնցքամարտը և այլն, դրանց զուգահեռ նաև՝ որսը և քայլարշավները:

Ադաբազարի ՀՅԴ մարմնամարզական ակումբի կազմում էին ընդգրկված նշանավոր մարզիկներ Սարգիս Թորիկյանը, Բյուզանդ Փափազյանը և Ստեփան Միսկճեանը:

Մեծ եղեռնից առաջ Վանում գործում էր Երիտասարդական քրիստոնեական ընկերակցությունը, Հաճընում՝ Միացյալ ակումբը, Մերսինում՝ Ուսումնասիրաց միությունը, Այնթապում՝ Հայ ուսումնասիրաց մարմնամարզական ակումբը, Կոնիայում՝ «Մասեաց» մարմնամարզական միությունը: Վերջինիս ատենապետն էր Միքայել Բարթիկյանը: Զինվորական մարզանքը և մարմնամարզությունը պարտադիր էին նաև Կոնիայի Ճենանեան քոլեջում: Այս առիթով քոլեջի պարբերականը գրում է. *«Աշակերտներու բարոյական եւ իմացական զարգացման հետ անոնց ֆիզիքականին ալ*

Սանասարյան վարժարանի սաները մարմնամարզության պահին: Լուսանկարը՝ 1910-ական թթ.

Սանասարյան վարժարանի սաները լոգանք են ընդունում բնության մեջ: XX դարի սկզբի լուսանկար-բացիկ, ՀՑԹԻ հավաքածու

Վարժարանի սաների դաշտահանդեսը, 1912թ.

Սանասարյանի սաները շվեդական մարզանքի պահին, 1912թ.

մեծ խնամք կը դարձուի: Ամէն աշակերտ պարտաւոր է հետևիլ մարմնամարզի կարևոր դասընթացքին: Ասկե զատ ամէն աշակերտի արտօնուած է արձակուրդի պահերուն օգտուիլ մարմնակրթանքի գործիքներէն» («Իկոնիոն», Ճէնանեան գոլեճ, Կոնիա, Ա տարի, թիւ 7-8, յուլիս-օգոստոս, 1912):

Վանում ստեղծվեց նաև «Վահագն» անունով սպորտային մարմնակրթական ակումբը: Ավելի վաղ հայահոծ այս քաղաքում Միացյալ ընկերության Կեդրոնական վարժարանում առանձին ժամեր էին հատկացված մարմնամարզության դասերին: Պոլսի «Տորք» ակումբի հիմնադիրներից Եղիշե Քաջունին մեկնեց Վան՝ այնտեղ մարզական շարժումը տարածելու համար, և շատ չանցած Վանի վարժարանների սաները կազմակերպեցին մարմնամարզական հանդես, շվեդական մարզանք և մրցանակաբաշխություն: Ե. Քաջունու ջանքերով ստեղծվեց նաև «Վասպուրական» ֆուտբոլային թիմը:

Սպորտային մրցակցությունների ու մարմնակրթության հանդեպ մեծ էր հետաքրքրությունը նաև Սեբաստիայում: 1911թ. այստեղ 14 անդամների նախաձեռնությամբ հիմնվում է «Պարթև» ակումբը: Քաղաքի հայ երիտասարդության մարմնակրթական շարժման հիմնական առաջատար այս ակումբի անդամների թիվը կարճ ժամանակում համալրվում է տասնյակ նոր անդամներով: Ակումբն ուներ տեղական պայմաններին հարմարեցված ներքին կանոնադրություն և Վարչական ժողով՝ բաղկացած հինգ անդամներից: Շաբաթը մեկ անգամ ակումբը կազմակերպում էր ֆուտբոլի խաղեր, որոնց մասնակցում էին երկու թիմեր՝ կարմիր և կապույտ համազգեստով: Շաբաթը երկու անգամ տեղի էին ունենում մարմնամարզական մրցումներ, այդ թվում՝ ազատ մարզանք, կոփամարտեր, վազք, պարանի ձգում և այլն:

1911թ. վերջին տեղի ունեցան «Պարթև» ակումբի դաշտային առաջին մրցումները, իսկ գավառի Կովտուն գյուղում հիմնվեց «Զավարյան» ակումբը: Ֆուտբոլային թիմ ստեղծվեց նաև Սեբաստիայի նահանգի Նիքսար գյուղում:

Սեբաստիայում գործում էին նաև «Վարազդատեան» ակումբն ու «Արծիվ» միությունը: Տեղական «Հող դար» պարբերաթերթը ոչ միայն լուսաբանում էր քաղաքի մարզական անցուդարձը, այլև հայտարարություններ տպագրում տեղի մարզական ակումբներին անդամակցելու պայմանների մասին, ինչպես նաև դրանց գործունեությանը նպաստելու համար հանգանակություններ իրականացրած անձանց անունները: Սա, իսկապես, հազվադեպ երևույթ էր գավառի հայ պարբերական մամուլի համար:

Վարագա վանքի Ժառանգավորաց դպրոցի սաները վանքի բակում, XX դարի սկիզբ

Սեբաստիայի Արամյան վարժարանի 1914թ. շրջանավարտները, ՀՑԹԻ հավաքածու

1913 թ. քաղաքի «Պարթև» և «Վարազդատեան» ակումբների միջև տեղի ունեցած ֆուտբոլային խաղից հետո հայ մարզիկները կազմում են բուրգեր՝ *«...խլելով հանդիսականներուն համակրալից ծափերը... Հայ ժողովուրդը սկսաւ խումբ խումբ Քաղաք դառնալ, ամէն մարդ ուրախ էր եւ բոլորը կարծէս մոռցած էին ամէն*

ցաւերը՝ որոնք ապրած էին, մոռցակ վարկեան մը իր բոլոր կսկիծները Սև հողերու այս քաղաքը».[1]

Պոլսում մարմնամարզական շարժման բուռն զարգացումն իր ազդեցությունը թողեց Պարտիզակի մարմնակրթական շարժման վրա, որտեղ արդեն 1911թ. հունիսի 2-ին տեղի ունեցան առաջին դաշտահանդեսը

[1] «Հող դար», Սեբաստիա, հոկտեմբերի 19, 1913:

1914

TAR

ՀՈՂ ԴԱՐ

ՖԻԶԻՔԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ՅԵՂԻՆ ԴԱՐ ՏԱՐԻՆ 1914

Սեբաստիայում լույս տեսնող «Հող դար» թերթի 1914թ. հունվարյան համարը՝ ֆիզիկական կրթության մասին խմբագրականով

Սեբաստիայի «Պարթև» մարմնակրթական ակումբի սաները, 1910-ական թթ.: Լուսանկարը «Մարմնամարզից»

Հայտարարություն «Հող դար» թերթում «Մարմնամարզ» հանդեսի համարներ ձեռք բերելու մասին



և ֆուտբոլի մրցումները հայ մարզիկների մասնակցությամբ: Նույն թվականին տեղի ամերիկյան բարձրագույն վարժարանի հայ սաների ջանքերով հիմնվում է «Խանդավառ» անունով խումբը, տեղի են ունենում առաջին մրցումները: Այստեղ ակտիվ գործում էր նաև «Արծիվ» մարզական միությունը, իսկ մարմնամարզության ասպարեզում նշանակալի հաջողությունների էր հասել քաղաքի ամերիկյան վարժարանի նշանավոր մարզիկ սաներից Մատթևոս Զարիֆյանը:

Պարտիզակի ամերիկյան բարձրագույն վարժարանում գործում էին երկու ընկերակցություններ՝ «Աթլետիկ» և «Ժիմնաստիք» ճյուղի հետ «Մարզասիրաց և խաղասիրաց» ընկերակցության մասնախմբեր:[2]

Հաստատության Սանուց միության հատուկ սենյակում պատից կախված էր արծաթե մի վահան, որի վրա տպագրված էին վարժարանի տարեկան դաշտահանդեսի չեմպիոնների անունները: Առաջինը 1898 թ. տակ հիշատակվում էր Միհրան Մեզպուրյանի անունը:[3]

Վարժարանի «Պարտիզակ» թերթը գրում է. *«Վարժարանին աշակերտները միշտ նշանաւոր եղած են դաշտային խաղերուն մէջ ու հոդ կը խաղան ֆութպոլ, «Բիրս-հոլ»-ի առջև տարածուող սարահարթին վրայ: Վարժարանին ուսանողները անցեալին մէջ շատ մը խաղերու մէջ կարևոր յաջողութիւններ ունեցած են, եւ կը յուսանք, թէ ներկայ ուսանողները ջանադիր կ՚ըլլան բարձր պահել Վարժարանին դիրքը դաշտային մարզանքներու մէջ ևս, քանի որ իրենք հիմա շատ աւելի դիւրութիւններ և առաւելութիւններ ունեն տեղի»:*[4]

Ժամանակի ընթացքում դաշտային մրցումները և մարմնամարզական խաղերը գավառի ամերիկյան

Ադաբազարի Կեդրոնական վարժարանի սան, մարմնամարզիկ Սարգիս Թարիգյանը: Լուսանկարը՝ «Մարմնամարզից», 1912թ.

[2] «Պարտիզակ», Ա տարի, թիվ 1, 1909, էջ 34:

[3] Նույն տեղում, էջ 40:

[4] Նույն տեղում, էջ 16:

Պարտիզակի դաշտային մրցումների հաղթող Առաքել Համբարձումյանը (ձախից) և Ամերիկյան քոլեջի սան Մանուկ Չիլինկիրյանը: Լուսանկարները «Մարմնամարզից», 1912թ.

և հայկական կրթական հաստատություններում ավելի ու ավելի մեծ ծավալ են ստանում:

Մարզական և մարմնակրթական շարժումը մեծ թափ է առնում Մարզվանում՝ շնորհիվ տեղի ամերիկյան «Անատոլիա» քոլեջի: Այս քոլեջի ուսանողների ջանքերով ստեղծվում են առանձին ակումբներ, որոնք հետագայում (1908թ.) միավորվելով հիմնում են «Շավարշան» միությունը, որը երկու տարի անց արդեն ուներ 110 ան-

Պարտիզակի Ամերիկյան քոլեջի շենքը, XX դարի սկզբի փոստային բացիկ

Պարտիզակի ամերիկյան վարժարանի սաները ֆուտբոլ խաղալիս: Լուսանկարը «Պարտիզակ» թերթից, 1909թ.

Մարզվանի «Անատոլիա» քոլեջի շենքը, XX դարի սկզբի լուսանկար

Մարզվանի «Անատոլիա» քոլեջի մարմնամարզական խմբակի սաները: 1910-ական թթ. լուսանկար-բացիկ

ՄԱՐԶՈՒԱՆԻ "ՇԱՒԱՐՇԱՆ" ԱԿՈՒՄԲԻՆ ՐԸՔՕՐՆԵՐԸ

Մարզուանի Անատոլիա Գոլէջի հայ աշակերտներէն կազմուած «Շաւարշան» ակումբը մարզանքի զանազան ճիւղերուն մէջ հետեւեալ բրքօրները ունեցած է վերջին երեք տարիներու ընթացքին.—

Մէկ մղոն վազք, 5 վայրկեան 6 երկվայրկեան, չափուած Պր. Հայիմեանի կողմէ 1910ին։

Քառորդ մղոն, 60 երկվայրկեան, չափուած Պր. Թուսմեանի կողմէ, 1909ին։

Քառորդ մղոն, փոքրիկներու, 2 վայրկեան 28 երկվայրկեան, չափուած Պր. Իլճեանի կողմէ, 1909ին։

Երկու հարիւր հատի եռաստ վազք, 27 երկվայրկեան, չափուած Պր. Եաղճեանի կողմէ 1909ին։

Ութսուն եռաստ, 8 վայրկեան, չափուած Պր. Դանիէլեանի կողմէ, 1910ին։

Ութսուն եռաստ, փոքրիկներու, 11 երկվայրկեան, չափուած Պր. Պողոսեանի կողմէ 1910ին։

Արգելքներու վրայէ ութսուն եռաստ վազք, 13 երկվայրկեան, չափուած Պր. Տէր Յակոբեանի կողմէ, 1909ին։

Երկարութիւն ցատկել, 18 ոտք, 9 ինչ, չափուած Պր. Ճիրմէճեանի կողմէ, 1910ին։

Բարձրութիւն ցատկել, 4 ոտք, 9 ինչ, չափուած Պր. Տէր Յակոբեանի կողմէ, 1909ին։

Գոլով ցատկել, 8 ոտք, 6 ինչ, չափուած Պր. Վարժապետեանի կողմէ, 1909ին։

Պատատակ նետել, 98 ոտք, 8 ինչ, չափուած Պր. Պէկեանի կողմէ, 1909ին։

Երեք նետել, 34 ոտք, 9 ինչ, չափուած Պր. Արմաղանի կողմէ, 1909ին։

Մարզվանի «Անատոլիա» քոլեջի հունական «Պոնտոս» ֆուտբոլի թիմը։ Լուսանկարը՝ 1910-ական թթ.

ՀԱՅ ԱԿՈՒՄԲԻ ՄԸ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Պայրամին երրորդ օրը մարզական մրցումներ և ֆութպոլի մրցում տեղի ունեցան Իզմիտի կառավարիչին նախագահութեամբ, որուն մէջ Պարտիզակի «Արծիւ Միութիւն»ը ոչինչի դէմ 3 կոլով յաղթական եկաւ։ 20 քիլոմէթր հեծանիւի մրցումին մէջ ալ առաջին եկաւ Վաղարշակ անուն երիտասարդ մը։ Մեր շնորհաւորութիւնները յայտնելով լաւագոյն յաջողութիւններ կը մաղթենք։

«ՎԱՐԱԶԴԱՏԵԱՆ» ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄ

(ՍԵՐՈՒԱՏԻՍ)

Ակումբս հիմնուած է 1912 Յուն 2ին, 12 անձերու նախաձեռնութեամբ։ կումբս ունի ծրագիր-կանոնագիր Մեր տանայ երիտասարդութեան պէտքին յա մար։

Ակումբս ունի ընդհանուր և գործ դիր մարզով։ Գործադիր մարմինը կը տնօր նէ այն բոլոր գործունեութիւնները որո միջոցաւ պիտի իրագործուի ակումբիս նպ պատակը։

Ակումբիս մէկ նպատակն ալ է Մ բաստանայ հին թէ նոր խաղերը մշակել ու կատարելագործելու աշխատիլ։

Մեր խաղի բաժանումները հետեւեալ ներն են, — 1. ֆութպոլ, 2. պէյսպո

ԵՐԶՆԿԱՆ ԱԼ ԿԸ ՇԱՐԺԻ

Երզնկայի մեր սեփական թղթակիցը կը տեղեկացնէ թէ քաղաքին մէջ կազմուած է մարմնամարզական ակումբ մը ժայռ առնուով, և նպատակ ունենալով երեւան բերել ու զարգացնել իր անդամներու ֆիզիքական կարողութիւնները։

Շնորհաւորելով Երզնկայի երիտասարդութեան այս ձեռնարկը, կը հրաւիրենք զիրենք մնալ ժայռի պէս կանգուն եւ դառնալ օրինակ ուրիշ վայրերու երիտասարդութեան։—

ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՄԷՋ

Տրապիզոնի մէջ ասկէ առաջ գոյութիւն ունէր մարմնամարզական միութիւն մը, որ վերջերս կազմակերպուած է Շարժում անուան տակ։

Մարզվանի «Անատոլիա» քոլեջի «Շավարշան» հայկական ֆուտբոլային թիմը, 1911թ.



Բողբոջ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍՅԱՑ

Բ. ՏԱՐԻ — 20 ՄԱՅԻՍ 1912 — ԹԻՒ 10

Մարզուանի Անարոյիա Գոլֆին Շաւարշան Միութեան
ՖՈՒԹՊՕԼԻ Մարզախումբը

Խմբագրատեղի, ծանուցում անպայման կանխիկ. մեծիւր 19. Օտա. տպիչ 103 դրշ.

Բաժանորդագրութիւն	Պիտակի տող 1 անգամի համար	1 դրշ.
Ամբողջ 15 դրշ. Երեսուն 5 մեր.	» » 2-5 »	» 30 դրշ.
Ամբողջ 1 տար. Բաժան 2 տար.	» » 6-10 »	» 20 »
Ֆրանկ 2 օրինակ մինչեւ 5 դրշ. առանձին	» » 11-20 »	» 10 »
» 1 » 5 մինչեւ առանձին		

Հասցէ՝ M. Manigon Varjabedian Merzifoun

ԵՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ
ՇԱՒԱՐՇԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԱՆԱԹՈԼԻԱ ԳԱՒԼԷՄ
ՄԱՐԶՈՒԱՆ

ՄԱՐԶՈՒԱՆ
ՏՊԱԳՐ. ԱՆԱԹՈԼԻԱ
(Յակոբ Մ. Թոպչեան)
1915

Մարզվանում լույս տեսած «Բողբոջ» թերթի 1912թ. մայիսյան համարը՝ «Շավարշան» միության ֆուտբոլային թիմի լուսանկարով

«Շավարշան» ուսանողական միության ծրագիր-կանոնագիրը և զինանշանը, 1915թ.

Մարզվանում արված լուսանկարներ՝ դաշտային մրցումների ու ըմբշամարտի տեսարաններով, 1910-ական թթ.

«Անատոլիա» քոլեջի հույն ուսանողներից կազմված «Պոնտոս» աթլեթիկ ակումբի սաները, 1907թ., XX դարի փոստային բացիկ

«Անատոլիա» քոլեջի սանուհիները մարզանքի պահին, XX դարի սկզբի փոստային բացիկ

Մարզվանի «Անատոլիա» քոլեջը, XX դարի սկիզբ

Թենիսի խաղահրապարակ Մարզվանում, XX դարի սկիզբ

Փոստային բացիկ «Անատոլիա» քոլեջի հայկական և հունական ակումբների սաների լուսանկարներով, 1900-ականների փոստային բացիկ

Ուրֆայի Մարմնամարզական միության անդամները, 1912թ.

Հայ մարմնամարզիկ Գ. Գութնոյանը Կեսարիայի Սբ. Կարապետ վանքից: Լուսանկարը «Մարմնամարզից», 1912թ.

դամ: Այս միությունը ֆուտբոլին զուգահեռ ուներ նաև բեյսբոլի խումբ և հրատարակում էր «Այգ» հանդեսը: Մարզվանում «Անատոլիա» քոլեջից բացի, ակտիվ էր նաև հայկական Սբ. Սահակյան վարժարանը, որի «Հայորդի» աշակերտական միությունը կազմակերպում էր տարեկան սպորտային մրցումներ: Քոլեջում մարմնակրթությունն ու սպորտային մարզաձևերը հանրությանն էին ներկայացվում տարեկան դաշտահանդեսների ժամանակ, որտեղ սահմանվում ու գրանցվում էին մարզիկների ցուցանիշները: Ֆուտբոլային խաղերը կազմակերպվում էին շաբաթվա ընթացքում մի քանի անգամ:

Ամասիայի հայկական վարժարաններ ևս ներմուծվեցին մարմնամարզի դասեր, որոնք տեղի էին ունենում քաղաքի մերձակա «Այվասիլ» անունով դաշտում: Տեղի Իբրանոսյան վարժարանում կիրառվում էր շվեդական մարզանքը:

Տեղի հայ երիտասարդների ջանքերով ստեղծվում է Ուրֆայի հայ մարմնամարզական միությունը, որի անդամները կարճ ժամանակում կարողանում են համապատասխան մարզական գործիքներ հայթայթել ու մարզադաշտ պատրաստել: Կարապետ Թաթոյանի առաջնորդությամբ ստեղծված այս մարմինն ուներ նաև վարչություն, որին անդամակցում էին Էքմեքչյան, Շամլյան եղբայրները, Վահան Ճերետյանը, Հովհաննես Նագգաշյանը և այլք:[5]

1912թ. հունիսի 16-ին Ուրֆայի Ազգային Կեդրոնական վարժարանի աշակերտների նախաձեռնությամբ Արտավազդ ծ. վարդապետի նախագահությամբ ու մարմնամարզի ուսուցիչ Հակոբ Սերիկյանի ղեկավարությամբ տեղի է ունենում առաջին մարզական հանդեսը: Հաղթողները Հ. Սերիկյանի կողմից արժանանում են «շքեղ մետալ»-ների:

Կեսարիայի Սբ. Կարապետ վանքը, XX դարի սկզբի փոստային բացիկ

Այդ նույն ժամանակ Կեսարիայի Էֆքերեյի Սբ. Կարապետ վանքի հոգաբարձությունը, ինչպես նշում է *«Մարմնամարզը»*, *«...գնահատելով մարզանքին դերը եւ օգտակարութիւնը, հաճոյքով մարզիկներուն տրամադրութեան տակ դրած է ահագին տարածութեամբ գեղեցիկ դաշտ մը»*, որտեղ տեղի ունեցան մարզական խաղեր:

1912 թ. Վեզիր Քյոփրիում և Չենկիլերում կազմվում են «Արծիվ» և «Գայլ» մարմնամարզական ակումբները, իսկ Սիվրի Հիսարի Սահակ-Մեսրոպյան վարժարանում՝ «Առյուծ» անունով խումբը:

Խարբերդում գործող չորս քոլեջների՝ ամերիկյան «Եփրատ», ֆրանսիական, գերմանական և Ազգային Կեդրոնական վարժարանի մասնակցությամբ 1911թ. մայիսի 20-ին տեղի են ունենում ֆուտբոլի առաջին մրցումները: Այս քոլեջներում պարբերաբար կազմակերպվում էին նաև բասկետբոլի և հեծանվավազքի մրցումներ: Դրանց թվում «Եփրատ» քոլեջը, Խարբերդի հայ երիտասարդության ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզաձևերի յուրացման կենտրոնն էր: Այստեղ՝ քոլեջին մերձակա հարթավայրում, տեղի էին ունենում ամենամյա դաշտահանդեսներ, իսկ լավագույն արդյունք ցույց տված աշակերտները պարգևատրվում էին մրցանակներով: Այս դաշտահանդեսները մեծ խանդավառություն էին առաջացնում տեղի հայ բնակչության շրջանում, ովքեր առիթը բաց չէին թողնում հանդիսատեսի դերում ներկայանալու համար: Այս մրցումներում կիրառվում էին թռիչք երկարություն, թռիչք բարձրություն, գնդի հրում, հարյուր յարդ վազք, մեկ մղոն վազք և այլն: Բացի այս

[5] **Արամ Սահակեան** Դիւցազնական Ուրֆան և իր հայորդիները, Պէյրութ, 1955, էջ 750-751:

Նիկոմեդիայի «Ատլաս» ֆուտբոլային թիմը: Լուսանկարը «Մարմնամարզից», 1913 թ.

Տեսարան Նիկոմեդիայի հայկական թաղամասից, XX դարի սկզբի փոստային բացիկ

Խարբերդի հայկական թաղամասը: Լուսանկարը 1910-ական թթ.

Խարբերդի «Եփրատ» քոլեջի շենքը, XX դարի սկզբի փոստային բացիկ

Խարբերդի «Եփրատ» քոլեջի հայ ուսանողները մարմնամարզության պահին, 1910-ական թթ. լուսանկար

Մեզրեի կեդրոնական վարժարանի սանուհիները մարզանքի պահին, 1910-ական թթ. լուսանկար

«Եփրատ» քոլեջի սաները մարզանքի և ֆուտբոլի խաղի ժամանակ, 1910-ական թթ. լուսանկարներ

ՄԱՐՄՆԱՄԱՐԶԻ ՆՈՐ ԱԿՈՒՄԲՆԵՐ

Գաւառներու և Արտասահմանի մէջ մարմնամարզական նոր ակումբներու կազմութեան մասին հետաքրքիր տեղեկութիւններ կը հասնին խմբագրութեան։

Ռուսաստանի մէջ հայ երիտասարդներու նախաձեռնութեամբ կազմուած է Գուրիոյի ակումբ մը, որուն նպատակը պիտի լլայ երիտասարդութեան մէջ արծարծել խաղասիրութեան ոգին, և աշխատիլ նաև անոնց առողջապահութեան համար, ինչպէս կը տեղեկացնէ մեզ թղթակից մը։

Էսէրնէի մեր թղթակիցը կ'իմացնէ մեզ թէ քաղաքին հայ երիտասարդները կազմած են Միութիւն մը, որ մեծայն պիտի դրաղի Մարմնակրթութեամբ և որ արդէն քանի չափ անդամներ ունեցած է։

Մանիսայի մէջ կազմուած է մարմնամարզի «Արարատ» ակումբը՝ խումբ մը հայ երիտասարդներու ջանքերով, կը գրէ մեր թղթակիցը։

Ամերիկայի Ուտար քաղաքին մէջ կազմուած է «Հայ Մարդասէր Միութիւն» մը որ պիտի դրաղի մարմնամարզով և արուեստներով, ինչպէս կ'իմանանք։

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ ՆՈՒԻՐՈՂՆԵՐ

Գոյոյ «Տորք» մարմնամարզական կազմը մէկ տարեկան «Մարմնամարզ» նուիրէ Շապէն-Գարահիսարի Զրտախ գ. Աղդ. վարժարանին։

* * Պարտ Յարութիւն Տէր Յակոբեան մէկ տարեկան «Մարմնամարզ» կը նուիրէ Բարերդի Բլուր գիւղի Աղդ. վարժարանին։

Պատասխանատու՝ Կ. ԱՒԵՆՃԵԱՆ
Աւագագրաւ՝ Ե. ՊՊԻՍԵԱՆ
Տպագրատիրոջ՝ Հ. ԹԻՐԵԱԳԵԱՆ

"ՄԱՍԵԱՑ,,
ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ
ԴՈՆԻՍ.

Միութիւնս պատիւ ունի ծանուցանել քաղաքիս հայ երիտասարդութեան թէ առենէ մը ի վեր կազմուած փուրպոյի միութեանս զոհացուցիչ արդիւնքները նշմարուած են։

Մարմնամարզի օգուտը ամէնուս ծանօթ է, ուստի առանց մարմնամարզի մնացած չուկայի երիտասարդները սիրով կը հրաւիրենք անդամակցիլ միութեանս, օրական ժամ մը միայն յատկացնելով սոյն խիստ օգտակար ձեռնարկին և սանելով հաստատակամ և հետեւաբար հաստատակամ, անջղութենէ ու թուլութենէ հեռու, կայտառ, աշխոյժ վիճակ մը ստանալ, կեանքերնին երկարել և մարմնամարզի ամէն բարիքները վայելել։

Անդամակցութիւնները կը կատարուին միութեանս ատենապետ՝ Պ. Միքայէլ Յ. Բարթիկեանի կողմէ, որուն պէտք է դիմել տեղեկանալու համար նաև միութեան կանոնագրին արտադրութիւններուն։

Հայ մարմնամարզիկ Հակոբ Զորյանը Օրդու քաղաքից: Լուսանկարը «Մարմնամարզ» հանդեսից, 1912թ.

Տրապիզոնի «Արծիվ» մարմնակրթական ակումբի մարզիկները: Լուսանկարը «Մարմնամարզից», 1912թ.

մարզաձևերից, տարածված էին նաև ավանդական հայկական խաղերը: Ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների համար կազմակերպվում էին բասկետբոլի խաղեր:[6]

Երզնկայում 1911թ. կազմակերպվում է Հայ պատանեկան միությունը, իսկ 1912թ.՝ «Ժայռ» մարմնամարզական միությունը: Վերջինը նպատակ ուներ *«երևան բերել ու զարգացնել իր անդամների ֆիզիկական կարողությունները»*: Տրապիզոնի «Արծիվ» մարմնամարզական միությունը հետագայում վերակազմվեց և հայտնի դարձավ «Շարժում» անունով: Ի դեպ, պահպանվել է «Արծիվ» մարմնամարզական միության անդամների պատկերով եզակի մի լուսանկար, որը տպագրվել է «Մարմնամարզ» հանդեսի 1912թ. դեկտեմբերի համարում: Լուսանկարում պատկերված հայ մարզիկների հետագա ճակատագիրը, ավա՜ղ, հայտնի չէ:

Հայկական գավառներում մարմնամարզական շարժմանը զարկ տալու կարևորման մասին են վկայում Շավարշ Քրիսյանի՝ ի նպաստ այդ խնդրի լուծման կազմակերպչական ձեռնարկումների անհրաժեշտության մասին «Մարմնամարզում» հրատարակված առաջարկները: Նա գրում է. *«Մասնաւորապէս Հայկական գաւառներու մէջ անհրաժեշտ է մարմնամարզական ակումբներ կազմել, այս բանին համար կարևոր է գաւառները շրջանակներու վերածել, որոնց կապուած ըլլան շրջակայ փոքր եւ երկրորդական քաղաքները եւ գիւղերը, ինչպէս Վանի, Էրզրումի, Սեբաստիոյ, եւ այլնի շրջանակ, որոնք իրենց կարգին կեդրոնին պիտի կապուին: Ընդհանուր Հայկական Ողիմպիականներու համար որոշուած թուականներէն քանի մը ամիս առաջ, նկատի ունենալով տեղական պայմանները, շրջանակային մարզական խաղեր կազմակերպել կեդրոնէն ուղարկուած հրահանգներու համաձայն, եւ այդ մասնակի մրցումներուն մէջէն լաւագոյները Պոլիս կամ այդ տարուան համար որոշուած գլխաւոր քաղաք մը ուղարկել, կեդրոնէն ուղարկուած ծախսով, որուն մասին ի հարկէ համաժողովին մէջ հարկ եղածը պիտի տնօրինուի»* («Մարմնամարզ», Բ տարի, թիւ 17, օգոստոս 31, 1912):

Սա փաստում է նաև, որ հայկական մարմնակրթական շարժման ջատագովները, ցանկությունից զատ, ունեին գործունեության ստույգ ծրագիր՝ այդ նպատակներին հասնելու տեսանելի ռազմավարություն ու գործելակերպ:

Հայկական մարմնակրթական ու մարզական շարժումն ընդգրկեց նաև Հալեպն ու Բեյրութը: Հալեպի Ներսիսյան վարժարանի սաների մասնակցությամբ 1911 թ. հիմնվում է «Աղբյուր» մարզական միությունը, որը քաղաքում հիմնված առաջին մարզական կազմակերպությունն էր: Այն իր տրամադրության տակ ուներ մարզարան ու գրադարան: 1914թ. Խարբերդի «Եփրատ» քոլեջից Հալեպ ժամանած մարմնամարզության ուսուցիչ Կարապետ Հովակիմյանի ջանքերով առաջին անգամ մարմնամարզությունը ներմուծվում է քաղաքի հայկական վարժարաններ: Կ. Հովակիմյանի ջանքերով վարժարանում կազմակերպվում է դաշտահանդես: Նա ստանձնում է նաև «Աղբյուր» մարզական միության մարզչի պարտականությունները:[7]

Բեյրութում հայ մարմնամարզիկները հիմնականում ներկայացնում էին տեղի ամերիկյան կրթական հաստատությունները: Նրանց թվում էր Բեյրութի ամե-

[6] **Վահէ Հայկ**. Խարբերդ և անոր ոսկէղեն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 354-359:

[7] **Վարդի Քէշիշեան** Հալէպի հայկական գաղթօճախի հասարակական-մշակութային կազմակերպութիւնները (1846-1915), Անթիլիաս, 2001, էջ 166-167:

րիկյան վարժարանի սան Զաբուղոն Գալուստյանը:

Սամսունում գործում էին «Արծիվ» և «Կայծակ» անուններով ակումբները, որոնք մեծ ոգևորություն էին առաջացրել տեղի հայ աշակերտության ու հանրության շրջանում: Հայտնի հայ քաղաքական գործիչ Վահան Մինախորյանն իր հուշագրության մեջ անդրադառնում է Սամսուն քաղաքի հայ երիտասարդության՝ մարմնամարզության հանդեպ ունեցած հետաքրքրությանը և կազմակերպած օրինակելի դաշտահանդեսներին: Հետաքրքիր է, որ տեղի թուրքական իշխանությունները նույնիսկ դիմել էին հայ մարզիչներին թուրք երիտասարդության շրջանում նման միջոցառումներ կազմակերպելու խնդրանքով: Պահպանվել են եզակի լուսանկարներ հայ մարզիկների մասնակցությամբ տեղի ունեցած դաշտահանդեսներից: Ականատեսներից մեկը գրում է. *«Մեր նորութիւնը հիացումնիս անսահման էր, երբ տեսանք փոխանակ դպրոցականներու, շուկայի, առևտրի մարդիկ, որ թողած իրենց սեպական գործերը կուգային մեզ դիմաւորելու ճիշտ այն ոգևորությամբ, ինչպիսին մեզ համակած էր այն առաւօտ»*:[8]

1914 թ. Սամսունում ձևավորվել էր 25 անդամ ունեցող առաջին սկաուտական խումբը, որոնց ղեկավարն էր մարմնամարզի ուսուցիչ Վահան Հովհաննիսյանը:

Այստեղ լույս տեսնող «Դպրոց» պարբերականը հաճախ էր անդրադառնում մարզական ու մարմնակրթական թեմաներին: Իր խմբագրականում Վարազդատ Մանդիկյանը գրում է. *«Այսօր ամբողջ քաղաքակիրթ աշխարհի մէջ մարմնամարզը շատ բարձր գնահատուած եւ իբր անհրաժեշտ պէտք մը՝ դպրոցական դասերու մէջ առաջին տեղը կը գրաւէ, որովհետև, որևէ անհատի կեանքի էական պայմանը նախ առողջութիւնն է՝ ապա ուսումը, երկրորդ կախում ունի առաջինէն: Թէ ինչու մարմնամարզը այսքան անհրաժեշտ կը նկատուի՝ շատ պարզ է. կատարուած շարժումները կը զորացնեն մկանները, արիւնը աւելի արագ շրջան կ՚ընէ երակներու մէջ եւ թթուածինը առատօրէն կը խուժէ թոքերու մէջ ու առիթ կուտայ, որ արիւնը իր պաշտօնը աւելի լաւ կատարէ...»*:[9]

Հաճընի «Միացյալ ակումբի» մարմնամարզական խումբը, 1911թ.: Լուսանկարը «Մարմնամարզից»

Հայկական մարմնամարզական միություններ ու ակումբներ ստեղծվեցին Ռոդոսթոյում, Օրդուում, Իզմիտում, Ամասիայի հայկական վարժարանում: Օվաճընքում սկսեց գործել «Վիշապ» մարզական ակումբը, իսկ Մանիսայում՝ «Արարատ» ակումբը: Մարզական

[8] «Դպրոց», մարտ, թիվ 7, 1914, էջ 2:

[9] Նույն տեղում, էջ 2-3:

Կոնիայի Ճեմանյան վարժարանի սաները մարմնամարզության պահին, XX դարի սկիզբ: Լուսանկարը Բեյրութի Հայկազեան համալսարանի հավաքածուից

Գոնիայի Սահակյան վարժարանի սաները, 1904թ. ՀԱԱ հավաքածու

Հալեպի «Աղբյուր» մարմնակրթական միության սաները, 1913-14թթ.

«Աղբյուր» միության կնիքը



Փոստային բացիկներ՝ Ադրիանապոլսի մարմնամարզական խմբերի լուսանկարներով, 1912թ.

Սամսունի հայկական վարժարանի նվագախումբը, 1910-ական թթ., ՀՅԴ թանգարանի հավաքածու

շարժումից անմասն չմնաց նաև Ադրիանապոլսի հայ համայնքը:

Այս ընթացքում Հայոց միացյալ ընկերության Չմշկածագի վարժարանի բարձրագույն երեք դասարանների աշակերտությունը կազմակերպեց մարմնամարզի դասընթացներ և դաշտահանդես: Մեծ եղեռնը վերապրած չմշկածագցի Ավրորա Մարդիգանյանը հիշատակում է այդպիսի սկաուտական խմբի անդամ լինելու մասին:[10]

Պոլսից զատ մարզական կյանքը բուռն զարգացում էր ապրում Կիլիկիայում, որտեղ պարբերաբար տեղի էին ունենում դաշտահանդեսներ Իսքանդերունի և Ադանայի հայկական ակումբների մասնակցությամբ: Այստեղ ակտիվը Դորթյոլի հայկական Կեդրոնական վարժարանի «Սիսուան» մարմնակրթական միության «Հեթում» «Լևոն» և «Ռուբեն» ֆուտբոլային թիմերն ու կիլիկյան մի շարք որբանոցների սաներն էին:

Կիլիկիայում մարզական կյանքի հանդեպ հետաքրքրությունն առավել ուժեղացավ 1909թ. կիլիկիահայության կոտորածներից հետո, երբ գիտակցվեց ինքնապաշտպանական ունակությունների զարգացման կարևորությունը: Հերոսական ինքնապաշտպանական մարտերով հայտնի Զորք-Մարզպանի հայության շրջանում այս տրամադրություններն առավել ակնհայտ էին: Հետագայում Պոլսից Ադանա հրավիրվեցին հատուկ մարզիչներ՝ տեղում մարմնամարզական և սպորտային կյանքին զարկ տալու համար: Նախ՝ Վարազ Փողարյանը, ապա՝ վաղամեռիկ մարզիկ, բանաստեղծ Մատթեոս Զարիֆյանն իրենց կարևոր մասնակցությունը բերեցին Կիլիկիայում մարմնակրթական շարժման կազմակերպման գործին:

[10] Արշալույս Մարդիգյանը, նույն ինքը՝ Ավրորա Մարդիգանյանը, հրաշքով ազատագրվելով գերությունից, 1917թ. հասնում է ԱՄՆ, որտեղ նկարահանվում է իր իսկ հուշագրության հիման վրա պատրաստված «Հոգիների աճուրդը» համր ֆիլմում:

Տեսարաններ Սամսունի հայկական վարժարանի աշակերտների դաշտահանդեսից, 1914թ., ՀՅԴ թանգարանի հավաքածու

Փոստային բացիկ՝ Ադանայի հայկական թաղամասի տեսարանով, փոստային բացիկ, XX դարի սկիզբ

Առանձնակի հիշատակության է արժանի 1914թ. ապրիլին Չորք-Մարզպանի հարավում՝ դաշտահանդեսի համար հատուկ պատրաստված վայրում, Կիլիկյան օլիմպիական խաղերի և մարզահանդեսի կազմակերպումը: Կիլիկիայի մարզական կյանքում այդ բացառիկ իրադարձությանն իրենց մասնակցությունը բերեցին Ադանայի և Ալեքսանդրեթի մարմնամարզական խմբերը: Այդ հիշարժան օրը հազարավոր հանդիսականներ, այդ թվում՝ շուրջ չորս տասնյակ թուրք բանակային սպաներ, ներկա գտնվեցին մրցախաղերին: Ֆուտբոլի մրցախաղը տեղի ունեցավ Կեդրոնական վարժարանի «Միսուան» թիմի և Ալեքսանդրեթի Միջազգային մարմնամարզական խմբի միջև: Ֆուտբոլի մրցախաղին հաջորդեցին վազքի ու ցատկի մրցումները Ալեքսանդրեթի, Ադանայի, Չորք-Մարզպանի ու Քելեկյան որբանոցի թիմերի միջև, իսկ Կեդրոնական վարժարանի սաները հանդես եկան շվեդական մարզանքով, որը մեծ տպավորություն գործեց ներկաների վրա: Միցույթների հոգաբարձուները, բարձր գնահատելով մասնակիցների ցուցաբերած մարզական ոգին ու ջանքերը, հաղթողներին պարգևատրեցին յուրահատուկ՝ «Կիլիկեան Ողիմպիական, 1914, Չորք-Մարզուան» գրությամբ մեդալներով: Այդ օրը, ժամանակակցի վկայությամբ, Ալեքսանդրեթի, Ադանայի և Քելեկյան որբանոցի մարզական խմբերն արժանանում են մեկական մեդալների, իսկ Դորթյոլի ներկայացուցիչները՝ հավելյալ երկու մեդալի:[11]

Այս ընթացքում Այնթապում ձևավորվեց «Համազասպ» մարմնակրթական ակումբը:

Այնթապի Կիլիկյան ճեմարանի ֆուտբոլային թիմը: Լուսանկարը՝ 1913թ.

Բեդրոս և Լևոն Եղիայանները՝ գերմանական արտադրության «Հերկուլես» մակնիշի հեծանիվներով, 1900-ական թթ.
Բեդո Եղիայան հավաքածու, www.houshamadyan.org

[11] «Մարմնամարզ», Դ տարի, թիւ 2, հունիս, 1914, էջ 60-62, Դոկտ Մինաս Գոճայեան. Պատմութիւն Չորք-Մարզպանի Տէօրթ-Եոլ. գիւղաքաղաք մը Կիլիկիոյ մէջ, Լոս Անճելըս, 2006, էջ 155-156:

Տարսոնի «Սուրբ Պողոս» ամերիկյան վարժարանի մարզական ակումբների ու թիմերի սաները, 1912-14թթ.

Մերսինի կապուցինների Սեն Անտուան կաթոլիկ վարժարանի մարմնամարզական միության անդամները՝ լուսանկարված ֆրանսիացի հյուպատոսի հետ, XX դարի սկզբի փոստային բացիկ, ՀՑԹԻ հավաքածու

Տարսոնի ամերիկյան վարժարանի մարզահրապարակը, XX դարի սկզբի փոստային բացիկ, ՀՑԹԻ հավաքածու

Այս իրադարձությունները կիլիկիահայ երիտասարդության շրջանում մեծ խանդավառություն առաջացրին՝ նպաստելով մարզական միությունների ու ակումբների ստեղծմանը: Նույն տարում Ադանայում ձևավորվեց «Կիլիկիա» ակումբը, որի 25 անդամներից կազմավորվեց նույնանուն ֆուտբոլային թիմը: 1914 թ. ամռանը տեղի թուրքական «Թյուրք գյուշու» թիմի հետ տեղի ունեցած խաղում. *«...որին ներկայ էին նոյն ատենուան կուսակալը, կառավարութեան պաշտոնէութիւնը եւ Ատանայի երկսեռ հասարակութիւնը»*:[12] Հայ ֆուտբոլիստների գոլերին ի պատասխան թուրք հանդիսատեսների զայրույթը տեսնելով՝ խաղին ներկա հայ երկրպագուները հորդորում էին հնարավորություն տալ թուրքական կողմին ևս գոլեր խփելու: Ի վերջո խաղն ավարտվում է «Կիլիկիայի» փայլուն հաղթանակով, որից հետո վալին հայ ֆուտբոլիստներին մեկական շապիկ է նվիրում:[13]

Ընդհանրացնելով նշենք, որ Օսմանյան կայսրության հայկական գավառներում XX դարի սկզբին սպորտի ու մարմնամարզության նկատմամբ հետաքրքրությունն աստիճանաբար աճում էր՝ տարեցտարի ընդգրկելով նորանոր շրջաններ: Համատարած խանդավառությունը, սակայն, կարճ տևեց հայության տեղահանության ու զանգվածային կոտորածների պատճառով: Հայ բնակչության բնաջնջման հետևանքով դադարեցին գոյություն ունենալ նաև դարերի ընթացքում ստեղծված ազգային մշակութային ժառանգությունը, ինչպես նաև սկիզբ առած մարզական շարժումը:

[12] «Հայ ձայն», Ատանա, թիւ 198, 1919:

[13] Նույն տեղում:

Զենկիլերի Ազգային Մեսրոպյան վարժարանի «Գայլ» ակումբի սաները: Լուսանկարը «Մարմնամարզից», 1913թ.

Դորթ Յոլի Կեդրոնական վարժարանի «Սիսուան» մարմնամարզական միության «Հեթում» ֆուտբոլային թիմը: Լուսանկարը «Մարմնամարզից», 1914թ.

Դորթ Յոլի Կեդրոնական վարժարանի «Սիսուան» մարմնամարզական միության «Լևոն» ֆուտբոլային թիմը: Լուսանկարը «Մարմնամարզից», 1914թ.

Դորթ Յոլի Կեդրոնական վարժարանի «Սիսուան» մարմնամարզական միության «Ռուբեն» ֆուտբոլային թիմը: Լուսանկարը «Մարմնամարզից», 1914թ.

Զմյուռնիայի Աղջկանց ամերիկյան վարժարանի սաները ճապոնական տարազով: 1910-ական թթ. լուսանկար

Գլուխ հինգերորդ

ՀԱՅ ԿԻՆԸ ԵՎ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

«Այր մը կրթել, միայն մարդ մը պատրաստել է, իսկ կին մը կրթելը՝ ամբողջ սերունդներ»: «Մարմնամարզ»

Մարմնամարզության և սպորտի հանդեպ հարաճուն հետաքրքրությունն արևմտահայոց մոտ հիմնականում նկատելի էր տղամարդկանց շրջանում, սակայն այն անմասն չթողեց նաև հայ կանանց ու աղջիկներին: Տիրապետող ու պահպանողական մահմեդական հասարակության մեջ կանանց համար դժվարին խնդիր էր մարմնամարզությամբ զբաղվելը, սակայն 1908թ. սահմանադրության հռչակմանը հետևած որոշ ազատություններ հնարավոր դարձրին հայ կանանց ու օրիորդների մասնակցությունը մարմնակրթական շարժմանը: Սկզբնական շրջանում կանայք հանդես չէին գալիս առանձին մրցախաղերում և միայն դաշտահանդեսներում ու Հայկական օլիմպիական խաղերում էին ներկայացված՝ մասնակցելով մրցահանդեսների բացմանն ու հաղթողների մրցանակաբաշխության հանդիսավոր արարողություններին:

Պոլսահայ կանանց շրջանում մարմնամարզության հանդեպ հետաքրքրություն առաջացնելու գործում մեծ դերակատարություն ունեցան «Մարմնամարզը» և նրա խմբագիր Շ. Քրիսյանը: «Մարմնամարզի» էջերում նրա և մյուս հեղինակների հրատարակած հոդվածներում առողջ ապրելակերպի մեջ տեսնում էին առողջ սերունդ դաստիարակելու ապագայի գրավականը, առանձնահատուկ կարևորություն էր տրվում կանանց ներգրավմանը մարզական կյանք: Հանդեսի առանձին հոդվածներ նվիրվում էին իգական վարժարաններում մարմնամարզության դասընթացի ներմուծ-



ՄԱՐԶԱՆՔԸ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻՆ ՄԷՋ

Հայ իգական սեռի ֆիզիքական զարգացման նպաստելու, զայն առողջ ու ուժկուն կեանքի վարժեցնելու, Շուէյտական մարզանքի եւ սրտի միջոցով կեանք եւ շարժում յառաջ բերելու նպատակով, Նիկողոսեան Վարժարանի Սանուհեաց միութիւնը կազմած է ակումբ մը «Եռանդ» անունով՝ իբր խորհրդանշան այն ոգիին, որուն այնքան պէտք ունի հայութիւնը, մանաւանդ հայ իգական սեռը։

«Եռանդ» ակումբը կազմուած է, 1913 Մայիսին և անմիջապէս սկսած է մարզաֆորձերու, մասնակցութեամբ բուսական Թուով Տիկիններու եւ Օրիորդներու։ Ամբան իր անդամուհիներուն մեծ մասին ցրուելուն պատճառով, 3-4 ամիսի չափ ընդհատուած մարզական ֆորձերը, վերսկսած են դարձեալ եւ տեղի կ'ունենան Նիկողոսեան Վարժարանի մէջ։ Այն Տիկինները եւ Օրիորդները որոնք կը փափաքին անդամակցիլ «Եռանդ»ին, հաճին ներկայանալ Ակումբին վարչական մասնաւին, «Նիկողոսեան Վարժարան» ամեն Երեքշաբթի 2-4 (Ը. Ա.) եւ արձանագրել տալ իրենց անունները։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ԵՌԱՆԴ ՄԱՐՄՆ ԱԿՈՒՄԲԻ

Կանանց մարմնամարզության թեմայով հրապարակում «Մարմնամարզից», 1912թ.

«ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ԱԿՈ

ԿԻՆԵՐԸ ԻՐԱՔԱՆՉԻՐ ՓՈՐՁ ՕՐԸ ՔԱՆԻ՞ ԱՆԳԱՄ ՊԷՏՔ Է ԸՆԵՆ

	1 Բշ.	2 Գշ.	3 Դշ.	4 Եշ.	5 Ուր.	6 Շբ.	7 Բշ.	8 Գշ.	9 Դշ.	10 Եշ.	11 Ուր.	12 Շբ.	13 Բշ.	14 Գշ.	15 Դշ.	16 Եշ.	17 Ուր.	18 Շբ.	19 Բշ.	20 Գշ.	21 Դշ.	22 Եշ.	23 Ուր.	24 Շբ.
Փորձ 1	5	5	5	6	6	6	7	7	7	8	8	8	9	9	9	10	10	10	11	11	12	13	14	15
» 2	10	10	10	11	11	11	12	12	12	13	13	13	14	14	14	15	15	15	16	16	16	16	16	16
» 3	10	10	10	11	11	11	12	12	12	13	13	13	14	14	14	15	15	15	16	16	16	16	16	16
» 4	10	10	11	11	12	12	13	13	14	14	15	15	16	16	17	17	18	18	19	19	20	20	20	20
» 5	5	5	6	6	7	7	8	8	9	9	10	10	11	21	12	12	13	13	14	14	15	15	15	15
» 6	5	5	6	6	7	7	8	8	8	9	9	9	10	10	10	11	11	11	12	12	12	12	12	12
» 7	5	5	6	6	7	7	8	8	8	9	9	9	10	10	10	11	11	11	12	12	12	12	12	12
» 8	մինչեւ որ ուսերը յոգնին																							
» 9	7	7	7	8	8	8	9	9	9	10	10	10	11	11	11	12	12	13	13	14	14	15	15	15
» 10	10	10	10	11	11	11	12	12	12	13	13	13	14	14	14	15	15	15	16	17	18	19	20	20
» 11	10	10	10	11	11	11	12	12	12	13	13	13	14	14	14	15	15	15	16	17	18	19	20	20
» 12	8	8	9	9	10	10	11	11	12	12	13	13	14	14	14	15	15	15	16	16	16	16	16	16
» 13	7	7	7	8	8	8	9	9	9	10	10	10	11	11	11	12	12	12	13	13	13	14	14	14
» 14	10	10	10	11	11	11	12	12	12	13	13	13	14	14	14	15	15	15	16	16	16	17	17	17

Իրաքանչիւր տարբեր փորձէ եւաք քիչ բան մը հանգիստ առնել։

Շնչառութեան փորձերը մեծ ուշադրութեամբ ընել։

Շաբաթը օր մը հանգիստ պէտք է առնուլ։

Շ. Ք.

Փորձ 14. — Կրաւ-ներքեւ մեռած

Կանանց համար շնչառական վարժություններ կատարելու աղյուսակ-ուղեցույց, «Մարմնամարզ», մարտ, 1911թ.

Կանանց սեղմիրանի մնասակարությունը ցուցադրող գծանկար, «Մարմնամարզ», 1912թ.

Զմյուռնիայի ամերիկյան վարժարանի աղջիկ սաները մարմնամարզության պահին: Լուսանկարը 1912թ.

ման անհրաժեշտության խնդրին: Այս առնչությամբ Շ. Քրիսյանը «Մարմնամարզում» գրում է. *«Երբ աղջկանց մասին ֆիզիքական կրթութեան զանցառութիւնը դիտել կուրանք, շատ լաւ գիտենք թէ նոյնիսկ մանչերու վարժարաններուն մէջ տակաւին մարմնամարզը իբր զարդ մը նկատուած է, ու այդ մարմնամարզի յատկացեալ ժամը կարելի չէր աւելի «արդիւնաւորապէս» գործածել տիրացութեան դաս մը սահմանելով: Անձնական փորձառութեան յիշատակներէս է որ կը խօսիմ. գէթ վարժարանին մէջ մանչերը կրնան վազել, ցատկել, պոռալ, մէկ բառով քիչ մը անառակութիւն ընել, – որովհետեւ մեր մէջ տղոյն հետ միասին ծնող շարժումը անառակութիւն նկատուած է ու անշարժութիւնն ալ խելօքութիւն, եւ առաջինին վարձատրութիւնը եղած է պատիժ, իսկ երկրորդինը լաւ վարքի նիշեր, բայց աղջիկներուն այդ անառակութիւնն ալ մասամբ արգիլուած է, այն նկատումով թէ աղջկան մը ամօթ է մանչու մը պէս վազել, ցատկել, անոնց նմանիլ. իսկ անոնք որոնք չեն կրնար իրենց մէջ ծածկել շարժումներու մասին ունեցած բնածին հակումնին, մանչ-աղջիկ կը յորջորջուին...*

Դպրոցը՝ որ պարտաւոր էր ամէն բան ընել կանացի այդ դանդաղ այլասերումը արգիլելու համար, առանց գիտնալու աւելի նպաստած է, ու այդ կը պարտինք դպրոցին դերը պէտք եղածին պէս ըմբռնած չըլլալնուս:

Ամէն անհրաւուած որեւէ ձեւով մը կ'ուզէ իր վրէժը լուծել, բայց պէտք է յուսալ թէ հայ կիները չպիտի ուզեն իրենց մասին գործուած սխալներուն, նոյն իսկ չարիքներուն վրէժը լուծել իրենց զաւակներէն, իրենց սերուն-

Պոլսի Եսայան աղջկանց վարժարանի սաները իրենց ուսուցչի հետ: Լուսանկարը՝ 1910-ական թթ.

դէն, մէկ խօսքով իրենց ազգէն»: («Մարմնամարզ», Ա տարի, թիւ 1, 1911 փետրվար):

Առավել խոսուն է «Մարմնամարզի» մեկ այլ խմբագրական, որտեղ համեմատության մեջ քննադատության են ենթարկվում հայ կնոջ բարքերն ու եվրոպական սովորույթների ընդօրինակումը, այն ժամանակ, երբ ուշադրությունից դուրս է մնում կնոջ՝ սպորտով զբաղվելու անհրաժեշտությունը՝ որպես առողջ ապրելակերպի դրսևորում և առողջ սերունդ դաստիարակելու նախապայման: Ահավասիկ ինչ է գրում «Մարմնամարզի» խմբագիրը. *«Մեր մէջ կնոջ ազատագրական շարժումը անիմաստ ուղղութեամբ կ'ընթանայ: Անիկա յաճախ շոայլ եւ անօգուտ պերճանքի մը երևոյթով կը դիմաւորէ մեզ, թոռցիկ, մակերեսային խոսակցութեանց մէջ կուզէ փայլիլ. իմաստակութեան, վէճի եւ կնոջական զգայականութեան պատիր դիմակներով կարտայայտուի: Մենք ուրիշ բան կը պահանջենք: Մեր պահանջը ցեղին փրկութեան պահանջն է: Մենք կըսենք կ'ուսնիք, կը խօսիք, կը վիճիք, կ'երգէք կամ կը նուագէք, լաւ, բայց ինչ ըրիք կամ պիտի ընէք հայ ցեղին առողջութեանը համար: Մեր մայրերէն, մեր ապագայի մայրերէն կախում ունի լաւագոյն, տոկուն, արի ցեղի մը ընձիւղումը: Կ'ուզէք ամէն բանի մէջ նմանիլ արևմուտքի կիներուն, կ'օրինակէք զանոնք իրենց յետին մանրամասնութեանց մէջ, բայց ինչու՞ չէք օրինակեր այն խանդը զոր անոնք կը դնեն կնոջական ոչ միայն մտաւոր շարժումին, այլ կնոջ առողջութեան, մարմնոյ կազդոյրին ի նպաստ...»* («Մարմնամարզ», Բ տարի, թիւ 7, ապրիլ 1, 1912):

1910-ական թթ. հայ տղամարդ մարզիկների շնորհիվ ձևավորվեցին նաև կանանց առաջին մարմնամարզական ակումբները: 1911թ. Շ. Քրիսյանի ջանքերով Պոլսում կազմվում է «Էսայեան սանուց միութիւնը», որն իգական սեռի համար ձևավորված առաջին մարմնակրթական միությունն էր արևմտահայ իրականության մեջ: Շ. Քրիսյանը հանդես է գալիս մի շարք դասախոսություններով պոլսահայ կանանց մարմնա-

Պոլսի Նոտր Դամ դե Սիոն կաթոլիկ վարժարանի սանուհիները մարզանքի պահին: XX դարի սկզբի փոստային բացիկներ, ՀՑԹԻ հավաքածու

Պոլսի Նիկողոսյան վարժարանի շենքը

Պոլսի Նիկողոսյան վարժարանի հայ սանուհիները շվեդական մարզանքի պահին: XX դարի սկզբի լուսանկար



ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՎԱՐԺՈՒՀԻՆՈՑ Ի ԿԱՐԻՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

Ի. Եղանիկ Սանուկեան ծնեալ Կարին 1895

հետեւեցաւ Վարժուհինոցի երկամեայ դասընթացքին և աստուածաբանական գիտութիւններ ստացաւ յիսուն արժանի դասատուներ ստացաւ վկայականիս, ցոյց տալով հետեւեալ արդիւնքը.

1. Եկեղ. Պատմութիւն	[illegible]	10. Առողջապահութիւն	[illegible]
2. Հայերէն	[illegible]	11. Մարմնամարզ	[illegible]
3. Թուաբանութիւն	[illegible]	12. Երաժշտութիւն	[illegible]
4. Հասմնեբէն	[illegible]	13. Դեղագրութիւն	[illegible]
5. Քաղաքագիտութիւն	[illegible]	14. Գծագրութիւն	[illegible]
6. Պատմութիւն	[illegible]	15. Ձեռագործ	[illegible]
7. Աշխարհագրութիւն	[illegible]	16. Ձեռագիտութիւն	[illegible]
8. Բնագիտութիւն	[illegible]	17. Առանձին Մեթոդիկան	[illegible]
9. Բնագիտութիւն	[illegible]	18. [illegible]	[illegible]
		19. [illegible]	[illegible]

Դասատուութիւն ստոյ ստացաւ սոյն վկայականս վարժարանս Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան կնիքով (Թաղեոս Մատենադարի Դարձ, Գրիգոր Դիւանին) եւ Վարժուհինոցի վերատեսչի ստորագրութեամբ:

1912 [illegible] 26 [illegible]

Դիւան Դարձաբեր Ժողովի

Գրագրաբեր [illegible] Գանձապետ [illegible] Վերատեսուչ

կրթական միություններում: Մի քանի օրիորդների նախաձեռնությամբ 1912թ. Պոլսի Սկյուտար թաղամասում կազմակերպվում է «Իժի» («Առողջություն»)՝ աղջիկների երկրորդ մարմնամարզական ակումբը:

1913թ. մարտին Նիկողոսյան բարձրագույն վարժարանի տնօրինության հավանությամբ և Սանուհյաց ընկերության նախաձեռնությամբ ստեղծվեց կանանց մարմնակրթական «Եռանդ» ակումբը, որի նպատակը հռչակվեց *«մարմնական կրթութեան կարևորութիւնը տարածել եւ Սբօրի սէրը արծարծել հայ իգական սեռին մէջ»*:[1]

Ակումբը ստացավ «Եռանդ» անվանումը՝ *«իբրև խորհրդանշան այն ոգիին, որուն պիտի հետևէր Ակումբը»*:[2] Կարճ ժամանակում կազմակերպությանն անդամակցեցին ավելի քան վաթսուն օրիորդ: Շվեդական մարզանքը ներառված էր այս վարժարանի մանկապարտեզի, նախակրթարանի և ուսումնարանի մասնաճյուղերի դասացանկ: Վարժարանը մրցանակ էր սահմանել մարմնամարզի ոլորտում հաջողություններ ցուցաբերած սանուհիների համար: Վարժարանի հայտագրում կարդում ենք, որ հաստատության նպատակներից մեկն է հանդիսացել աղջիկների *«պահպանել եւ զօրացնել անոնց (աղջիկների – Հ. Դ.) առողջութիւնը մարմնական դաստիարակութեամբ»*:[3] Վարժարանի տեղեկագրում նշվում էր. *«…որքան կարևոր է ոամամբ օժտել հայ աղջիկները, նոյնքան ալ կարևոր է տալ անոնց ֆիզիքական խնամեալ դաստիարակութիւն մը, քաջազարմ սերունդ մը պատրաստելու համար»*:[4] Ակումբի անդամ կարող էին դառնալ վարժարանի 10 տարեկանից բարձր սանուհիները, ինչպես նաև այն

[1] Նիկողոսեան աղջկանց բարձրագույն վարժարան. Յայտագիր և կանոնագիր, 1914-1915, Պոլիս, էջ 30-31:

[2] Փեթակ, Ա տարի, թիվ 6, մարտ, 1913, էջ 91:

[3] Նիկողոսեան աղջկանց բարձրագույն, էջ 5:

[4] Նույն տեղում:

Կարինի «Ազգանվեր հայուհյաց ընկերության» վարժուհիների երկամյա դասընթացներն ավարտած Շուշանիկ Ավետիսյանի վկայականը, 1912թ.

հայ տիկիններն ու օրիորդները, ովքեր կցանկանային *«այս գեղեցիկ պատեհութենէն օգտվելով անդամակցիլ ակումբին»*: 1914 թ. հունիսի 13-ին տեղի ունեցավ Նիկողոսյան վարժարանի տարեկան մարզահանդեսը՝ Շ. Քրիսյանի ղեկավարությամբ, որտեղ հաղթողները ստացան «Մարմնամարզի» կողմից տրամադրված մեդալներ:

Սկյուտարի Տիկնանց ընկերակցության սպորտի մասնախումբը կանանց և օրիորդների համար կազմակերպում էր *«հաւաքական մարզանքի»* դասեր, որոնք վարում էր Շավարշ Քրիսյանը: Վերջինս կազմակերպում էր նաև «Եռանդ» ակումբի մարմնամարզի դասերը: Այդ նույն ժամանակ Սիվրի Հիսարում կազմվում է «Զավարյան հայուհիների ընկերություն»-ը, որտեղ կիրառվում էին շվեդական մարմնամարզության կանոնները: 1913թ. ամռանը հայ մարզուհիներն առաջին անգամ մասնակցեցին Հայկական երրորդ օլիմպիական խաղերին:

Մարմնամարզությունը գավառահայ օրիորդներին ու դպրոցականներին հասու դարձնելու համար պատրաստվեցին մասնագետներ Պոլսի Եսայան վարժարանի ուսուցչուհիներից, ովքեր ուսուցչի պաշտոնով գործուղվեցին Դորթյոլ, Հաճըն և գավառի մյուս հայաբնակ շրջաններ: Մարմնակրթական դասեր ներմուծվեցին նաև գավառի իգական վարժարանների դասացուցակներ: Չնայած հայ հասարակության շրջանում առկա պահպանողական հայացքներին ու կենսակերպին՝ այդուհանդերձ «Մարմնամարզի» հայ օրիորդների ու կանանց շրջանում մարմնակրթական գաղափարների տարածումը լուրջ նախադրյալներ ստեղծեց առողջ սերունդ դաստիարակելու համար: Հաղթահարելով պահպանողական շրջանների դիմադրությունը՝ այս շարժումը նոր որակ էր ապահովելու հայկական մարմնակրթական ու մարզական շարժման մեջ:

Հատկապես հետպատերազմյան շրջանում հայ օրիորդների մասնակցությունը սկաուտական շարժմանն ավելի ընդլայնեց կանանց մասնակցությունը մարմնակրթական շարժմանը: Այս ակտիվությունը, ի թիվս առողջապահական խնդիրների, թելադրված էր նաև Մեծ եղեռնից հետո ազգային վերածննդի ապահովման գաղափարի անհրաժեշտությամբ:

Այնթապի «Հայկանուշյան» իգական վարժարանի շրջանավարտների խմբանկար, 1902թ.

Պոլսի «Union Sports club» մարզադաշտի կենտրոնատեղին Հայկական օլիմպիական խաղերի ընթացքում, 1912թ.

Գլուխ վեցերորդ

ՀԱՅԿԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ (1911-1914թթ.)

1908թ. հեղաշրջման հետևանքով իշխանության եկած երիտթուրքերի կառավարությունը նոր հույսեր և ազատության հանդեպ նոր հավատ ներշնչեց արևմտահայությանը: Հայության հոծ մի զանգված, անսալով նոր վարչակարգի խոստումներին, ձեռնամուխ եղավ ակտիվ հասարակական, քաղաքական և մշակութային գործունեությանը: Դրանից անմասն չմնացին նաև մարմնամարզական շարժումն ու սպորտային կյանքի զարգացումը:

Դեռ 1910թ. Շավարշ Քրիսյանը համախոհ ընկերների հետ առաջ քաշեց Հայկական օլիմպիական մրցախաղեր կազմակերպելու գաղափարը, որը մեծ խանդավառությամբ ու քաջալերությամբ ընդունեցին հայկական զանազան ակումբներ: Համանման գաղափարներով «Մարմնամարզի» էջերում հանդես եկավ նաև Վահրամ Փափազյանը: Այսպիսի ձեռնարկը, պարզ էր, որ ավելին էր, քան մարզական ստուգատեսը և պետք է փաստեր հայության համախմբման, ինչու չէ նաև ներուժի ու պատրաստվածության ուրույն դրսևորում:

1911-14թթ. ընթացքում և կարճ դադարից հետո՝ հետպատերազմյան շրջանում (1919-1922թթ.), անցկացված չորս Հայկական օլիմպիական խաղերն Օսմանյան կայսրության հայկական մարմնամարզական ու սկաուտական ակումբների և միությունների մասնակցությամբ յուրօրինակ երևույթ դարձան արևմտահայերի կյանքում և բացառիկ մի էջ արձանագրեցին հայկական սպորտի պատմության սկզբնական փուլում:



ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱՐՍԱԹԵՐԹ

Ա ՏԱՐԻ — ԹԻՒ 3 — 1911 ԱՊՐԻԼ

ՀԱՅԿԱԿԱՆ ՕԼԻՄԲԻԱԿԱՆ

«Մարմնամարզի» խմբագրականը հայկական օլիմպիական խաղերի թեմայով, 1911թ.



ՄՐՑՄԱՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ա. Ամէն հայ անհատ առանց բացառութեան կրնայ ու եւ է մրցումի մասնակցիլ։

Բ. Անհատներու համար համազգեստ պարտաւորիչ չէ. կարճ տափատ եւ ֆրանկ բաւական են։

Գ. Մրցման մասնակցող որ և է ակումբ պէտք է մ.մնաւոր համազգեստ կրէ։

Դ. Իւրաքանչիւր անհատ երեք աւելի մրցումներու չի կրնար մասնակցիլ։

Ե. Ակումբներու միջև չուան քաշելու մրցման ամէն ակումբէ եօթական հոգի պէտք է մասնակցին։

Զ. Ակումբներու միջև վազելու մրցման ամէն ակումբէ պէտք է չորսակ ն հոգի մասնակցին։

Է. Իրաւաբար Մասնախումբի (Track-Judges) կողմէ որուած ամէն վճիռ վերջնական է։

Է. Մրցման մասնակցիլ ուզող ամէն անհատ կամ ակումբ պէտք է մինչև ապրիլ 26 տեղեկացնէ Մարմնամարզի խմբագրութեան։

Տեսարաններ 1911թ. մայիսին տեղի ունեցած Հայկական առաջին օլիմպիական խաղերից: Լուսանկարները «Մարմնամարզից», 1911թ.

Տեսարաններ Հայկական առաջին օլիմպիական խաղերից: Լուսանկարները «Մարմնամարզից», 1911թ.

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՐՄԱՏԹԵՐԹ

Ա. ՏԱՐԻ — ԹԻՒ 4 — 1911 ՄԱՅԻՍ

Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԴԱՒՅՈՒՄԱԵԱՆ
(ԹՕՊԻՔԹ ԳՕԼԻՃԻՆ)
Հոլով յատկութ. մէջ

«Մարմնամարզի» համարներից մեկի կազմը՝ Հայկական առաջին օլիմպիական խաղերի տեսարանով, 1911թ.

Հայ նշանավոր մարզիկ և սկաուտապետ Գրիգոր Ճոլոյանը, հղում անելով Հակոբ Սիրունու հուշերին, ներկայացնում է Հայկական օլիմպիական խաղեր կազմակերպելու գաղափարի առաջացման նախապատմությունը՝ մասնավորապես գրելով. *«..Դեռ նոր սկսած էր Մարմնամարզը լոյս տեսնել, բայց արդէն ափոփիչ էր գտած ընդունելութիւնը եւ բացառիկ ձեռնարկ մը պետք էր սկսուած գործին շարջ իանդավառութիւնը լրիւ ընելու համար: Ճաշարանն էինք դարձեալ օր մը, երբ իսաքը եկաւ Սթոքհոլմի մէջ տեղի ունենալիք Ողիմպիականին՝ յանկարծ գաղափար մը յայտնուեցաւ մեր մտքին մէջ: Հայկական Ողիմպիական մը սարքել»* («Ազդակ», 03.01.1939):

Հատկանշական է, որ օլիմպիական խաղերի հանձնախումբը, անդրադառնալով այդ խաղերը համահայկական դարձնելու և դրանցում գավառի հայ մարզիկներին ներգրավելու անհրաժեշտության գա-

Տեսարաններ Հայկական առաջին օլիմպիական խաղերից, 1911 թ.: Լուսանկարները «Մարմնամարզից» և ՀՑԹԻ Գրիգոր Ճոլոյանի հավաքածուից

ղափարին, իր կոչում նշում է. *«Ողիմպիական խաղերու մասնախումբը երբէք Պոլսահայութիւնը իբր ամբողջ մը չէ ընդունած, այլ Հայաստանի հայութեան մէկ աննշան մասը միայն, հետևաբար միշտ նախապատութիւնը պիտի տայ գաւառական ձեռնարկներու, բայց նկատի ունենալով Պոլսոյ վայելած դիւրութիւնները, ստիպուած է առաջին մարմնամարզարանը Պոլսոյ մէջ հիմնելով մարմնամարզի դասատուներ պատրաստել ու գաւառները ղրկել»* («Մարմնամարզ», Ա տարի, թիւ 9, հոկտեմբեր, 1911):

Հայկական սպորտային և մարմնամարզական ակումբների ու խմբակների մասնակցությամբ կազմակերպված այս հիշարժան խաղերի ընթացքում սահմանվում էին ռեկորդներ, իսկ հաղթողները պարգևատրվում էին ոսկե և արծաթե մեդալներով ու պարգևներով:

«Մարմնամարզի» խմբագրության հրավերով տեղի ունեցավ Պոլսի հայկական մարզական ակումբների ու միությունների ներկայացուցիչների նախապատրաստական ժողովը՝ օլիմպիական խաղերի կազմակերպչական հարցերը քննարկելու համար: Ստեղծվեց կազմակերպիչ հանձնախումբ, որի կազմ ընդգրկվեցին Արամ Գալենտերը, Գևորգ Թերջիմանյանը, Եղիշե Քաջունին, Լևոն Հակոբյանը, Շավարշ Քրիսյանը, Մարտիրոս Գույումճյանը և Հովհաննես Սավայանը:

Մրցումներին իրենց մասնակցությունը բերեցին Պոլսի համարյա բոլոր մարմնամարզական ակումբները: Առաջին համահայկական օլիմպիական խաղերին իրենց ներկայացուցիչներն էին ուղարկել Բեշիկթաշի «Ահարոնեան» ակումբը, Գում Գափուի «Տորք» ակումբը և «Ասպարեզ» լսարանը, Բերայի «Արաքս» և ՀՅԴ-ի ակումբը, Սամաթիայի «Ժողովուրդ» լսարանը, Գատըգյուղի «Ժողովրդական ակումբը» և «Մասեաց» ակումբը, Թոփգափուի «Կուկունյան» լսարանը, Բերայի «Հայ Երիտասարդաց Միութիւնը», Շիշլիի «Հայ

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԿԻՍԱՄՍԵԱՑ ՀԱՆԴԷՍ

ԵՒ

ՕՐԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՖԻԶԻՔԱԿԱՆ ԿԹՈՒԹԵԱՆ

Բ. ՏԱՐԻ — ԹԻՒ 11 ԳԻՆ 40 ՓԱՐԱՅ 1912 ՅՈՒՆԻՍ 1

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՈՂԻՄԲԻԱԿԱՆԸ

Հակառակ «Մարմնամարզ»ի 10րդ թուով յայտարարուած ըլլալուն թէ Հայկական Բ. Ոլիմբիական խաղերը տեղի ունի ամենուն Մայիս 20ին, ճարկ եղաւ ի յիւսական Եփրեմի, հանդէսը յետաձգել Յունիս 3ի կիրակիին, նկատելով որ Մայիս 27ին ալ Ազգ. Ատենապետութեան տարեդարձն էր։ Այսպէս բնելով, կարմիկներուին մասնակցութիւնը ան հանդուն ունի թէ յարգանքի յաւագոյն արտայայտութիւնը կատարուի եղաւ հանդէսը մեծ հաւուն ամենան յիւսական եւ հայ ազգին։

ՅԱՅՏԱԳԻՐ

Ա. ՄԱՍ

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՂԱՆՑՔԵՐ

1. Շուէտական ազգաս շարժումներ Մագրիգիդի Տիտան և Սամարիայ Վարդան մարմնամարզական ակումբներուն կողմէ, առաջնորդութեամբ Տիար Գ. Մերճանեանի ու ընկերակցութեամբ Քանիքանի։
2. Հարիւր եարտա վազք (մեծերու)
3. Երկայնութիւն ցատկել (կեղծ)
4. Զօղով ցատկել
5. Ակուռակ նետել
6. Երկայնութիւն ցատկել
7. Կէս մղոն վազք

Բ. ՄԱՍ

1. Գաւառականներով Շուէտական շարժումներ Տիտան և Վարդան ակումբներուն կողմէ,
2. Հարիւր եարտա վազք (պատերազմ)
3. Բարձրութիւն ցատկել
4. Գնդակ մղոն վազք
5. Երկար նետել
6. Արգելքներու վրայէ ցատկել

Գ. ՄԱՍ

1. Բուրգեր կազմել
2. Նիզակ նետել
3. Երէք քայլ ցատկել
4. Մէկ մղոն վազք
5. Հեծանիւի մրցում (2 մղոն)
6. Ակումբներու միջև վազք

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ

ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐՈՒՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա. Ամէն մրցող կանխաւ եղած յայտարարութեան հանձնարարութիւն պարտաւոր է պատշաճ առաջադիմ ներկայանալ ժամը 4ին (ը. և.) մրցավայրը։

Բ. Մրցողները պարտաւոր են փնտրել առանձին մը ամէնքը իրար մատ։

Գ. Մրցողները պարտաւոր են իրենց յատկացուած վայրէն չի հեռանալ։

Դ. Ամէն մրցող պարտաւոր է կարգապահ և կանոնաւոր ընթացք մը ունենալ թէ՛ մրցման և թէ հանգստի ատեն։

Ե. Հանդէսին փակումէն վերջ ամէն հիւր մրցանակ շահողներուն կը յանձնուի։ Դուրս ելլելն չի հեռանալ, խմբովին բաւականութիւնս հանար։

Զ. Իւրաքանչիւր ակումբի պատկանող անդամ պարտաւոր է իր ակումբին կողմէ նշանակուած անձին հրահանգներուն հետեւիլ։

ՀԱՅ ՈՂԻՄԲԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԱՐՈՒՆ

ՏՐՈՒԵԼԻՔ ՄԵՏԱԼՆԵՐԷՆ ՆՄՈ

Հայկական երկրորդ օլիմպիական խաղերում մրցանակային տեղ զբաղեցրած Գրիգոր Ճոլոյանին տրված բրոնզե մեդալ, 1912թ., ՀՅԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Երկսեռ Միութիւնը», ամերիկյան «Ռոբերտ» քոլեջի հայ սաները, «Մարմնամարզի» խմբագրությունը, Գուրուչեշմեի մարմնամարզական «Արտավազդ» ակումբը, Սկյուտարի առաջադիմական, Ուսանողական ինքնազարգացողական և «Ռաֆֆի» միությունները:

Առաջին հայկական օլիմպիական խաղերն անցկացվեցին 1911 թ. մայիսի 1-ին Պոլսի «Յունիոն» ակումբի մարզարանում՝ 2000 հանդիսատեսների ներկայությամբ: Հետագա խաղերն անցկացվեցին համապատասխանաբար 1912թ. հունիսի 3-ին, 1913թ. հունիսի 16-ին և 1914թ. ամռանը: Վերջինը սկսված պատերազմի պատճառով երկար չտևեց:

Գրիգոր Մերջանով, հայ մարմնամարզիկ, միջազգային մրցումների հաղթող, Հայկական օլիմպիական խաղերի ժյուրիի անդամ: Լուսանկարը «Մարմնամարզից», 1912թ.

Անդրադառնալով Հայկական օլիմպիական խաղեր անցկացնելու գաղափարին՝ Շավարշ Քրիսյանը գրում է. *«...Հայ Ողիմբիականը Պոլսոյ մարմնամարզական հաւաքարութեանց մէկ համախմբումը ըլլալէ պէտք է դադրի, այդ պարագային անոր արժէքը կը սահմանափակուի, ալ քաջալերուելով ու լաւագոյն կազմակերպուելով պէտք է վերածուի համայն Թուրքիոյ Հայոցս եւ անկէ անդին Կովկասի եւ այլ հայաշատ կեդրոններու հայութեան մէկ հաւաքատեղիին: Ան պէտք է հին Յունականին նմանի: Այդ նպատակին համար անհրաժեշտ է որ նախ մեր գաւառի երիտասարդութիւնն ալ շարժի, սկսի մարզուիլ ու կազմակերպուիլ ու երբ միևնոյն ձգտումով տոգորուած բազմաթիւ միութիւններու մէջ կը ստեղծուի կապ մը, ու նիւթական միջոցներ կ'աւելնան, կը կազմակերպուի ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ մը բոլոր մարմնակրթական եւ սրօրթական միութիւններու միջև՝ որ ի հարկին կրնայ հաղորդակցիլ հայաշատ կեդրոններու նմանօրինակ ընկերակցութեանց հետ, ու այն ատեն Հայ Ողիմբիականը կը դառնայ համազգային հաւաքոյթ մը, ներդաշնակ ուժի համազգային արտայայտութիւն մը, ու այդպէսով ճշմարտապէս կ'արդարացնէ իր անունը»* («Մարմնամարզ», Բ տարի, թիւ 8, ապրիլ 15, 1912):



ՀԱՅԵՐ.

ՄԱՅԻՍ ՔՍԱՆԻՆ ՎԱՋԵՑԷՔ ԳԱՏԸ ԳԻՒՂԻ ԻՒՆԻՕՆ ՔԼԻՒՊԸ.
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՈՂԻՄԲԻԱԿԱՆԻՆ

Հայկական երկրորդ օլիմպիական խաղերի ազդագրերից, «Մարմնամարզ», 1912թ.

Նախատեսված էր, որ այս խաղերին կմասնակցեն նաև Զմյուռնիայի «Հայ որսորդաց ակումբի» մարզիկները, սակայն քաղաքում հայտարարված կարանտինի պատճառով նրանք ժամանակին չկարողացան հասնել Պոլիս: Միայն ակումբի ներկայացուցիչ Մկրտիչ Յանըգյանը ներկա գտնվեց միջոցառմանը:

Ըստ մրցումների հայտարարագրի՝ տեղի ունեցան

Հայկական օլիմպիական խաղերին մասնակցություն բերած Պոլսի «Քնար» նվագախումբը

Հայկական «Տիրան» և «Վահագն» ակումբների մարզիկները ընդհանուր մարզանքի պահին: Հայկական երկրորդ օլիմպիական խաղեր, 1912թ.

100 յարդ (մեծերի ու փոքրերի համար), քառորդ մղոն, կես մղոն և մեկ մղոն վազքի մրցումներ, 100 յարդ արգելավազք, պարկարշավ և դրոշարշավ: Նախնական ռեկորդներ սահմանվեցին գնդի հրման, սկավառակի նետման մարզաձևերում: Մրցումների մեջ ընդգրկված էին թռիչք բարձրությունը, թռիչք երկարությունը, ձողով թռիչք բարձրությունը, պարանի ձգումը և երկու մղոն հեծելարշավը:

Այս մրցումներում աչքի ընկան «Ռոբերտ» քոլեջից Սարգիս Մկրյանը, Մարտիրոս Գույումճյանը, «Արտավազդ» ակումբից՝ Վահրամ Փափազյանը և «Տորքից»՝ Վարագ Փողարյանը:

Առաջին հայկական օլիմպիական խաղերի հաղթողները պարգևատրվեցին ոսկեզօծ մեդալներով, որոնց վրա կար «1911 մայիս 1 – Առաջին մրցանակ» մակագրությունը, իսկ երկրորդ տեղը գրված մարզիկներին տրվեցին արծաթե մեդալներ՝ «1911 մայիս 1 - Երկրորդ մրցանակ» գրությամբ:

Առաջին օլիմպիական խաղերը, իրենց որոշ կազմակերպչական թերություններով հանդերձ, նոր էջ բացեցին հայկական մարմնամարզական շարժման մեջ, որը ոգևորիչ ազդեցություն ունեցավ թե՛ Պոլսի և թե՛ գավառների հայ մարմնակրթական ակումբների վրա և կարևոր հիմք ստեղծեց հետագայում համահայկական մարմնակրթական միություն ստեղծելու գաղափարի հասունացման համար:

1912թ. հունիսի 3-ին կայացած Հայկական երկրորդ օլիմպիական խաղերը նախորդի համեմատությամբ ավելի կազմակերպված էին: Այս մրցումները նույնպես անցկացվեցին Գատրգյուղի «Յունիոն» ակումբի մար-

զադաշտում: Մրցակցության ժամանակ սահմանվեցին նոր ռեկորդներ: Այս մրցումներին իրենց մասնակցությունը բերեցին Պոլսի հայկական մարզական ակումբների մեծ մասը:

Հայկական երկրորդ օլիմպիական խաղերում ընդգրկված էին հետևյալ մրցաձևերը՝ վազք 100 յարդ, կես մղոն, քառորդ մղոն, արգելավազք և դրոշարշավ, թռիչք երկարություն տեղից, թռիչք բարձրություն ձողով, հեռացատկ, թռիչք բարձրություն, սկավառակի նետում, գնդի հրում, նիզակի նետում, երկու մղոն հեծելարշավ: Կես մղոն վազքի մրցման հաղթողի համար մրցանակ էր սահմանել հայ մեծահարուստ և բարերար Գալուստ Գուլպենկյանը:[1]

Նշանավոր մարզիկ Գրիգոր Մերջանովի առաջնորդությամբ կազմվեցին տարատեսակ բուրգեր՝ մարմնամարզիկների մասնակցությամբ:

Հայկական երրորդ օլիմպիական խաղերի բացումը կայացավ 1913թ. հունիսի 16-ին Պոլսի Հայոց Պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի հովանու ներքո և հայ մեծ երգահան Կոմիտաս վարդապետի նախագահությամբ: Վերջինս հանդես եկավ ճառով՝ կարևորելով մարմնամարզության դերը երիտասարդ սերնդի դաստիարակության գործում և մրցումների եզրափակիչ մասում կատարեց նաև մրցանակների բաշխման արարողություն. *«...չի մոռնալով նաեւ համբուրել անոնց ճակատները»*.[2]

Երրորդ օլիմպիական խաղերին իրենց մասնակցությունը բերեցին հայ սկաուտների ու արենուշների խմբերը, ովքեր Պոլսի «Մասեաց» ակումբի կողմից նշանակված պաշտոնատարների հետ միասին հսկում էին մրցույթի կարգապահությունը:

Առաջին և Երկրորդ օլիմպիական խաղերը չարժանացան պոլսահայ մամուլի ուշադրությանը, ինչին «Մարմնամարզը» խիստ քննադատական արձագանք տվեց: Հետաքրքրական է, որ արևմտահայ պահպանողական մամուլում Պատրիարքի հովանավորությունը մարմնամարզական խաղերում քննադատության է արժանանում,

[1] «Մարմնամարզ», Բ տարի, թիւ 11, յունիս 1, 1912:

[2] «Մարմնամարզ», Գ տարի, թիւ 6, յունիս, 1913:

Հայ մարմնամարզիկներ Բյուզանդ Կյոզիայոյուքյանն ու Մարտիրոս Գույումճյանը: Լուսանկարները «Մարմնամարզից», 1912թ.



ՆՈՒՄԱՐ ՏԵՐ ՍՊԻՌՔԻԵԱՆ

ՄԱՐՄՆԱՄԱՐՋ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐԹ

ԵՒ

ՕՐԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՖԻԶԻՔԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

Գ. ՏԱՐԻ — ԹԻՒ 10 ԳԻՆ 50 ՓԱՐԱՅ 1913 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԶԱՒԷՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Օրաթերթերը արդէն նորընտիր Պատրիարքին ընտրութեան եւ յարակից ձեռակերպութիւններուն մասին անհրաժեշտ տեղեկութիւնները օր օրին տուին, եւ մենք՝ նպատակ չունինք առանց վերյիշումը ընել այս սիւնակներուն մէջ:

Մենք նորընտիր Պատրիարքը Հայ ազգին ու մանաւանդ՝ Հայ երիտասարդութեան պիտի ծանօթացնենք իր մարմնացուցած արժանիքներուն մէջէն մոռցուած այն մէկ հատ արժանիքովը՝ որ այս թերթին հետապնդած իդէալը իրենց ալ նուիրական դաւանողներուն համար մեծապէս ուրախարեր պիտի ըլլայ գիտնալ:

Արդարեւ, շատ ու շատեր ընտրեն թէ նորընտիր Պատրիարքը լեզուագէտ ու վարչագէտ է, ընկերային եւ պարզասէր է. կորովալից ու գորովալից է, ջանասէր է, խղճամիտ ու կրոնի է, վերջապէս իրաւամբ քսաներեք այլ գծուեցան թէ՝ ան ազգասէր է ու կը մարմնացնէ այն բոլոր պայմանները՝ որոնք կը պահանջուին Հայ ժողովուրդին խղճին ձայնովը ընտրուած եւ մանաւանդ անոր խիղճը իրեն առաջնորդ ընդունող Պատրիարքէ մը: Այս ամէնը շատ բարի:

Եթէ Պատրիարքին այս բոլոր առաւելութիւնները պիտի ծառայեն գիմքը առ յաւէտ սիրելի ու յարգելի դարձնելու Հայ ժողովուրդին, այն Հայ ժոգովուրդին որ աշխարհի վրայ ամենէն շուտ կը ձանձրանայ սիրելէ եւ ատելէ, ու եթէ նորընտիր Պատրիարքին վերոյիշեալ յատկութիւնները գրաւականներ են Հայ ազգին վայելելիք բարօրութեան ու յա-

Պոլսի հայոց Պատրիարք Զավեն Տեր-Եղիայան (1869-1947)

Պոլսի հայոց Պատրիարք Զավեն Տեր-Եղիայանը մասնակցում է օլիմպիական խաղերի հաղթողների մրցանակաբաշխությանը, 1913թ.

Կոմիտաս վարդապետ (1869-1935)



ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Մրցումներուն աւարտէն վերջ Կոմիտաս վրդ. որ Ներկայ էր, կարգադիր մասնախաւմրին հրաւէրով, օրուան հանդէսին պատշաճ ճառով մը վեր հանեց այս օրինակ հանդէսներու բարոյական մեծ նշանակութիւնը և ազգային գոյութեան պայքարին մէջ երիտասարդութեան կատարելիք մեծ գերը, յետոյ իրեն յատուկ ներքնամտութիւնովով համեմատած խօսքերով, իր բաքանչիւրին յանձնեց իր շահած մրցանակը, յի մասնաւորի նաև հարիւրեակ անուն ճակատները։

Հանդէսը վերջացած էր սա Ներկաները մեկնեցան շատ գոհ տպաւորութեան մը ներքև։

որին, սակայն, հակահարված է տալիս Շ. Քրիսյանը՝ գրելով. *«Աշխարհի ընթացքը այնպէս է որ, երբ ազգեր որիշ ազգերու կը համակրին, կը պրպտեն նաև այդ ազգերուն անցեալ եւ ներկայ քաղաքակրթական վիճակները, անոնց մտաւոր, բարոյական եւ ֆիզիքական ընդունակութիւնները. Հայութիւնը այդ վիճակին մէջ էր. ֆիզիքական կենսունակ մարզանքները արևմտեան համոզումներու արդիւնք են նոյն իսկ ամենագեղեցիկ շարժումները, երբ շատ սահմանափակ շրջանակի մը մէջ կը կատարուին, չեն կրնար ուշադրութիւն գրաւել եւ ազգային նկատուիլ. ահա՛ այս տեսակէտով, ուզեցինք որ Ս. Պատրիարքին հովանաւորութիւնը վայելելով, մեր սկսած շարժումին կարենայինք տալ ազգային նկարագիր մը եւ Եւրոպա իրաւամբ կարենար ըսել թէ, «Հայերը, այս բանին մէջ ալ մեզի նման են...»* («Մարմնամարզ», Գ տարի, թիւ 6, յունիս, 1913)։

Այս խաղերին նորություն էր հայ սկաուտական երկու խմբերի մասնակցությունը, որոնցից մեկը ներկայացնում էր «Հինդլեան» վարժարանը, իսկ մյուսը՝ Սկյուտարի շրջանը։ Սկաուտների զինվորական քայլքը սրինգների նվագակցության ուղեկցությամբ տպավորիչ ազդեցություն թողեց հայ հանդիսատեսի վրա։

Համահայկական երրորդ օլիմպիական խաղերին մասնակցելու համար ներկայացուցիչներ էին ժամանել Զմյուռնիայի, Ադաբազարի, Պարտիզակի և Կեսարիայի հայկական մարմնամարզական ակումբներից։ Նրանց շարքում փայլուն հանդես եկավ Զմյուռնիայի «Հայ որսորդաց միության» ներկայացուցիչ Գևորգ Հաբեթյանը, ով հաղթանակ տարավ 100 մետր վազքի և թռիչք երկարության մեջ։ Հաջող հանդես եկավ նաև ադաբազարցի Սարգիս Թարիգյանը։

Այս մրցախաղերի ժամանակ մեկ այլ նորամուծություն էր ռեկորդների ու հաշիվների գրանցման մետրական համակարգի ներմուծումը՝ համապատասխան միջազգային օլիմպիական խաղերի ժամանակ պաշտոնապես ընդունված եղանակի։

Այս անգամ հայտագրի մաս էին կազմել հետևյալ մրցաձևերը՝ վազք՝ 100 մետր, 400 մետր, 800 մետր և 1500 մետր և դրոշարշավ,

Հայկական երրորդ օլիմպիական խաղերի ծրագիրը, 1913թ., ՀՅԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

թռիչք երկարություն տեղից, թռիչք բարձրություն, հեռացատկ, գնդի հրում, նիզակի նետում և 5000 մետր հեծելարշավ:

Նախապատերազմյան շրջանի վերջին, չորրորդ Հայկական օլիմպիական խաղերը տեղի ունեցան 1914թ. հունիսի 14-ին: Կազմակերպիչ հանձնախումբն ակնկալում էր, որ տարեցտարի *«մրցումները դառնան աւելի շահեկան, միևնոյն ատեն մրցորդներն ալ հետզհետէ ստոգորուին sporting ոգիէ մը, հասնելով անոր մարզական ու բարոյական բարձրութեան»*[3]:

Խաղերի բացումը սկսվեց աղավնիների թռիչքով՝ ի ազդարարումն հին հայոց նավասարդյան խաղերի ավանդության կրկնության: Այս անգամ էլ Պոլսի Պատրիարքը դրական էր արձագանքել Շ. Քրիսյանի՝ մրցահանդեսը նախագահելու հրավերին. *«...այսպէս անգամ մ՚ալ ապացուցելով այն համակրանքը զոր կրածէ ֆիզիքական վերածնունդեան այս գեղեցիկ շարժումին հանդէպ»*[4]:

Այս անգամ մրցախաղերին մասնակցեցին կայսրության տարբեր քաղաքներից եկած 13 ակումբների 81 մարզիկներ: Դրանք Պոլսի «Հայ մարմնամարզարան», «Հայորդի», «Պէրպէրեան», «Տորք», «Արաքս», «Արտավազդ», «Նոր դպրոց», «Վահագն», «Եփրատ», «Նոր ուժ», «Սասուն», «Անդրանիկ» ակումբներն էին, իսկ գավառից՝ Զմյուռնիայի, Ադաբազարի և Մարզվանի հայկական ակումբների մարզիկները (Գ. Ճոլոյան. Հուշեր ու նիշեր, «Ազդակ», 18. 01. 1939):

Նրանց թվում էին նախորդ խաղերից հայտնի դարձած մարզիկներ Գևորգ Հարությունյանը (Զմյուռնիա), Սարգիս Թարիգյանը (Ադաբազար), Մենակար Ջամանյանը (Պարտիզակ) և այլք:

«Հայ Մարմնամարզարանի» մասնակցության շնորհիվ, որը ներկայացված էր լավագույն մարզիկներով, խաղերի ընթացքում սահմանվեցին վեց նոր ռեկորդներ:

Մրցախաղերին ոգևորիչ մասնակցություն բերեց Գում Գափուի «Քնար» նվագախումբը՝ Վ. Սրվանձտյանցի և Բարսեղ Կանաչյանի ղեկավարությամբ:

[3] «Մարմնամարզ», Դ տարի, թիւ 2, յունիս, 1914, էջ 31:

[4] Նույն տեղում:

ՀԱՅԿԱԿԱՆ

ԵՐՐՈՐԴ ՈՂԻՄԲԻԱԿԱՆԸ

Մայիսի մեջ տեղի պիտի ունենայ Հայկական Երրորդ Ոլիմբիականը նախորդներեն գերազանց պատրաստութիւններով:

Մարզիչնե՛ր, ձեր մկանները վարժեցուցեք, ու Հայե՛ր, դուք ալ մտադրեցեք անպատճառ ներկայ գտնուիլ ու տօնել Հայ նոր կեանքին այս մեծ Տօնը:

ՏՈՄՍԱԿՆԵՐԸ

Տոմսակներուն գիները են Ա. կարգի համար 10 ղրշ. եւ Բ. կարգի համար 5 ղրշ.:

Կիներու և ուսանողներու մասու կիներու համար կէսառ կէս:

Տոմսակները կարելի է հայթայթել «Մարմնամարզ»ի խմբագրատունէն, ինչպէս նաեւ Պոլսոյ բոլոր հայ Ակումբներէն: Մայիս Մէկին Իւնիօն Քլիւպի Կիշէն:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

ՕՐԿԱՆ

ԱԶԳ. ՖԻԶԻՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

ԵՒ

ԱՌՈՂՋ ԿԵՆՍԱԿԱՆ ՈՒՐՈՒԱԳԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

ԲՈԼՍԻԱՆՑԻ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԳԵՐՈՒ

Ստամբուլ 15 դեկտ. Աբեղեան մնաղ 3 Տասնմեկ

Կ. ՊՈԼԻՍ

19. Եկեղ. Վարչ. խան, Գանգի Գարան

Տ.

Ներկայիս հանգամանքները կ'ստանձնեն ՄԱՐՄՆԱՄԱՐԶ պարբերականը ձեր մատուցած նպաստամանը յանձնելու:

Այս բանը մենք թերեւին տասնիւն թուով չուզեցինք ընել, որովհետեւ խմբագիրս կ'ենք գիտեր թէ, իբր բոլորովին նոր գաղափարի մը եւ շարժումի մը գեղեցիկ արդիւնքը, մեր թերեւոյթով Ի՛նչ ընդունելութիւն պիտի գտնէին Հայ ազգին մէջ. մենք չուզեցինք ապագայի գեղեցիկ՝ ազգ անոյշ խոստումներով ազգին ներկայանալ եւ անոր նոր թեթեւական ու բարոյական օժանդակութիւնը խնդրել, մենք իբր Մարդ, մեր իրաւունքներուն եւ մանաւանդ պարտականութիւններուն գիտակից, ուզեցինք նախ կեանքը առնել, ապացուցել անոր ապրելու իրաւունքը մը, ինչպէս ներկայանալու հանգամանքներ, մեր հաշուեհամարութիւնը ընելու եւ այդ կեանքին անհրաժեշտ հոգով ապրելու միջոցները խնդրելու:

Եւ ահա այսօր ձեզի կը գիմենք. մանրամասնաբէն չգրելու խոսքը թերթին տպագրելին եւ ուզղութիւնը մասին. ձեզ ուղարկուած եւ ձեր կողմէ յաստատած գրութիւնը մը գրոյ ուղղութիւնը նոյնչափ այդ մասին պէտք եղածէն առելին պիտի խօսին:

Մեր ջանքերովը Հայ վարժարաններու մեծագոյն մասին մէջ մարզանքի գաղ հաստատուեցաւ. Պոլսոյ եւ Դաւանանքու մէջ հարիւրէ աւելի Մարմնամարզական ակումբներ կազմուեցան, ուր այսօր հազարաւոր երիտասարդներ ֆիզիքական կը մարզուին ու պարտաւորուած են բարոյական մարդուք մնալու:

Բայց մեր ստեղծած շարժումներուն թերեւս ամենէն գեղեցիկը, ամենէն աւելականը, ու ամենէն ալ ազգայինը ՀԱՅ ՈՂԻՄԲԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ տարեկան հիմնարկութիւնն է, զոր տակաւին գաղափարակից բարեկամներու հետ անոյշին գտնուելու թեթեւութիւններու յանձնելով յանձնեցինք հանդիսակ. անշուշտ ձեզ ծանօթ է Հին Ոլիմբիական խաղերուն պատմական նշանակութիւնը. ուզեցինք Հին Յունը բնորոշ այդ ոգին Հայ երիտասարդութեան մէջ ալ ներմուծել, անոր մէջ ստեղծել դպրոցի ու հանրապետութեան գաղափարը, գեղեցիկ քովէ քով բերել ու ամենուն ցոյց, Դուք ամենից ալ Հայեր էք, միասին ապրեցեցէ՛ք:

Ու յանդգնանք. այժմ շարժումը աւելի մեծ շափով կարենալ տարածելու համար պէտք ունինք ձեր օժանդակութեան, թէ՛ բարոյական եւ թէ բարոյական ազգութեան ձեռքին տակ:

Վստահ ենք թէ մեր գաղափարները ձեր գրգռումներուն հետ նոյն են, այդ պատճառութիւնամբ պատուիրք ունինք մնալու.

Եղբայրներ Յարգանք

Շաւարշ Քրիսեան

1913 Յունուար 30

[2] «Մարմնամարզ», 1914 էջ 31:

[3] «Մարմնամարզ», 1914 էջ 31:

Հայկական օլիմպիական խաղերին առնչվող հրապարակումներ «Մարմնամարզից»
Շավարշ Քրիսյանի ստորագրությամբ շրջաբերական նամակ՝ «Մարմնամարզին» բաժանորդագրվելու առաջարկով, 1913թ.

Տեսարաններ Հայկական երրորդ և չորրորդ օլիմպիական խաղերից, 1913, 1914թթ.: Լուսանկարները «Մարմնամարզից»

Հայկական օլիմպիական խաղերը բացառիկ նշանակություն ունեցան հայկական մարմնակրթական շարժման հետագա զարգացման, ինչպես նաև այդ շարժումը համակարգելու համար հայկական ընդհանուր մարմնակրթական մարմին ստեղծելու գործում, որի կապակցությամբ Շավարշ Քրիսյանը գրում է. *«Ու թող Մայիս Մեկի Հայկական այդ Մրցահանդէսը, հիմնաքարը ըլլար Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութեան, որ պարբերաբար հասարակութեան ցոյց տար հայ ջիղն ու մկանը, հայ ուժն ու կորովը՝ գլուխ հանելով Հայկական Ողիմպիականի գաղափարը, եւ որ իր ծոցին մէջ պատրաստուէր մեր երիտասարդութիւնը, մեր թողցած ջիղերուն կեանք տար եւ վերջապէս պատրաստէր նոր սերունդ մը աշխոյժ եւ կորովի»* («Մարմնամարզ», Ա տարի, թիւ 3, ապրիլ, 1911):

Հայկական ակումբների ու միությունների մասնակցությամբ տեղի ունեցած օլիմպիական խաղերն աննախադեպ ու բացառիկ մի երևույթ էին պոլսահայ և ընդհանրապես արևմտահայ կյանքում, որի հետագա ծավալումը կարևոր նշանակություն կարող էր ունենալ ոչ միայն մարզական կյանքի զարգացման գործում, այլև արևմտահայության շրջանում ևս մեկ միավորիչ ու համախմբող ջանքերի համար, որն անկասկած առաջ էր բերելու նման երևույթներին կասկածամտորեն վերաբերվող երիտթուրքերի բացասական արձագանքին:

Սկավառակի նետում. Հայկական չորրորդ օլիմպիական խաղեր: Լուսանկարը «Մարմնամարզից», 1914թ.

Տեսարան Դորթ Յոլում (Զորք Մարզպան) տեղի ունեցած կիլիկյան օլիմպիական խաղերից, 1914 թ.: Լուսանկարը «Մարմնամարզից»

Պոլսի համայնապատկեր, XX դարի սկզբի փոստային բացիկ

Գլուխ յոթերորդ

ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1912 Թ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ

Միջազգային օլիմպիական խաղերը, որոնք նոր կյանք հաղորդեցին Հին աշխարհում մեծ կարևորություն ունեցած օլիմպիական մարզաձևերին, դրանց վերակենդանացման ու միջազգային օլիմպիական շարժման հիմնադիր Պիեռ դե Կուբերտենի մտահղացմամբ սկիզբ առան 1896թ. Աթենքում կայացած խաղերով: Այս խաղերը նոր երևույթ էին միջազգային հարաբերություններում, որտեղ շատ շուտով հասկացան, որ սպորտային մրցակցությունն ազգերի ու պետությունների միջև ոչ պակաս կարևոր է համաշխարհային շուկայում ծավալվող մրցակցությունից:[1]

Հայկական աղբյուրները, մասնավորապես Ալեքսան Մկրտիչյանն իր «Մարզիկին գիրքը» աշխատության մեջ հիշատակում է 1906 թ. Աթենքի միջազգային օլիմպիական խաղերին Հաբեթ Փափազյան անունով հայ մարզիկի մասնակցության մասին՝ հավելելով, որ *«...Արևելքի մեջ առաջին ազգը եղած ենք, մասնակցող Օղիմպիական խաղերուն...»*:[2]

Ըստ թուրքական աղբյուրների՝ Օսմանյան կայսրությունից միջազգային օլիմպիական խաղերի առաջին մասնակիցը Գալաթասարայի բարձրագույն դպրոցի հունգար աշակերտ Ալեկո Մուլաշն էր: Սակայն որևէ հիմք չկա պնդելու, որ նա պաշտոնական կարգավիճակով է մասնակցել 1908 թ. Աթենքի միջազգային օլիմպիական խաղերին:

Իրականում թուրքական սպորտի պատմության մեջ առաջին անգամ պաշտոնապես Օսմանյան կայս-



ՀԱՅԵՐՍ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ուրախութեամբ մեր Պատ. Ընթերցողներուն կը ծանուցանենք թէ Ֆեարք Մկրտիչ Մկրեան և Վահրամ Փափազեան արդէն Աթոռոմ մեկնած են միջազգային մրցումներուն մասնակցելու համար:

Հետաքրքիր տեղի ունեցած մրցումները մանրամասնաբէն Մարմնամարզի մէջ պիտի ծանուցանենք լուսանկարներով, ու առանձին թղթակցութիւններով:

Երբ Թուրքերը իրենց բոլոր միջոցներով և ոչ մէկը կրնան իրը մրցողդ ուղարկել ու գարձեալ Օսմ. դրօշին պատիւը յարգը բանելու պաշտօնը երկու հայերու է որ կը վիճակի, մենք ի հարկէ կ'ուրախանանք և մեծ յոյս ունինք թէ 1916 ին Պէրլինի մէջ տեղի ունենալիք վեցերորդ Ողիմպիականին աւելի մեծ թիւով Հայեր պիտի մասնակցին:

Գ. ՄԿՐՏԻՉ Ի. ՓԱՓԱԶԵԱՆ

ԳԱԼԱԹԱՍԱՐԱՅԻ ՊՈԼԻՍԻՆ ՕՐԻՆԱԿ

Մարմնամարզի վերջին թիւերէն մէջ Աղատաղդ ակումբը հանրա- ան կոչ մը ուղղած էր Պ. Վահրամ Փափազեանի Աթոռոմի միջազգային խաղերուն երթալուն ի նպաստ՝ օժանդակելու նուէրներով և այլն:

Պոլիսը լանց և դաւառը պատասխանեց եղած հրաւէրին, այսպէս Սերասոմոյ Պարեւ մարմնամարզական ակումբը մեր խմբագրութեան կէս օսմանեան սակի ուղարկած էր այդ նպատակին համար:

Վերոյիշեալ գումարը Պ. Վահրամ Փափազեանի յանձնեցինք, որ մեծապէս մեկնի թեղրեց իր Տարհակալա թեանց հրապարակաւ թարգմաներ հանդիսանալ Մարմնամարզի միջոցաւ:

«Մարմնամարզի» հրապարակումները Ստոկհոլմի միջազգային օլիմպիական խաղերի վերաբերյալ, 1912թ.

[1] **И. Б. Хмельницкая** Спортивные общества и досуг в столичном городе начала XX века: Петербург и Москва, 2011. С. 16:

[2] **Ա. Մկրտիչեան.** Մարզիկին գիրքը, Կ. Պոլիս, 1926, էջ 50:

Օլիմպիական երախտիքի պաշտոնական մեդալ՝ Շվեդիայի թագավոր Գուստավ 5-րդի դիմապատկերով

Ստոկհոլմի համայնապատկերը, XX դարի սկզբի բացիկ

րությունը 1912թ. Ստոկհոլմում կայացած միջազգային օլիմպիական խաղերում ներկայացնելու պատիվը վիճակվում է երկու հայ մարզիկների՝ Վահրամ Փափազյանին և Մկրտիչ Մկրյանին:

Հայկական օլիմպիական խաղեր անցկացնելու գաղափարին զուգընթաց հայկական մարզական շրջանակներում և «Մարմնամարզի» էջերում քննարկման դրվեց նաև միջազգային օլիմպիական խաղերին հայ մարմնամարզիկներ ուղարկելու գաղափարը՝ ելնելով *«Հայ ազգին պատիւը բարձր բռնելու»* անհրաժեշտությունից:

Թուրքական մարմնակրթական խմբերի մոտ ևս միջազգային այս հեղինակավոր մրցույթներին ազգությամբ թուրք մասնակից ուղարկելու ծրագրեր կային: Թուրք մարմնամարզիկ Սելիմ Սըրրը Թարջանը, անդրադառնալով այս հարցին, գրում է. *«...1912թ. Ստոկհոլմում տեղի ունենալիք Օլիմպիական խաղերին մասնակցել որոշեցինք: «Իքդամ» եւ «Սաբահ» թերթերի միջոցով տարբեր սպորտային մրցումների մասնակցել ցանկացող անփորձ երիտասարդներին արտոնագիր ստանալու հրավիրեցի: Միևնույն ժամանակ Պատերազմի եւ Ծովային նախարարություններին գրավոր խնդրեցի միջազգային սպորտային մրցումներին մասնակցող սպաների անունները տալ: Տվյալ ժամանակաշրջանում կառավարությունը այս միջազգային մրցումների քաղաքական եւ հասարակական նշանակությունն անհրաժեշտ չափով չգնահատելով, մրցումներին մասնակցելու համար իմ դիմումին ի պատասխան՝ ռազմական տեսանկյունից կարևորությունը չնկատելով, համարժեք պատասխան չտվեց: Այդ ժամանակ Ստամբուլում մեկ, երկու ֆուտբոլային ակումբ-*



Ստոկհոլմի հինգերորդ միջազգային օլիմպիական խաղերի պաստառներից, 1912թ.

Ստոկհոլմի միջազգային օլիմպիական խաղերի մասնակից Վահրամ Փափազյանը: Լուսանկարը «Մարմնամարզից», 1912թ.

ներից բացի ուրիշ ձևավորված սպորտային միություններից պատասխան չստացա...»:[3]

Ստոկհոլմի՝ 1912թ. օլիմպիական խաղերին հայ մարմնամարզիկ ուղարկելու հարցի շուրջ բուռն քննարկում է ծավալվում «Մարմնամարզի» էջերում: Քանզի այդ խաղերին մասնակցելը բավականին ծախսատար և դժվարին գործ էր, միջոցներ ձեռնարկվեցին հանգանակություն կազմակերպելու համար: Այս նպատակի համար «Արտավազդ» մարմնամարզական միության կողմից կազմակերպվում է համահայկական հանգանակություն՝ Վահրամ Փափազյանին Ստոկհոլմ ուղարկելու ծախսերը հոգալու համար: Այս գաղափարն աջակցություն է ստանում «Մարմնամարզի» կողմից, որը գրում է. *«...Հիանալի գաղափար, ու կը կարծենք թէ բոլորովին աւելորդ պիտի ըլլար միջազգային Ողիմբիական խաղերուն քաղաքակրթական բարձր նշանակութիւնը ի վեր հանել աշխատիլ, մեր կարծիքով, ատոնց մասնակցիլ ուզել, կը նշանակէ հասկցած ըլլալ մեծ ժողովուրդներուն մեծութեան գաղտնիքներէն եւ պարտաւորներէն մին, ու անոնց նմանիլ կամ հաւասարիլ ձգտիլ, նմանապէս կը նշանակէ քաղաքակրթական բարձր իտէալներ ունենալ, եւ ճիշդ այս պարտաւոր է որ մենք այդ իտէալը հայութեան ապագային համար յուսատու կը գտնենք:*

Եթէ մեր զաւակներուն, եղբայրներուն խրատ կուտանք միշտ իրենցմէ թէ մտաւորապէս եւ թէ բարոյապէս վեր անձերու հետ տեսնուելու, ինչո՞ւ նոյն բանը մենք ազգովին չենք ըներ մենք աւելի մեծ եւ լուսաւորեալ ազգերու հանդէպ:

Մեզի համար Փափազեանին առաջին կամ վերջին ելնելը երկրորդական է, կարևորը մաս առնելն է իբր հայ:

[3] **Şevki M. Çapan** Türk Sporunda Selim Siiri Tarcan. Ünyay Muğla, 1999:

Թող Փափազեան նոյն իսկ վերջին ելնէ, բայց հոն իբր հայ ներկայացուի, կարեւորը մեծ ազգերու այդ հաւաքոյթին մէջ հայ անուան յիշատակուիլն է. իրաւ է, հայ անունը գրեթէ երեսուն տարիներէ ի վեր Եւրոպայի շրջանը ըրաւ իբր կողոպտուող, սպաննուող, բռնաբարուող ազգի անուն, իբր արցունքի եւ արեան հոմանիշ, շատեր մեղքցան մեր վրայ, բայց մեզ մոռցան, ու հիմա, ժամանակ որ կրկին մեր անունը իրենց շրթունքներուն վրայ արտաբերուի:

Մենք կուզենք որ քաղաքակիրթ աշխարհը մեզ ճանչնայ մեր ճիգովը եւ մեր ճիգին մէջ» («Մարմնամարզ», Բ տարի, թիւ 2, 1912, յունուար 15):

Անմասն չմնացին նաև գավառի հայկական ակումբները: Սեբաստիայի «Պարթև» մարմնակրթական ակումբը կես օսմանյան ոսկի նվիրաբերեց այս նպատակի համար: Երկու հայ մարզիկները սկսում են լուրջ մարզումներ անցկացնել՝ միջազգային օլիմպիական ստուգատեսին հավուր պատշաճի պատրաստվելու համար: Տարբեր հանգանակությունների և անձնական միջոցների հաշվին Վ. Փափազյանը և Մ. Մկրյանը մայիսի վերջին ժամանեցին Ստոկհոլմ:

Այստեղ երկու հայ մարզիկները հայտնվեցին տեղական մամուլի ուշադրության կենտրոնում: Ստոկհոլմում լույս տեսնող «Ստադիոնը» *«Օսմանեան մարմնամարզական պատգամաւորութեան»* խմբագրատուն այցի կապակցությամբ մասնավոր անդրադարձ է կատարում. Մկրտիչ Մկրյանն այն թարգմանաբար ներկայացրել է «Մարմնամարզին». *«Պարոն Մկրտիչ Մկրեան, մէկն է այն սակաւաթիւ օսմանցիներէն, որոնք պիտի մասնակցին Ողիմպիական մրցումնե-*



Վահրամ Փափազյանի հուշագրության կազմը

1912թ. օլիմպիական խաղերի կազմակերպիչ հանձնախումբը

ռուն Ընկերակցութեամբ Սթոքհոլմի Օսմ. Հիւպատոսարանի քարտուղարին, որ մարմնամարզիկ մըն է, երէկ այցելեցին մեր խմբագրատունը: Պ. Մկրեան 19 տարեկան է, ուսանող Պոլսոյ Ռօպերթ Քոլեճի եւ այս տարուան շրջանաւարտ: Պիտի մասնակցի տէքաթլօնի եւ բէնթաթլօնի, աջ ու ձախ ձեռքերով սկաւառակ, երկաթ եւ նիզակ նետելու մրցումներուն: Անցեալ տարի, Աթէնքի մեջ բէնթաթլօնի մրցումներուն շահած է: Շատ զօրաւոր է նաև գօտեմարտութեան մէջ» («Մարմնամարզ», Բ տարի, թիւ 13, 1912):

Հայ մարզիկները, Ստոկհոլմում մասնակից երկրների դրոշների շարքում չտեսնելով Թուրքիայի դրոշը, դեսպանատան միջնորդի հետ բողոք հայտնեցին՝ նշելով, որ եթե Օսմանյան կայսրության դրոշը չտեղադրվի մյուս երկրների դրոշների կողքին, ապա իրենք կհրաժարվեն խաղերին մասնակցելուց:

Այս առումով հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում օլիմպիական խաղերի մասնակից Վահրամ Փափազյանը՝ իր հուշերում գրելով. *«Երբ առաւօտուն Սթոքհոլմ հասայ, տեսայ որ փողոցները եւ մեծ հասարակութիւնները Ոլիմպիականներուն մասնակցող բոլոր մեծ ու փոքր ազգերուն դրօշակներովը զարդարուած էին, բայց թրքականը ամէն կողմ կը պակսէր:*

Այս պարագան զիս շատ յուզեց. վերջապէս հայրենիքիս՝ Թուրքիոյ պաշտօնական ներկայացուցիչն էի և ինձ համար տեսակ մը նախատինք էր հայրենիքիս հանդէպ ցոյց տրուած այս տգեղ վերաբերմունքը:

Ինձ յատկացուած բնակավայրս չգացած, ճամբորդութեան պայուսակները հետս առած, ինքնաշարժ մը առի եւ ուղղակի թուրք դեսպանատունը գացի, զայրոյթս յայտնելու եւ անմիջապես դարման մը պահանջելու համար:

Թուրք Դեսպանին ինքնութիւնս յայտնելէ եւ անոր շնորհաւորութիւնները ընդունելէս անմիջապես յետոյ, ըսի. «Պեյ էֆենտի, Սթոքհոլմի մթնոլորտը ինձ համար անշնչելի է, ես պայուսակներս շալկած կ'ուզեմ կրկին հայրենիքս վերադառնալ: Ամբողջ Սթոքհոլմ օտար դրօշակներով զարդարուած է, բացի թրքականէն եւ այս պարագան նախատինք մըն է ինձ համար եւ հայրենիքիս դէմ: Ես հոս կը մնամ միայն այն պայմանով որ միջոցներ ձեռք առնէք եւ յաջողինք որ իմ հայրենիքիս դրօշն ալ ծածանի բոլոր միւս ազգերուն կողքին»:

Թուրք Դեսպանը դէմս արձան կտրուեցաւ... Ու-

Ստոկհոլմի օլիմպիական խաղերին հաղթողներին տրված ոսկե մեդալ

Վազքի մրցումների տեսարաններով լուսանկարչական ալբոմ, Ստոկհոլմ, 1912թ., ՀՑԹԻ հավաքածու

Օլիմպիական խաղերի բացման արարողության և մրցումների տոմսակներ, 1912թ.

Ստոկհոլմի մարզադաշտը, որտեղ կայացան Հինգերորդ միջազգային օլիմպիական խաղերը

Օլիմպիական խաղերի առթիվ թողարկված կրծքանշան, 1912թ.

Ստոկհոլմի օլիմպիական խաղերի պաշտոնական մասնակից երկրի պատվիրակության ղեկավարի կրծքանշանը

Մասնակից երկրների մարզիկների տողանցը՝ ազգային դրոշներով: Առաջին պլանում ԱՄՆ պատվիրակությունն է: ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի հավաքածու

Օլիմպիական խաղերի առթիվ թողարկված կրծքանշան, 1912թ.

րիշ շատ շատերու նման չէր հաւատար որ հայ մը այսքան կը սիրէ, կը յարգէ իր թուրք հայրենիքը... Թերեւս այդ պահուն միտքէն ալ չանցաւ, այն պարզ իրողութիւնը թէ՝ Հայը իր թուրք հայրենիքը միշտ սիրած է, բայց Թո՛ւրքն է որ չէ սիրած իր օրինակելի օսմանցի թուրք Հայը եւ զայն հալածած է ամէն տեղ եւ ամէն առիթով...»:[4]

Այնուհետև նա շարունակում է. *«Եւ արդարեւ, երկու ժամ վերջը, թրքական դրօշը ամէն կողմ սկսաւ ծածանիլ, շնորհիւ հայ երիտասարդի մը, որ քանի*

Պատվիրակությունների տողանցքը՝ օլիմպիական խաղերի բացման արարողության ընթացքում

Օլիմպիական խաղերի պաշտոնական ծրագիրը, 1912թ.

Ստոկհոլմի միջազգային հինգերորդ օլիմպիական խաղերի բացման պաշտոնական արարողությունը, 1912թ.

[4] **Վահրամ Փափազյան**
Սէր, Սէր, Սէր, Բեյրութ, 1962, էջ 53:

մը պարիներ յեպոյ պիպի լար իրեն նման հայրենասէր ժողովուրդի մը անթամ, միլիոնաւոր դիակներուն վրայ... ջարդուած Թուրքէն»:

Վահրամ Փափազյանն օլիմպիական խաղերին մասնակցեց 1500 մետր վազքի մրցումներում իր կարմիր մարզաշապիկով, որի վրա կարվել էր Թուրքիայի դրոշը: Պահպանվել են արխիվային մի քանի հազվագյուտ կադրեր, որտեղ երևում է Վ. Փափազյանը մեկնարկի և վազքի ընթացքում: Հատկանշական է, որ իրենց մարզահագուստին թուրքական դրոշ կարելու առաջարկ էր արվել Շվեդիայում Օսմանյան կայսրության դեսպանի կնոջը:

Օլիմպիական խաղերի կազմակերպչական կոմիտեն Թուրքիայի դրոշները զետեղեց Ստոկհոլմի մարզադաշտում և փողոցներում: Այսպիսով, միջազգային օլիմպիական խաղերի պատմության մեջ առաջին անգամ, շնորհիվ հայ մարզիկների, բարձրացվեց նաև Օսմանյան կայսրության դրոշը: Ավելի ուշ հայ մարզիկներին հաջողվել էր պարզել, որ, թուրքական բռնություններին ի պատասխան, շվեդական կողմը չէր ցանկացել բարձրացնել թուրքական դրոշը մասնակից երկրների դրոշների շարքում: Հատկանշական է, որ պատվիրակությունների երթի ժամանակ Օլիմպիական կոմիտեի ներկայացուցիչ Սելիմ Սըրրը Թարջանը, ով այդ ժամանակ գտնվում էր Ստոկհոլմում, չնայած նախօրոք ձեռք բերված պայմանավորվածությանը, չներկայացավ բացման արարողությանը՝ հայ մարզիկների հետ տողանցքին մասնակցելու համար:

Ստոկհոլմի օլիմպիական խաղերին մասնակցեցին 28 երկրների 2541 մարզիկներ: Այդ օլիմպիական

EXCELSIOR
Journal Illustré Quotidien
Informations - Littérature - Sciences - Arts - Sports - Théâtres - Élégances
LES GRANDES PERFORMANCES AUX JEUX OLYMPIQUES DE STOCKHOLM
LA LUTTE ENTRE KOLEHMAINEN ET BOGIN, SUR 5.000 MÈTRES

Ֆրանսիական “Excelsior” թերթի հատուկ թողարկումը՝ նվիրված Ստոկհոլմի օլիմպիական խաղերին, 1912թ.

Ստոկհոլմի օլիմպիական խաղերի մասնակցի արծաթե մեդալ, 1912թ.

խաղերում, բացի Օսմանյան կայսրությունից, առաջին անգամ հանդես եկան Եգիպտոսի, Լյուքսեմբուրգի, Պորտուգալիայի, Սերբիայի և Ճապոնիայի ներկայացուցիչները:

Մկրտիչ Մկրյանը լավ արդյունքներ գրանցեց հնգամարտում և սկավառակի նետում մարզաձևում գրավեց հինգերորդ տեղը, իսկ Վահրամ Փափազյանը 1500 մետր վազքում եզրագծին մոտ ցավալիորեն վայր ընկավ և մրցանակային տեղ չգրավեց:

Չնայած հայազգի երկու մարզիկները մրցանակային տեղեր չգրավեցին, այդուհանդերձ նման հեղինակավոր միջազգային մրցությանը նրանց մասնակցությունը մեծ արձագանք ստացավ թե՛ հայկական և թե՛ թուրքական շրջանակներում:

Ահա թե ինչպես է մեկնաբանում Վահրամ Փափազյանն իր մասնակցությունը Ստոկհոլմի օլիմպիական խաղերին. *«1912ին Ստոքհոլմի մէջ տեղի պիտի ունենային Միջազգային Ողիմպիական Մրցումները, որոնց մասնակցելու հրաւէրը ստացեր էր նաև Թուրքիա: Բայց թուրքերը մարզիկ չունէին որ ղրկէին, բայց հայերը ունէին, հայերը որոշեցին հայ մարզիկ ղրկել, ներկայացնելու հսկայ կայսրութիւնը եւ յաջողեցան, ու պատմութեան մէջ առաջին անգամը ըլլալով Թուրքիա կը մասնակցէր այս կարգի Միջազգային մրցումներու, իբրև ազգ, երկու հայերու շնորհիւ, ինչպէս յետոյ պիտի տեսնուի:*

Երկու հայ մարզիկները պատիւ բերին իրենց հայրենիքին, օգտակար եղան իրենց հայրենիքին. անդին՝ քանի մը տարիներ յետոյ, թուրք ըմբիշ մը, նոյն երկրին մէջ, թուրք ազգը անպատուեց, արտաքսուելով Շուէդի սահմաններէն դուրս, ժամացոյց գողցած ըլլալուն համար»:[5]

«Մարմնամարզն» իր հերթին Շ. Քրիսյանի հոդվածով ոգևորությամբ անդրադառնում է երկու հայազ-

[5] **Վահրամ Փափազյան** Սէր, Սէր, Սէր, Բեյրութ, 1962, էջ 45:

1500 մետր մրցավազքը տարբեր երկրներից մարզիկների մասնակցությամբ: Աջից երկրորդը Վահրամ Փափազյանն է

գի մարզիկների՝ միջազգային օլիմպիական խաղերին մասնակցելու փաստին՝ գրելով. *«Երբ թուրքերը իրենց բոլոր միջոցներով եւ ոչ մէկը կրնան իրր մրցորդ ուղարկել, դարձեալ Օսմանյան դրօշին պատիւը բարձր բռնելու պաշտօնը երկու Հայերու է որ կը վիճակուի, մենք ի հարկէ կ'ուրախանանք եւ մեծ յոյս ունինք թէ 1916-ին Պերլինի մէջ տեղի ունենալիք վեցերորդ Ողիմպիականին աւելի մեծ թվով Հայեր պիտի մասնակցին»* («Մարմնամարզ», Բ տարի, թիւ 12, յունիս 15, 1912):

Հաջորդ տարիներին ակտիվորեն քննարկվում էր հաջորդող միջազգային Օլիմպիական խաղերին հայ ներկայացուցիչներ ուղարկելու հարցը: 1916թ. հաջորդ օլիմպիական խաղերը պետք է տեղի ունենային Բեռլինում, սակայն վերահաս համաշխարհային պատերազմի պատճառով չեղյալ համարվեցին:

Շ. Քրիսյանը, այս հարցին անդրադառնալով, գրում է. *«...հոս թերևս աւելորդ չըլլայ ըսել թէ ես անձ-*

1912 թ. օլիմպիական խաղերի առիթով թողարկված հուշամեդալ, ՀՑԹԻ հավաքածու



ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԿԻՍԱՄՍԵԱՑ ՀԱՆԴԷՍ
ԵՒ
ՕՐԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՖԻԶԻՔԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

Բ. ՏԱՐԻ — ԹԻՒ 14 ԳԻՆ 40 ՓԱՐԱՅ 1912 ՅՈՒԼԻՍ 15

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՈՂԻՄԲԻԱԿԱՆԸ

Սթոքհոլմի մէջ, դեռ նոր վերջացան Միջազգային Ողիմբիական խաղերը: Ամէն ազգ ու ամէն երկրէ չորս նազարէ աւելի մարմնամարզիկներ նոն հաւաքուած էին, եւ կարծես պան մը մոռցնել կու տային ազգերու եւ դասակարգերու միջեւ տիրող սուր հակամարտութիւնը: Հոն ամէն տեսակ ոյժ ու ինթանինդրութիւն մոռցուած էր: Հոն կը տիրէր կատարեալ եղբայրութիւն եւ անխարդախ մրցակցութիւն:

Միջազգային այս ողիմբիականները կոչուած են խաղալու այն դերը, որ ժամանակին Հելլենական Ողիմբիականները կ'իրագործէին, սակայն աւելի լայն եւ աւելի բնդարձակ չափերով:

Ու անոնց Յունարտանի Ողիմբիականին եւ 1912ի հինգերորդ ողիմբիականին միջեւ անոգին տարբերութիւն մը կը տեսնենք: Մինչդեռ Յոյները միայն մարմնական կրթութեան նուիրուած էին, մերժելով ամէն մտային աշխատութիւն, արդի խաղամարտեան աշխարհը, մարմնական կրթութեան նեռ հաւասար տեղ կուտայ նաեւ մտաւոր կրթութեան: Մինչ մաոր ապացոյց չէ՞ բոլոր դպրոցներու եւ համալսարաններու մէջ մարմնական կրթութեան մուտքը:

«Մարմնամարզի» խմբագրականը՝ նվիրված Ստոկհոլմի օլիմպիական խաղերին

Մկրտիչ Մկրյանը Պոլսի «Ռոբերտ» քոլեջի բակում սկավառակի նետման վարժություն կատարելիս, 1911-1912թթ.: Լուսանկարը՝ «Մարմնամարզից»

Օլիմպիական խաղերի հուշամեդալ՝ սկավառակ նետողի պատկերով, 1912թ.



*
* *

Մ. ՄԿՐԵԱՆԻ ՑԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Պր. Մ. Մկրեանի տեղաթղթի մէջ որուն կը մասնակցէին 50 հոգի հինգերորդ եղած է (7000 կէտ չահած)։ Առաջին եղած է Ամերիկացի մը 8400 կէտով։

Թուրքական դրոշը Ստոկհոլմի օլիմպիական խաղերի մարզադաշտում

նապէս յարաբերութեան մէջ սկսած եմ մտնել Ֆրանսիայի, Ամերիկայի եւ Անգլիոյ մարմնամարզական միութեանց գործադիր անդամներէն շատերուն հետ. ցարդ միայն ֆրանսիական ընկերակցութեան համակրելի քարտուղարէն Պ. Տէզիրէ Մէէ ստացած եմ երկար նամակ մը՝ որուն մէջ իր բոլոր համակրութիւնը յայտնելով մեր սկսած գործին, կը խոստանայ բոլոր կարելի օժանդակութիւնները ընել ի նպաստ մեր շարժումին, այսպէսով ի յայտ բերելով Ֆրանսիայի պէս ազնուական երկրի մի արժանի մէկ զաւակը ըլլալը» («Մարմնամարզ», Բ տարի, թիւ 17, 1912 օգոստոս 31):

Շնորհիվ հայ մարզիկներ Վահրամ Փափազյանի ու Մկրտիչ Մկրյանի՝ միջազգային օլիմպիական խաղերում սկիզբ դրվեց հայազգի մարզիկների մասնակցությանը՝ միաժամանակ առանձին էջ բացելով նաև թուրքական սպորտի պատմության մեջ:

Օլիմպիական խաղերի առիթով թողարկված պատվոգիր, 1912թ.



Ամերիկացի մարմնամարզիկ Ռալֆ Ռոզը գնդի հրման վարժություն կատարելիս: Հետին պլանում Մկրտիչ Մկրյանն է՝ 128 համարի շապիկով



Սիմոն Բէհլիվանի պատմությունը

1880-ականներին Սվազից Պոլիս տեղափոխված հաղթանդամ հայ պանդուխտը, ով ծառայում էր Կլավանիի դրամատանը՝ որպես պահապան: Օրերից մի օր, Պոլիս այցելած Բանանի անունով նշանավոր հույն ըմբիշի հետ գոտեմարտի բռնվելով, կարողանում է հաղթել Եվրոպայում հռչակ վաստակած ըմբիշին: Երկրորդ գոտեմարտը, որը պետք է կայանար նույն վայրում հարյուրավոր հանդիսատեսների ներկայությամբ, արգելվում է իշխանությունների կողմից՝ «Յոյն եւ Հայ ազգաց մէջ գժտութեան որում չսերմանելու հեռատեսութեամբ»: Այնուհետև Սիմոնը հրավիրվում է սուլթանական պալատ՝ թուրք ըմբիշի հետ մրցելու համար: Սակայն նախօրոք Սիմոնին «կը խրատեն ու վարձատրեն զինք, որ իր Սամփսոնեան ոյժը չափաւորէ եւ յաղթուած ձեւանայ»: Սիմոն Բէհլիվանը ստիպված ենթարկվում է այդ հորդորներին եւ Սուլթանի կողմից պարգևների արժանանալով՝ վերադառնում է հայրենիք: (***Թէոդիկ.*** *Ամէնուն տարեցոյցը, 1915, Կ.Պոլիս, 1915, էջ 130-131)*:

Թուրք ըմբիշ Յուսուֆ Իսմայիլո, ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի հավաքածու

Գլուխ ութերորդ

ՍՊՈՐՏԸ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Օսմանյան կայսրությունում սպորտի և մարմնակրթության տարածմանն ու զարգացմանը զուգընթաց խորանում էր նաև թուրքական ազգայնականությունը կայսրության հասարակական գործունեության համարյա բոլոր ոլորտներում՝ հիմնական նպատակ ունենալով ազգային փոքրամասնությունների տնտեսական, մշակութային և կրթական առաջատար դիրքերի դեմ պայքարը և նրանց դուրսմղումն այդ ոլորտներից: Երիտթուրք ազգայնամոլ կառավարողների այս քաղաքականության հիմնական նպատակը թուրքական տարրի գերակայության ապահովումն էր Օսմանյան կայսրությունում:[1]

Այդ քաղաքականությունն իր արտահայտությունն ստացավ նաև սպորտի և մարմնակրթության ոլորտում: Նման մրցակցող ազգայնականության համատեքստում պետք է դիտարկել հայ և թուրք սպորտային և մարզական կյանքի զարգացման ընթացքում երևան եկած անհանդուրժողականության երևույթները, ինքնաքննադատությունն ու նույնիսկ մրցակցության ժամանակ տեղի ունեցած բախումները:

Երիտթուրքերի ազգայնամոլական քաղաքականության և դրա հետևանքով ազգայնամոլ տրամադրությունների սրացմանը համընթաց սպորտը և ֆիզիկական կրթությունը դիտվեցին որպես թուրքական ազգային ինքնության ձևավորման և ձևակերպման կարևոր ատաղձ և համախմբող միջոց:

Հատկանշական է, որ մարզական ակումբներն ու միությունները՝ որպես հասարակական կյանքի ինքնուրույն հաստատություններ, որոշակիորեն սահմանա-

Հայ ըմբիշ Սիմոն փեհլիվանի լուսանկարը Թէոդիկի «Ամէնուն տարեցոյցից»

[1] **James Bryce**. The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916. London, JOSEPH CAUSTON & SONS, 1916. P. 3.

փակելով պետության վերահսկողության մենաշնորհը, ստեղծում էին անհատներից ու խմբերից բաղկացած մարմիններ, որտեղ պետությունը պահանջների ու շահերի միանձնյա արտահայտողը չէր: Երիտթուրքերի պարագայում, սակայն, այդ վերահսկողության մեխանիզմը դրսևորվեց իթթիհատականների կողմից նոր ակումբների ստեղծման կամ արդեն իսկ գործող ակումբները գլխավորելով դրանց նկատմամբ վերահսկողություն հաստատելու տեսքով: Անկասկած, թուրքական գաղտնի ոստիկանությունն ուշիուշով հետևել է նաև հայկական, հունական և այլ ազգերի ներկայացուցիչների կողմից կազմված ակումբների գործունեությանը՝ դրանց գոյությունը դիտելով որպես լուրջ մարտահրավեր:

Թուրքական բանակում ծառայող հայ զինվորներ: Լուսանկարը «Ժամանակ» թերթից, 1913թ.

Օսմանյան բանակի զմյուռնիահայ սպաներ, 1914-1915թթ.

XX դարի սկզբին տեղի ունեցած պատերազմներում կրած պարտությունները և տարածքային կորուստները ծանր հոգեբանական ազդեցություն գործեցին օսմանյան մահմեդական մեծամասնության վրա՝ լուրջ քննարկման առարկա դարձնելով դրանց պատճառների ու հետևանքների վերացման համար գործուն քայլեր ու միջոցներ ձեռնարկելու հարցը: Այս համապատկերում մարմնակրթությունը և սպորտային կյանքի զարգացումը թուրքերի շրջանում դիտվեցին կարևոր ու որոշիչ միջոց՝ մրցակցող ու հաղթական «նոր թուրքի» կերպարը ձևավորելու համար:

Այս զարգացումների համատեքստում հստակորեն նշմարելի են երկու տարբեր՝ հայկական և թուրքական տեսլականները սպորտի և մարմնակրթության զարգացման ու սկաուտական շարժման տարածման միջոցով նոր սերունդ կրթելու և պետականության հզորացման գործին նպաստելու առումներով: Դրանք,

համարյա չհատվելով, զուգահեռ զարգացող շարժումներ էին, որոնք, գործելով ու հիմնավորվելով լիովին բևեռացած պայմաններում, այդ կերպ ուրվագծում էին այս ոլորտներում գոյություն ունեցող առանձին՝ հայկական և թուրքական օրակարգերի առկայությունը:

Պետք է նշել, որ 1908թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո հայկական մամուլում բավական հաճախ օգտագործվող «հայրենիք» կամ «ծառայություն հայրենիքին» եզրույթներն ուղղակի վերաբերում էին Օսմանյան կայսրությանը, սակայն ավելի ուշ «հայրենիք» հասկացությունը կրեց վերացական և անհասցե բնույթ՝ վերածվելով երևակայական ու չմասնավորեցված մի հասկացության:

1911թ. Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակներն իրավունք ստացան ծառայելու թուրքական բանակում, և հայազգի սպաների առաջին շրջանավարտներն արդեն իսկ իրենց մասնակցությունը բերեցին ու աչքի ընկան 1912-1913թթ. Բալկանյան պատերազմներում: Հայկական մարզական շրջաններին ևս խորթ չէր այն մոտեցումը, որ սպորտի և մարմնամարզության միջոցով առողջ քաղաքացիներ պատրաստելու ձգտումը չպետք է ինքնանպատակ լինի, այլ նպաստի նրան հետագա զինվորական ծառայությանը նախապատրաստելուն: Այս առումով «Մարմնամարզ» հանդեսի խմբագիր Շավարշ Քրիսյանը պարբերականի երկրորդ համարում գրում է. *«...Վարժարաններու մէջ պէտք է պարտաւորիչ դարձնել մարմնամարզի և զինուորական տարրական շարժուձևերուն վարժութիւնները: Զինուորութեան ատեն նորակոչ զինուորի մը ամէնէն աւելի նեղութիւն պատճառող խնդիրը կար-*

Շավարշ Քրիսյանի խմբագրականը «Մարմնամարզ» թերթում, 1911թ.

Հայ մարմնամարզիկ Տատ Տատյանը: Լուսանկարը «Մարմնամարզից», 1912թ.

Հայ մարմնամարզիկ Հովհաննես Սինանյանը Ամասիա քաղաքից: Լուսանկարը «Մարմնամարզից», 1912թ.

գապահութեան ոգին է, միւս մեքենական շարժումները շատ դիւրութեամբ կ'ընմբռնուին:

Վարժարաններուն մէջ պէտք է դպրոցական գումարտակներ (bataillions scolaires) կազմակերպել, ու այսպէս պատրաստել ապագայ զինուորցուներ՝ որոնք ժպտերեն պիտի պատասխանեն զօրակոչին, և որոնք անուղղակի կերպով պատճառ պիտի ըլլան զինուորական ծառայութեան տևողութեան նուազման» («Մարմնամարզ», Ա տարի, թիւ 2, մարտ, 1911):

Թուրք մարզիկների ու սկաուտների խմբակային լուսանկար «Իդման» թերթի կազմին, 1913թ.

Օսմանյան բանակի սպաներ և շվեդական մարզանքի ուսուցիչներ: Ձախից երկրորդը Սելիմ Սըրրը Թարջանն է, իսկ կենտրոնում կանգնածը՝ Շ. Քրիսյանը: Լուսանկարը «Մարմնամարզից», 1912թ.



Անգլիայում ուսումնառություն ստացած հայ մարզիկ Սերովբե Արևյանը: Լուսանկարը «Մարմնամարզից», 1912թ.

Հայ մարմնամարզիկ Երվանդ Տերունյանը: Լուսանկարը «Մարմնամարզից», 1912թ.

Մեկ այլ տեղ, անդրադառնալով սկաուտական երդմանը, Շ. Քրիսյանը գրում է. *«Մեր երդումը շատ կարճ պիտի ըլլայ, այդ երդումը կպարտադրէ՝ պատուոյ վրայ երդնուլ ազգին ու հայրենիքին որևէ կերպով օգտակար ըլլալու, ես այժմ այս երդումը գիտակցօրէն կ՚ընեմ, այս երդումիս տակ կը ստորագրեմ...»*:[2]

Որպես այս գործընթացի շարունակություն՝ օսմանյան կառավարությունը ֆիզիկական դաստիարակության դասընթացները դարձրեց պարտադիր բոլոր թուրքական վարժարաններում: Ավելին՝ պատերազմից առաջ երիտթուրքական կառավարությունը Լոնդոնից հատուկ մասնագետներ հրավիրեց՝ սկաուտական շարժումը մահմեդական վարժարաններում տարածելու համար՝ մինչ այդ պատվիրակներ ուղարկելով արտասահման՝ տեղում այդ շարժման բուն էությանն ու նպատակներին ծանոթանալու համար: Կարևորելով սկա-

[2] «Մարմնամարզ», Գ տարի, թիւ 1, յունուար, 1913:

ուտական շարժումը ապագա զինվորներ և սպաներ պատրաստելու գործում՝ Էնվեր փաշան դարձավ թուրք բոյսկաուտական կազմակերպության ղեկավարը:

Երիտթուրքերի ջանքերով ստեղծված առաջին զուտ թուրքական սպորտային կազմակերպությունները կիսառազմականացված կառույցներ էին, որոնց հիմնականում անդամակցում էին Բալկանյան և թուրք-իտալական պատերազմներին մասնակցած զինվորականները: Այդպիսի կազմակերպություններից էր «Թուրքական ուժի միությունը» (Türk Gücü Cemiyeti), որը ստեղծվեց 1913թ. ամռանը, և որը նպատակ ուներ զարգացնելու ֆիզիկական կրթությունը և սպորտային մարզաձևերը թուրք երիտասարդության շրջանում: Այս կազմակերպության մասնաճյուղերը բացվեցին ոչ միայն Ստամբուլում, այլև կայսրության մյուս քաղաքներում: Դրանց գործունեությունը հիմնականում նպատակաուղղված էր *«բարելավելու թուրքերի առողջական վիճակը, թարմացնելու նրանց ֆիզիկական զորությունը և աճեցնելու ակտիվ սերունդներ, ովքեր դիմացկուն կլինեն դժվար ժամանակների համար»*:[3]

Առաջին աշխարհամարտի նախօրյակին երիտթուրք ազգայնականներ Զիա Գյոքալփի և ռազմական նախարար Էնվեր փաշայի ջանքերով ստեղծվեց մեկ այլ մարմնամարզական կազմակերպություն՝ «Օսմանական ուժի ընկերակցությունը» (Osmanlı Güç Dernekleri), որը գրեթե նույն նպատակներն էր հետապնդում, ինչ նախորդը: Մարմնակրթության և սպորտի զարգացումն առավել արդյունավետ դարձնելու համար ռազմական նախարար Էնվեր փաշան Գերմանիայից մասնագետներ հրավիրեց Պոլիս՝ սպորտային և մարմնակրթու-

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԿԻՍԱՄՍԵԱՑ ՀԱՆԴԷՍ

ԲՆ

ՕՐՆԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԶԻՇՏԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԱՆ

Բ. ՏԱՐԻ — ԹԻՒ 2 ԳԻՆ 40 ՓԱՐԱՅ 1912 ՅՈՒՆՎԱՐ 15

ԻՍՊԱՀԻՄ ՄԱՀՄԱՍԻՏ ԵՈՒՍՈՒՖ ԻՍՄԱԵՕԻԼՕ

Մրցման պարագաները կարդալ սոյն թիւին մէջ

«Մարմնամարզ» հանդեսի 1912թ. հունվարյան համարներից մեկի կազմը՝ թուրք ըմբիշների պատկերներով

[2] **Cüneyd Okay**. Sport and Nation-Building: Gymnastics and Sport in the Ottoman State and the Committee of Union and Progress, 1908-18, "The International Journal of the History of Sport", Vol. 20, No. 1¦ (March 2003). P. 153.

Էնվեր փաշա, թուրք սկաուտների սկաուտապետ: Լուսանկարը «Իդման» թերթից, 1913թ.

Թուրքական «Ալթայ» ակումբի զինանշանով կրծքանշան

[4] **Cüneyd Okay**. Sport and Nation-Building. P. 154.

[5] **Cüneyd Okay** Sport and Nation-Building. P. 154.

թյան ոլորտում աշխատանքներ տանելու համար: Այդպիսի հրավիրված մասնագետներից էր ֆոն Հոֆֆը, ով 1916թ. ապրիլին ստեղծեց «Երիտասարդական ընկերակցություններ» կազմակերպությունը, որի փոխնախագահը, ի դեպ, դարձավ Սելիմ Սըրրը Թարջանը:[4]

Այս ընկերակցությունը գործում էր երկու առանձին կազմակերպությունների միջոցով, որոնցում ընդգրկված էին տարիքային տարբեր խմբերի երիտասարդներ. «Ուժեղների ընկերակցության» (Gürbüz Derneği) մեջ՝ 12-ից 17 տարեկան պատանիները և «Առողջների ընկերակցության» (Dinç Derneği) մեջ՝ 17-ից բարձր երիտասարդները: Այս կազմակերպությունները կոչված էին թուրք երիտասարդներին, մինչև նրանց զինվորական ծառայությունը, տալ անհրաժեշտ գիտելիքներ մարմնակրթական ունակությունների վերաբերյալ: «Երիտասարդական ընկերակցությունների» ցանցը շատ արագ տարածվեց կայսրության տարածքով մեկ՝ կարճ ժամանակում ստեղծելով 706 մասնաճյուղ, որից 351-ը՝ քաղաքներում, իսկ 355-ը՝ նահանգներում: Երիտթուրքական կուսակցության առաջնորդներն իրենց ակտիվ մասնակցությունն էին բերում թուրքական մարզական ակումբների կազմակերպման գործում՝ աջակցություն ցուցաբերելով դրանց գործունեությանն ու թուրք մարզիկների մասնակցությանը տարբեր միջազգային ու տեղական մրցումներին ու առաջնություններին: Ի դեպ, Էնվեր փաշան անձամբ հանդես էր գալիս քարոզչի դերում՝ երիտասարդական այս կազմակերպությունների անդամներին «Միություն և առաջադիմություն» կուսակցությանն անդամակցելու կոչերով:[5]

Սպորտը, մարմնակրթությունն ու սկաուտական

շարժման գաղափարախոսության ներմուծումը և հարմարեցումը օսմանյան իրականությանը երիտթուրքերի կողմից գործի դրվեցին՝ այլազգիներից զատվելու և թուրք ազգի ինքնության ձևակերպման ու հավաքականության ամրապնդման համար: Այս հանգամանքը շատ կարևոր մի դրվագ է հետագա մի քանի տարիների ընթացքում քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ ցեղասպանության քաղաքականության մշակման և իրագործման համար, քանի որ բուն ցեղասպանական գործընթացը ենթադրում է նաև թիրախ խմբի առանձնացում և օտարում՝ որպես կարևոր պայման հետագա գործողությունների կիրառման համար:

Հայկական և թուրքական ակումբների և թիմերի անունները ևս ցուցիչ են ազգայնական տրամադրությունների զարթոնքի առումով և ակնհայտորեն ազդարարեցին անցյալի հերոսների և «պատմության մուտքը» սպորտի ասպարեզ: Այսպես, հայկական ֆուտբոլային թիմերը և ակումբները կրում էին հայ թագավորների կամ հին հայկական դիցարանի աստվածների անունները: Պակաս կարևոր չէր նաև աշխարհագրական անունների կիրառումը, որը ժամանակի ընթացքում սրանալու էր մրցակցության պայմաններում՝ լրացուցիչ խթան հանդիսանալով «մենք»-ի ու «նրանք»-ի հակադրությանը:

Սկաուտական շարժման՝ որպես մարմնակրթական և սպորտային կյանքի բաղկացուցչի, ի հայտ գալը տարբեր ընկալումներ և մեկնաբանություններ առաջացրեց հայկական և թուրքական իրականության մեջ: Թուրքական դիսկուրսին բնորոշ էր այս շարժումը դիտել որպես ռազմականացված մի ինստիտուտ, որի նպատակն ապագայի զինվորներ պատրաստելն

Շավարշ Քրիսյան: Լուսանկարը «Հայ սկաուտ» թերթից, 1920թ.

է՝ նվաստացած հայրենիքի համար նոր հերոսներ ծնելու և հաղթանակներ ապահովելու համար: Ի հակադրություն դրա՝ հայկական մոտեցմանը բնորոշ էր այս շարժումը դիտել որպես առողջ սերունդ դաստիարակելու և հայրենիքի համար արժանապատիվ քաղաքացի կրթելուն նպաստող միջոց:

Հայրենասիրական, քաղաքացիական և ռազմականացված մոտեցումների համակցությունն առավել

Թալեաթ փաշայի լուսանկարը «Իդման» թերթում, 1914թ.: Լուսանկարի բացատրագրում Թալեաթը ներկայացված է որպես սկաուտական կազմակերպությունների պատվավոր նախագահ

բնորոշ էր Առաջին աշխարհամարտի նախօրեին եվրոպական երկրներում տարածում ստացած այս շարժմանը: Ռազմականացված հասարակության ստեղծման գործում մարմնակրթությունն ու սպորտը կոչված էին ապահովելու վրեժի, անձնազոհության և նոր հերոսականության պատմության կերտումը:

Թուրքական «Իդման» մարզական պարբերաթերթի առաջին համարում դրա արտոնատեր Ձամի բեյը նման թերթ տպելու նպատակին անդրադառնալիս ուղղակիորեն նշում է. «*... աջակցել երիտասարդությանը, ովքեր հեփաքրքրված են ֆիզիկական կրթությամբ... որը կարևոր նպատակ է մեր երկիրը փրկելու համար*»:[6] Մեկ այլ թուրք հեղինակ՝ Բուրհանեդդին բեյն իր «Թույլ ցեղը» վերնագրով հոդվածում, դատափետելով թուրք օսմանցիներին՝ որպես լավագույն օրինակ թույլ ցեղի, գրում է. «*Թույլ ցեղ, թույլ մարմին*

Թուրք մարզիկների ու սկաուտների լուսանկարներ երիտթուրքական կուսակցության անդամների հետ, մասնավոր հավաքածուներ

և որպես հետևանք թույլ հասկացողության, մտավոր ուժի պակաս, անբարոյականություն, կամքի բացակայություն և այլն...»:[7]

Մեկ այլ հեղինակ «Իդման» թերթի «Միայն ֆուտբոլը» հոդվածում քննադատելով թուրք մարզիկներին Պոլսում կայացած մարզական մրցումներում անհաջող ելույթի համար, որտեղ զիջել էին հայերին, գրում է. *«Ավելին քան հիասթափեցուցիչ է, որ վազքի մրցույթում առաջինը եղավ հայը, երկրորդը՝ հույնը, երրորդը՝ սերբը և միայն չորրորդը եղավ թուրքը»*: Նույն հոդվածում, մեկնաբանելով հեծանվավազքի մրցույթը, որին մասնակցել էր միայն մեկ թուրք մարզիկ, և հաղթել էր ազգությամբ հայ հեծանվորդը, հոդվածագիրը շարունակում է. *«Եվ հետևանքը եղավ այն, որ մրցույթում հաղթեց հայ երիտասարդը, ով հետագայում ավելին արեց. նա իր լուսանկարը «Թուրքիայի հեծանվավազքի չեմպիոն» վերնագրով տպագրեց Ֆրանսիայի ամենահեղինակավոր սպորտային պարբերականում: Եվ նա դրա իրավունքը ուներ անելու»*:[8]

Այլազգիների առկայությունը մեծ մասամբ թուրքերից բաղկացած թիմերում ժամանակի թուրքական սպորտի տեսաբանների կարծիքով բացառում էր իսկական ազգային դեմք ունեցող թիմ ձևավորելու համար: Այդ պատճառով քննադատության թիրախ էին դարձել «Ֆեներբահչեն» և «Գալաթասարայ»-ը՝ «ազգային նպատակ չունենալու» և իրենց կազմ այլազգիներ ընդգրկելու համար: Բուրհանեդդին բեյը, անդրադառնալով այս հարցին, գրում է. *«..այլազգիների մասնակցությունը կարող է կործանարար լինել, քանի որ նման թիմը չի կարող կոչվել իր ամբողջությամբ որպես թուրքական թիմ: Եթե անհրաժեշտ է ստեղծել թուրքերից բաղկացած թիմ Թուրքիան ներկայացնելու համար, ապա գերմանացիներն ու մյուս ազգերի ներկայացուցիչները չպետք է մասնակցեն այդ խաղերին»*:[9]

Թուրք սկաուտների լուսանկարներ՝ գերմանական մամուլից, 1915-1916թթ., ՀՑԹԻ հավաքածու

Մեկ այլ հետաքրքիր դրվագ էր այս հրապարակումից մեկ տարի առաջ՝ 1912թ. ամռանը, Ստոկհոլմի

[6] **Yasar Tolga Cora.** Constructing and Mobilizing the "Nation" through Sports: State, Physical Education and Nationalism under the Young Turk Rule (1908-1918), Central European University,, Budapest, 2007. P. 36:

[7] **Նույն տեղում**, էջ 36-37:

[8] **Նույն տեղում**, էջ 41-42:

[9] **Նույն տեղում,** էջ 41:

Թուրք պատանիներ՝ սկաուտական և զինվորական համազգեստով: Լուսանկարը՝ ամերիկյան մամուլից

միջազգային օլիմպիական խաղերին հայերի մասնակցությունը, որն առանձնահատուկ արձագանք ունեցավ հատկապես մարզիկների ազգային պատկանելության առումով: Այս ուղղությամբ թուրք մարզիկ Սելիմ Սըրրը Թարջանի ջանքերն ազգությամբ թուրք մարզիկ Ստոկհոլմ ուղարկելու ուղղությամբ տապալվեցին: Թարջանը մարզական մրցակցությունը տեսնում էր նաև որպես ռազմական մրցակցության ասպարեզ, որտեղ մասնակից երկրները սպորտային հաջողություններով պետք է ի ցույց դնեին իրենց առավելությունները մրցակիցների նկատմամբ: Իր հրատարակած մարզական հանդեսում, ներկայացնելով տարբեր պետությունների ու ազգեր ներկայացնող մարզիկների հանդիսավոր երթը և նրանց ազգային դրոշների առկայությունը մարզադաշտում, նա անթաքույց նախանձով գրում է. *«...Քսանը վեց զանազան ազգերու ամենէն ընտրեալ զաւակները հոն էին, միայն մենէ հեւրք չկար: Ցաւէս աչքերս լեցուեցան: Ժամանակին «Թուրքերուն պէս քաջ» խօսքը Եւրոպացիներուն առածի տեղ ընդունել տուած խոշոր Օսմանեան կայսրութիւնը, այսօր ուժի անունով եղած մրցումի մը մէջ իր գոյութեան հեւրքը անգամ չուներ: Ինչ ցաւալի անկում. մենք տարիներէ ի վեր ամէն բան կառավարութենեն սպասելու վարժուած ըլլալով, այս խոշոր հաստատութեան քանի մը Թուրք մարմնամարզիկներ տանելու համար բնականաբար կառավարութեան դիմեցի, սակայն վիշտս մէկուն հասկցնել կարելի չեղաւ. իսկ ամենէն ցաւալին պատերազմական նախարարութեան պատասխանն էր: Թէ՛ մասնաւոր եւ թե՛ պաշտօնական դիմումիս իբր պատասխան, պատերազմական նախարարութեան խորհրդական Ֆուատ Փաշա ըսաւ. «Զինուորական տեսակէտէն կարևորութենէ զուրկ ըլլալով, ոստիկան ղրկելու պէտք չկայ»: Մարդ այս պատասխանին առջև ինչպէս չի յուսահատի: Սակայն, Ողիմբիական Խաղերուն ամենէն առաջին կարևորութիւնը զինուորականութեան տեսակէտէն էր, եւ ասիկա հասկցնելու համար՝ Գերմանիա մէկ զօրաւոր եւ վեց ոստիկան, Ֆրանսա մէկ հազարապէտ եւ հինգ ոստիկան, Ռուսիա մէկ զօրավար եւ երեսուն ոստիկան, Իտալիա, Տանիմարգա, Պէլճիգա, Յունաստան, Մերսիա զանազան աստիճաններով շատ մը ոստիկաններ ղրկած ըլլալնին ըսել կը բաւէ: Ապագայ պատերազմները պարզապէս սբօրի մրցումէ մը տարբեր բան մը չըլլալը ենթադրող ազգերուն համար Ողիմբիական խաղերու էութիւնը հասկնալ դժուար չէ»:* («Մարմնամարզ», Բ տարի, թիւ 18, սեպտեմբեր 15, 1912):

Հայկական կողմի պատասխանը չուշացավ, և այս տողերին «Մարմնամարզում» պատասխանեց հանդեսի խմբագիր Շավարշ Քրիսյանը: Նրա «Մեր պատասխանը» վերնագրով հոդվածը, փաստորեն,

սպորտային թեմայի շուրջ ազգայնական մրցակցության բանավեճ ծնեց, որն, անկասկած, չէր կարող անհետևանք մնալ և որոշակիորեն նպաստեց երկու կողմերի միջև հարաբերությունների խզմանը և բևեռացմանը: Այսպիսով, մարմնամարզության և սպորտային մրցակցության օրինակով ակնհայտ է դառնում Օսմանյան կայսրությունում թուրքական ազգայնամոլության սրացումը, հատկապես կայսրությունը միջազգային առաջնություններում ներկայացնող մարզիկների էթնիկ պատկանելության և նրանց ունեցած հաջողությունների հարցի շուրջ:

Կայսրության տարբեր հատվածներում կազմակերպված սպորտային կյանքի զարգացումն ու մրցույթների անցկացումը որոշակիորեն նպաստեցին հասարակության ներսում որոշակի բևեռացմանը՝ դառնալով քաղաքական նշանակություն ունեցող խնդիրներ, թեև կային նաև բացառություններ, երբ հայ մարզիչը հրավիրվում էր թուրքական վարժարաններում մարմնամարզի դասընթաց կազմակերպելու համար, կամ թուրք կառավարիչները ներկա էին լինում հայ աշակերտների և մարզիկների դաշտահանդեսներին:

Հայկական կողմից սպորտային մրցակցության շուրջ բանավեճը ևս կրում էր ազգայնական բնույթ, մասնավորապես թուրքական, հունական և մյուս համանման ակումբների նկատմամբ հայ մարզիկների ու ակումբների հաղթանակը, դրանք ներկայացնելով որպես բնական՝ վեր դասելով հայ մարզիկների ու նրանց ռեկորդների նշանակությունը:

Այսպես, Զմյուռնիայում կայացած ֆուտբոլային մրցումներում «Հայ որսորդաց ակումբի» ֆուտբոլա-

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Շավարշ Քրիսյանի պատասխան հոդվածը Սելիմ Սըրրը Թարջանի հրապարակումին, «Մարմնամարզ», 1912թ.



Նշանավոր հույն մարզիկ Մորիս Տերիազը: Լուսանկարը «Մարմնամարզ» թերթից, 1912թ.

յին թիմը հաղթում է հունական «Պելոպս» թիմին, ինչը հայկական կողմից մեկնաբանվում է հետևյալ կերպ. *«...Մենք այսօր մեր շնորհաւորութիւնները կուղղենք Իզմիրի հայութեան, և մանաւանդ կը մաղթենք որ ամէն տեղ ուր որ հայեր կը գտնուին, անպակաս ըլլան նաև օժանդակողներ ու մենք հիմակուց վստահ ենք թէ Հայ ցեղին ողնաշարը եղող երիտասարդութիւնը, ինչպէս ուրիշ ամէն բանի մէջ, սրօրդական մրցումներու մէջ ալ յաղթանակը պիտի խլէ ու այդ օրէն պիտի սկսի հայութեան համար տարբեր ապրելակերպ մը, տարբեր կացութիւն մը, տարբեր վերաբերմունք մը օտարներէ, եւ հարկ կայ աւելցնելու, նաև տարբեր ապագայ մը»* («Մարմնամարզ», Բ տարի, թիւ 7, ապրիլ 1, 1912):

1912թ. սեպտեմբերի 2-ին Գատրգյուղի «Յունիոն» ակումբի դաշտում տեղի ունեցան «Ֆեներբահչե» ակումբի կողմից կազմակերպված միջազգային մրցումներ՝ հայկական, թուրքական և հունական ակումբների ու մարզիկների մասնակցությամբ: Այս մրցումներին ներկա էին մայրաքաղաքի թուրքական հասարակության տարբեր խավերը և հատկապես զինվորականությունը, որոնք, օգտվելով Բայրամի տոներից, *«...փոթացած էին գալ եւ քաջալերել հանդես մը՝ որուն մէջ այնպէս կը կարծուէր որ թուրք մարզիկները առաջին պիտի ելնէին, ի յայտ բերելով իրենց չորս տարուան աշխատութեան պտուղը»*: Այնուհետև «Մարմնամարզն» ավելացնում է. *«...Թուրք մարզիկներուն վրայ դրուած ակնկալութիւնները ի դերև ելան, որովհետեւ գրեթէ բոլոր մրցումներուն մէջ ալ Հայերը առաջնութիւնը խլեցին ներկաներուն՝ բայց մանաւանդ ներկայ Հայերուն բուռն ծափահարութեանց մէջ...*

Ինչպէս արդէն արդիւնքներէն կը տեսնուի, Հայե-

որը գերազանցապէս առաջին հանդիսացած են. իրաւ է թէ իրենց ռէքորները բաղդատմամբ Հայ Ողիմբիական Խաղերու ռէքորներուն, այնքան լաւ չեն, բայց շատ ցայտուն կերպով ցոյց կուտան թէ Թուրքերը որքա՞ն եր են մարզական խաղերուն մէջ: Անոնք պէտք ունին աշխատելու գոնէ իրենց սարքած հանդէսներուն մէջ լաւ դիրք մը գրաւելու համար» («Մարմնամարզ», Բ տարի, թիւ 18, սեպտեմբեր 15, 1912):

Մեկ այլ հետաքրքիր դրվագ է նկարագրված «Մարմնամարզի» էջերում, թե ինչպիսի արձագանք են ստանում հայերի հաղթանակները թուրք մարզասերների շրջանում և առավել ուշագրավ է դիտարկել այս առանձին դրվագը օսմանականության գաղափարախոսության շուրջ գոյություն ունեցող տարակարծությունների համատեքստում: Միցույթներում հայ մարզիկների հաղթանակներին թուրք երկրպագուների արձագանքը ներկայացնում է «Մարմնամարզը». *«Երբ հոն գտնուող հանդիսատես Հայերը իրենց ազգակիցները սկսած են բռուն ծափերով ողջունել, Թուրքերը վշտացած երևոյթ մը առնելով, առարկած են թէ ինչո՞ւ այդ խտրութիւնը, չէ՞ մի որ ամենքն ալ Օսմանցիներ են, եւ այլն: Շատ բանաւոր առարկութիւն մը, որ միայն մեզի խորհիլ կուտայ թէ ինչո՞ւ սակայն Հայուն առաւելութիւններէն օգտուելու համար անոր Օսմանցիական յատկութիւնները, իրաւունքները նկատի կ'առնուին, իսկ ջարդերու, կողոպուտներու ատեն իբր Հայ եւ ոչ թէ իբր Օսմանցի կը նկատուին. մենք ալ այդ ինչո՞ւն կ'ուզենք իրենց»* («Մարմնամարզ», Բ տարի, թիւ 18, սեպտեմբեր 15, 1912):

«Մարմնամարզը» քննադատաբար է տրամադրված նաև հայկական կողմի հանդեպ՝ հատկապես դա-

Թուրք սկաուտների խմբակային լուսանկար «Իդման» թերթից, 1914թ.



Հայ մարմնամարզիկ Գրիգոր Հակոբյանը: Լուսանկարը «Մարմնամարզ» թերթից

տապարտելով հատվածային, անջատողական հակումները մեկ միասնական հայկական մարմնակրթական կազմակերպություն ստեղծելու հարցում: Ահավասիկ Շավարշ Քրիսյանն այս առիթով իր «Մարզական եղբայրակցություն» հոդվածում գրում է. *«...Եւ ֆիզիքական մարզանքները, որոնք անպարակոյս թէ շատ բարձր իտէալներու կարող են առաջնորդել հայ երիտասարդութիւնը եւ անոր միջոցաւ հայ ցեղը, չպիտի կարողանան գնդերներու պարզ շարժումներէ, մկանային կծկումներէ զատ որևէ փրկարար, ստեղծագործ դեր կատարել հայ կեանքի ներկայ եւ ապագայ իրականութեան մէջ, եթէ այդ վերածնունդը յառաջ բերելու կոչումը, պարտականութիւնը ունեցող երիտասարդ սերունդը չէ կրցած եղբայրակցիլ, համերաշխիլ, գործակցիլ:*

Հայոցս մէջ անհատապաշտութիւնը իր ծայրագոյն աստիճանին հասած է, իսկ հաւաքականութեան զգացումը գրեթէ բնաւ գոյութիւն չունի. տարակոյս չի կայ թէ անցեալին մէջ միջավայրի աննպաստ պայմանները, դաստիարակութիւնը այնպէս են տնօրիներ որ այսօր զիրար աւելի հաճոյքով ատենք, քան թէ սիրենք:

...Եւ եղբայրակցութիւնը այժմ մեզի համար պարտականութիւն մ'է. եթէ կոյր չենք ու կ'ուզենք տեսնել, առանց արհամարհանքի, առանց չար նախանձի, պարտաւոր ենք նկատի ունենալ մարզական այն շարժումը՝ որ ծայր տուած է Յունաց մէջ, Հրէից մէջ, Թուրքերուն մէջ, առաջին անգամ մենք՝ Հայերս էինք որ սբօրի, ֆութպոլի նման արևմտեան գաղափար մը Թուրքիա ներմուծեցինք, բայց ազգային մարմինները չի կարողացան անոր շուրջ բոլորուիլ եւ անով զօրանալ, մեր գործունէութիւնը մնաց շատ սահմանափակ» («Մարմնամարզ», Դ տարի, թիւ 1, մայիս, 1914):

Հայ մարմնամարզական շրջանակների հիմնական մտահոգությունը դարձել էր հայ երիտասարդներին մեկ դրոշի տակ համախմբելու գաղափարը. *«... որպէսզի հնարաւոր ըլլայ պատրաստելու ապագա հայը»*: Այս առումով թե՛ մարմնամարզական շարժումը և թե՛ սկաուտականը տարբեր նպատակներ չունեին և նպատակաուղղված էին *«հայ ցեղին բարոյական եւ ֆիզիքական ազնուացման»* փոխլրացնող աշխատանք տանել:

Սկաուտական կազմակերպությունների ձևավորումը Պոլսի և գավառի հայ երիտասարդության շրջանում էլ ավելի սաստկացրին հակասությունները՝ երիտթուրքերի մեջ ծնելով որոշակի կասկածամտություն: Սկաուտական ջոկատների կիսառազմական բնույթը և հայկական խմբերի հաճախակի դարձած բանակումներն ու արշավ-

ները պետք է որ անհանգստացնեին երիտթուրքական իշխանություններին, որոնց համար նման համարձակ ելույթները թուրքական ազգայնականության խորացման պարագայում անհանդուրժելի էին:

Ստեղծելով թուրքական նոր ակումբներ՝ երիտթուրք կառավարիչները միաժամանակ հատուկ հրամաններով փակում էին հայկական մարզական ակումբները: Դրա առիթը հանդիսացավ Առաջին աշխարհամարտի սկիզբը: Ներքին գործերի նախարարությունը, անդրադառնալով Կաղըքյոյում գործող հայկական սկաուտական խմբի գործունեությանը, «որի անդամները կրում էին հայերեն գրություններով գլխարկներ և դրոշներ», 1914թ. հունիսի 29-ին դիմում է ռազմական նախարարությանը՝ խնդրելով արգելել ակումբի գործունեությունը և օսմանյան հասարակության տարրերի կողմից «հատուկ» նպատակներով իրականացված ամեն մի նախապատրաստություն: Այս դիմումը հիմնավորում էր նրանով, որ հենց ռազմական նախարարությունն է պատասխանատու պայքարելու «հայրենիքը պաշտպանելու դեմ իրագործվող բոլոր վտանգավոր փորձերի դեմ»:[10]

Այս ընթացքում հայկական «Արտավազդ» մարմնամարզական ակումբի դեմ դատավարություն սկսվեց այն մեղադրանքով, որ ակումբում հավաքագրվում են միայն հայազգի մարզիկները: Զգուշության համար ակումբն ազգությամբ թուրք անդամներ ընդունեց իր կազմի մեջ:[11]

Երիտթուրքերը հատուկ ուշադրություն էին դարձնում թուրքական մարմնամարզական ակումբների ստեղծմանը, իսկ որոշ դեպքերում անմիջապես ղեկավարում էին դրանք: 1913թ. վերջին Զմյուռնիա ժամանած երիտթուրքական կուսակցության պատասխանատու



ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐ

1913, Մայիս 4 ին (ը. ն.) Դաշրգիւղի մէջ տեղի պիտի ունենան մարզական միջազգային խաղեր:

Առիթը ահա կը ներկայանայ օտարներուն ցոյց տալու Հայ դնդերին ուժը եւ Հայ նիզին մեծութիւնը. յանուն հանուր Հայութիւնն, որ գեղեցիկ իտեալներու սիրոյն համար չի վախցաւ իր արիւնը ու արցունքը իրար խառնելու, կորովի կոչ մը կ'ուղղենք Պոլիս գտնուող Հայ մարզիկներուն, մասնակցիլ եւ հրճուեցնել այն ազգը, որ այնքան լացաւ եւ որ նիստ իրաւունք ունի իր զաւակներուն եղած պատիւները իրը նկատելու ու անոնցմով պանծալու:

Հայ ազգը Մայիս 4 ին, յանձին իր մարզիկ զաւակներուն, կրկին պիտի ուզէ պայքարի դաշտը իջնել ու ցոյց տալ թէ ինքն չի վախնար պայքարէ, այլ պայքարն իսկ կը կազմէ իր ուժը, որ անյաղթելի է ինչպէս գաղափարը:

Հայ մարզիկին համար Մայիս 4 (ը. ն.) պէտք է նշանակէ յաղթանակ:

Ուրեմն, փութացէք մեր մօտ արձանագրուիլ ու շարունակեցէք կատարել ձեր մկանները եւ նոգիները պրկումները, որոնք այնքան անհրաժեշտ են յաղթանակ մը խլելու համար: Յառա՛ջ ուրեմն:

«Մարմնամարզի» կոչը հայ մարզիկներին՝ Պոլսում կայանալիք միջազգային մրցախաղերին մասնակցելու համար, 1913թ.

քարտուղար Զելալ Բայարը միջոցներ տրամադրեց՝ տեղի թուրք երիտասարդության մասնակցությամբ մարմնակրթական ակումբ ստեղծելու համար: 1914թ. հունվարի 16-ին հիմնադրվեց «Ալթայ» ակումբը, իսկ ակումբի անդամները համալրեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցության շարքերը: Ակումբի ստեղծման նախաձեռնողները հիմնական նպատակ էին հռչակել «գյավուր Իզմիրում», ինչպես թուրքերն էին հորջորջում Զմյուռնիան, «պայքարել հույների և մյուս փոքրամասնությունների առաջնության դեմ»:[12] Պատահական չէր նաև, որ երիտթուրք ծայրահեղ ազգայնական գործիչներից դոկտոր Նազըմ բեյը, ով հայերի ցեղասպանության հիմնական կազմակերպիչներից մեկն էր, 1916թ. ղեկավարեց «Ֆեներբահչե» մարզական ակումբը:

Կասկած, չկա հայկական և հունական ակումբների

[10] **Yasar Tolga Cora.** նշվ. աշխ., էջ 79:

[11] **Վահրամ Փափազյան,** նշվ. աշխ., էջ 26:

[12] Տե՛ս, http://www.altay.org.tr/sabit.asp?!=16

Թուրք սկաուտները բուրգեր կազմելիս, 1913-1915թթ. մասնավոր հավաքածու

հաջողությունները, մեղմ ասած, տհաճ պահեր են առաջացրել շովինիզմի և ազգայնամոլության մոլուցքով տարված երիտթուրք պարագլուխների մոտ: Նախանձի գործոնի մասին է ակնարկում նաև Շ. Քրիսյանը, երբ գրում է. *«... ուզեցինք մէկ թափով ընթանալ եւ Թուրքիոյ յառաջադէմ ազգը ըլլայ. սխալեցանք ու չարաչար տուժեցինք, վկայ՝ Ապրանան, որ մեր կուրծքին վրայ գիտակցօրէն բացուած վերք մ'է մեզի յիշեցնելու համար թէ մեր յառաջադիմութեանը նախանձողներ կան...»*:[13]

Ռազմական նախարար Էնվեր փաշան, գլխավորելով թուրքական սկաուտական կազմակերպությունները, որոնք շատ արագ ռազմականացված կառույցի տեսք էին ստանում, Առաջին աշխարհամարտի բռնկումից մի քանի շաբաթ առաջ հանդես եկավ զինվորական ու պարտադիր մարմնամարզության վերաբերյալ կոչով, որտեղ մասնավորապես նշում էր. *«...Մեր պարտքն է ժամանակին պէտքերուն համաձայն վերակենդանացնել մեր նախնիքներուն կողմէ հարիւրաւոր տարիներ առաջ օգտակար դատուած ձի հեծնելու եւ մարմնամարզի զանազան ձևերը՝ որ մինչեւ հիմա լքուած էին: Այս տեսակ բաներ, որոնց նիւթական ու բարոյական օգուտները թուելով չեն հատնիր, ոչ միայն զինուորներուն, այլ երիտասարդ ու ծեր՝ մեր ազգին բոլոր անհատներուն պէտք են, վասն զի առողջ մարմնի եւ ուղեղի տէր ըլլալու եւ կեանքի պայքարներուն տոկալու համար մարմնամարզը անհրաժեշտ է: Օսմանցիի անունը պարծանքով կրելու համար ոչ թէ սրճարանին անկիւնները ժամանակ անցնելու է, այլ այրերու վայելող արիութեան ձիրքեր ձեռք բերելու աշխատելու է»*:[14]

Չնայած այն բանին, որ Շավարշ Քրիսյանը «Մարմ-

[13] «Մարմնամարզ», Բ տարի, թիւ 17, օգոստոսի 31, 1912:

[14] Թուրքիոյ պատերազմական նախարարին կոչը, «Մարմնամարզ», Բ տարի, թիվ 2, 1914, էջ 38:

նամարզի» էջերում նկատում է, որ *«նախաարարական կոչը ամէնէն առաջ Հայ ժողովուրդին մէջ է որ պէտք է գտնէ իր արժանի արձագանքը»*, այդուհանդերձ պարզ էր, որ այդ կոչն ուղղակիորեն հասցեագրված էր թուրք երիտասարդությանը: Դրա ապացույցն է նաև վերոնշյալ կոչից ճիշտ երկու տարի հետո՝ 1916թ. ապրիլի 4-ին հրապարակված Էնվերի մեկ այլ՝ «Կոչ երիտասարդությանը» խորագրով ճառը, որտեղ ասվում էր. *«Միրեցե՛ք ձեր Հայրենիքն ու թուրք ազգը: Այսօր Ձեր խիզախ հայրերն ու եղբայրներն իրենց կյանքով ու արյունով են պաշտպանում Հայրենիքը: Պետք է ձգտեք, որպեսզի ապագայում անհրաժեշտության դեպքում, ձեր հայրերի ու եղբայրների նման լինեք մարտական ու բոլոր տեսակի դժվարություններին տոկացող: Եթե այսօր երիտասարդական միություններում մեծ մղումով աշխատեք, վաղը բանակում հեշտությամբ կծառայեք: Միրելի՛ երիտասարդներ, այս պատճառով ձեր մարմինները պետք է լինեն առողջ ու ճկուն, իսկ ձեր աչքերը սուր տեսողությամբ: Օն առաջ, ապագան ձեզ է սպասում...»*:[15]

Մարզական մրցակցությունը հաճախ հանգեցնում էր ազգայնական հողի վրա տեղի ունեցող բախումների: Այսպես, պատերազմից հետո Մարզվանի «Անատոլիա» քոլեջի հայկական և հունական թիմերի մրցապայքարի ժամանակ տեղի ունեցավ ծեծկռտուք, որին միացան նաև հանդիսատեսները, ականատեսի վկայությամբ՝ *«ֆութպոլի դաշտը վերածելով ճակատամարտի դաշտի մը»*:[16]

Նման միջադեպ տեղի ունեցավ նաև Գատրգյուղի լիգայի «Ֆեներբահչե» թուրքական ակումբի և հայկական ՀՄԸՄ ֆուտբոլային թիմի մրցախաղի ժամանակ, երբ երկրպագուները, դժգոհ լինելով մրցավարի

Ադանայի թուրքական ֆուտբոլային թիմը: Լուսանկարը «Իդման» թերթից, 1914թ.

որոշումներից կամ խաղի արդյունքներից, հաճախ ներխուժում էին մարզադաշտ:

1915թ. Օսմանյան կայսրության տարածքում դադարեցին գործել հայկական բոլոր մարզական ակումբներն ու միությունները:

Քեմալականների շարժման ծավալմանը զուգընթաց կայսրության տարածքում ազգայնամոլական տրամադրություններն էլ ավելի ուժգնացան, ինչը չէր կարող իր արտացոլումը չունենալ թուրքական սպորտի և պատերազմից հետո թուրք և այլազգի մարզիկների մասնակցությամբ տեղի ունեցած մրցակցություններում:

[15] **Çapan M. Şevki.** Türk Sporunda Selim Siiri Tarcan, էջ 144:

[16] «Հայ սկաուտ», Ա տարի, թիւ 6, 1920, էջ 91:







Հայ մարմնամարզիկներ Արամ Թաշճյանը, Հայկ Միտիկյանը, Հմայակ Ամիրյանը, Էդուարդ Շահնազարը Ստորին շարքում Երվանդ Զոփուրյանը, Անդրանիկ Դոլբենդյանը Աջ կողմում Կարդոս Հարությունյան և Սարգիս Թարիգյան: Լուսանկարները՝ «Մարմնամարզ» թերթից





Գործ 7.— Ձեռքերը տանքուն վրայ դնալու ատ, ատանց բազուկներնը և ատանքը չարժելու. Դանդաղաբար հիները բանալ ու դնալիս։ Գլուխը չի շարժուիր շատ արագ լլլալ, այլ պտոյտ գործէն։

Օգուտ.— Բազուկները, ուսերը և կրծքերը կը զարգացնէ։

Գործ 11.— Ոտքերը իրարամէջ բաց, ատանց ոտքերը չարժելու, գլուխնիրուն վրայ իջնալ եկլիկ։

Օգուտ.— Գլուխները, մէջքը և ոտքն կը զարգացնէ։

Մեծ եղեռնի հուշահամալիրը Ծիծեռնակաբերդում 1967թ.

Գլուխ ինն երրորդ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՊՈՐՏԻ ԿՈՐՈՒՍՏԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հայկական մարզական, ինչպես և հասարակական, քաղաքական ու մշակութային կյանքին անդառնալի հարված հասցվեց Մեծ եղեռնի տարիներին: Երիտթուրք պարագլուխների կողմից ծրագրված ու իրականացված ցեղասպանության քաղաքականության զոհ դարձան բազմաթիվ հայ մտավորականներ, այդ թվում նաև՝ մարմնամարզիկներ: Այդ զոհերի շարքում մեծ կորուստ էր Շավարշ Քրիսյանի աքսորումը հայ մտավորականների հետ դեպի Այաշ և նրա դաժան սպանությունը: Շավարշ Քրիսյանի կյանքի վերջին դրվագների մասին անդրադարձ կա աքսորված հայ մտավորականներից հրաշքով փրկված դոկտոր Ա. Նազգաշյանի հուշերում: Վերջինս հիշատակում է աքսորավայրում Շավարշի զվարթ ու անընկճելի պահվածքը, երբ ամեն առավոտ նա ստիպելով մտավորական աքսորյալներին հրավիրում էր մարմնամարզի:[1]

Երիտթուրք կառավարիչների այս դաժան հաշվեհարդարը արևմտահայ մտավորականության հայտնի դեմքերի հետ պայմանավորված էր նրանց կատաղի անհանդուրժողականությամբ ազգային փոքրամասնությունների առաջնակարգ դիրքերի նկատմամբ՝ թուրքական ազգայնամոլական գաղափարախոսության և ազգային պետություն ստեղծելու ճանապարհին:

1908թ. գալով իշխանության՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը հետևողականորեն սկսեց իրագործել թուրքական ազգայնամոլական գաղափարախոսությունը, որի առանցքն էին կազմում թրքացման քաղաքականությունն ու փոքրամասնություններ-



Հայ նշանավոր մարզիկ, «Մարմնամարզ» հանդեսի խմբագիր Շավարշ Քրիսյանը (1886-1915թթ.)

ի իրավունքների սահմանափակումը: Երիտթուրքերի հետաքրքրությունը սպորտային մրցակցության ասպարեզում և նրանց հետևողական աջակցությունը թուրքական ակումբներին ու թիմերին վկայում էին հետևողականորեն իրագործվող մի քաղաքականության մասին, որտեղ հայերի ու հույների մարզական հաջողու-

[1] Տես Ա. Նազգաշեան Հայ մտաւորականներու ձերբակալութիւնը և Այաշի բանտը, Պէյրութ, 1969:

ՍԱՐԳԻՍ ԹՈՒՐԹԵԱՆ

թյուններն ու առաջադիմությունն այս ոլորտում պետք է համարվեին անհանդուրժելի ու վտանգավոր:

Հայ մտավորականության ներկայացուցիչների ձերբակալությունից հետո որոշ հայ մարզիկներ հայտնվեցին ձերբակալվածների ցանկում և աքսորվեցին, մյուսները, ինչպես օրինակ՝ Հակոբ Սիրունին, երկար ժամանակ ստիպված եղավ թաքնված կյանք վարել՝ խուսափելով թուրքական գաղտնի ոստիկանության գործակալներից: Զոհերի թվում էին Գալուստ Արխան- յանը «Արտավազդ» մարմնամարզական ակումբի Կետիկ փաշայի մասնաճյուղից, ով մահացավ Դեր-Զորում տարագրության մեջ: Դեպի Դեր-Զոր տարագրված նահատակ մարմնամարզիկներից էր Վարդևար Եափուճ-յանը: Պոլսահայ մարզիկ և «Արաքս» թիմի ֆուտբոլիստ Հայկ Ճոլոյյանը, զինվորագրվելով թուրքական բանակ և ծառայելով որպես երկրաչափի օգնական Սեբաստիայում, 1700 հայ զինվորների հետ զոհ է գնում թուրքական բանակում ծառայող հայ զինվորականության դեմ կազմակերպված սպանդի ժամանակ: Պատերազմի ու Մեծ եղեռնի զոհերի թվում էին Պոլսի Մաքրիգյուղի «Սասուն» մարմնամարզական միության հիմնադիրներից Երվանդ Նշանյանը և Գևորգ Քերեստեճյանը, «Ռոբերտ» քոլեջի լավագույն ֆուտբոլիստներից Հովհաննես Գորյանը, «Սանասարյան» վարժարանի շրջանավարտ, Զմշկածագին մերձակա Ուչպեկի գյուղի վարժարանի մարզանքի ուսուցիչ Ղազարոս Գույումջյանը, առաջին Հայկական օլիմպիական խաղերի կազմակերպիչներից Գևորգ Թերջիմանյանը, սկաուտական շարժման ներկայացուցիչ Պողոս Զենեյանը և ուրիշներ: Մեծ եղեռնին զոհ գնացած հայ մարզիկների թվում էին նաև Պոլսի «Տորք»

«Հայ սկաուտի» բացառիկ համարը նվիրված Մեծ եղեռնին զոհ դարձած մարզիկների հիշատակին, ապրիլի 24, 1920թ.

Մեծ եղեռնին զոհ դարձած հայ մարզիկներ՝ Վարդեվար Յափուճյան, Հայկ Ճոլոյան, Գևորգ Քերեստեճյան, Գալուստ Արխանյան

մարմնակրթական միության անդամ Ավետիս Այճյանը, որը գտնվելով Բիթլիսում և աշխատելով թուրքական վարժարանում որպես ուսուցիչ, զոհ է դառնում տեղահանությանը: Ցեղասպանությանը զոհ դարձած խոստումնալից հայ մարզիկների թվում էր նաև աղաբազարցի Սարգիս Թարիգյանը, ով մրցանակային տեղեր շահեց երրորդ ու չորրորդ Հայկական օլիմպիական խաղերում:

Հայ մարզաշխարհի այս կորուստները ոգեկոչելու համար «Հայ սկաուտ» հանդեսն իր 1920թ. ապրիլյան համարի կազմին դրոշմեց *«Սգապսակ նահատակված մարզիկների հիշատակին»* գրությունը:

Առաջին աշխարհամարտից հետո հայ մարզաշխարհի բեկորները կրկին հավաքվեցին Պոլսում՝ դեմ առ դեմ հայտնվելով նոր մարտահրավերների առաջ, փորձելով միահամուռ ջանքերով վերացնել Մեծ եղեռնի սոսկալի հետևանքները, լծվելով առաջին հերթին տասնյակ հազարավոր հայ որբերի կրթության ու դաստիարակության գործին:

Այնթապի «Համազասպ» մարմնամարզական ակումբի մարզիկները քաղաքի ինքնապաշտպանության դիրքերում, 1920-21թթ.

Այնթապի «Համազասպ» մարմնամարզական ակումբի մարզիկները Հալեպում, 1923թ.: ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Պոլսի «Շանթ» մարմնակրթական միության սաները, 1919թ., ՀՅԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Գլուխ տասներորդ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՊՈՐՏԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1918-1922թթ.)։ ՀՄԸՄ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Առաջին համաշխարհային պատերազմից հետո հայոց մեջ սպորտային կյանքը նոր վերելք ապրելու նշաններ ցույց տվեց։ Դրա վառ վկայություններից մեկը դարձավ 1918թ. նոյեմբերի 16-ին Պոլսում Հայ մարմնակրթական ընդհանուր միության կազմավորումը։

Համահայկական մարզական միություն ստեղծելու և բոլոր հայկական մարզական և սկաուտական կազմակերպությունները համախմբելու գաղափարախոս Շավարշ Քրիսյանի այս նախագիծը, որի մասին նա առաջին անգամ բարձրաձայնել էր առաջին Հայկական օլիմպիական խաղերից հետո՝ դեռևս 1911թ., արդեն իրականություն պիտի դառնար, մանավանդ որ դրա կազմավորման համար կային իրական նախադրյալներ։

Ինչպես նախորդ գլուխներից մեկում նշվեց, դեռ 1912թ. Հայ մարմնամարզական միության ստեղծման համար նախատեսված համաժողովը, օրակարգը և խնդիրները հրապարակվել էին «Մարմնամարզում», սակայն դա հետաձգվեց Բալկանյան պատերազմի պատճառով։

Արդեն 1913թ. «Մարմնամարզում» լույս տեսած իր հոդվածներից մեկում Քրիսյանը գրում է. *«Հ. Մ. Ը. Միութիւնը, որուն կազմութիւնը գոհունակութեամբ ծանուցինք, կոչուած է ամենամեծ չափով պակաս մը լրացնելու Հայ իրականութեն մէջ։ Հ. Մ. Ը. Միութիւնը շատ որոշ եւ սակայն գերազանցօրէն ազգային ու վսեմ նպատակ միայն ունի, այն է Հայ ցեղին ֆիզիքական եւ բարոյական ազնուացումը ձեռք բերել մարմնակրթութեամբ, որուն անուղղակի կերպով պիտի հետևի նաև բարոյական կարողութիւններու եւ արժանիքներու մարզանքը եւ զարգացումը»* («Մարմնամարզ», Գ տարի, թիւ 5, մայիս, 1913)։

Սակայն Շավարշ Քրիսյանի ջանքերը բոլոր հայկական մարմնամարզական ակումբները մեկ կառույցի մեջ միավորելու և համահայկական մարմնամարզական կազմակերպություն ստեղծելու ուղղությամբ ձախողվեցին, հիմնականում այդ կազմակերպությունների կողմից այս գաղափարի նկատմամբ ցուցաբերած նվազ հետաքրքրության պատճառով։ Իր մեկ այլ՝ «Հայ մարմնամարզական միութեան կատարելիք գործը» հոդվածում Շ. Քրիսյանը, առաջ քաշելով Հայ մարմնամարզական ընդհանուր միություն ստեղծելու գաղափարը, նախանշում էր նրա հիմնական գործառույթները.

«ա. Ընդհանուր հայութեան մէջ ֆիզիքական դաստիարակութեան ճաշակը արթնացնել և տարածել,

բ. Հեւամուր ըլլալ վարժարաններու մէջ անոր դասավանդութիւնը պարտաւորիչ դարձնելու,

գ. Ընդհանուր Հայութէան մէջ մարմնամարզական ակումբներ կազմելու աշխատիլ,

դ. Տարեկան հայկական Ողիմբիական Խաղեր կազմակերպել,

ե. Հայկական Ողիմբիական խաղերուն լաւագոյնները միջազգային ողիմբիական խաղերուն ուղարկել» («Մարմնամարզ», Բ տարի, թիւ 17, օգոստոս 31, 1912)։



ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Գ. Պոլիս, 28 Յունիս 1911

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂ.
ԱՂՑ. ԿԱՅՔ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՐ 1454
Կանոնագրի թիւ 1329

ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ ՊԱՏ. ՄԻՈՒԹԵԱՆ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈՅ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Սրտի մեծ բերկրութեամբ կարդացի Ձեր Յունիս 12 թ. գեղեցիկ գրութիւնը, ուր խոստացուցած էիք Ձեր բիւրեղ սիրտերու և շուշան հոգիներու ծնունդ եղող մարուք զգացումները։ Ձեր Միութիւնը անոր համար աւելի մօտիկ է սրտիս, վասն զի Դուք կ'խորհրդանշէք ապագայ Հայութիւնը իր մաքրակենցաղ, առոյգ և կենսունակ պատկերով։ Հայ ցեղը թէև ի քիչ յաւ յատկութիւններով օժտուած, սակայն զարերու ընթացքին ՄՋ սորկութեան շղթայներէն ազդուած՝ սակաւ ինչ արատներ կ'կրէ իր ֆիզիկական ու բարոյական դիմագծութեան վրայ։ Աբգի և յաջորդ սերունդներուն գործն է ուժեղացնել, բարձրացնել ցեղին ֆիզիքական, բարոյական և մասնաւորական ընտիր յատկութիւնները, ժարգելով իրենց մարմնին ու նկարագիրը։ Դուք, սիրելի Հայ Աբիներս, Դուք Հայրենիքի յոյսն ու լոյսն էք, Ձեր բարեսիրական գինուորագրութիւնը գործունէութեան լայն ու գեղեցիկ դաշտ մը ունի իր առջեւ։ Կազմակերպուեցէք, ազնուացէք, բարձրացէք որքան կրնաք, լեցուցէք Ձեր սիրան ու միտքը, վասն զի Դուք պիտի ըլլաք մայրական սրբազան Հայրենիքին հրաշակերտ տաճարին սիւները։

Եւ ես իմ Հայրական սրտաբուղխ մաղթանքներով կ'օրհնեմ Ձեր սիրելի Միութիւնը, հայցելով Աստուծոյ հովանաւորութիւնը Ձեր բարենպատակ գործերուն և ջանքերուն վրայ։

Աղօթաւոր
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ
ԶԱՒԷՆ ԱՐՔԵՊ.

Զավեն Պատրիարքի՝ հայ արիներին ուղղված օրհնագիրը, 1919թ., հուլիս

Մեծ եղեռնի և Առաջին աշխարհամարտի ծանր հետևանքներն այս գաղափարի նկատմամբ նոր մոտեցումներ ու վերանայումներ ծնեցին: Միասնական մարմնամարզական միություն ստեղծելու գաղափարն այլևս հասունացած էր: Նշանավոր հայ մարզիկներից ու հասարակական գործիչներից բաղկացած հանձնախումբը, որի կազմում էին Գրիգոր Հակոբյանը, Տիգրան Խոյանը, Հակոբ Սիրունին, Լևոն Հակոբյանը, Հայկ Ճիզմեճյանը, Հովհաննես Հինդլյանը, Վահրամ Փափազյանը և Կարլո Շահինյանը, նպատակ ուներ միավորելու հայկական մարմնամարզական ակումբները մեկ կառույցի ու մեկ անվան տակ: 1918թ. նոյեմբերի 16-ի ՀՄԸՄ-ի հիմնադիր ժողովի հաջորդ օրը միության հիմնադրման մասին հաղորդագրություններ հրապարակվեցին Պոլսի հայկական թերթերում: Միաժամանակ հիմնադիր ժողովի մասնակիցներից մի քանիսն այցելեցին Պոլսի հայկական թաղամասեր՝ տեղում հայ երիտասարդներին նորաստեղծ կազմակերպության նպատակների ու առաքելության շուրջ իրազեկելու համար: Սկսվեց ՀՄԸՄ-ի մասնաճյուղեր ստեղծելու և անդամագրության կարևոր գործընթացը:

«Այս առաջին նիստին իսկ մարմնակրթութիւնն ու սկաուտիզմը միացուեցան միակ դրօշի մը տակ իբրև լրացուցիչ մաս իրարու: Առանց պատճառի չէր որ որդեգրուեցաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն անունը: «Մարմնակարթական» բառը բաւական չէր հիմնադիրներուն իդէալը պարզելու համար: Մեր որդեգրածը մարմնամարզը չէր միայն, այլ մարմնակրթութիւնը իր լայն, ամբողջական և բարերար իմաստով: Այդ տիպին մէջ էր որ Հ.Մ.Ը.Մ. կրճատումն էլ

ՆՈՐ ԵՐՋԱՆ ԹԻՒ 127 (1948)

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

DJAGATAMART

ՀԱՍԷ 100 ՓԱՐԱ

ՕՐ ԱՆԹԵՐԹ

ՈՒՐԲԱԹ 11 ԱՊՐԻԼ 1919

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Téléphone Péra No. 927

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ԱՊՐԻԼ ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 70.000 ՔԱՌ. ՔԻԼՕՄԵԹՐ

ՀԱՅ ԲԱՆԱ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՁԱՅՆԸ

ՀԱՅ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻ ԱՌԹԻՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Պոլսում լույս տեսնող «Ճակատամարտ» և «Ժողովուրդի ձայնը» պարբերականների անդրադարձները հայ մարզիկների ու մարզական ակումբների գործունեությանը, 1919թ.

ՀՄԸՄ-ի դրոշը

ԲԱՐՁՐԱՅԻ՛Ր, ԲԱՐՁՐԱՅՈ՛ՒՐ

Հ. Մ. Ը. Մ.

ՀԱՅԿԱԿԱՆ

ԸՆԴ. ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ՍԱՐՔՈՒԱԾ Հ. Մ. Ը. Մ.Ի ԿՈՂՄԷ

ՀԱՍԱՐԱԿԱՇԽՈՒԹԵԱՄԲ

Ա.ԾԾՆ. Ա. ՊԱՅԾՐԴԱՐՁ ՀՕՐ

5 Սեպտեմբեր 1920, կիրակի ժամը 2ին

ԳԱԼՊԻՆԻ, «ՍԻՆԻՈՆ-ՖԼԻՊՊ»Ի ԴԱՇՏԱՎԱՅՐԸ

JEUX ATHLETIQUES ARMENIENS

ORGANISÉS PAR

L'UNION ARMÉNIENNE DE CULTURE PHYSIQUE

ET DE SCOUTISME

Auront lieu Dimanche le 5 Septembre 1920 à 2 h. (p. m.)

à l'Union Club de Cadik

ՀՄԸՄ-ի Սկյուտարի մասնաճյուղի ֆուտբոլի թիմը: Լուսանկարը «Հայ սկաուտից»



ՀՄԸՄ-ի զինանշանը

ՀՄԸՄ-ի Պոլսի Բերա-Շիշլիի մասնաճյուղի ֆուտբոլի թիմը, 1921թ.։ Լուսանկարը «Հայ սկաուտից»



OPEN AIR ATHLETIC MATCHES
ORGANISED
By the Union of Armenian Gymnasts
OF PERA-SHISHLI
Will take place at the athletic field in Pangaldi
On the 8 th August 1920 at 2 h. (p.m.)

ՏԱՐԵԿԱՆ
ԴԱՇՏԱՅԻՆ ԵՒ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ
ՄՐՑՈՒՄՆԵՐ
Բ. ՏՈՒՊԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՍԾ
Հ. Մ. Ը. Մ. ԲԵՐԱ-ՇԻՇԼԻԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ
Տեղի կ'ունենայ Կիրակի 8 Օգոստ. 1920 ժամը 2ին
Բանկալդիի զարգացմանական նորաշէն Մարզարանին մէջ

GRAND CONCOURS DE JEUX ATHELETIQUES
ORGANISÉS PAR
L'UNION DES GYMNASTES ARMENIENS DE PÉRA-CHICHLI
Auront lieu le 8 Août 1920 à 2 h (a.p.)
Sur le champs athletique de l'Union à Pangaldi

Գին՝ 5 Դրշ.

ՏՊԱԳՐ. Կ. ՓԷՏԻՐԵԱՆ ՈՐԴՒ

ՀՄԸՄ-ի Պոլսի Բերա-Շիշլիի մասնաճյուղի կողմից դաշտային և մարմնակրթական տարեկան մրցումների ազդագիր, 1921թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

[1] Տես Հայաստանի ազգային արխիվ, 420//11/1, էջ 2:

որդեգրուեցաւ». – գրում է ժամանակակիցը: (Տես «Արի», նոյեմբեր 14, 1926)

Գրիգոր Հակոբյանն իր հուշերում, անդրադառնալով այդ պատմական ժողովին և դրա կայացրած որոշմանը, նշում է. *«Հետաքրքրական է յիշել թէ այդ նիստին մէջ էր որ «Հ.Մ.Ը.Մ.» կրճատումն ալ ստեղծուեցաւ: Առաջին պահուն խորթ եկաւ մեր ականջներուն իսկ: Բայց ան կամաց կամաց ընդհանրացաւ, սիրուեցաւ, մինչև դարձաւ համազգային գուրգուրանքի առարկայ»*.[1]

Նորաստեղծ միությունը ողջունեց նաև Պոլսի Հայոց Պատրիարք Զավեն Տեր-Եղիայանը: Պատրիարքի օրհնագրում կարդում ենք. *«...Ձեր միութիւնը անոր համար աւելի մօտիկ է սրտիս, վասնզի դուք կիսորհրդանշեք ապագայ հայութիւնը իր մաքրակենցաղ, առոյգ ու կենսունակ պատկերով: Հայ ցեղը թէև ի բնէ լաւ հատկութիւններով օժտուած, սակայն դարերու ընթացքին մէջ ստրկութեան շղթաներէն ազդուած՝ սակաւ ինչ արատներ կը կրէ իր ֆիզիքական ու բարոյական դիմագծութեան վրայ: Արդի եւ յաջորդ սերունդներուն գործն է ուժեղացնել, բարձրացնել ցեղին ֆիզիքական, բարոյական ու մտաւորական ընտիր յատկութիւնները, մարզելով իրենց մարմինն ու նկարագիրը»* (տես էջ 188):

1919թ. կեսերին մեկ տարին չբոլորած միությունն արդեն ուներ 25 մասնաճյուղ: Այսպես ծնունդ առավ Հայ մարմնամարզական ընդհանուր միությունը՝ ՀՄԸՄ-ն: Ավելի ուշ կազմակերպությունն ունեցավ իր տարբերանշանները և կարգախոսը: Որպես կարգախոս ընտրվեց «Բարձրացի՛ր, բարձրացու՛ր» կոչը, որն առաջարկեց Պետրոս Ատրունին: Կազմակերպության տարբերանշանի վրա պատկերված էին Մեծ ու Փոքր Մասիսները,

որոնց մեջտեղում ծագող արևն է: Ստորին հատվածում պատկերված է Արաքս գետը:

Շուտով կազմակերպությունն իր ներկայացուցչությունները բացեց Պոլսի տարբեր արվարձաններում: ՀՄԸՄ-ի Կենտրոնական վարչության կազմում ստեղծվեցին առանձին հանձնախմբեր ու ենթահանձնախմբեր.

1. Սկաուտական կենտրոնական հանձնախումբը,
2. Սկաուտական կենտրոնական ենթահանձնախումբը,
3. Շվեդական մարզանքի կենտրոնական հանձնախումբը,
4. Աթլեթիզմի կենտրոնական հանձնախումբը,
5. Ֆուտբոլի կենտրոնական հանձնախումբը,
6. Քարոզչության կենտրոնական հանձնախումբը:

Ամենամյա հայկական օլիմպիական խաղերի առթիվ ձևավորվում էին առանձին գործադիր կենտրոնական հանձնախմբեր՝ զանազան ենթախմբերով: Բացի այդ, Պոլսի մարզական ակումբների ու որբանոցների մեծ մասը ՀՄԸՄ-ի մասնաճյուղեր էին: Կարճ ժամանակահատվածում Պոլսում ստեղծվեցին Բերայի, Շիշլիի, Սամաթիայի, Սկյուտարի, Գատըգյուղի մասնաճյուղերը, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր ֆուտբոլային թիմը:

Հետպատերազմյան տարիներին ՀՄԸՄ-ի տարբեր մասնաճյուղերի միջև կազմակերպված միջմասնաճյուղային, միջակումբային մրցումները, ինչպես նաև Հայկական օլիմպիական խաղերը, հեգեբանական մեծ նշանակություն ունեցան պատերազմի ու ցեղասպանության բովով անցած հայությանը ոգևորության լիցք հաղորդելու առումով:



ՀՄԸՄ-ի մարզիկների նամակը Պոլսի Հայոց Պատրիարք Զավեն Տեր-Եղիայանին, 1921թ.
ՀՄԸՄ առաջին պաշտոնական ծրարը, ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Իր կազմավորման օրվանից ՀՄԸՄ-ը մեծ ուշադրություն դարձրեց որբահավաք աշխատանքներին և եղեռնից մազապուրծ հայ գաղթականությանը մարդասիրական օգնություն ցույց տալու գործին:

Հայաստանի Հանրապետության պաշտոնական հրավերով ՀՄԸՄ-ի հիմնադիր անդամներից մի քանիսը եկան Երևան՝ նպատակ ունենալով զարգացնել մարմնամարզական կյանքն ու տարածել սկաուտականության գաղափարները նորանկախ հանրապետությունում և հատկապես որբանոցներում: Նշանավոր մարզիկներ և սկաուտապետեր Վահան Չերազը, Տիգրան Խոյանը և Օնիկ Յազմաջյանը հաստատվեցին Երևանում և Ալեքսանդրապոլում: Երիտասարդ հանրապետության իշխանությունները փորձեցին ամեն կերպ աջակցել ծայրահեղ ծանր պայմաններում գործող որբանոցներում մարմնակրթության ու սկաուտական շարժման ծավալմանը:

ՀՄԸՄ-ի ստեղծումը մեծապես նպաստեց նաև Շ. Քրիսյանի մյուս նախագծի իրականացմանը՝ մեկ միասնական հայկական ֆուտբոլային լիգայի ստեղծմանը: Կազմակերպվեցին մրցախաղեր ՀՄԸՄ-ի տարբեր մասնաճյուղերի միջև, իսկ կազմակերպության ուժեղագույն թիմերը հանդես էին գալիս նաև Պոլսի միջազգային լիգաներում:

Հետպատերազմյան շրջանում ՀՄԸՄ-ի տարբեր մասնաճյուղերի ֆուտբոլի թիմերն ու աթլեթները մաս-

Հայ մարզիկ, «Հայ սկաուտ» թերթի արտոնատեր Կարլո Շահինյանը

նակցեցին բազմաթիվ միջազգային մրցումների։

1919թ., մասնակցելով Պոլսում կայացած «Արծաթե գավաթի» միջազգային մրցումներին, ՀՄԸՄ-ի տարբեր մասնաճյուղերի մարզիկներից կազմավորված խումբը 1:0 հաշվով հաղթեց իռլանդացի զինվորականներից բաղկացած թիմին՝ արժանանալով պատվավոր մրցանակի։

1921-22թթ. ՀՄԸՄ-ի ֆուտբոլի միջմասնաճյուղային մրցաշրջանի չեմպիոնը դարձավ Բերա Շիշլիի մասնաճյուղը, որը 2:0 հաշվով հաղթանակ տարավ Գում Գափուի թիմի նկատմամբ։

«Առաջին անգամն է որ Պոլսոյ մէջ հայկական լիկ մը յաջողութեամբ կը վերջանայ եւ կուրայ օրինաւոր յաղթական մը», – գրում է «Հայ սկաուտը»։[2]

Հայկական ֆուտբոլային թիմերի հետ իրենց ուժերն էին չափում Պոլսում և Զմյուռնիայում տեղաբաշխված անգլիական և ֆրանսիական զորաբանակների զինվորներից ու սպաներից կազմված թիմերը։ Այդ խաղերում, չնչին բացառությամբ, հաղթող էին դուրս գալիս հայկական թիմերը։ Թուրքական ակումբներից հայկական թիմերի հիմնական ախոյաններն էին «Ֆեներբահչեն» ու «Գալաթասարայը»։

Պատերազմից հետո վերականգնվեց նաև Հայկական օլիմպիական խաղերի անցկացման ավանդույթը՝ այս անգամ արդեն ՀՄԸՄ-ի հովանու ներքո։ Հինգ տարվա ընդմիջումից հետո հայկական մարմնամարզական ակումբների մասնակցությամբ առաջին մրցումները, որոնք անվանվեցին ՀՄԸՄ-ի տարեկան առաջին միջմասնաճյուղային մրցումներ, տեղի ունեցան Պոլսում Գատրգյուղի «Յունիոն» մարզադաշտում

ՀՄԸՄ-ի Բեշիկթաշի ֆուտբոլի թիմը, 1921թ, ՀՅԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

ՀՄԸՄ-ի մարզիկները անգլիացի նավաստիների մարզարանում։
Լուսանկարը «Հայ սկաուտից», 1922թ.

[2] Տես «Հայ սկաուտ», Բ տարի, թիւ 11, դեկտեմբեր, 1921։


ՏԱՐԵԿԱՆ
ԴԱՇՏԱՑԻՆ ԵՒ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ
ՄՐՑՈՒՄՆԵՐ
Գ. ՏԱՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹ
Հ. Մ. Ը. Մ. ԲԵՐԱ-ՇԻՇԼԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ԿՈՂՄԷ
Տեղի կ'ունենայ կիրակի 21 Օգոստ. 1921 ժամը 2ին
Բանկպոյթի գերեզմանատան Մարզարանը

OPEN AIR ATLETIC MATCHES
ORGANISED
By the Union of Armenian Gymnasts
OF PERA-SHISHLI
Wille take place at the athletic field in Pangaldi
On the 21 th August 1921 at 2 h. (p.m.)

GRAND CONCOURS DE JEUX ATHELETIQUES
ORGANISÉ PAR U. A. C. P.
SECTION PÉRA-CHICHLI
Auront lieu le 21 Août 1921 à 2 h. (a.p.)
Sur le champs athletique du l'Union à Pangaldi (Cimetière Arménienne)

ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱՐԱՆ
ՍԿԻՒՏԱՐ
1907
ՅԱՅՏԱԳԻՐ
7ՐԴ Ազիրական խաղերու
ՄԻՊԱԵՕՀԻՍ ՄԱՍՆԱՅՑԻՒԹԵԱՄԲ
ՐԱՖՖԻ-ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ՖԱՆՖԱՌԻ
ԿԿԱԿԻ, 3 Հոկտ. 1920 կեսօրէ վերջ ժամը 2 ին
ՍԵՓԱԿԱՆ ՄԱՐԶԱՎԱՅՐԻՆ ՄԷՋ
Սկիւտար, Պապար Պաշի
(Նոսկկիս Զինեթիկի գերեզմանը)

ՀՄԸՄ-ի Պոլսի Բերա-Շիշլիի մասնաճյուղի և Սկյուտարի Հայ մարմնամարզարանի կողմից կազմակերպված մրցույթների ազդագրեր, 1920-1921թթ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյյանի հավաքածու



ՊԱՍՔԷԹՊՕԼԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐ

(1921—22 տարիի)

Բաղդատած Պասքէթպոլի Կանոնները Միջազգայնական Ռանձնախուզմանի կողմէ, զոր կը կազմեն Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերակցութիւնք, Ամերիկան Մարզական Միութիւնը եւ Ազգային-Բարձրագոյն Մարզական Միութիւնը, 1921 ին վերամշակուած կանոնագրքեր։

ԽԱՂԸ

Պասքէթպոլը կը խաղացուի խաղատեղիի մը հինգ հոգիէ բաղկացած երկու խումբերով, որոնց նպատակն է, գնդակը մէկիկմէկս փոխանցելով, իրենց յատուկ կողմին մէջ նետել և կարելի եղածին չափ շատ կէտ շահիլ, մինչեւ նոյն ատեն թոյլ չտալ որ հակառակորդը գնդակին տիրանայ կամ կէտ շահի։

ՀՄԸՄ-ի տարեկան օլիմպիական խաղերի հաղթողներին տրված մեդալներ, 1919-1921թթ. ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Հայ մարզիկներ Սիմոն Սետեֆճյան, Արամ Նազարյան, (վերևում) Սարգիս Սիմոնյան, Արամ Պապայան (ներքևում): Լուսանկարները «Հայ սկաուտից», 1920-1922թթ.

1919թ. օգոստոսի 31-ին Պատրիարք Զավեն Եղիայանի նախագահությամբ: Հայ մարզիկների ելույթներին ականատես եղավ նաև Պոլսում գտնվող անգլիական զինվորական հրամանատարությունը: Այդ մրցումներում հատկապես հաջող հանդես եկան Պոլսի Բերա թաղամասի մասնաճյուղի մարզիկները, ովքեր արժանացան ինը առաջին, հինգ երկրորդ և մեկ երրորդ մրցանակների: Անհատական ցուցանիշներով լավագույնը Գատրգյուղի մասնաճյուղը ներկայացնող Արամ Աբելյանն էր, ով շահեց երեք առաջին մրցանակ:

1920թ. սեպտեմբերի 5-ին կայացան արդեն Համահայկական ընդհանուր օլիմպիական խաղեր կոչված մրցումները, որոնց ներկա գտնվեց նաև անկախ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը՝ Պ. Թախթաջյանը: Նա մասնակցեց հաղթողների պարգևատրմանը և *«եւ շնորհաւորեց Հայաստանի ապագայ քաղաքացիները»*:

ՀՄԸՄ-ի տարեկան մրցումները տեղի ունեցան 1919թ. օգոստոսի 31-ին, 1921թ. հոկտեմբերի 2-ին և 1922թ. օգոստոսի 27-ին: Վերջին Հայկական օլիմպիական խաղերին իրենց մասնակցությունը բերեցին նաև ՀՄԸՄ-ի Պոլսի շուրջ 30 մասնաճյուղեր, ինչպես նաև Բուլղարիայի Ֆիլիպպե քաղաքի մասնաճյուղի, Ադաբազարի, Զմյուռնիայի և Նիկոմեդիայի հայկական ակումբի ներկայացուցիչները: Մրցախաղերի հաղթողները պարգևատրվեցին «ՀՄԸՄ» հապավումով հատուկ թողարկված մեդալներով, որոնց վրա գրված էին մարզաձևի անվանումը և զբաղեցրած տեղը:

Միջմասնաճյուղային, միջակումբային և օլիմպիական խաղերում կիրառվում էին հետևյալ սպորտաձևե-

ՀՄԸՄ-ի Պերպերյան դպրոցի ֆուտբոլային թիմերը, 1924թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու
Հայ մարզիկ Արթո Գալփաքչյանը Եսայան վարժարանի աշակերտներին մարզելիս, 1920-1922թթ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

ը. վազք՝ 50մ, 400մ, 800մ, 1500մ, 3000մ, գնդի հրում, սկավառակի և նիզակի նետում, թռիչք բարձրություն և երկարություն, արգելավազք, հեծանվավազք, պարկարշավ և այլն։

Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը 1919թ. սկսեց հրատարակել «Հայ սկաուտ» պարբերաթերթը, որի արտոնատերն էր Կարլո Շահինյանը։ «Հայ սկաուտը», փաստորեն, պատերազմից հետո փոխարինեց «Մարմնամարզին»՝ Գրիգոր Ճոլոյյանի խոսքով. *«...իր կոնակն ունենալով զօրաւոր կեդրոնական վարչութիւն մը եւ բազմաթիվ մասնաճիւղերի եւ ստուար անդամներու բազմութիւն մը ինչ որ իր նիւթականի մտրահոգութիւնները մեծ չափով պակսեցուց, դարձաւ Միութեան կապ մը ու նոր սերունդին անկեղծ ու սրտակից բարոյախօս մը»* («Ազդակ», Բեյրութ, 17.12.1938)։

«Հայ սկաուտ»-ի առաջին համարը լույս տեսավ 1919թ. հոկտեմբերի 25-ին՝ կազմին ունենալով Հայաստանի Հանրապետությանն ուղղված ողջույնի ուղերձ։

«Հայ սկաուտ»-ի հետ համաժամանակյա՝ Զմյուռնիայում լույս է տեսնում տեղի հայ սկաուտների պաշտոնաթերթը՝ «Պատրաստ»-ը։ Սկզբնական շրջանում այն լույս էր տեսնում ձեռագիր։ Պահպանվել են այս ձեռագիր թողարկումների եզակի օրինակներ։

1922թ. վերջերին Վ. Փափազյանը և Ժ. Յաղմուրյանը համատեղ նախաձեռնեցին նոր սպորտային պարբերականի՝ «Մարզաշխարհի» հրատարակությունը, որը սակայն երկար կյանք չունեցավ։

Ուշադրությունից դուրս չմնաց նաև գավառը, որտեղ հիմնվեցին նոր ակումբներ, և վերաբացվեցին նախկինները։

ՀՄԸՄ-ի Բերայի մասնաճյուղի մարզիկներ Նուբար Արապյանը, Գաբրիել Քեշիշյանը և Գրիգոր Ճոլոյյանը, 1919թ., ՀՅԹԻ, Գ. Ճոլոյյանի հավաքածու

ՀՄԸՄ-ի Գումգափուի մասնաճյուղի ֆուտբոլի թիմը, 1921թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյյանի հավաքածու
«Պեզճեան» դպրոցի ֆուտբոլի թիմը, 1923թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյյանի հավաքածու

Զմյուռնիայում լայն թափ ստացան նոր մարզական միությունների կազմակերպման և սկաուտական խմբերի ստեղծման աշխատանքները: Այստեղ հայկական մարզական ակումբների փակման պատճառով հայ մարզիկները սկզբնական շրջանում հանդես էին գալիս հույներից և օտարազգիներից կազմված թիմերում: Այսպես, Հաբեթյան եղբայրները և Համբարձում Կյուտենյանը հանդես էին գալիս «Smyrna Team»-ում: Հետպատերազմյան Զմյուռնիայի հայկական ֆուտբոլային թիմերից առավել համբավավորն ու ուժեղը «Հայ ակումբի» թիմն էր՝ Գևորգ Հաբեթյանի գլխավորությամբ: Այն ձևավորվել էր «Որսորդաց ակումբի» և «Քնար» ակումբի միացման արդյունքում: 1920թ. մրցաշրջանում թիմը հաջող հանդես եկավ Զմյուռնիայի առաջնությունում, սակայն եզրափակիչ խաղում զիջեց հունական թիմին՝ արժանանալով երկրորդ տեղին: Ֆուտբոլին զուգընթաց «Հայ ակումբի» մարզիկները զբաղվում էին նաև մարմնամարզությամբ, նշանառությամբ և աթլեթիզմով: Վերջին մարզաձևում աչքի ընկան Գևորգ Հաբեթյանը՝ (100 մետր վազք և հեռացատկ), Կ. Հովհաննիսյանը (հեռացատկ), Գ. Շաքարյանը (սկավառակի նետում) և Ա. Ֆընդքըլյանը (400 մետր վազք):

Զմյուռնիայի հայկական ֆուտբոլային թիմերը հանդես էին գալիս նաև ներքին մրցաշարերում՝ ունենալով առաջին և երկրորդ կազմեր: Այս մրցումներին մասնակցում էին Զմյուռնիայից «Վասպուրական» և «Քնար» ակումբները, Գարաթաշ արվարձանից՝ «Վարդանյան» ակումբը և Գորտելեոյի «Կիլիկյան» ակումբը:

Քաղաքի նշանավոր հայ մարզիկներից էր Կարապետ Շահինյանը, ով 1922թ. հուլիսին Զմյուռնիայում

Վերին շարք՝ Շիշլի Պալաթ ֆուտբոլային հանդիպման մասնակիցները, հոկտեմբեր, 1921թ. և Զմյուռնիայի «Արարա» ֆուտբոլային թիմը
Ստորին շարք՝ Պոլսի «Արաքս» ֆուտբոլի թիմը և Դերսաադետի «Մասիս» ֆուտբոլային թիմը

տեղի ունեցած ընդհանուր օլիմպիական խաղերում դարձավ հեռացատկի ռեկորդակիր՝ մրցանակային տեղեր գրավելով նաև արգելավազքի ու 400 մետր վազքի մարզաձևերում: «Հայ սկաուտ»-ը տեղեկացնում է նաև հայերի և քաղաքի նավահանգստում խարսխված զրահանավի նավաստիների միջև կայացած բեյսբոլի խաղի մասին:[3] Հունական «Պելոպս» ակումբի ծովային մարզարանում ակումբի և անգլիացի նավաստիների միջև տեղի է ունենում ջրագնդակի առաջնություն: Հունական թիմի կազմում հանդես են գալիս հայ մարզիկներ Դավիթ և Վահե Քեշիշյանները:

1922թ. սկզբին Զմյուռնիան դառնում է ՀՄԸՄ-ի Հոնիական շրջանի կենտրոն:

Հետպատերազմյան շրջանում սպորտի և մարմնամարզության ասպարեզում սկսեց ակտիվություն ցուցաբերել Մարզվանի վերաբացված «Անատոլիա» քոլեջը: Այստեղ Հայ ուսանողական միության ջանքերով վերաբացվեց «Շավարշան» նույնանուն ակումբը:

1919թ. նոյեմբերի 25-ին Հայ ուսանողական ակումբի ջանքերով այստեղ կազմակերպվեց դաշտահանդես, ինչն անակնկալ էր շատերի համար: Այս առիթով ժամանակակիցը գրում է. *«Շաւարշանի սարքած այս դաշտահանդէսը մեծ տպավորութիւն ըրած էր մեզ շրջապատող բարեկամներու վրա, որոնք անգամ մըն ալ տեսան ու համոզուեցան թէ հայ ցեղին մէջ կայ ոգի մը, որ անմեռ է մնացած, կենսունակութիւն մը, որ երեւան կուգայ, անմիջապէս որ նպաստաւոր պայմաններ գտնէ»* («Հայ սկաուտ», թիւ 6, 16 յունուար, 1920):

1918թ. Ռոդոսթոյում գործում էր «Արարատ» ֆուտբոլային թիմը, որը մի շարք հաղթանակներ տանում տեղի թուրքական թիմերի նկատմամբ: ՀՄԸՄ-ի Իզմիտի մասնաճյուղը պաշտոնապես սկսում է գործել 1919թ.

[3] Տես «Հայ սկաուտ», Ա տարի, թիւ 6, յունուար, 1920:

Տեսարան Բերա-Շիշլի եզրափակիչ հանդիպումից: Լուսանկարը «Հայ սկաուտից», 1921թ.

ՀՄԸՄ-ի Բերա-Շիշլիի մասնաճյուղի Ա ֆուտբոլային թիմը: Լուսանկարը «Հայ սկաուտից», 1920թ.



Հ. Մ. Ը. Մ.
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ԵՐԵԼԻ

ՄՐՑՄԱՆ ՀՐԱՎԻՐԱԳԻՐ

Մրցման օրը
Վայրը
Խաղը կ'սկսի
Ժամը
Ամիսը
Տարեթիվը

ՀՄԸՄ-ի Շիշլիի մասնաճյուղի մրցումների հրավերի ձևանմուշ, 1920թ., ՀՄԸՄ-ի Շիշլիի ֆուտբոլային թիմը
Ձախից՝ ՀՄԸՄ-ի Բերայի մասնաճյուղի ֆուտբոլի թիմը, Զմյուռնիայի հայկական ֆուտբոլային թիմը։ Թիմի ավագ՝ Գևորգ Հաբեթյան

Բերա-Շիշլիի ֆուտբոլային թիմի խաղացողների անվանացանկը՝ լուսանկարներով, 1920-1921թթ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Հայ ֆուտբոլիստներ Ասատուր Պոտիկյանը և Գաբրիել Մաճառյանը: Լուսանկարը «Հայ սկաուտից», 1920թ.

վերջին: Հատկանշական է, որ տեղի ֆուտբոլային թիմը 1920թ. միջմասնաճյուղային մրցաշարի ժամանակ 1:0 հաշվով հաղթանակ է տոնում Պոլսի հայկական ուժեղագույն թիմերից մեկի՝ Բերա-Շիշլիի մասնաճյուղի թիմի նկատմամբ:

Մարզական ու սկաուտական խմբերի կազմավորման գործընթացից հետո չեն մնում Ադաբազարի չորս վարժարանները, իսկ տեղացի մարզիկները մասնակցում են հայկական օլիմպիական խաղերին:

Բրուսայի ՀՄԸՄ-ի մասնաճյուղը հիմնվում է 1921թ. մայիսին: Նույն թվականի ամռանը տեղի հայկական ֆուտբոլային թիմը հաղթական ելույթներ է ունենում տեղի հունական զինվորական և սկաուտական թիմերի նկատմամբ:

Պատերազմից հետո աշխուժացավ նաև մարզական կյանքը Կիլիկիայում: Այստեղ մարզական գործունեության ծավալման հիմնական կենտրոններն էին Ադանան, Մերսինը, Տարսոնը և Դորթյոլը (Չորք-Մարզպան):

Ադանայում լույս տեսնող «Կիլիկիա» թերթի՝ 1919թ. մարտի 28-ի համարում հրապարակված «Հայ նոր սերունդի մարմնակրթութիւնը» վերնագրով հոդ-

Զմյուռնիայի հայկական ֆուտբոլային թիմը, 1920-1921թթ.
Ադանայի «Կիլիկիա» հայկական ֆուտբոլային ակումբի լուսանկարը, 1920թ.

ՀԲԸՄ-ի Մերսինի հայկական որբանոցի «Մասիս» ֆուտբոլային թիմը, 1920-1921թթ.
«Կիլիկիոյ հայոց» ֆուտբոլի թիմը, Ադանա, 1920-1921թթ.

վածում առաջարկվում էր ստեղծել մարմնակրթական միություն: Շուտով Ադանայում ստեղծվեցին «Արիամարտ» մարմնակրթական միությունը և «Կիլիկիա» հայկական ֆուտբոլային ակումբը: Այս միությունը կազմակերպում էր դաշտային խաղեր, շվեդական մարզանք և ֆուտբոլ: Այն շուտով լուծարվում է, որի հիման վրա ստեղծվում է ՀՄԸՄ-ի Ադանայի մասնաճյուղը:

Միաժամանակ Ալեքսանդրեթ սկսեց գործել «Փայլակ» հայկական ֆուտբոլային թիմը: Կիլիկիայում ձևավորված հայկական ֆուտբոլային թիմերը հաջողությամբ հանդես են գալիս տեղի թուրքական և հունական թիմերի դեմ մրցապայքարում: Մարզական ակտիվությունից անմասն չեն մնում նաև Կիլիկիայում գտնվող որբանոց-

1922թ. Պոլսում կայացած միջազգային մրցումների մրցավար Գրիգոր Ճոլոյանին տրված հուշամեդալ, ՀՅԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Տեսարան 1921թ. Պոլսում տեղի ունեցած վազքի միջազգային մրցումներից, ՀՅԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Programme Officiel

Pipe. 20

CHAMPIONNAT

ANNUEL

d'Athlétisme et de Football

de

CONSTANTINOPLE

STADIUM TAXIM

JUIN

1922

C. MACRIDÈS & J. ALEYROPOULO

«Ռոբերտ» քոլեջի ֆուտբոլի թիմը: Լուսանկարը «Հայ սկաուտից», 1920թ.

1922թ. հունիսին Պոլսում տեղի ունեցած միջազգային սպորտային մրցումների ծրագիրը, ՀՅԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Հայ ցեղը ընդունակ է սպրելու։
Պատասխանը Օգոստոս 6ին և 27ին կու տայ հայ մարզիկը։

ՀԱՅԿ. ԸՆԴՀ. ՈՂԻՄՊԻԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ
Հ. Մ. Ը. Մ.ի կողմէ

Ամենամեծ պատրաստութեամբ տեղի կունենայ 27 Օգոստոս 1922, կիրակի օր ժամը 2,30ին, Կ. Պոլսոյ

ԳԱՏԸԳԻՒՂԻ ԻՆՆԻՕՆ ԳԼԻԽՊԻ ՄԷՋ

կը մասնակցին

ՊՈՂՍՈՅ և ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
ԼԱՒԱԳՈՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

— Այս առթիւ Կարապետ Շահինեան կը մեկնի Կ. Պոլիս, մասնակցելու համալ մրցումներուն։

Տեսարաններ ՀՄԸՄ-ի 1920թ. տարեկան օլիմպիական խաղերից, ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

1919թ. հայկական օլիմպիական խաղերի մասնակցող հեծանվորդները, ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

ների սանները: Որբանոցներ ներմուծվում են բասկետբոլը, ինչպես նաև թեթև աթլետիկայի տարբեր մարզաձևեր:

Ադանայի Աբգարյան վարժարանում մարմնամարզության դասընթացներ կազմակերպելու նպատակով Պոլսից հրավիրում են վաղամեռիկ նշանավոր մարզիկ ու բանաստեղծ Մատթեոս Զարիֆյանին:

Առաջին աշխարհամարտից հետո աշխուժացող մարմնամարզական կյանքին անդրադարձներ էր կատարում արևմտահայ պարբերական մամուլը:

Հայ մարզիկները, ովքեր համախմբված էին ՀՄԸՄ-ի մասնաճյուղերի շուրջ, իրենց մասնակցությունը բերեցին նաև 1920-1922թթ. Պոլսում կազմակերպված միջազգային սպորտային մրցաշարերին ու առաջնություններին: Դրանք կարևոր փորձաքննություններ էին հայկական ակումբների ու ՀՄԸՄ-ի մասնաճյուղերի մարզիկների համար՝ իրենց երկարատև ու քրտնաջան աշխատանքի

ՀՄԸՄ-ի մարզիկները տարեկան օլիմպիական խաղերի ժամանակ, 1919թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Հայ սկաուտները ՀՄԸՄ-ի տարեկան օլիմպիական խաղերի հանդիսավոր բացման ժամանակ, ՀՑԹԻ, Գ. Ճոլոյյանի հավաքածու

Ա. ՏԱՐԻ ԹՒՒ 1 — ԳԻՆ 10 ԳՐՈՒՇ. — 31 ՕԳՈՍՏ. 1922

ՄԱՐԶԱՇԽԱՐՀ

ՕՐԱԹԵՐԹ ԱՌԱՆՁԻՆ ԳԱՂԱՓԱՐՈՒԹԵՐՈՎ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵՐ ԽՆԴԻՐԸՆԿԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶՐՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՐԱՑՈՒԹԻՒՆԸ

MARZACHKHARH

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՐՈՒԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՍԱՓՈՒԹԻՒՆԸ

արդյունքները հեղինակավոր այս ստուգատեսների ժամանակ ներկայացնելու առումով: Հիշարժան էին 1922թ. հունիսի 9-11-ը հայկական, հունական, հրեական, ռուսական ակումբների մասնակցությամբ տեղի ունեցած մրցումները, որտեղ հայ մարզիկները փայլուն արդյունքներ ցույց տվեցին: Սակայն վերջին պահին առաջատարի դիրքեր ապահոված հայկական կողմը, այդ թվում նաև եզրափակիչ դուրս եկած ՀՄԸՄ-ի ֆուտբոլի թիմը, ի նշան բողոքի մրցավարական կամայականությունների դեմ, լքեցին առաջնությունը:

Հետպատերազմյան մարզական կյանքում ի հայտ եկան նոր անուններ ու չեմպիոններ: Դրանց թվում հիշատակելի են Գաբրիել Քեշիշյանի, Հրաչյա Գալֆայանի, Հարություն Բեքմեզյանի, Սուրեն Անդրեասյանի, Զարեհ Յավրույանի, Հրանտ Աճեմյանի, Հայկազուն Իսկենդերյանի, Սիմոն Սետեֆճյանի, Արամ Պապայանի անունները:

Այս շրջանում Պոլսում մարզական թեմայով լույս տեսան մի շարք արժեքավոր աշխատանքներ: Դրանց թվում հիշատակելի է Վարագ Փողարյանի «Ֆութպոլի խաղը» գիրքը: Դրա առաջաբանում հեղինակը գրում է. *«...Ինչպես առիւծը արժանաբար կոչուած է թագաւորը կենդանական եւ կաղնին բուսական աշխարհին, նոյնպես ֆութպոլն ալ կրնանք կոչել թագաւոր խաղերուն: Խաղերը, որոշ չափով կը զարգացնեն մարդուն ֆիզիքականը, մտաւորականը եւ ուրիշներ ալ կան որ վերոյիշեալ երեք բարեմասնութիւններն ալ իրենց վրայ կը կրեն, ասոնցմէ է ֆութպոլը»* (Վ. Փողարյան. Ֆութպոլի խաղը, Կ. Պոլիս, 1921, էջ 3):

Գրքի վերջաբանը, որը գրել է նշանավոր մարզիկ

«Մարզաշխարհ» պարբերաթերթի անդրանիկ համարը, 1922թ., օգոստոս

ՀՄԸՄ-ի առաջին ֆուտբոլային թիմերից մեկը, 1921թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյյանի հավաքածու

Հայ մարզիկ Վարագ Փողարյանի հեղինակությամբ լույս տեսած «Ֆութպոլի խաղը» գրքի կազմը
Վարագ Փողարյանը գնդի հրման պահին, ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

ՀԲԸՄ-ի Ա ֆուտբոլային թիմը, 1920թ., ՀՅԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

ՀՄԸՄ-ի Սկյուտարի մասնաճյուղի մարզահանդեսի ազդագիրը, օգոստոս, 1921թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

ՀՄԸՄ-ի Բերայի մասնաճյուղի կողմից կազմակերպված մարզական միջոցառման տոմսակներ, 1919թ. ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Վահրամ Փափազյանը, ավարտվում է հետևյալ տողերով. *«...Հայ երիտասարդութիւնը ինքնազոհ սերունդ մըն է եւ իր ազգային մեքենային լուսազոյն գործունէութիւն մը տալու համար պէտք եղած միջոցներէն պէտք չէ խուսափի, երբ դաշտի մէջ կը խաղաք, հակառակ ձեր պարտութեան կը շարունակէք ձեր պայքարը ասոնց որևէ մեկուն բարկանալու կամ պատասխանատվութիւնը ձեր ընկերներուն վրայ բեռցնելու. գիտցեք որ ձեր բարոյականին հետ կը բարձրացնեք ձեր ազգին բարոյականը, եւ ազգի մը բարոյականն է որ կրնայ տեւականացնել զինք»*:[4]

«Ռոբերտ» քոլեջի տարեկան դաշտահանդեսին ներկա գտնվելու տոմսակ, ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

ՀՄԸՄ-ի տարեկան օլիմպիական խաղերի հայտագիրը, 1919թ. ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու


Annual Field-Day
of the
Athletic Association
of
Robert College
Saturday, May 28 1921 at 2.00 p. m.
General Admission Prs. 50


Հ. Մ. Ը. Մ.

ՏԱՐԵԿԱՆ
ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ
ԱՐԵՆ. Ս. ՊԱՅՐԻԱՐՔ ՀԷՐ
31 Օգոստոս 1919 Կիրակի ժամը 2 ին
ԳԱՏԸԳԻՒՂ "ԻՒՆԻՕՆ-ՔԼԻՒԲ"-Ի ԴԱՇՏԱՎԱՅՐԸ

JEUX ATHLETIQUES ANNUELS
ORGANISÉS PAR
L'UNION ARMÉNIENNE DE CULTURE PHYSIQUE
ET DE SCOUTISME
Auront lieu Dimanche le 31 Août 1919 à 2 h. (p. m.)
A L'UNION CLUB DE KADIKEUY

[4] **Վ. Փողարյան.** Ֆութպոլի խաղը, Կ. Պոլիս, 1921, էջ 99:



ՀՄԸՄ-ի մարզական մրցումների ազդագրեր, 1919-21թթ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու



Գ. ՄԱՍ III. PART

Ա. ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄ FOOTBALL MATCH

Անգլիական եւ Հ. Մ. Ը. Մ. Բեռայի մասնակցությամբ խաղադիրուն միջև.

Between english and armenian teams

Բ. ՄՐՑԱՆԱՆԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐՈՒՆ ՑԱՆԿԸ

Մեծերու բաժին

1. Լ. Ալեքսեան
2. Գ. Հովսեպեան
3. Գ. Քէշիշեան
4. Մ. Մոմամեան
5. Ա. Մարտիրոսեան
6. Ս. Խուպլիպէրեան
7. Հ. Թէրզեան
8. Ժ. Լիմեան
9. Ա. Ատոյեան
10. Զ. Դերձակեան
11. Վ. Տօնլեգեան
12. Լ. Սաղաթեան
13. Օ. Տատուրեան
14. Լ. Սարգսեան
15. Զ. Ալիքսանեան
16. Ա. Խաչատրեան
17. Գ. Դրոսոսեան
18. Գեր. Գլօրլէճեան
19. Գեր. Գլօրլէճեան
20. Մ. Ամիրեան
21. Զ. Սալբեան

Մանչերու բաժին

22. Վ. Բէրմէլեան
23. Ա. Մուրադեան
24. Ս. Թիթիտնեան
25. Ժ. Խուպլիպէրեան
26. Ն. Զուլոյեան
27. Ռ. Գէնլեան
28. Գ. Մարտիրոսեան
29. Զ. Գաղոյեան
30. Ն. Գլէնսիրեան
31. Գ. Խրոխոեան
32. Ժ. Մոսթանեան
33. Ա. Նոյոդլեան
34. Ռ. Սեվեան
35. Հ. Օտեգարեան
36. Ս. Խանեան



ՀԱՅԿԱԿԱՆ

Գ՛ ԸՆԴՀ. ՈԼԻՄՊԻԱԿԱՆ

ՄՐՑՈՒՄՆԵՐ

Jeux Athlétiques Armeniens

27 Օգոստ. 1922 ժամը 2ին

«ԻՒՆԻՕՆ ԳԼԻՒՊ» ԳԱՏԸԳԻՒՂ

Հայ և անգլիացի ֆուտբոլիստների միջև կայանալիք ֆուտբոլային խաղի հայտագիր, ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու
ՀՄԸՄ-ի վեցերորդ օլիմպիական խաղերի ազդագիրը, 1922թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու



ՀՄԸՄ-ի 1921թ. օլիմպիական խաղերի չեմպիոնները: Լուսանկարները «Հայ սկաուտից», 1921թ.

Մեծ եղեռնի սարսափները տեսած հայությունը, բռնագաղթի ու կոտորածների նոր հեռանկարից երկյուղած, վերստին ստիպված եղավ թողնել հարազատ բնօրրանը՝ հաստատվելով Մերձավոր Արևելքի երկրներում, Հունաստանում և այլուր։ Այս զարգացումներն անհետևանք չանցան նաև հայկական մարմնամարզական կյանքի վրա։ Անվտանգության նկատառումներից ելնելով՝ շատ ակումբներ կրկին փակվեցին, իսկ մի քանիսը կիսեցին հարազատ ժողովրդի ճակատագիրը՝ դառնալով վտարանդի ակումբներ։ Այսպես, Սեբաստիայի «Պարթև» ակումբը հաստատվեց Սիրիայում, Զմյուռնիայի «Արմենիա» ֆուտբոլային թիմը՝ Հունաստանում, իսկ դրանց մի մասը կազմալուծվեց։

Հանրապետական Թուրքիայում մարզական կյանքում հայ մարզիկները, չնայած էթնիկ փոքրամասնությունների հանդեպ որդեգրած անհանդուրժողական և ազգայնամոլական քաղաքականությանը, կարևոր դիրքեր զբաղեցրին՝ ունենալով նշանակալից հաջողություններ։

Հայ մարզիկ Արամ Աբելյանը սկավառակը նետելու պահին, «Հայ սկաուտ», 1919թ.



Բասկետբոլի խաղադաշտի հատակագիծը «Հայ սկաուտից», 1920թ.

ՀՄԸՄ-ի բասկետբոլի մրցումներ կազմակերպելու նախագիծ, նոյեմբեր, 1921թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

ՀՄԸՄ-ի տարեկան մրցումների և օլիմպիական խաղերի մրցանակակիր Գ. Ճոլոյանին տրված մեդալների նմուշներ, ՀՑԹԻ, Գրիգոր Ճոլոյանի հավաքածու

Զմյուռնիայի «Արմենիա» ֆուտբոլային թիմը Հունաստանում, 1922թ., ՀՅԹԻ հավաքածու

Միջագետքի տարագրյալների նպաստամատույց մարմինը: Աջ անկյունում նստած է անվանի հայ մարզիկ, նպաստամատույց մարմնի ատենապետ Մարտիրոս Գույումճյանը, 1920թ.

Գլուխ տասնմեկերորդ

ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊՈՐՏԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑՆԵՐՈՒՄ

«Ժողովուրդի մը առողջութիւնը, հետևաբար յարատևութիւնը կախում ունի զայն ձևացնող անհատներուն սեփական առողջութիւնէն»:

Գրիգոր Ճօլոլեան

Մեծ եղեռնից հետո Օսմանյան կայսրության տարածքով մեկ տարբեր հայկական ու օտարերկրյա կազմակերպությունների կողմից հարյուրավոր որբանոցներ ստեղծվեցին, որոնց շնորհիվ ցեղասպանությունը վերապրած հայ մանուկներն ունեցան իրենց կարևոր հանգրվանը, և որտեղ փաստորեն կոփվեցին ապագայում կյանքի դժվարությունները հաղթահարելու նրանց կարողությունները:

Որբանոցներում, բացի որբերի առողջապահական և այլ կենսական հարցերի ապահովումից, մեծ կարևորություն էր տրվում հայրենասիրության, մասնագիտական կարողությունների և մրցակցային ոգու ներդրմանը: Այս առումով մեծ ուշադրություն դարձվեց մատաղ սերնդին մարմնամարզության ու սպորտային զանազան մրցումների միջոցով կոփելու գործին:

Գավառներից Պոլսում հանգրվանած հազարավոր հայ որբերն ազգային մարմինների աջակցությամբ տեղավորվեցին մայրաքաղաքի որբանոցներում: Ստեղծվեցին Պեյլերպեյի, Եդի կուլեի, Խասգյուղի, Առնավուտ գյուղի, Գարակյոզյան, Արամյան, Պեզազյան, Մխիթարյան որբանոցները: Ավելի ուշ այս բոլոր որբանոցները Գուլելիի կենտրոնական որբանոցում կենտրոնացնելու որոշումը դյուրացրեց նաև ՀՄԸՄ-ի սկաուտական շարժումը որբանոցի սաների շրջանում էլ ավելի տարածելու համար: Սկաուտությունն այս առումով դիտվեց որպես կարևոր միջոց որբանոցներում դաստիարակչական աշխատանք տանելու և առողջ սերունդ պատրաստելու գործում:

ՀՄԸՄ-ի նպատակը շարադրված էր հետևյալ կերպ. «*...Լայն և պարզ ծրագրով մը սկսիլ մարմնակրթանքի գործը և այն մղցնել մասնաւորապես դպրոցներէ և հիմելի որբանոցներէն ներս*»:[1]

Հայ մարզիկներն ու մարզիչները ՀՄԸՄ-ի միջոցով իրականացված համակարգված աշխատանքով ձեռնամուխ եղավ Պոլսում, շրջակա գյուղերի և քաղաքների, ինչպես նաև Կիլիկիայում ստեղծված որբանոցների սաների ֆիզիկական ու բարոյական կրթության գործին: Նրանց թվում էին Բյուզանդ Կյոզիպյոյուքյանը, Գրիգոր Ճոլոլյանը, Վարդգես Տեր-Անդրեասյանը, Լևոն Սարուխանը, Քերովբե Ժպտունին, Հրանդ Պարսումյանը և ուրիշներ: Հայության բեկորները Լիբանանում, Սիրիայում և այլուր հաստատվելուց հետո էլ հայ որբերի կողքին էին հայ մարզիկներն ու մարզիչները: Մեծ նվիրումով ու ինքնազոհությամբ իրականացված այս առաքելությունն արժանվույն կերպով պետք է գնահատվի գալիք սերունդների կողմից:

Որբախնամ մեծ աշխատանք իրականացվեց հայկական սկաուտական խմբերի ու մարմնամարզական ակումբների կողմից, կազմակերպվեցին հանգանակություններ: 1920թ. Պոլսի հայաբնակ թաղերում Ձատկի տոների առիթով բաժանվեցին կոկարդներ՝ «*Յիշենք*

[1] **Բ. Թորիկյան.** նշվ. աշխ., էջ 40:

մեր որբերը» վերտառությամբ: Հանգանակվեց 4 հազար օսմանյան ոսկի, որն օգտագործվեց որբերի համար սկաուտական համազգեստ ձեռք բերելու համար: ՀՄԸՄ-ը ջանասիրաբար լծվում է Պոլսի հայ որբանոցների շուրջ 15 հազար որբերի սկաուտական ու մարզական դաստիարակությանը:

Պոլսի հայ սկաուտների ջանքերով ձմեռային վառելիք հայթայթվեց՝ որբանոցների կարիքները հոգալու համար: Բացի այդ, իրականացվեց աննախադեպ փրկարարական գործողություն. Մարմարայի ափամերձ Յալովա բնակավայրի հայ բնակչությունը նավով տարհանվեց՝ այդպիսով շուրջ 4 հազար հայորդիների փրկելով վերահաս մահից:

Հայկական մարմնամարզական շարժման պատմության մեջ յուրօրինակ երևույթ էր Գուլելիի միջորբանոցային օլիմպիական խաղերի անցկացումը Պոլսի Հայոց Պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի հովանավորությամբ: Այս խաղերին Պատրիարքն անձամբ մասնակցում էր մրցանակաբաշխության արարողություններին: Դրանց կազմակերպման գործում մեծ ջանքեր ներդրեց Գրիգոր Ճոլոլյանը: Որբանոցներում մարմնակրթության նկատմամբ նման ուշադրությունը թելադրված էր նախևառաջ ծնողական խնամքից զրկված և հոգեկան մեծ ցնցում ապրած երեխաներին առողջ ապրելակերպին ընտելացնելու անհրաժեշտությամբ: Հետագայում որբանոցներից դուրս եկան բազմաթիվ մարզիկներ, ովքեր իրենց մարզական կարողություններն ապացուցեցին ՀՄԸՄ-ի միջմասնաճյուղային և միջազգային տարբեր մրցումներում:

Ոռոշ որբանոցներում յուրաքանչյուր շաբաթ որբե-

Տեսարաններ Պոլսում տեղի ունեցած միջորբանոցային օլիմպիական խաղերից, 1921թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոլյանի հավաքածու

Գուլելիի ազգային կեդրոնական որբանոցի սկաուտական խումբը, 1921թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Պոլսի Գատըգյուղի որբանոցի «Ծիծեռնակ» ֆուտբոլային թիմը, 1922թ., Օղլանդո Կալումելայի հավաքածու

Գուլելիի որբանոցի շենքը Ստամբուլում
Ներդիր լուսանկարը ներկայացնում է հայ որբերին՝ խմբված Գուլելիի զորանոց-ուսումնարանի մուտքի մոտ



րի համար կազմակերպվում էին սկաուտական արշավներ ու մրցույթներ՝ վերածելով այս զբաղմունքը կյանքի հետագա դժվարությունները հաղթահարելու կարևոր դպրոցի:

Մարմնակրթական ու սկաուտական ակտիվ աշխատանք էր տարվում Պոլսի Բերա թաղամասի Եսայան որբանոցի սաների շրջանում: Այստեղ 1912 թվազ յանը: Իսկ 1922թ. Շիշլիում հիմնված Գարակյոզյան որբանոցում Արամ Նիկողոսյանի ջանքերով ստեղծվեց հատուկ սկաուտական խորհուրդ: Գատըգյուղի Արամյան որբանոցի սկաուտական շարժումը կազմակերպում էր Ներսես Օհանյանը:

Արդեն նշվեց՝ վերոհիշյալ որբանոցների, ինչպես նաև Եդի կուլեի, Գարակյոզյան, Եսայան և Խասգյուղի որբանոցների փակման հետևանքով 1920թ. գարնանը ստեղծվում է Գուլելիի կենտրոնական որբանոցը: Հատկանշական է, որ Պոլսի անգլիական զինվորական հրա-

Գրիգոր Ճոլոյանը մարզիկ-որբերի հետ, 1921թ. ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու
Տեսարան միջորբանոցային օլիմպիական խաղերից, մարտ 1921թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու



ՈՐԲԵՐՈՒ ՕՐ

Հայ պատանի, 27 Յունիսին որբերու Նուիրեալն է այն օրը մասնաւորապես մեր համար, որ տարեկիցներդ են անոնք, որոնք կորսնցուցին բնականաբար, ծնողքն եւ ազգականներն: Անոնք ապագայ ազգը, ապագայ Հայաստանը պիտի կազմեն քեզի հետ ձեռք ձեռքի տուած: Չես գիտեր որ ինչ մեծ հոգիներ, ինչ տաղանդներ կան ծածկուած անոնց մէջ որ հիմա քու աջակցութեանդ կ'սպասեն: Քու պարտականութիւնդ է օգնել, կարելի չափով սատարել անոնց գործին:

Թեղադրէ ծնողքիդ եւ ազգականներուդ որ վերանայեն զանոնք այն օր, տան առանց խնայելու եւ գիտակցաբար:

Գործածէ քու ազդեցութիւնդ, հայ ակուռ. դուն կը սիրուիս ծնողքդ ու ազգականներդ անոնք չպիտի մերժեն քու թեղադրութիւնդ:

Գիտցիր քու պարտականութիւնդ:

Պոլսի Ազգային կեդրոնական որբանոցի ֆուտբոլային թիմը, 1920թ.

Տեսարաններ Ազգային որբանոցը ՀՄԸՄ-ի մասնաճյուղ հռչակելու արարողությունից, մարտ, 1921թ., ՀՅԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

մանատարության կարգադրությամբ Գուլելիի պետական սպայական վարժարանի ընդարձակ շենքերն ու հարմարությունները հանձնվեցին հայ և օտարերկրյա կազմակերպությունների տնօրինությանը՝ հայ որբերի խնամատարությունն ապահովելու համար: Սակայն այս որոշումը սուր արձագանք առաջացրեց թուրք ազգայնականների շրջանում, ովքեր փորձեցին գրավել սպայական վարժարանի շենքը, սակայն հանդիպելով լուրջ դիմադրության, կորուստներ կրելով՝ նահանջեցին: Որբերի առաջին գործը եղավ նաև հայկական եռագույնը

Միջորբանոցային օլիմպիական խաղեր. գնդի հրում որբանոցի սաների կատարմամբ, ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Գրիգոր Ճոլոյանը Պոլսի Ազգային կեդրոնական որբանոցի սաների հետ, 1921թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

բարձրացնել թուրքական նշանավոր հաստատության շենքի տարածքում:

Գուլելիի կենտրոնական որբանոցի շուրջ 1500 որբերի շրջանում սկաուտական ծրագրված աշխատանքը տարվում էր նշանավոր մարզիկներ Գրիգոր Ճոլոյանի և Բյուզանդ Կյոզիպյոյուքյանի կողմից: Այն ներառում էր արշավներ, բանակումներ, մասնագիտական գիտելիքների զարգացում, դասախոսություններ սկաուտական կենցաղի ու կարգուկանոնի, ազգային և հայրենասիրական թեմաների շուրջ: Բյուզանդ Կյոզիպյոյուքյանը նաև որբանոցների կենտրոնական մարմնի տնօրենն էր:

Գրիգոր Ճոլոյանի ջանքերով Գուլելիի զինվորական վարժարանի շենքի հարակից հատվածում որբերի օգնությամբ պատրաստվեցին մարզարան և ֆուտբոլի դաշտ: Պատրաստվեց նաև 276 մ երկարությամբ վազքուղի: Կարճ ժամանակում Գուլելիի որբանոցում մեծ տարածում ստացան թեթև աթլեթիկան, ֆուտբոլը և բասկետբոլը: Որբանոցի սաները հաջողությամբ մասնակցում էին հայկական օլիմպիական խաղերին

և «Ռոբերտ» քոլեջի տարեկան մրցումներին:[2] Որբանոցներում ձևավորված սկաուտական խմբերն իրենց մասնակցությունը բերեցին Պոլսի հայ սկաուտների ընդհանուր բանակումներին, իսկ 1922թ. միջորբանոցային աթլեթիկ մրցումները տեղի ունեցան սեպտեմբերի սկզբներին տեղի ունեցած այդպիսի մի բանակումներից մեկի ժամանակ:

Գրիգոր Ճոլոյանը իր հոդվածներից մեկում գրում է. «...*Աթլէտիկ խաղերն առ հասարակ անծանօթ մնա-*

[2] Տես Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 420, ց. 11, գ. 15:

Պոլսի Մխիթարյան որբանոցի սկաուտական խումբը, 14 ապրիլի, 1922թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Պոլսի Հայոց Պատրիարք Զավեն Տեր-Եղիայանը միջորբանոցային օլիմպիական խաղերի հաղթողների հետ, 1921թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

ցած են որբերուն: Քիչեր միայն պատահաբար ներկայ գտնուած ըլլալով ողիմպիական խաղերու, շատ տարտամ գաղափար մը կազմած էին անոր մասին: Այսօր արդեն իրենց ամէնէն սիրելի զբաղումներէն մին եղած է աթլէթիկը: Ամառնային մարզանքի պահերը մեծ մասամբ յատկացուած են այդ ճիւղերուն զարգացման, և յաճախ վարժութիւններ ու փորձեր տեղի ունեցած են զանազան տեսակ վազքերու, ոստումներու ևն: Այսօր անոնցմէ շատեր մէկ անգամէն ձեզի կ՚ըսեն թէ Հայկական ողիմպիականներու մրցանիշերը որոնց կը պատկանին և ինչ են, որոնք են Հայերուս լաւագոյն մարզիկները ևն: Տղաք ա՛յնքան եռանդեամբ փարած են շարժումին որ, բազմաթիւ դժուարութեանց յաղթելով, պարտէզը մարզարանի վերածելու համար, հողային հսկայ աշխատանք գլուխ հանած են: Ով որ տարուոյն սկիզբը Գալէլիի պարտէզը տեսած էր և ներկայ եղաւ Ողիմպիականներուն՝ կրնայ իսկոյն երևակայել այն ահռելի աշխատանքը որ գլուխ ելաւ կիսկատար և անբաւարար գործիքներու միջոցաւ»:[3]

Որբանոցներում, բացի ֆուտբոլից և մարմնամարզական խաղերից, մյուս մարզաձևերը ևս մեծ ընդունելություն էին գտնում: Խոսքը մասնավորապես բասկետբոլ, բեյսբոլ և վոլեյբոլ մարզաձևերի և դրանց համար որբանոցների մարզա-



Տարեկան միջորբանոցային օլիմպիական խաղերի ազդագիրը, հուլիս, 1921թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

ռանները համապատասխան սպորտային գույքով համալրելու մասին է:

Հետպատերազմյան շրջանում հայկական մարզական ու մարմնակրթական շարժման համար մեծ նշանակություն ունեցավ տարբեր կրթօջախներին և հատկապես որբանոցներին անվճար մարզական գույք տրամադրելու հանգամանքը, ինչը զգալի աջակցություն էր միջոցների բացակայության պայմաններում:

Գրեթե բոլոր որբանոցներն ունեին իրենց ֆուտբոլային թիմերը: Ծրագրված էր նաև միջորբանոցային ֆուտբոլային մրցումների անցկացումը: Մարզադաշտեր էին ստեղծվել Գուլելիի որբանոցի բակում և Հայդար փաշայի դաշտում: Հատկապես հայտնի էին Պեյլերպեյի և Կեդրոնական որբանոցի, ինչպես նաև Գատրգյուղի «Ծիծեռնակ» ֆուտբոլային թիմերը:

[3] Տես **Թէոդիկ**. Ամէնուն Տարեցոյցը, ԺԶ տարի, Պոլիս, 1923, էջ 391-400:

Գուլելիի որբանոցի սկաուտները բուրգեր են պատրաստում անգլիական «King George» ռազմանավի հրամանատարի՝ որբանոց այցի կապակցությամբ, 19 մայիսի, 1921թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

ՀՄԸՄ-ի Սկյուտարի մասնաճյուղի Պերպերյան որբանոցի սկաուտները, 1921թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Գուլելիի որբանոցի սաները մարզանքի պահին, 1921թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Լիբանանի Ջբեյլ գյուղում ստեղծված «Թռչնոց բույն» որբանոցի ուժեղագույն ֆուտբոլային թիմը, 1924թ.

Հայ մարզիկների մի մասը տարբեր որբանոցներում դարձան մարմնամարզի ուսուցիչներ, ինչպես օրինակ՝ Գրիգոր Ճոլոյանը, ով Ազգային խնամատարության ընդհանուր տնօրեն և մարմնամարզիկ Բյուզանդ Կյոզիպյոյուքյանի առաջարկով ստանձնեց Գուլելիի որբանոցի սկաուտապետի և մարզանքի ուսուցչի պարտականությունը, իսկ նշանավոր աթլեթ Մարտիրոս Կույումջյանը Միջագետքում լծվեց հայ գաղթականներին ու որբերին ցուցաբերվող նպաստամատույց աշխատանքներին՝ իր առաքելությունն իրականացնելով որպես Միջագետքի տարագրյալների նպաստամատույց մարմնի ատենապետ:

Հայ որբ-սկաուտները մասնակցեցին Պոլսի տարբեր թաղամասերում կայացած սկաուտական երդմնակալության հանդիսավոր արարողություններին: 1920 թ. հունվարին Պոլսի Բերա թաղամասի Սբ. Երրորդություն

Գուլելիի որբանոցի սաները ֆուտբոլի դաշտ պատրաստելու ժամանակ, 1921թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոլյանի հավաքածու



Ֆուտբոլային խաղ և սկաուտական մարզումներ Պորտ Սաիդի հայ որբերի մասնակցությամբ, 1916թ., Նուպարեան գրադարանի հավաքածու

եկեղեցում տեղի ունեցած երդմնակալության ժամանակ, Պոլսի Պատրիարքը հանդես եկավ ճառով, որում մասնավորապես նշեց. «...*Ամէնքս ալ մեծ յուզումով կրեսանք այս 60ի չափ պատանիները, որ եկան այստեղ և հայուն դրօշակին և Աւետարանին առջև երդում ըրին հաւատարիմ մնալ Աստծոյ, ծառայել հայրենիքին և գործել իբր պարտականութեան գիտակից մարդ: Ասոնք պիտի ըլլան պարկեշտ ու պատուաւոր քաղաքացիներ, իբր հայրենիքի քաղաքացի՝ պիտի ըլլան պարկեշտ, իբր զինուոր՝ պիտի ըլլան հաւատարիմ հայրենիքին...*»:[4]

Հայ մարզիկներն ու սկաուտներն իրենց առաքելությունը շարունակեցին Լիբանանի Զբեյլ, Ղազիր, Սայդա բնակավայրերում ստեղծված որբանոցներում, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի, Հունաստանի տարածքում ստեղծված որբանոցներում:

Զբեյլի որբանոցի սաները բուրգ կազմելիս, 1920-ական թթ. սկիզբ

Կյանքի վերածնունդի ու ցեղասպանությունը վերապրած սերնդի հաստատուն կամքի վկայությունն էին մարմնամարզական ու սպորտային կյանքի նկատմամբ հետաքրքրությունն ու նման ակումբների ստեղծումը հենց Դեր-Զորում, որտեղ հաստատված ու ցեղասպանությունից մազապուրծ հայությունը կարողացավ ուժ գտնել ոչ միայն ընդդիմանալու վերահաս մահվանը, այլև ստեղծելու սպորտային, մարմնամարզական ու սկաուտական խմբեր:

Դեր-Զորի հայկական ֆուտբոլային թիմը, 1920-ական թթ. սկիզբ

[4] Տես «Հայ սկաուտ», Ա տարի, թիւ 8, 16 փետրուար, 1920, էջ 123-124:

«Նոր դպրոցի» սկաուտական խումբը մարզանքի պահին, սկաուտապետ՝ Գրիգոր Հակոբյան, մայիս, 1914թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Գլուխ տասներկուերորդ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԾՆՈՒՆԴՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Սկաուտական շարժումը սկիզբ առավ անգլիացի գնդապետ Բեյդըն Փաուըլի (1857-1941թթ.) նախաձեռնությամբ, երբ նա 1908թ. հրատարակեց այս շարժման նախագիծը՝ «SCOUTING FOR BOYS» անունով գիրքը, որի նպատակն էր պատանիներին ու աղջիկներին որոշակի գիտելիքներ տալ բնության և զինվորական ծառայության մասին: Կարճ ժամանակահատվածում այս գաղափարներն աջակցություն ստացան աշխարհի տարբեր երկրների հարյուր հազարավոր համակիրների կողմից:

Հայկական առաջին սկաուտական խմբերը ձևավորվեցին 1910 թվականին Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի սաների կողմից:

Արևմտահայ իրականության մեջ առաջին անգամ 1912թ. բոյսկաուտների խումբ կազմվեց Պոլսի «Նոր դպրոցի» սաների կողմից, ովքեր ստեղծեցին եվրոպական ափի Ա գունդը: Սրան հաջորդեց Սկյուտարի հայ պատանիների կողմից ասիական ափի Ա գնդի կազմակերպումը «Առյուծ» և «Արծիվ» խմբերով: Պոլսում սկաուտական շարժման կազմակերպման ուղղությամբ առաջին գործնական քայլերն իրականացվեցին Պերպերյան, Մեզպուրյան և Տայան վարժարանների, ինչպես նաև Աղջկանց ամերիկյան վարժարանի սաների մասնակցությամբ: Այս ընթացքում հայ սկաուտապետները նամակագրական կապ հաստատեցին շարժման հիմնադիր գնդապետ Բեյդըն Փաուըլի հետ: Առաջին հայկական սկաուտական խմբերի համար սկաուտական համազգեստի հիմնական մատակարա-

Սկյուտարի հայկական սկաուտական առաջին խումբը, 1913թ.: Լուսանկարը «Մարմնամարզից»

«Նոր դպրոցի» սկաուտական խումբը մարզանքի պահին, մայիս, 1914թ. ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Պոլսի հայ սկաուտների եվրոպական ափի խումբը, 1913թ.:
Լուսանկարը՝ «Մարմնամարզից»

Պոլսի առաջին սկաուտական խմբերից մեկը: Սկաուտապետ՝
Գրիգոր Հակոբյան, 1913թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

ը դարձավ հայտնի մարմնամարզիկ Մկրտիչ Մկրյանը, ով այդ ժամանակ գտնվում էր Մանչեստրում:

Հայ երիտասարդության շրջանում սկաուտական գաղափարների նկատմամբ հետաքրքրություն առաջացնելուն լծվեց նաև «Մարմնամարզ» հանդեսը: 1912թ. փետրվարի 15-ի համարում լույս տեսավ «Տղայոց գումարտակներ» խորագրով հոդվածը: Այս հրապարակմանը հաջորդեց Հովհաննես Հինդլյանի հոդվածաշարը սկաուտական շարժման գաղափարախոսության ու բովանդակության մասին, իսկ Տ. Ե. Սիրամարգն իր հոդվածում ուղերձ հղեց հայ դաստիարակներին ու առաջնորդներին՝ հայ պատանեկան սկաուտական շարժում սկսելու հորդորով՝ հիմնականում շեշտը դնելով այս նախաձեռնության զինվորական և կարգապահական կողմերի վրա: Այս ընթացքում մշակվեց անգամ հայ սկաուտների վարքականոնը:

«Մարմնամարզի»՝ 1913թ. համարներից մեկում հրապարակված «Հայ Պոյ Սքաուդին դպրոցը» վերնագրով հոդվածում մանրամասն ներկայացված էր 38 կետից բաղկացած սկաուտական շարժման կանոնադրությունը: «Մարմնամարզում» է տպագրվում նաև Սկյուտարի հայ սկաուտների առաջին խմբանկարը՝ սկաուտական հանդերձանքով:

1913թ. Պոլսում Շավարշ Քրիսյանի և Հովհաննես Հինդլյանի համահեղինակությամբ լույս տեսավ *«Պոյ-Սքաուդը եւ իր կեանքին նպատակը. Հայ պոյ-սքաուդներ»* գրքույկը, որը «Մարմնամարզի» հերթական համարի հետ որպես նվեր տրվեց հանդեսի բաժանորդներին: Գրքույկը մեծ նշանակություն ունեցավ սկաուտական գաղափարախոսությունը «հայացնե-

լու», այն ավելի ժողովրդականացնելու համար՝ ներկայացնելով հայ սկաուտի տիպարի բնութագրումն ու սկաուտական շարժման յուրօրինակ փիլիսոփայությունը: Գրքույկի առաջաբանում հանդիպում ենք հետևյալ մտքերին. *«Աշխարհի վրա ամէն բանէ առաջ ու ամէն բանէ աւելի կը սիրեմ ազգս, ու կը յարգեմ այն բոլոր կենդանի էակները, անկէնդան իրերը ու յիշատակները, որոնք ինծի կը յիշեցնեն անոնց ալ Հայ, անոնց ալ հայկական ըլլալը, մարդիկ այս բանը ազգասիրութիւն կը նկատեն...»*:[1]

Հետագա շարադրանքում հստակորեն նշվում էր, որ սկաուտական այս նոր կազմակերպությանը ծանոթացնելը բնավ նպատակ չունի բացարձակապես հետևելու և կրկնօրինակելու այս գաղափարը: Հեղինակներն այս առումով հետաքրքիր մոտեցում են ցուցաբերում. *«... Աշխարհի մէջ շատ գեղեցիկ ձեռնարկներ, հաստատութիւններ կան, բայց յարաբերականութեան օրէնք մը ալ կայ՝ ըստ որում ձեռնարկ մը որ օգտակար է այս ինչ միջավայրի մէջ՝ կրնայ անօգուտ եւ նոյն իսկ վնասակար ըլլալ ուրիշ միջավայրի մը մէջ: Իմաստուն մարդը ան է որ օգտակար ձեռնարկի մը գաղափարը կ'առնէ եւ զայն կը պատշաճեցնէ իր միջավայրին: Ո՞վ գիտէ մինչև այսօր որքան վնասներ կրած ենք՝ միշտ նկատի առած չըլլալնուս համար յարաբերականութեան այս սկզբունքը...»*:[2]

Ազգային ինքնակառավարման ու ինքնակարգավորման, «ցեղը ազնուացնելու» գաղափարը առանցքային դարձավ հայկական սկաուտական շարժման համար: Կարևորվում էր հայ ազգի հավաքական ու համագործակցող ոգու ստեղծումը՝ մատաղ սերնդին ապա-



Շ. Քրիսյանի և Հ. Հինդլյանի համահեղինակությամբ լույս տեսած «Պոյ-սքաուդը եւ իր կեանքին նպատակը. հայ պոյսքաուտներ» գրքի շապիկը, 1913թ.

[1] Պոյ-Սքաուդը եւ իր կեանքին նպատակը. Հայ պոյ-սքաուդներ», Կ. Պոլիս, 1913, էջ Գ:

[2] Նույն տեղում, էջ 20-21:

գայում նոր ողբերգություններից զերծ պահելու համար: Այդ գաղափարն արտացոլված է հետևյալ մտքերում. *«...Պզտիկ բարեկամս, ընկերային կեանքին այս կարևոր պայմանը, փոխադարձ օգնութիւնը, շատ տկար է Հայուն մէջ: Հայը Հայուն համար գայլ է հաճախ, կը տեսնես թէ որքան դժուար պիտի ըլլայ քեզ համար մաքառիլ այս պապենական ախտին դէմ, բայց Պոյ սքաուտին նշանաբանն է ճգնիլ, մաքառիլ դժուարութիւններու դէմ, եւ մի մոռնար թէ յաղթանակը այնքան աւելի արժէքաւոր կ'ըլլայ որքան աւելի ճիգերով ձեռք բերուած է ան: Օն անդր, սիրելի Հայորդի, պատուոյ խօսք տուր ամէն օր բարի գործ մը կատարել, ծառայութիւն մը մատուցանել ուրիշին, հոգ չէ թէ շատ փոքր ծառայութիւն մը ըլլայ ան. աս կերպով պիտի վերաշինես, պիտի փոխես Հայու եսամոլ բնաւորութիւնդ եւ պիտի ունենաս գործակցութեան, փոխադարձ օգնութեան ոգին»*:[3]

Այս ընթացքում Գրիգոր Հակոբյանի ջանքերով հիմնադրվում է Սկյուտարի մարմնամարզարանի հայկական սկաուտական խումբը: Պոլսահայ երիտասարդության շրջանում սկաուտական շարժման ջատագովներ դարձան Տիգրան Խոյանը, Հայկ Ճիզմեճյանը, Կարլո Շահինյանը, Ժիրայր Խորասանճյանը և այլք:

Շուտով սկաուտական խմբեր ստեղծվեցին նաև գավառում, մասնավորապես Հայոց միացյալ ընկերության Զմշկածագ-Յուզպէքի վարժարանի տնօրեն Ղազարոս Գույումճյանի նախաձեռնությամբ ստեղծվում է սկաուտական «Տերսիմ» խումբը, որի նպատակն էր. *«վարժարանին մէջ եւ յետոյ դուրսը հետևելով Պոյ-սքաուտի սկզբունքներուն, զարգանալ ու զարգացնել զիրենք եւ ուրիշները մտքով, մարմնով եւ հոգիով, ապագային լինելու համար մտացի, առողջ եւ նկարագրի տէր երիտասարդներ եւ քաղաքացիներ...»* («Մարմնամարզ»,

[3] Պոյ-Սքաուտը և իր կեանքին նպատակը, էջ 28:

Հայ արենուշների ու սկաուտների տողանցքը ՀՄԸՄ-ի տարեկան օլիմպիական խաղերի բացման արարողության ժամանակ, 1919թ.: Լուսանկարները «Հայ սկաուտից»

Գ տարի, թիւ 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, 1913):

Սկաուտական խմբերն իրենց մասնակցությունը բերեցին նաև հայկական երրորդ և չորրորդ օլիմպիական խաղերին՝ մեծ խանդավառություն առաջացնելով այս մրցահանդեսներին ներկա հայ հանդիսատեսների շրջանում:

Սկաուտությունը հայ իրականության մեջ նպատակ ուներ հայ պատանիների ու աղջիկների շրջանում զարգացնել դժվարություններ հաղթահարելու, առաքինի կենցաղ ու կենսակերպ դավանելու և առողջ ապրելակերպի սկզբունքները: Այս հանգամանքը կարևոր նշանակություն էր ձեռք բերում:

Սկաուտական շարժումը տարածվում է նաև Եգիպտոսում: Հայ պատանիներից ու աղջիկներից սկաուտական խմբեր են կազմվում Կահիրեում, Ալեքսանդրիայում և Պորտ Սաիդում:

Հայ սկաուտների տողանցքը Հայկական օլիմպիական խաղերի բացման հանդիսավոր արարողության ժամանակ, 1919թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

ՀԱՅ ՍԿԱՈՒՏ

ՕՐԿԱՆ Հ. Մ. Ը. Մ. Ի

ԿԻՍԱՄՍԵԱՑ ՀԱՆԴԷՍ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 15 — 1 ՅՈՒՆԻՍ 1920

ՈՂՋՈՒՅՆ

ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ԽՐԻՍՏՈՍ ՅԱՐԵՆԱՆՑԻՆ ԱՆԹԻՔԻՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

ԳԻՆ 10 ՊԼՐԱԻԵ

«Հայ սկաուտի» համարներից մեկը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության տարեդարձին

Ավետիս Կապենցի սկաուտական անդամագրքույկը՝ տրված 1922թ., Հայաստանի ազգային արխիվի հավաքածու

Մատթեոս Զարիֆյան

Գրիգոր Հակոբյանը սկաուտապետի համազգեստով, Լուսանկարները «Հայ սկաուտից»

1913թ. մարտի 16-ին Սկյուտարի Առաջադիմասիրաց միության սրահում Շավարշ Քրիսյանը հանդես է գալիս դասախոսությամբ, որով ներկայացնում է նորաստեղծ շարժման առաքելությունը: Այս հավաքույթի արդյունքում ձևավորվում է Տեղական գործադիր մարմինը:

Շուտով «Մարմնամարզը» նախաձեռնում է *«Հայ Սկաուտիզմի առժամեայ տնօրէն ժողով»* վերտառությամբ համաժողովը՝ առաջարկելով դա անցկացնել հանդեսի խմբագրատանը: Առաջին համաժողովի հրավերը հատուկ շրջաբերականով ուղարկվում է Պոլսի բոլոր ակումբներին ու վարժարաններին: Շրջաբերականին կցված էին հատուկ հարցարաններ՝ մարզական ակումբների և վարժարանների մասին տեղեկություններ հավաքելու նպատակով: Ներկայացված էր նաև ժողովի օրակարգը, սակայն դրա անցկացումը նորից հետաձգվեց:

1913թ. մարտի 23-ին նույն տեղում կազմվում է սկաուտական հանձնախումբ, որին մասնակցում են Արամ Նիկողոսյանը, Հովհաննես Հինդլյանը, դոկտոր Ուզունյանը, Շավարշ Քրիսյանը, Կարլո Շահինյանը, Լևոն Թաշճյանը, Մկրտիչ Մկրյանը, Վահան Թեքեյանը և Սարգիս Մինասյանը: Այսպիսով, 1913թ. հայ սկաուտական շարժումն արդեն այլևս կարելի է կայացած համարել:

Հայ համազգեստավոր պատանիների ու աղջիկների քայլարշավներն ու դաշտահանդեսները, որոնք մեծ խանդավառությամբ էին ընդունվում հայ հանրության կողմից, չէին կարող չանհանգստացնել երիտթուրք ազգայնամոլներին, ովքեր ի սկզբանե այս շարժման գաղափարախոսությունն ու բովանդակությունն այլաձևեցին՝ թուրք պատանիների շրջանում ռազմամոլ քարոզչություն տարածելու համար:

Զմյուռնիայի հայ սկաուտները բանակումի ժամանակ, 1921-1922թթ.

Գուլելիի Ազգային կեդրոնական որբանոցի սկաուտները ժայռ մագլցելու պահին, 1921թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Պոլսում կազմակերպվելիք մեծ բանակումի ազդագիր, սեպտեմբեր, 1922թ.

Հայ սկաուտները Խասգյուղում՝ Մինաս Չերազի ավերված տան մոտ, 1921թ.

Հայ սկաուտները ժայռ մագլցելու պահին

Պոլսի հայ սկաուտների խումբ: Լուսանկարը «Հայ սկաուտից», 1920թ.

THE BOY SCOUTS ASSOCIATION,
25, BUCKINGHAM PALACE ROAD,
LONDON, S. W. 1.

June 24th, 1921.

Dear Mr. K. Djololian,

I am very much obliged to you for the beautiful photographs you have so kindly sent me of your Scouts and I should like to congratulate you on the boys' smart appearance and efficiency.

I was very interested to read your account of Scouting in Constantinople and I only wish I could have seen the boys myself on my way back from India, but unfortunately it was impossible for me to spare the time. I am very glad you have made the acquaintance of Captain Thesiger and hope you will let us hear from you sometimes as to how your Troop progresses.

With best wishes,

Yours sincerely,

Robert Baden-Powell

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ.

ԲԱՐԶՐԱՅԻՆ ԲԱՐԶՐԱՅՈՒՆ

ՀԷՅ
ԱՐԱՒԻԴԱՑՐՈՒ
ՅԱՅԱՐԴԻՐ-ԾՐԱԳԻՐ

*

Կ. ՊԱՇԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐԶՈՒՄԱՆ
1919

Սկաուտական շարժման հիմնադիր Բեյդըն Փաուելը և նրա պատասխան նամակը՝ հասցեագրված Գրիգոր Ճոլոյանին, 1921թ., ՀՅԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու
ՀՄԸՄ-ի հայ սկաուտների հայտագիր-կանոնագիրքը, Պոլիս, 1919թ.

Հայ Սկաուտ

Hai Scout

ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆՔ

ՕՐԿԱՆ Հ. Մ. Ը. Մ.

Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 9 | ԱՌՕՐԵԱՅԼԱՅՆ ԱԶԱՆ ԹԻՒ 26 ՍԻՐԿԷՋԻ — Կ. ՊՈԼԻՍ Bereavedjian Hay. No. 26 Sirkedji—Constantinople | 2 ՀՈԿՏ. 1921

ՅԵՂԻՆ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

1921 Յոկտեմբեր Բ. Շաբ. Միլիոպիսկանցն սանտրան մը

Զմյուռնիայի հայ սկաուտները, 1920-1922թթ.

Ռոդոսթոյի հայ սկաուտները Մարմարա ծովի կղզիներից մեկում կազմակերպված բանակումի ժամանակ, հունիս, 1922թ., ՀՅԹԻ, Գ. Ճոլոլյանի հավաքածու

Զմյուռնիայի հայկական սկաուտական Ա խումբը: Հիմնադիր և սկաուտապետ՝ Մկրտիչ Յանըգյան, 1921-1922թթ.

Ադանայի հայ սկաուտապետ Միքայել Իշլեմեճյան, ՀՅԹԻ, Միքայել Իշլեմեճյանի հավաքածու

Ադանայի հայ սկաուտները, ՀՅԹԻ, Միքայել Իշլեմեճյանի հավաքածու

Ադանայի հայ արիները, 1920թ., ՀՅԹԻ, Միքայել Իշլեմեճյանի հավաքածու

Եսայան որբանոցի հայկական սկաուտական խումբը, 1920-1921թթ.



ՀԱՄԱԶԱՍՊ ՓԱՆՈՍԵԱՆ

ՀՄԸՄ Մերսինի որբանոցի սկաուտական խումբը, 1921թ.

Ադանայի հայ սկաուտները՝ սկաուտապետ Համազասպ Փանոսյանի գլխավորությամբ, 1920թ.

ՀԱՅ ՍԿԱՈՒՏ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

"Haï Scout,,

(Armenian Scout)

Գաղթեց Կարս ՝ ՈՒՇԱԳԼԵԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 17-18

16 ՅՈՒԼԻՍ 1920

Brotherly Greetings to all Scouts in the International JAMBOREE RALLY IN LONDON.

ARMENIAN SCOUTS

ՄԵՐ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՈՂՋՈՒՅՆՆԵՐԸ

Լոնդոնի Միջազգային Սկաուտական Խմբաւորումի

ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐ

Գրիգոր Հակոբյանը սկաուտապետի համազգեստով

[4] «Հայ սկաուտ», Ա տարի, թիւ 1, էջ 12:

[5] Պատմութիւն իրանահայ սկաուտական կազմակերպութիւնների, 1919-1936, Թեհրան, 1974, էջ 50:

Առաջին համաշխարհային պատերազմի պատճառով մեծ թափ հավաքող հայ սկաուտական շարժումն առժամանակ կանգ առավ:

1918թ. ՀՄԸՄ-ի կազմավորմամբ ամուր հիմքեր ստեղծվեցին նաև հայ սկաուտական շարժման տարածման համար, հատկապես Պոլսի վարժարանների ու որբանոցների սաների շրջանում: ՀՄԸՄ-ի սկաուտական կառույցների գործունեությունը տարվում էր երկու ուղղությամբ՝ աշխատանք որբանոցների սաների հետ և գործունեության ծավալում մասնաճյուղերում:

Սկաուտական շարժումը կարևորվեց կարգապահ, կիրթ, կենսունակ ու օրինապաշտ քաղաքացիներ կրթելու գործում: Այն դիտվեց եղեռնի արհավիրքները վերապրած հայ որբերին ու պատանիներին կյանքի հանդեպ հավատ ներշնչելու, կյանքի դժվարությունները հաղթահարելու ու ինքնադրսևորվելու լավագույն միջոց: Շարժումն աջակցություն ստացավ նաև ազգային առաջնորդների, մասնավորապես Պոլսի Հայոց Պատրիարքի կողմից: Վերջինս իր օրհնագրերից մեկում գովեստի խոսքեր է գրում շարժման մասին. *«...որը կձգտի մեր պատանէկութիւնը պատրաստել մարմնով եւ նկարագրով եւ պատիւ համարեց իրեն շարքէրուն մէջ գտնուիլ հայ սկաուտներուն, որոնք պիտի ըլլան վաղուան տիպար Հայերը»*:[4]

Հայկական սկաուտական շարժման հիմնադիրներից Գրիգոր Հակոբյանն իր հուշերում նշում է. *«Մարզանքը մեզ պիտի տար մարմնով եւ հոգով առողջ սերունդ եւ սկաութութեան շնորհիւ, այդ նոր սերունդի մէջ պիտի մտնէր պարտքի, գիտակցութեան, զոհողութեան եւ ժուժկալութեան ու հայրենասիրութեան ոգին...»*:[5]

Պոլսի հայ սկաուտների հանդիսավոր երթը Ֆրանսիայի ազգային տոնի կապակցությամբ, հուլիսի 14, 1919թ., ՀՅԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Զմյուռնիայի հայ սկաուտների «Պատրաստ» հանդեսի ձեռագիր համարներից մեկը, 1921թ., ՀՑԹԻ հավաքածու

Զմյուռնիայում լույս տեսած «Պատրաստ» կիսամյա հանդեսի խորագիրը, նոյեմբեր, 1921թ.

Հատկապես մեծ էր հայ սկաուտական կազմակերպությունների՝ մարդասիրական օգնություն ցուցաբերելու և հանգանակությունների նշանակությունը հայկական որբանոցներում: «*Յիշենք մեր որբերը*» վերտառությամբ կոկարդների վաճառքի միջոցով կարճ ժամանակահատվածում հնարավոր դարձավ որբերի օգտին հանգանակել պատկառելի գումարներ: Ի դեպ, Պոլսում և Զմյուռնիայում տեղի ունեցած այս հանգանակություններին իրենց մասնակցությունը բերեցին նաև հույն սկաուտները:

Կենտրոնական վարչությունը Պոլսում կազմակերպում է առաջին անվճար դեղարանը և շարժական հիվանդանոցը: Երկու ամսվա ընթացքում օգնություն է ցուցաբերվում մոտ հազար հինգ հարյուր գաղթական հիվանդների: Այսպիսով, ՀՄԸՄ-ի սկաուտները որոշակիորեն ստանձնեցին նաև մարդասիրական նախաձեռնությունների ղեկավարման ու համադրման աշխատանքները:

ՀՄԸՄ-ի «Նոր դպրոցի» սկաուտները, 1919-22թթ., Կ. Պոլիս, ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Անվանի հայ սկաուտապետեր Հայկ Ճիզմեճյանը և Տիգրան Խոյանը

Սկաուտական ջոկատներ կազմակերպվեցին ՀՄԸՄ-ի գրեթե բոլոր մասնաճյուղերին կից: Շարժումը տարածվեց նաև Զմյուռնիայում, Ադաբազարում, Բուրսայում, Մարզվանում, Իզմիտում, Կիլիկիայի Ադանա և Տարսոն քաղաքներում, ինչպես նաև Եգիպտոսի Կահիրե, Ալեքսանդրիա և Պորտ Սաիդ քաղաքներում, Մերձավոր Արևելքի ու Եվրոպայի հայկական գաղութներում:

Պատերազմից հետո սկաուտական կյանքն ակտիվ էր Զմյուռնիայում, որտեղ այս գործի առաջամարտիկները հայտնի սկաուտապետներ Մկրտիչ Յանրգյանն ու Զավեն Հաբեթյանն էին: Զմյուռնիայի հայ սկաուտական կազմակերպությունները սերտորեն համագործակցում էին հունական, իտալական ու հրեական համանման խմբերի հետ, մասնակցում համատեղ բանակումներին:

Սկզբնական շրջանում միմյանցից անկախ գոր-

Տիգրան Խոյանն իր սկաուտական խմբի հետ, հուլիս, 1920թ.

ծող ՀՄԸՄ և Զմյուռնիայի հայկական սկաուտական կազմակերպությունները 1922թ. հունվարի 9-ին որոշում են կայացնում միավորվելու մասին:

Սկաուտական շարժումը շուտով տարածվում է նաև Կիլիկիայում: 1919թ. նոյեմբերի 26-ին Հայաստանից վերադարձած սպա, «Արիամարտի» ընդհանուր խմբապետ Միքայել Իշլեմեճյանը, կապ հաստատելով Պոլսի կենտրոնի հետ, հայտնում է Կիլիկիայի հայաշատ քաղաքներում սկաուտական մասնաճյուղեր ստեղծելու իր ծրագրի մասին: Նա Պորտ Սաիդից Կիլիկիա վերադարձող ՀՄԸՄ-ի որբանոցի սկաուտապետ Համազասպ Փանոսյանի առաջնորդությամբ հաստատվում է Մերսինում: «Կիլիկեան տարեցոյցի» էջերում Հ. Փանոսյանը ձևակերպում է սկաուտականության հիմնական նպատակը. «*ֆիզիքական զարգացումին հետ պարտականութեան գիտակից ազնիւ քաղաքացիներ հասցնելն է*», ինչպես նաև «ազգային մտաւորական և ֆիզիքական մակարդակը հաւասար աստիճանի վրայ պահելը»:[6]

Պոլսի կենտրոնի առաջարկով ու հավանությամբ Ադանայում կազմվում է ՀՄԸՄ-ի ժամանակավոր հանձնախումբ, որը 1919թ. հոկտեմբերի 14-ին կոչով դիմում է կիլիկիահայությանը՝ իրենց զավակներին ՀՄԸՄ-ի սկաուտական խմբերին անդամակցելու համար: 1919թ. նոյեմբերի 14-ին ձևավորվում է ՀՄԸՄ-ի շրջանային վարչությունը: Կարճ ժամանակահատվածում այս մասնաճյուղի սկաուտների թիվն անցնում է 400-ից: Կազմվում են նաև արենուշների խմբեր, որոնք, ի դեպ, նախորդեցին Պոլսի աղջիկների համանման խմբերի ձևավորմանը:

Հետաքրքիր են Արշակուհի Թեոդիկի դիտարկումները սկաուտական շարժման մեջ հայ աղջիկներին ներգրավելու առումով: Նա գրում է. «*Աղջիկներուն սքաութիզմը մանչերուն սքաութիզմին հետ նոյնը չէ: Պետք*

[6] Տես **Համազասպ Փանոսեան**. Սկաուտիզմի անհրաժեշտութիւնը և անոր ծագումը. «Կիլիկեան տարեցոյց», Ա տարի, Ատանա-Կիլիկիա, Կ. Պոլիս, 1922, էջ 192-193:

ՀՄԸՄ-ի սկաուտական վերին մարմինը, 1921թ., Պոլիս

ՀՄԸՄ-ի «Նոր դպրոցի» սկաուտները, 1919-22թթ., Կ. Պոլիս, ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

ՀՄԸՄ-ի Բեշիկթաշի մասնաճյուղի հայ սկաուտները Պոլսում կայացած միջազգային սկաուտական տողանցքի ժամանակ, 1920թ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

Դարդանելի շրջանի հայ սկաուտների երդմնակալության արարողությունը, ՀՑԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

չունինք որ մեր աղջիկները զինուոր ըլլան: Մեզմէ ոչ ոք կը փափաքի որ կիները այրերուն օրինակին հետեւին: Մենք կ'ուզենք որ մեր աղջիկները ըլլան կորովի կիներ, անոյշ եւ գթոտ: Աղջիկ սքաութներու մարզանքին կամ դաստիարակութեան միջև տարբերութիւն մը կայ: Մանչերու համար սքաութիզմը առնականութեան նպատակ ունի, այլ աղջիկներուն համար սքաութիզմը կանացի կորովութեան, որ կարող կ'ընէ աղջիկները լաւագոյն կերպով օգտուելու կեանքի պայքարին մէջ» («Հայ կին», Պոլիս, Ա տարի, թիւ 3, դեկտեմբեր, 1919):

1920թ. մարտին ՀՄԸՄ-ի նորընտիր շրջանային վարչությունն Ադանայում հայկական եռագույնի ներքո կազմակերպում է սկաուտների անդրանիկ երդման արարողությունը, որի հովանավորն էր Հայաստանի Հանրապետության պատվիրակության ներկայացուցիչ Միհրան Տամատյանը:

Սկաուտական խմբեր են կազմվում նաև Տարսոնում, որի սաների ջանքերով թողարկվում է «Արի» անունով խմորատիպ կիսամյա հանդեսը:

1920թ. հուլիսին հայտնի պոլսահայ սկաուտապետներ Վահան Չերազը, Տիգրան Խոյանը և Օննիկ Յազմաճյանը Հայաստանի Հանրապետության կառավարության հրավերով ժամանում են Երևան և աշխատանքներ սկսում Հայաստանում սկաուտական խմբեր ձևավորելու ուղղությամբ: Նրանց առաքելությունը մեծապես կարևորվեց հատկապես նորաստեղծ հանրապետության տարածքում ստեղծված որբանոցներում, որի տասնյակ հազարավոր սաները, բացի կենսապահովումից ու ուշադրությունից, նաև ֆիզիկական կրթություն ստանալու կարիք ունեին:

Ադանայի Քելեկյան և Սիսուան որբանոցների սկաուտները, 1920-1922թթ., ՀՑԹԻ, Գ. Ճոլոյյանի հավաքածու

Վահան Չերազը սկաուտական համազգեստով, ընտանեկան արխիվ

Պոլսում լույս տեսնող «Հայ սկաուտ» պարբերականը դարձավ սկաուտական շարժման պաշտոնաթերթը և որոշակիորեն ստանձնեց «Մարմնամարզի» առաքելությունը: Նոր պարբերականի առաջին համարի «Մեր գաղափարականը» վերնագրով խմբագրականում նշվում էր. *«... Հայը հսկայ ժայռի մը պէս դիմացաւ, կուրծք տուաւ այս ահաւոր փոթորիկին, կարծէս թէ ան շինուած էր ան տեսակ նիւթէ մը որ տակաւին անծանոթ ըլլար ներկայ աշխարհի գիտուններուն իսկ... Չօգտուիլ այսպէս հրաշալի եւ բիւր անգամ փորձերու ենթարկուած ատաղձք մը, չօգտուիլ անոր ֆիզիքական եւ հոգեկան անբաղդատելի յատկութիւններէն, եւ չպատրաստել այդ ատաղձէն ապագային համար անմրցելի ազգը, գիտակից ու օրինապահ քաղաքացին եւ իր հարևաններուն յարգանք ազդող ու վստահութիւն ներշնչող դրացին, պիտի ըլլար առնուազն ոճիր...»* («Հայ սկաուտ», Ա տարի, թիւ 1, 1919, էջ 2):

Սակայն «Հայ սկաուտը» հետպատերազմյան միակ մարմնամարզական ու սկաուտական պարբերականը չէր: 1920թ. Զմյուռնիայում սկսեց լույս տեսնել տեղի հայ սկաուտների «Պատրաստ» երկշաբաթաթերթը, որի սկզբնական համարները խմորատիպ էին և տարածվում էին ձեռագիր: Թերթի համարներից մեկում զետեղված էր ՀՄԸՄ-ի Հոնիական շրջանի սկաուտապետերի կոչը՝ ուղղված հայ ծնողներին. *«Սկաուտիզմը կը պատրաստէ ուղղամիտ, ձեռներէց, կորովի եւ քաջ սերունդ մը, նախաձեռնութեան ու անկեղծութեան ոգւով օժտուած՝ նպատակ մը որուն յաջողութեան համար ջանք չենք խնայեր դեռատի տղոց սորվեցնելու համար ազատ բնութեան ծոցին մէջ հետաքրքրական կեանք*

«Հայ սկաուտի»՝ Հայաստանի սկաուտներին նվիրված համարը, ապրիլ, 1922թ.

Թիֆլիսի հայ սկաուտների «Վահագն» պարբերաթերթը, 1922թ.

Ադանայի հայ սկաուտները, 1920-1921թթ. ՀՅԹԻ, Գ. Ճոլոյանի հավաքածու

ՀՄԸՄ 24-րդ, մասնաճյուղի Ա խմբի սկաուտները՝ լուսանկարված երդմնակալության օրը, 28 մայիսի, 1921թ., Ռոդոսթո, ՀՑԹԻ, Գ. Ճոլոյյանի հավաքածու

մը ապրելու բոլոր միջոցները, անոնց պարգևելով նմանապէս առողջ կրթությունն մը... Այս բացօդեայ կեանքը դաշտային արշավները, պտոյտները՝ անտառներու, ձորերու մէջ, լեռներու, բլուրներու վրայ, պատճառ կ'ըլլան որ Ձեր տղաքը, հեռու՝ աղտոտ քաղաքին վատ փորձութիւններէն, օժտուին կեանքի կարգապահութեամբ մը, պատուոյ զգացումով մը ու առողջ գաղափարներով որոնք չափազանց անհրաժեշտ են դէպի ճշմարիտ ուղին յառաջանալու ժամանակ» («Պատրաստ», Բ տարի, թիւ 12, ապրիլ 2, 1922)։

Նույն պարբերականը, այս շարժման գաղափարախոսությունը հայկական իրականության կարիքներին համահունչ դարձնելու անհրաժեշտությանն անդրադառնալով, նշում է, որ. *«Ա. պատանին գիտակ դարձնել առաւելապէս հայ պատմութեան, Բ. Մնոր մէջ ջանալ ապրեցնել հայու զգացումը, Գ. Հայաստանէ դուրս՝ միշտ ինքզինքը օտար ու պանդուխտ նկատել, Դ. Սիրտն ու միտքը մուրեցնել Հայաստանին, անով ուրախացնել եւ տխրեցնել»։*[7]

Արևմտահայ հայտնի հասարակական գործիչ Մինաս Չերազն իր հերթին հետևյալ կերպ է բնութագրում սկաուտական շարժման կարևորությունը հայ երիտասարդության համար. *«Հայը համոզուած է, որ առողջ դաստիարակութիւն մը պիտի նուազեցնէ իր թերութիւնները, ասոր համար է, որ սկսած է սկաուտի լէգէոններ կազմել յարաճուն եռանդով»։*[8]

ՀՄԸՄ-ի Կենտրոնական վարչությունը հանդես է գալիս ազգային կուսակցություններին ուղղված դիմում-կոչով՝ հորդորելով 18 տարին չլրացած սկաուտներին չանդամագրել կուսակցությանը։[9]

Պատերազմից հետո նույնպես հայ տարբեր սկաուտապետեր կապ հաստատեցին սկաուտական շարժման հիմնադիր անգլիացի գեներալ Բեյդըն Փաուըլի ու միջազգային սկաուտական շարժման հեղինակավոր ներկայացուցիչների հետ՝ նրանց ծանոթացնելով հայ սկաուտների գործունեությանը։ Անգլիացի գեներալը, ի պատասխան հայ սկաուտներից ստացած նամակների ու լուսանկարների, շնորհավորանքի խոսքեր է ուղղում հայ սկաուտներին՝ նրանց կազմակերպվածության ու օրինակելի արարքների համար։

Հայ սկաուտները մասնակցում էին միջազգային սկաուտական բանակումներին՝ հանդես գալով իրենց համազգեստով և տարբերանշաններով, ինչպես նաև ի նշան երախտագիտության քայլարշավներ և ջահագնացություններ կատարում տարբեր երկրների դեսպանատներ՝ կրելով այդ երկրի պետական դրոշը։ Այս քայլարշավները մեծ խանդավառությամբ ընդունվեցին Պոլսի հայության, օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից։ Հատկապես մեծ տպավորություն թողեց 1919թ. հուլիսին Ֆրանսիայի ազգային տոնի կապակցությամբ տեղի ունեցած արշավը, որի ժամանակ հայ սկաուտներից կազմված նվագախմբերը հնչեցրեցին Ֆրանսիայի ազգային հիմնը։

Տպավորիչ էին նաև հայ սկաուտների մասնակցությամբ Պոլսում և դրա շրջակա տարածքներում կազմակերպված ընդհանուր բանակումներն ու ցուցահանդեսները։ Այսպես, 1922թ. հուլիսի սկզբներին 320 սկաուտների մասնակցությամբ Մաքրիքյոյի Վելի Էֆենդի կոչված դաշտավայրում տեղի ունեցավ առա-

[7] «Պատրաստ», Բ տարի, թիւ 4, դեկտեմբեր, 1921)։

[8] «Պատրաստ», Բ տարի, թիւ 2, 1921։

[9] «Հայ սկաուտ», թիւ 3, հուլիսի 1, 1921։



Հայ սկաուտապետ Օնիկ Յազմաճյանի սկաուտական գոտին, ՀՄԸՄ-ի Բեյրութի կենտրոնական վարչության թանգարանի հավաքածու

Կիլիկյան հայ արիների սկաուտական վկայական՝ տրված Պետրոս Գայայանին, Ադանա, 1919թ.

Սկաուտապետ Տիգրան Խոյանի ՀՄԸՄ-ի անդամագրքույկը, տրված 1920թ.

Առաքելյան եղբայրները՝ սկաուտական համազգեստով, ՀՑԹԻ, Գ. Ճողոլյանի հավաքածու

ջին խոշոր բանակումը, իսկ երկրորդը կայացավ նույն ամսվա վերջին՝ Բույուք Դերեյում: Նույն վայրում 1922թ. սեպտեմբերի 8-ից 11-ը տեղի ունեցավ սկաուտական ընդհանուր բանակում-ցուցահանդես, որին ներկա էին շուրջ 3000 սկաուտներ, մարզիկներ և մրցավարներ:[10]

Հետպատերազմյան շրջանում ակտիվացած մարմնամարզական ու սկաուտական շարժումը եկավ վկայելու հայ ժողովրդի՝ վերածնդի նկատմամբ ունեցած անխախտ հավատի ու վճռականության մասին:

Քեմալականների կողմից Զմյուռնիայի գրավումը և Պոլսի անկման վտանգը նկատի առնելով՝ 1922 թ. սեպտեմբերի 16-ին ՀՄԸՄ-ի Պոլսի Կենտրոնական վարչությունն իր վերջին նիստում որոշում է Թուրքիայի տարածքում Միությունը հայտարարել լուծարված և, ինչպես. *«...հարազատ զաւակը իր ժողովուրդին, հեւրեւիլ անոր՝ ափիւռքին մէջ շարունակելու համար ազգապահպանումի նուիրական իր առաքելութիւնը»*:[11]

Հայկական սկաուտական շարժումը, սկիզբ առնելով Առաջին աշխարհամարտի նախօրեին, հետպատերազմյան շրջանում անգնահատելի ծառայություն մատուցեց Մեծ եղեռնից մազապուրծ հայ գաղթականությանը մարդասիրական օգնություն ցուցաբերելու գործում՝ միաժամանակ իր առաքելությունը պատվով կատարելով նաև հայկական որբանոցներում մարմնակրթական շարժման տարածման ու առողջ սերունդ դաստիարակելու գործում:

[10] **Բ. Թորիկյան**. նշվ. աշխ., էջ 51-53:

[11] «Մարզիկ», Դ տարի, թիւ 1-2, 1984:

Վերջաբան

Հայկական մարմնամարզական և սկաուտական ակումբների ու միությունների ձևավորումն ու դրանց տարածումը Օսմանյան կայսրության հայաբնակ քաղաքներում ու գյուղերում վկայում էին արևմտահայության շրջանում կենսագործունեության ներհամայնքային, ինչպես նաև ազգամիջյան հարաբերություններում որակական նոր տեղաշարժերի, զարգացումների և պահանջների մասին: Մարզական ակումբների ստեղծումը, մարմնակրթությունը դպրոցներ ու վարժարաններ ներմուծելու անհրաժեշտության գաղափարի հաստատումը կարևորվեցին որպես համահայկական միասնականության գաղափարախոսության ապահովման միջոց, որին միաժամանակ վերապահված էր դառնալու ազգային կյանքի արդիականացման ու բարեփոխման դրոշակակիրը:

Մարմնակրթության և տարբեր մարզաձևերի տարածումն ու հանրայնացումը հատկապես երիտասարդ սերնդի շրջանում չդիտվեցին լոկ որպես ժամանցի նախընտրելի զբաղմունք, այլ կարևոր մի միջոց ազգային նոր որակների ու նպատակների իրագործման ճանապարհին: Այդ գործում իրենց ուրույն առաքելությունն ունեցան «Մարմնամարզ»-ը՝ հայ անդրանիկ մարզական հանդեսը, և նրա խմբագրապետ Շավարշ Քրիսյանը:

Բացառիկ իրադարձություն էին հայկական մարզական տարեգրության և ընդհանրապես արևմտահայ իրականության մեջ հայկական ակումբների ու միությունների մասնակցությամբ 1911-1914թթ. տեղի ունեցած օլիմպիական խաղերը, ինչպես նաև երկու հայ մարզիկների մասնակցությունը միջազգային օլիմպիական խաղերին, որոնք կայացան 1912թ. Ստոկհոլմում:

Մարմնակրթական ու մարզական կյանքի աշխուժացումը Օսմանյան կայսրությունում չէր կարող չհարուցել երիտթուրքական ծայրահեղ ազգայնամոլական կառավարիչների անհանգստությունն ու դժգոհությունը, քանզի հայ մարզիկների հաջողություններն ու հայկական մարզական կյանքի զարգացումը հակադրվում էին թուրք

ազգին բոլորից բարձր դասելուն ուղղված պաշտոնական քաղաքականությանը: Առաջին աշխարհամարտի նախօրեին երիտթուրքերը թուրքական մարզական կյանքը լիովին վերածեցին իթթիհատական ոգով՝ այդ կերպ ձգտելով առավելության հասնել քրիստոնյա փոքրամասնությունների առավել զարգացած մարզական կառույցների ու ցուցանիշների նկատմամբ:

Մեծ եղեռնը ծանր հարված հասցրեց ձևավորման կարևորագույն փուլում հայտնված հայկական մարմնակրթական շարժմանը: Փակվեցին հայկական բոլոր մարզական ակումբները, աքսորվեցին ու սպանվեցին բազմաթիվ հայ մարմնամարզիկներ:

Առաջին աշխարհամարտից հետո Հայ մարմնակրթական ընդհանուր միության ստեղծումը սոսկ գաղափար չէր միայն և չէր սահմանափակվում զուտ մարմնակրթական խնդիրներով, այլ կոչված էր լուծելու համահայկական ընդհանրության գաղափարը և նեցուկ լինելու հայ ազգի հավաքականությանը, որի անհրաժեշտությունը հատկապես շեշտված էր Մեծ եղեռնից հետո: Հայ մարմնամարզիկներից շատերը պատերազմի ավարտից հետո ձեռնամուխ եղան հազարավոր հայ գաղթականների ու որբերի կենսապահովման ու կրթության գործին:

Հայ մարզիկների ու սկաուտների այս հիրավի հերոսական առաքելությունը մի լուսավոր էջ արձանագրեց հայկական սպորտի ու մարմնակրթության պատմության տարեգրության մեջ:

Սկաուտական շարժումը նույնպես լրացուցիչ խթան էր մարմնակրթական շարժման խորացման համար՝ միաժամանակ հանդես գալով առողջ սերունդ դաստիարակելու հրամայականով, ինչն իր արտահայտությունը գտավ հատկապես հայկական որբանոցներում իրականացված կարևոր ու հրատապ մարմնակրթական նախաձեռնություններում:

Օգտագործված գրականության ցանկ

Մենագրություններ և հոդվածներ

1. Ազատեան Թ. Պատմութիւն Էսաեան վարժարանի, Իստանբուլ, 1945:
2. Բախտիկեան Ներսէս Արք. Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը Մերձավոր Արևելքի մէջ: «Մարզիկ», ԻԷ տարի, թիվ 3, 2008:
3. Բախտիկեան Ներսէս. Հուշամատեան Հ.Մ.Ը.Մ.-ի, 1918-1958, Պէյրութ, 1958:
4. Գոճայեան Մինաս. Պատմութիւն Զորք-Մարզպանի (Տէօրթ-Եոլ) գիւղաքաղաք մը Կիլիկիոյ մէջ, Լոս Անջելըս, 2005:
5. Եղիայեան Բիւզանդ. Ատանայի Հայոց պատմութիւն, Անթիլիաս, Լիբանան, 1970:
6. Ընդհանուր կանոնագիր Տորք Հայ մարմնամարզական Միութեան, Կ. Պոլիս, 1912:
7. Թէոդիկ. Ամէնուն Տարեցոյցը, Թ տարի, 1915, Հալէպ, 2009:
8. Թէոդիկ. Ամէնուն Տարեցոյցը, ԺԶ տարի, 1922, Պոլիս, 1923:
9. Թէոդիկ. Հուշարձան նահատակ մտավորականներու, Պոլիս, 1919:
10. Թէոդիկ Արշակուհի. Աղջիկ սքաուտները, «Հայ կին», Պոլիս, Ա տարի, թիվ 3, 1 դեկտեմբերի, 1919:
11. Թորիկեան Բիւզանդ. Պատմութիւն Հայ մարմնակրթական ընդհանուր միութեան, հատոր Ա, Սկիզբէն մինչե ւ 1939 թ., Պէյրութ, հ.1, 1995:
12. Խոյեան Տիգրան. Նահատակ ցեղի անմահները, Պէյրութ, 1983:
13. Ծրագիր-կանոնագիր Շաւարշան ուսանողական միութեան Անաթոլիա գոլէճի, Մարզուան, 1915:
14. Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն. Հայ սքաուդներու յայտագիր-ծրագիր, Կ.Պոլիս, 1919:
15. Հինդլեան Յ.Թ. Անկեղծ էջեր (1890-1912), Կ.Պոլիս, 1913:
16. Հ.Մ.Ը.Մ. և Ապրիլ 24, Նուիրուած՝ Եղեռնի 90-ամյակին, հրատ. Հ.Մ.Ը.Մ. Կեդրոնական վարչութեան 24 Ապրիլ 2005, Անթիլիաս, Լիբանան 2005:
17. Հ.Մ.Ը.Մ. քսանամեայ յուշարձան 1918-1938. Պատմական ծանօթութիւններ Հայ Մարմնակրթական Շարժման շուրջ, Փարիզ, 1938:
18. Մեր Զմյուռնիան և շրջակայ քաղաքները, Նիւ Եորք, 1961:
19. Մինախորեան Վահան. 1915 թուականը, Արհաւիրքի օրեր, Վենետիկ, Ս. Ղազար, 1949:
20. Մկրտիչեան Ալէքսան. Մարզիկների գիրքը, Կ. Պոլիս, 1926:
21. Մուրատեան Վարուժան. Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութիւնը, «Մարզիկ», Դ տարի, թիվ 1-2, 1984:
22. Նազգաշեան Ա. Հայ մտաւորականներու ձերբակալութիւնը և Այաշի բանտը, Պէյրութ, 1969:
23. Նիկողոսեան աղջկանց բարձրագոյն վարժարան. Յայտագիր և կանոնագիր, 1914-1915, Պոլիս, 1914:
24. Պահրի Զարուհի Յ., Սքաուտիզմը և հայ կինը, «Հայ կին», Ա տարի, 1 նոյեմբերի, 1919:
25. Պատմութիւն իրանահայ սկաուտական կազմակերպութիւնների, 1919-1936, Թեհրան, 1974:
26. Սահակեան Արամ. Դիւցազնական Ուրֆան և իր հայորդիները, Պէյրութ, 1955:
27. Սարգսյան Գուրգեն. Հին ու նոր ցավեր, Երևան, 2005:
28. Սիրունի Յակոբ. Ինքնակենսագրական նօթեր, Սարգիս Խաչենց, Երևան, 2006:
29. Վահէ Հայկ. Խարբերդ և անոր ոսկէղեն դաշտը, Նիւ Եորք, 1959:
30. Տագէսեան Անդրանիկ. Պէտէլեան Վահան. Երաժիշտ-մանկավարժը, Պէյրութ, 2004:
31. Փանոսեան Համազասպ. Սկաուտիզմի անհրաժեշտութիւնը և անոր ծագումը, «Կիլիկեան տարեցոյց», Ա տարի, Ատանա-Կիլիկիա, Կ. Պոլիս, 1922:

32. Փափազեան Վահրամ. Սէր, սէր, սէր, Պէյրութ, 1962:
33. Փողարեան Վահագ. Ֆութպոլի խաղը, Կ. Պոլիս, 1921:
34. Քէշիշեան Վարդի. Հալէպի հայկական գաղթօճախի հասարակական-մշակութային կազմակերպութիւնները (1846-1915), Անթիլիաս, 2001:
35. Քիմլիէն Լ. Ամէնուն Մարմնամարզը, Պոլիս, 1912:
36. Քրիսեան Շ., Հինդլեան Հ., Պոյ սքաուդը և իր կեանքին նպատակը, Պոլիս, 1913:
37. Berkes Niyazi. The Development of Secularism in Turkey, Montreal, McGill University Press, 1964:
38. Bogossian Sarkis. Iconographie armnnienne, Paris, vv. 1-2, 1987, 1998:
39. James Bryce. The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916. London, JOSEPH CAUSTON & SONS, 1916:
40. Çapan M. Şevki. Türk Sporunda Selim Siiri Tarcan. Ünyay Muğla, 1999:
41. Cora Yasar Tolga. Constructing and Mobilizing the "Nation" through Sports: State, Physical Education and Nationalism under the Young Turk Rule (1908-19018), Central European University, Budapest, 2007:
42. Dantec Ronan. Il y a une siècle... Le sport. Edition oust-France, 2003.
43. Gawrych George W. The Culture and Politics of Violence in Turkish Society, Middle 1903-1914, Middle Eastern Studies Vol. 22, No. 3, July, 1986:
44. Houlihan Barrie, Sport, national identity and public policy, "Nations and Nationalism", 3 (1), 1997:
45. Kevorkian Raymond, Nordiguian Levon, Tachjian Vahe. Les Arméniens 1917-1939 – La Quête D'un Refuge, Paris, 2007:
46. Kevorkian Raymond, Paboudjian Paul. Les Arméniens dans I'Empire Ottoman a la Veille du Genocide, Paris: Les Editions d'Art et d'Historie, 1992:
47. Köker Osman. 100 yil Önce Türkiye'de Ermeniler, Istanbul, 2004:
48. Köker Osman. 100 yil Önce Türkiye'de Ermeniler, Istanbul, 2013:
49. Köker Osman. Souvenir of Liberty. Istanbul, 2008:
50. Okay Cüneyd. Sport and Nation Building: Gymnastics and Sport in the Ottoman State and the Committee of Union and Progress, 1908-18, "The International Journal of the History of Sport", Volume 20, Number 1, March, 2003:
51. Polley M., Moving the Goalposts. A History of Sport and Society since 1918, to 1945, London, Routledge, 1998:
52. Torbörn Sundquist och Ian Wiséhn. Olimpiska tacken. Minnen från Olimpiska spleen i Stockholm 1912 och 1956. Kungl. Myntkabinetten, Stockholm, 2004:
53. Tuğlaci Pars. Tarih boyunca Bati Ermeniler, Istanbul, cilt 1, 2004:
54. Souvenir of the Independence o Armenia in aid of Armenian orphans. Mesopotamia, 28th May, 1920.
55. Ulker Erol. Contextualising 'Turkification': Nation-building in the late Ottoman Empire, 1908-1918, "Nations and Nationalism", 11 (4), 2005:
56. Yurdadon Ergun, A Brief Evolution of Development of Turkish Sport from 1839 to 1923, http://thesportjournal.org/article/sport-in-turkey-the-post-islamic-republican-period/
57. Григорян А. Из истории армянского футбола: от Босфора до Каспия, Ереван, Амарас, 2003:
58. Хмельницкая И. Б. Спортивные общества и досуг в столичном городе начала XX века: Петербург и Москва, 2011:

Պարբերականներ

1. «Ազդակ», Բեյրութ, 1938-1939:
2. «Դպրոց», Սամսուն, 1914:
3. «Իկոնիոն», Կոնիա, 1912:
4. «Կիլիկիա», Ադանա, 1919:
5. «Հող դար», Սեբաստիա, 1912-1913:
6. «Հայ կին», Պոլիս, Ա տարի, դեկտեմբեր, 1919:
7. «Հայ ձայն», Ադանա, Ա տարի, թիւ 198, 1919:
8. «Հայ Սկաուտ», Պոլիս, 1919-1922:
9. «Մարզիկ», Բեյրութ, 1984, 2008-2009:
10. «Մարմնամարզ», Պոլիս, Ա-Դ տարիներ, 1911-1914:
11. «Պատրաստ», Զմյուռնիա, 1920-1922:
12. «Պարտիզակ», Կ.Պոլիս, 1912:
13. «Փեթակ», Ա տարի, թիվ 6, մարտ, Պոլիս, 1913:
14. «La culture phisique», Paris, No. 562, 1937.

Արխիվային հավաքածուներ

1. Հայաստանի ազգային արխիվի հավաքածու
2. Գրիգոր Ճոլոլյանի հավաքածու, ՀՑԹԻ-ի արխիվ
3. Հակոբ Սիրունու անձնական արխիվ, Փարիզ
4. Բեյրութի ՀՄԸՄ-ի Կենտրոնական վարչության արխիվ
5. Սալոնիկի Ամերիկյան քոլեջի Բիզելի գրադարանի հավաքածու
6. PROJECTSAVE նախագծի հավաքածու
7. ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի հավաքածու

Սրբագրիչ
Ազատուհի Սահակյան

Տառատեսակ
GHEA Mariam

Տպագրություն
«Տիգրան Մեծ» տպարան

Համացանց

http://www.altay.org.tr/sabit.asp?!=16
Football at the 1906 Intercalated Games, wikipedia.org
http://levantineheritage.com/testi80.htm
www.houshamadyan.org

Տպաքանակ՝ 1000 օր.